

ՆԱՐ ԵՐԵՎԱՆ

V 80.00

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Բ

№ 5

ՄԱՅԻՍ

1905

ՀՎԵ

ԹԵ ԽԵԼԴՈ

Տարբան Հայոց Ազգական Մայոր, վոլ. № 25.

1905

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### № 5

*Երես*

1. ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԼԻԹ ԵՒ ՄՄՐԱՄԵԼԻՔ, (գրամատիկան պօէմա), Ղետն Մանուկէնանի . . . . .	5
2. ԴԵՊԻ ԱՆԻ, Ա. Անարոնեանի . . . . .	35
3. ԿԱՏՈՒՆԵՐԻ ԵՒ ՄԿՆԵՐԻ ԿԱԺԻԼՔ, (պարսկական գրականութիւնից), Վ. Փափազեանի . . . . .	43
4. ԴԱՍՍԿԱՐԳԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱ, ԵԽԲԹՊ. ՀԱՍՍՐԱԿ. ՄԷՋ, Ս. Շ.ի . . . . .	50
5. ԲԱՅՐՈՒՆԻՑ, թարգմ. Յովհ. Մասենեանի . . . . .	55
6. ՓԻԼԻՍՈՓԱՅ ՍՈՅԻՈԼՈՒ, Միջ. Յովհաննիսեանի . . . . .	67
7. Մ. ՊէՇԻԿԹԱՇԼԵԱՆ, Արշակ Զօվաննեանի . . . . .	77
8. ԹԻՒՐԲԻԱՅՑԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ, Ռուբէն Բերբերեանի . . . . .	89
9. ՀԱՏՈՒԱԾ, ոտան. Յովհաննէս Յովհաննիսեանի . . . . .	98
10. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԹԻՒՐԲԱՅՑ ՔԻՒՐԴ., (Վանից —Շէմզինան) Կ—ցիի . . . . .	99
11. * * ոտան., Աւ. Խաճակեանի . . . . .	105
12. ՈՒՐՄԻՍՅՅԻՑ—ԽՈՅ, Դարսատի . . . . .	107
13. * * (Նմանութիւն), Աւ. Խաճակեանի . . . . .	111
14. ՀԱՐՄԻԱՅՅԻՆ ԿՐՎԿԱՍԻ ՎԻՃԱՄԿՐՈՒԹԻՒՆԻՑ Լ.Ս.ի	112
15. ՔՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻՑ, ոտան. թարգմ. Ս. Յովլ.ի . . . . .	114
16. Ո. ՊԱՏԱԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ, . . . . .	116
17. ՇԻԼԵՐ, Մարտ Դիէզի, գերմ. թարգմ. Մ. Ղարաբէկեան : . . . . .	133
18. ՕԲԵՐԼԻԵՆԵՐԸ, վեպ Բընէ Բազէնի . . . . .	143
19. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—1) Հայոց եկեղեցական իրաւունք ա. զիրք. Ն. վ. Մելիք Թանգեան.—Առա. վ. Պ.Վ. 2) Մ. Ա. Պարսամեան. ՇԱՆՔՉԱՆՔ.—8. Զ. 3) Մելրոն Եսայեան, «Երազ» —Զ. 4) Մելրոն Եսայեան. «Մի բուքի...»—Զ. Բարթուղիմէոս Խոյ. Գրիգորիանչ Վաղարշապատը և Ս. Էջմիածինը իրանց սկզբնական տեղումն ենք—*: .	151
20. ՆՈՐ ՄԱՅՈՒԱԾ ԳՐԹԵՐ . . . . .	168
21. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ.—Վրաց մամուկիովելորութիւնը,—Վերանորոգուած «Խվերիան»:—Նոր խմբագրի զիրքը հայերի վերաբերեալ:—Մեր պետիցիան եւ վրացիք, Տ. Փիրուանինի . . . . .	169

Նոր շրջան V տարի

չթառ. XVII տարի

# ՄՈՒՐՃ

ԴՐԱԿՆԵՐ, ՀԵՇՎԵՆԵՐՆԵՐ ԵՒ ՋԵՎԵՆԵՐՆԵՐ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Ը

№ 5

ՄԱՅԻՍ

1905

—>|><—>

ԹԻՖԼԻՍ

Տպատան „ՀԵՇՎԵՆԵՐ“ Ընկ. Մալար. փող., 75.  
1905

Дозволено цензурою Тифлисъ 1905 г. 12 мая.

# ԲՐԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## № 5

ԵՐԵՎԱՆ

1.	ՍԱՍՈՒՅՑԻ ԴԱԼԻԹ ԵՒ ՄՄՐԱՄԵԼԻՐ, (պատմասինական պօէմա), Լիոն Մ'անուլէլիսնի . . . . .	5
2.	ԴԵՊԻ ԱՆԻ, Ա. Ահարոնիսնի . . . . .	35
3.	ԿԱՏՈՒՆԵՐԻ ԵՒ ՄԿՆԵՐԻ ԿՌԻՒԾ, (պարսկական գըրականոթիւնից), Ա. Փափազեանի. . . . .	43
4.	ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ԺԱՄԱՆՈՒԿ, ԵՒՐՈՊ. ՀԱՍԱՐՈՒԿ. Մէջ, Ս. Շ.ի . . . . .	50
5.	ԲԱՅՑՐՈՒՆԻՑ, թարգմ. Յովի. Մ'անենիսնի. . . . .	
6.	ՓԻԼԻՍՈՓԱՅ ՍՈՑԻՈԼՈՓ, Միք. Յովնաննիսնիսնիցի .	67
7.	Մ. ՊէՇԻԿԹԱՇԼԵԱՆ, Արշակ Զօպաննիսնի. . . . .	77
8.	ԹԻՒՐՔԻԱՅՑԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ, Ռուբէն Յերբերեանի .	89
9.	ՀԱՏՈՒԱԾ, ուսան. Յովնաննիսնիսնիսնի. . . . .	98
10.	ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԹԻՒՐՔԱՅՑ ՔԻԼՄԻ., (Վանից — Շէմզդինան) Կ—ցիի . . . . .	99
11.	* * ուսան., Ա. Խանճակեանի . . . . .	105
12.	ՈՒՐՄԻԱՅՑԻՑ—ԽՈՅ, Խալոստի . . . . .	107
13.	* * (նմանութիւն), Ա. Խանճակեանի. . . . .	111
14.	ՀԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՎԻՃԱԿԳՐՈՒԹԻՒՆՑ Լ. Ս.ի	112
15.	ՔՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻՑ, ուսան. թարգմ. Ս. Յովի. . . . .	114
16.	Մ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ, . . . . .	116
17.	ՇԻՎԵՐ, Մարտ Դիէզի, գերմ. թարգմ. Մ. Դարտրէկտիան . . . . .	133
18.	ՕԲԵՐԼԵՆԵՐԸ, Վլու Ռընէ Բագէնի . . . . .	143
19.	ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ. ԵՒ ՄԱՏԵՆԱԿՈՍՈՒԹԻՒՆ.—1)	
	Ճայոց եկեղեցական իրաւունք ա. դ'րք. Ա. վ. Վելիք թանգեան,—Առա. վ. Պ.Ա.: 2) Վ. Ա. Պարսամեան. «Անրչանի»:—8. Զ.։ 3) Վելիքն Խայեան, «Երազ»—Զ.։ 4) Վելիքն Խայեան. «Մի բուքի...»—Զ.։ Բարթուղիմէոս եակ. Գրիգորիան՝ «Ասդարշատպատր» եւ Ս. Էջմիածինը իրանց սկզբնական տեղումն են»—*:	151
20.	ՆՈՐ ԱՏՎՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ . . . . .	168
21.	ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ.—Վ.րայ մամուլիովեւրութիւնը—Վ.երանորոգուած «Խվիրիան»:—Նոր խմբագիր դիբքը հայերի գերաբերեալ:—Վեր պետիցիան և վրացիր: Տ. Փիլումեանի . . . . .	169

22. ԹՌԻՒՔԻ ՄԱՍԻՆԻՆ:— Համալսարանինսկի և Աղայելի գատի  
մէջ:—Աղայելի թէգի ողբերք:—Հնդկաստանի մահմեզա-  
կանների մէջ կրօնական վերանորոշչական մի շարժում:  
—Կովկասի խալամների վերաբերմունքը գլափ այդ շար-  
ժումը:—Վահմեղական մասունք օրգանները այլ և այլ  
երկրներում: Տիզըսնիկ . . . . . 175
23. ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՌՀԻՑ. — I) Հայ ճարտարապետու-  
թիւնը: Թուղու Ժ. Թուղարժնեանի: — II) Վեր  
ազգային երաժշտութիւնը: Տ. Զաւլնի: — III) Հայոց  
հատրուն: Տ. . . . . 186
24. ՀԱՅ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ, Նամակ եղիսաբետից Ա. ք. Շ.ի 211
25. ԵԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Կովկասիների համբազբերք:—  
Տերբիստորեալ և կրօնական անջրակեաններ:—Քարձր.  
Ռւկադ կրօն համբիրողաւթեան մասին:—Ազդայնական  
և կրօնական շաղկապ:—Կոր ազգութիւնների կաղմա-  
կերպում:—Հայկական համբազբ:—Կովկասի փոխար-  
քայի մուտքք Թիֆլու:—Հայ. լուս. հոգ. վարչական  
կարգով պատրիների վերացումը:—Թիւրքիայից եափո-  
կուպուանալու համար էջմիածին և կող վարդապետների  
հարցը:—Արևուտեան Զ նահանդների մասին Քարձր  
ուկազ: Լ. Ա. . . . . 217
26. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Ձևարութեան խախտումը Ֆրան-  
սիայի կողմից, — Ֆրանսիայի ներքին գործերը. Տամբու-  
րինիի գաւառութիւնը, Եկեղեցին պետութիւնից անջա-  
տելու օրինադի քննութիւնը, Եիւմի գործազուրք:—  
Վինիատրական տեսող կրիզիսը Անդարիայում. անջատ-  
ման կրտակրութեան պահանջները:—Օսմանեան պե-  
տութեան թուլացման ազգեցութիւնը:—Վինիատրական  
փոփախաւթեան հաւանականութիւնը Անդիայում: Լ. Ա. 226
27. ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍԱՆԻՑ, Գ. Ե.ի . . . . . 232
28. ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ, . . . . . 240
29. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . 245
30. ՅԱՒԵԼՈՒԱԾ. Ֆէյճն Մողիլը «ՀԱՅԻ ԲԱՐԱՆ ԱՆԳ-  
ԼԻՍՅՈՒԵՄ», վէտ պարսկ. կհանքից, թարգմ.  
անդ. Մ. Կարապետեան. . . . . 17—32

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ ԵՒ ՄՄՐԱՄԵԼԻՔ

Դրամատիկական պօէմա ղիւցազնական ժամանակներից

Պ Ա Տ Կ Ե Բ Բ 6.

Մորամելիքի ապարանքի վերնայարկում ճեմելիք։ Արաբական մոզայիքով զարդարուած սիւներ, որոնք վերեսում միանում են օմեգաձև կամարներով։ Ճեմելիքից երեսում են հեռու ընկած լեռները, որոնց ստորոտում ընդարձակ գաշտավայր՝ իր ոլորապտոյտ մեծ ճանապարհով։ Ճեմելիքում դրուած է մի փափուկ գահաւորակ, ծածկուած կերպասով և ոսկեկար թաւշեայ մութաքաններով։ Մորամելիքի կինը թեր ընկած՝ ծխում է դայլան։ Միւների մօտ կանգնած է Մորամելիքի աղջիկը՝ երեսը դարձրած դէպի մեծ ճանապարհը և նայում է հեռուն։

Այ. Մայրիկ, գալիս են... դուրս եկան ձորից...

Իսկ. Լաւ, մի խենթամար ուրախութիւնից։

(Վեր է կենում գնում աղջկայ մօտ.)

Այ. Մեմնոնմ ես այն ծխաւորներին։

Հեռու, շատ հեռու, ձորի բերանին։

Իսկ. Մերոնք չեն. մերոնք ուղտերով կը գան։

Այ. Ինչու ուրեմն այսքան ուշացան։

Այս, մի շուտ դային... ի՞նչ կ'ուրախանանք...

Մէկ էլ կը տեսնենք—զըրանգ-հա-զըրանգ

իրար ետելից բարձուած ուղտերը

Բերում են ահա ոսկու բեռները...

Քառասուն բեռ ոսկի—հեշտ բան է ասել.

Այս, մայրիկ, ի՞նչեր կարող ենք անել...

\*) ՏԵ՛Ս «Մուլճ», № 4.

- Իսր. Ի՞նչ պիտի անես:  
Լէյ. Կ'անեմ—կը տեսնես:  
Ամենից առաջ ճակատիս համար  
Ես պիտի շինեմ մի լաւ ոսկեշար.  
Յետոյ՝ այնպիսի գեղեցիկ մանեակ,  
Որ ամբողջ կուրծքը փայլի ոսկու տակ.  
Ի՞նչ տեսակ տեսակ ապարանջաներ,  
Ի՞նչ շըքեղ քամար, մատանիք, օղեր...  
Մի խօսքով պիտի լոյսարեւ գտնամ,  
Արեգակի պէս փայլեմ ու շողամ...  
Իսր. Իսկ ես՝ տան եղած բոլոր հասարակ  
Թասեր, զաւաթներ, կըժեր, ափաէներ  
Վերցընեմ պիտի և նըրտնց տեղակ  
Թաղերում շարեմ ոսկի անօթներ:  
Լէյ. Ի՞նչ լաւ կը լինի, ի՞նչ հիանալի.  
Ուր որ կը նայես—բոլորը ոսկին  
(Մտնում է Մորամելիքը: Դրան մէջ կանգնելով՝ ծանր  
շունչ է քաշում:)  
Մորամ. Օ՛խ, իմ ծերութիւն... շուտ վըրայ հասար...  
Լէյ. Հայրիկ, դու եկա՞ր: (Մօտենում է հօրը:)  
Մորամ. (Բունելով աղջկայ զլու խը եւ համբուրելով նա-  
կասից՝)  
Քաղցրիկը, այսօր վերջապէս կը գան:  
Լէյ. Ել երբ: Մութն ընկաւ, իսկ նըրանք չկան:  
(Մորամելիքը թեք է ընկնում տախտի վրայ:)  
Հայր, ի՞նչ պիտ անես զու այնքան ոսկին.  
Մեզ բաժին կը տաս—ինձ ու մայրիկին:  
Մորամ. Զեզ ել, սիրունըս, բաժին կը հանեմ,  
Թէպէտ ես ոսկու մեծ կարիք ունեմ:  
Շատ ծըրագիրներ կան իմ առաջին.  
Մեծ փայլ պիտի տամ մեր ամարաթին:  
Ամենից առաջ իմ այս պալատը—  
Աստիճանները, սիւնները, պատը—  
Բոլորը պիտի զարդարեմ ոսկով,  
Այնպէս որ դըրսից արտաքին տեսքով

Շողղողայ, ինչպէս լոյս արեգական:  
 Երբ Մըսուը մըտնի մի օտարական,  
 Թնդ ըսքանչանայ, ինձ տայ երանի  
 Եւ իմ համբաւըն ամեն կողմ տանի:  
 Տեսնեմ այնուհետ էլ ո՞ր խալիքան  
 Պիտի պարծենայ իր ճռս պալատով  
 Եւ հարստութեամբ, երբ Մըսրայ հըսկան  
 իր ամարաթը կը ծածկի ոսկով:  
 Ամեն տեղ՝ հալեպ, Դամասկոս, Բաղդադ  
 Յայտնի կը լինի իմ շըքեղ պալատ:

(Մենում են Կորպադին եւ Զարխսադին երեսները կապած:)

Այս ի՞նչ եմ տեսնում... ի՞նչ է պատահել...

Ո՞վ համարձակուեց ձեզ վիրաւորել:

Կոս. Տէր, եթէ ամբողջ Սասումը քանդենք,  
 Եթէ այդ երկը բընակիչներին  
 Բոլորին մէկ մէկ սըրի անցընենք,  
 Յետոյ բոլորը յանձնենք կըրակին,  
 Դեռ էլ ըիչ է այդ ժողովը դիմում:

Մսրամ. Ո՞ւր է Դաւիթը... Ի՞նչու շըղթայած  
 Նըրան չեմ տեսնում իմ առաջ կանգնած:

Զարլս. Ինչպէս որ դատարկ մենք գընացել ենք,  
 Այնպէս էլ դատարկ վերադարձել ենք:  
 Եւ եթէ մի բան բերել ենք,—ահա  
 Այս վերքերըն են մեր դէմքի վըրայ:

Մսրամ. Իսկ եօթը տարուայ իմ խարջը—ոսկին...

Կոս. Ա՛խ, հազար անէծք Սասմայ ծուռ Դաւթին.  
 Կանայք, աղջկերք, ոսկին—բոլորը

Արդէն պատրաստ էր, և միւս օրը  
 Վըճուել էինք մենք ուղտերը բարձել,  
 Եւ մեծ քարվանով ճանապարհ ընկնել:  
 Բայց Դաւիթ եկաւ, մեր ոսկին խըլեց,

Աղատեց կանանց

Եւ կոյս աղջկանց

Եւ մեզ էլ ահա այս օրըս գըցեց...

Զար. Մեր արիւնը, տէր, վըրէժ է կանչում:

*Կոս.*

Զէնով-Յոնանի տան պատըշղամբում  
Չափում էինք մենք հաւաքած ոսկին,—  
Յանկարծ փողոցում աղմուկ է լըստում,  
Հայհոյանք և ճիչ ամբոխի միջին:  
Այնքան հրթեցին, որ դուռը բացուեց,  
Դաւիթը մըտաւ աչքերը կարմրած.  
Նըրա ետևից ամբոխը խուժեց  
Գոռում-զոչումով, անչտի կատաղած...  
Եկաւ Դաւիթը և կուտը խըլեց  
Ու ասայ. «Թող ես չափեմ այդ ոսկին»...  
Ու յետոյ հարուած հարուածի ետքից  
Կուտով հասցըրեց մեր քիթ-պըռունգին...  
Արիւնը խրվեց բացուած վէրքերից,  
Կարմիր ներկելով շորեր և գետին...

*Մարամ.*

Եւ դուք լուռ ու մունջ բոլորը տարած...  
Եւ թողիք, որ նա այդպէս խայտառակ  
Ծեծէր, անարդէր իմ ծառաներին  
Եւ կուտով ապտակ տոր ձեր գընչերին...  
Ինչու դուք խկոյն

Նըրա գըլուխը չջախջախեցիք,  
Միթէ չունէիք մի սուր, մի դաշոյն,  
Որ նըրա լէշը գետին թափէիք...

*Կոս.*

Դուրանը վըկայ, Դաւիթը հիմա  
Մի ազրահէլ է, մի մեծ աժդահաւ:  
Ուղիղ եմ ասում, երբ զոռում էր նա,  
Սարսափ էր բերում ամենքի վըրայ,  
Կարծես թէ առիւծ լինէր մըորնչում,  
Երբ կէս գիշերին որսի է գընում...  
Երբ նա թերթում էր կարմիր աչքերը,  
Կարծես աչքերից կըրակ էր թափում,  
Իսկ երբ փոխում էր ուժեղ ոտները,  
Ծառը դողում էր, տերեը շարժւում...  
Երկու ըըռունցքով, եթէ կամենար,  
Նա մեզ բոլորիս կը ջընջէր խալառ:

*Մարամ.*

Վըրէժ, օ, վըրէժ... ի՞նչպէս կ'ուզէի,

Որ այդ գարշելին մի ձեռըս ընկնէր...

Ես նըրան այնպէս բըսունցը կը տայի,

Որ իր ծընընկեան սև օրը յիշէր...

Կոս. Հիմա Դաւիթը մենակ չէ, աէր իմ,

Ամբողջ Սասումը կանգնած է մէջքին:

Մարամ. Իսկ Զէնով-Յոնան... Նա էլ նըրանց հետ:

Կոս. Է՞ն, նու համարեա չկայ այսուհետ:

Զարիս. Ժողովրդի մէջ էլ ձայն չունի նա.

Ամենքի տչքից ընկած է հիմա:

Մարամ. Է՞ն, բաւական է: Հիմա լըսեցէք

Եւ հըրամանըս լաւ կասարեցէք:

Ես պահանջում եմ ձեզանից շուտով

Երկրումըս անել մեծ գօրաժողով:

Հասակների մէջ խըտըում չլինի.

Իւրաքանչիւրը զէնք պիտի առնի,

Անքեղ պատանի և թէ ալեոր

Հաշւում է զինուոր:

Ով որ կարող է սուր ու թուր շարժել,

Ով որ կարող է նետ-աղեղ բռնել,

Բացի կահացից

Եւ մանուկներից,

Բոլորը պիտի անյապաղ ենքն

Եւ Մըրայ դաշտում մէկ տեղ ժողովուեն:

Բայց այս էլ ասեմ, որ էլ չնայէք.

Ով հակառակուեց, ուժով կը տանէք:

Կոս. Աչքիս վըրայ, աէր: Ես խոստանում եմ:

Մարամ. Կոսքին, ես քեզ նըշանակում եմ

Զօրքիս գըլխաւոր հրամանատարը.

Իսկ դու, Զարխաղին, դու էլ կը լինիս

Սըրա հնաղանդ կամակատարը:

Զարիս. Խոնարհ ծառաղ եմ. ինչպէս կը վրճռես:

Մարամ. Հաշուած են արդէն Սասմայ օրերը,

Եւ վայ ապըստամբ այդ ժողովը պիտին,

Երբ որ իմ զօրքի ահեղ գընդերը

կը համնին այդ պիղծ, անիծեալ երկրին...

Եթէ ձեր սրբում մընացել է դեռ  
Խըղճի մի նըշոյլ,—խեղգեցք իսպառ,  
Աղաչանք և լաց և արտասոնքներ  
Նըշանակութիւն չունին ձեզ համար:  
Ձեր գործը լինի—արհաւիրք սրփոել,  
Աւերել, քանդել, այրել, կոտորել...  
Թէ ծեր, թէ մսնուկ, արդամարդ թէ կին—  
Սըրի անցնել և թափել դետին:  
Հըրգեհել զիւղեր, աւաններ ցանքսեր,  
Իսպառ կործանել վանքեր, տաճարներ...  
Քար քարի վըրայ չպէտք է մընայ,  
Սասումը պիտի անապատ դառնայ:  
Կոս. Տէր իմ, քո կամքը սուրբ է մեզ համար:  
Զարխ. Կը լինի այնպէս, ինչպէս կամեցար:  
(Կոսքակին և Զարխաղին խոնարհ գլուխ տալով հե-  
անում են:)

Այ. Ափսոս մեր յոյսեր... բոլորը կորաւ...  
Մսրամ. Ես յիմարացայ: Երբ Մըհեր մեռաւ,  
Դաւթին էլ իսկոյն պիտի վերջ տայի.  
Եւ մօրըդ խօսքին ականջ չանէի:  
Իս. Դաւիթ մանուկ էր, երբ դու ինձ տուար.  
Անտէր մընացած մի որբ էր թշուառ.  
Ի՞նչպէս թողնէի, որ իմ զաւակին  
Մատաղ անէին աչքիս առաջին:  
Մսրամ. Կարծես թէ բարի մի պըտուղ էր նա...  
Գործերը տեսաբ—դէ հըրճուիր հիմա:

## Պ Ա Տ Կ Ե Բ Ռ Դ.

Զէնով-Յոնանի տաճ բակը—հինգերորդ պատկերի տեսա-  
բանը: Դրսից գալիս է Զէնով-Յոնանը սաստիկ տիսուր և վհա-  
տած: Սառիան, նրա կինը, որը պատշգամբում նստած՝ կար էր  
անում, նկատելով ամուսնու այլայլուած դէմքը, ինքն էլ գու-  
նատւում է, նախազգալով մի վատ համբաւ: Զէնով-Յոնանը  
հաղիւ է կարողանում ոտի վրայ կանգնել և օրօրուելով իրան  
նետում է ծափի մօտ, որի տակ դըռւած է նստարան. այնտեղ

նստում է հանգստանալու: Լսելի հս նրա թոյլ հառաջները,  
ինչպէս հիւանդի կամ սաստիկ վհատուած մարդու: Սառիան  
ձգում է կարը և շտապում նրա մօտ:

Սառ. Յոհան, հիւանդ ես... թէ էլի նոր լուր...

Ի՞նչ է պատահել... լինչի՞ ես տըխուր:

Զէն.-Յոն. Էլ մի հարցընի, Սառիա... Քիչ ջուր:  
(Սառիան զնում է ջրի:)

Օ՞հ, մեռայ, մեռայ... Ի՞նչ օրի հասանք...

Սա հօ կեանք չէ, այլ միմիսյն տանջանք...

(Սառիան զաւարով զոր է բերում. նա խմում է:)

Սառ. Զարմանալի է, առողջ դուրս եկար,  
իսկ վերադարձար զունատ և տկար:

Զէն.-Յոն. Վայ մեզ, Սառիա, վայը մեր զըլիսին...

Սառ. Զլենի՞ նորից Սասմայ թըշնամին...

Զէն.-Յոն. Այս, նա... անթիւ զօրքեր է բերել,  
Սեղան-սարի մօտ բանակը դըրել:

Սառ. Էլ ի՞նչ ենք նըստել... փախչենք սարերը...

Զէն.-Յոն. Ի՞նչ օգուտ երբ որ նըրա կնդերը  
Մեր բոլոր երկիր պիտի հեղեղեն.

Ուր որ էլ գընանք, մեզ պիտի համնեն:

Սառ. Դաւիթ, նըզովեալ լինի քո անուն.

Այս ի՞նչ կըրակ ես մեր գրլիսին թափում...

Զէն.-Յոն. Այդ խելագարը եթէ չը լինէր,  
Մելիքըն ինչու մեզ պէտք է յիշէր:

Քանի՞ տարի է, որ մեզ մոռայած՝

Ոչ նեղում էր մեզ, ոչ խարջ պահանջում...

Ուրախ էլնք մենք, մեզ հետ էր Աստուած,

Խաղաղութիւն էր չորս կողմը տիրում.

Ապահով էին, զոհ և բաղդաւոր

Հովիւ, հողաղործ և արհեստաւոր...

Հիմա ամեն տեղ սարսափ, ահ ու դող,

Յուսահատութիւն և իրարանցում,

եւ ամեն մէկը զըլիսին շողացող

Մըսրացոց արնոտ սուրըն է տեսնում...  
 Վայ մեզ, զուր են մեր բոլոր ջանքերը,  
 Զուր են գանձերը թաղում հողի տակ,  
 Թողնում տուն ու տեղ, փախչում սարերը—  
 Զուր է բոլորը և աննպատակ.  
 Ոչ սար ու ձորեր, ոչ մուժ քարանձաւ  
 Մեզ չեն օգնելու մեր վերջը հասաւ:

(Մտնում է Դաւիթը՝ անհանգիս եւ փուրկոս:)

**Դաւ.** Հօրեղբայր, ցնյց տուր. որտեղ են իմ հօր  
 Հաղի շորերը և զէնք ու զրահ:

**Զէն-Յոն.** Ելի երազ ես տեսել դու այսօր:  
 Ի՞նչ հաղի շորեր, ի՞նչ զէնք ու զրահ...  
**Դաւ.** Բեր այստեղ իմ հօր կապէն-խարուկին,  
 Խաչ-պատրապին աջ թիկի վըրայ,  
 Ոսկի քամարըն ու զըլիի զիւտին.  
 Բեր այստեղ իմ հօր կայծակի թուրը  
 Եւ հըրեղէն ձի՝ Քիւռկիկ-Զալալին:

**Զէն-Յոն.** Ելի պառաւը տըւեց այդ լուրը:

**Դաւ.** Այս, պառաւը իմ նանին ասաց,  
 Որ այդ ամենը քեզ մօտ է պահուած:

**Զէն-Յոն.** Նա ջադու կին է, հաւատա, Դաւիթ,  
 Մի լըսիր նըրա ամեն մի խօսքին.

Մի օր էլ փորձանք կը բերի զըլիսիդ,  
 Ինչպէս արել է նա շատ շատերին:

**Դաւ.** Հօրեղբայր, դու ինձ ուզում ես ցանել...  
 Զուր հոգուդ վըրայ մեղք մի վերցընի.  
 Պառաւից ես միշտ լաւըն եմ տեսել,  
 Ինչքան էլ որ նա կռուարար լինի.  
 Երբ մեռաւ Մըհեր, դու էլ լաւ զիտես,  
 Որ քո տան մի խեղճ որք մընացի ես,  
 Եւ դու քո կընկայ խելքով վերցըրիր  
 Զեռիցըս բըռնաւծ՝ դուրս վըլընդեցիր:  
 Բայց այն պառաւըն ինձ իր մօտ տարաւ,  
 Պահեց, մեծացրեց, տէրութիւն արաւ:  
 Իմ հօր գործերից անտեղեակ էի,

Բան չէիր ասել, ի՞նչ իմանայի...  
 Եւ նա շատ բաներ պատմեց Մըհերից,  
 Եւ ես իմացայ միայն նըրանից,  
 Թէ ով էր Մըհեր և ով է Դաւիթ:  
 Ես հիմա ի՞նչպէս հաւատամ խօսքիդ...  
 Ես ծագում էի աղնիւ արիւնից,  
 Ինձ ռամիկ հովուի ընկեր շինեցիր  
 Եւ մի ահազին մահակ տալով ինձ  
 Ու մի ջուխտ սոլեր՝ այսովէս ասացիր.  
 «Պարտող մի՛ նրստիր, գլնան սարերը  
 Ալածացըրու այնտեղ գառները!»  
 Ես էլ գընացի: Մըհերի արդան  
 Դարձաւ գառնարած, ինչպէս մի անբան:—  
 Բայց այն պառաւըն ինձ լու խըրառոեց,  
 Հօրըս գործերը առաջըս դըրեց...  
 Ու կամաց կամաց աչքըս բաց եղաւ,  
 Ինչ որ մութըն էր, բոլորը տեսաւ:  
 Ես նըման էի մի անտառնիւ,  
 Որ գառաղութիւն և ոչ խելք ունի:—  
 Կարծես Հոգի Սուրբ իջաւ ինձ վըրայ,  
 Ու ես աշխարհիս չարըն ու բարին,  
 Որ ծածկուած էր սկ խաւարի միջին,  
 Կայծակի բոցոտ լոյսի մէջ տեսայ:  
 Ու ես վլճռեցի իմ հօր արժանի  
 Ժառանգը լինել,  
 Սասմայ անօրէն թըշնամիների  
 Բերանը պատռել:  
 Ես կը մոռանամ քո աղ ու հացը,  
 Որովհետեւ գու եղբօրըդ որդուն,  
 Վլկայ է վերև բարի Աստուածը,  
 Դուրս վըռընդեցիր, ինչպէս քոստ շուն...  
 Բայց նա, սըրտացաւ ծընողի նըման,  
 Ինձ տարաւ իր մօտ և կերակըրեց,  
 Այնքան խըրառուց, քարոզեց այնքան,  
 Որ վերջ ի վերջոյ նա ինձ մարդ շինեց:—

Ահա թէ ով է այն ջաղու կինը:  
 Հիմա հասկացար դու նըրա դինը...  
 Դէհ, բաւական է... Քո բարի կամքով  
 Լաւ է ուղածըս զընա բեր շուտով:  
 Տես, չեմ հարցընի, հօրեղբայր՝ Յոնան,  
 Օտար ես դու ինձ թէ մօտ ազգական:  
 Զէն.-Յոն. Մի ասա, տեսնեմ, ի՞նչ պիտի անես  
 Հօրըդ շորերը... Դու պիտի հազնեմ:  
 Դաւ. Հօրըս շորերը ես պիտի հազնեմ,  
 Կայծակի թուրը քամարիս կապեմ.  
 Ու հեծած իմ հօր Քուռկիկ-Զալալին  
 Կըուիւ պիտի տամ Մըսրամելիքին:  
 Զէն.-Յոն. Նա վեր կ'առնի քեզ գետնովը կը տայ—  
 Սաղ տեղըդ միայն ականջըդ կը մնայ:  
 Դաւ. Այդ մենք գեռ յետոյ, յետոյ կը տեսնենք:  
 Զէն.-Յոն. Զէ, Դաւիթ, արի մի խորհուրդ անենք:  
 Վատ ժամանակ է, յամառ մի՛ լինիր.  
 Ես ապրած մարդ եմ, իմ խոռքին լլսիր:  
 Կորած է Սասում, մենք էլ ենք կորած.  
 Լինելու է մեծ, շատ մեծ կոտորած:  
 Մըսրամելիքը երդում է կերել  
 Սասում ամայի անապատ շինել:  
 Ուրիշ ճար չկայ: Արի վեր կենանք  
 Ժողովը հետ Սեղան-սար գընանք,  
 Մըսրամելիքի ոտքերը ընկնենք,  
 Պագնենք փեշերը, աղաչանք անենք,  
 Թող սրտի ուղած խարջերն առնի,  
 Թող ինչքան կ'ուղէ գերիներ տանի—  
 Մեր կոյս աղջըկանց  
 Ու ջահէլ կանանց—  
 Միայն խընայի մեզ ու ձեռ չտայ  
 Ու եկած ճամբով էլի ետ զընայ:  
 Ինչեր ես ասում, հօրեղբայր Յոնան...  
 Վայ, ի՞նչ ասեմ քո տլւպամարդութեան...  
 Մըհերի եղբայր—ու այսքան վախկոտ...

- Հօրեղբայր Յոնան, ամօթ է, ամօթ:  
 Զէն.-Յոն. Այն ձեռքը, որ գու չես կարող կըտրել,  
     Լըտում ես, Դաւիթ - պէտք է համբուրել:  
 Դաւ. Այ քեզ մի յիմար ըստրուկի առած...  
 Զէն.-Յոն. Հապա ի՞նչ անես, երբ որ քո դիմաց  
     Անթիւ անհամար զօրքեր են կանգնած.  
     Երբ որ հաշիւ կայ ծովի աւազին,  
     Իսկ հաշիւ չը կայ թրշնամիներին...  
 Դաւ. Դաւիթ մենակ չէ, ունի ընկերներ,  
     Զինուած ու պատրաստ հազար կըտրիճներ...  
     Դէ, բերում ես, բեր կամ տեղըն ասա.  
     Ես ըշտապում եմ... ժամանակ չկայ:  
 Զէն.-Յոն. Շըւարել եմ ես..., Աստուած, ի՞նչ անեմ...  
 Դաւ. Զես ուզում բերել — ինքըս կը մըտնեմ,  
     Տակ-գրլուխ կ'անեմ քո բոլոր տունը,  
     Ինչ որ ուզում եմ, ես այն կը զըտնեմ,  
     Ու վերջը կը մնայ քո վատութիւնը:  
     (Դաւիթը զնում է Տան ներսը:)  
 Զէն.-Յոն. Դաւիթ, սիրելիս, Աստուծուն նայիր:  
 Սառ. Դէ գու էլ, Յոնան, ետկից հասիր:  
     Ինչ որ ուզում է, տնւր իրան կորչի,  
     Իր հօր թողածը թող գըլխին կըպչի:  
 (Զէնով-Յոնանիը զնում է Դաւրի հետից. Ժիշ յետոյ  
     Վերադառնում է:)
- Սառ. Հը, աղատուեցի՞ր այն պատուհասից.  
 Զէն.-Յոն. Ի՞նչպէս լաց եղաւ ուրախութիւնից,  
     Երբ տեսաւ իր հօր թողած շորերը,  
     Համբուրեց թուրը, խաչը, զէնքերը...  
 Սառ. Կարծում է, թէ հազին ունենայ  
     Մըհերի շորը, Մըհեր կը դառնայ:  
 Զէն.-Յոն. Երկի, խելքըն այդքան է կըտրում:  
 Սառ. Հիմա ի՞նչ անենք, քեզ եմ հարցընում:  
 Զէն.-Յոն. Ի՞նչ պիտի անենք: Մեր յոյսը՝ Աստուած:  
     Թող նա մեզ գըթայ, լինի ողորմած:  
     Իցէ թէ մեր լաց ու արտասուքով,

Մեր աղաչանքով և ընծաներով  
Թըշնամու սիրաը կարենանք շահել  
Ու այսպէս մի կերպ Սասումը փըրկել:

(Գալիս է Դաւիթը՝ կերպարանափոխուած: Հագած է իր  
հօր կապէն, մէջըին մի քանի տակ փաթաթած քամարը, աջ  
թիփ վրայ խաչածեն նշան «Խաչ պատարազին». զլխին զրած  
է սաղաւարտ—«գիւտին». կողքից կապել է երկայն սուրբ—  
«Թուր-կայծակին». կրծքին ունի զրած: Այսպիսի զգեստով նա  
դարձել է մի խոկական դիւցազն և գեղեցիկ տղամարդ: Նրան  
տեսնելուն պէս Սառիան քմծիծաղ տառմ է Յոհանին:)

Սառ. Գոտին քառսուն փաթ է տըւել,  
Թուրբը գետնին քաշ է ընկել:

Զէն.-Յոն. Դու զեռ պլստիկ ես այդ շորի համար:

Դառ. Աչքըդ կը սովորի—կը լինի յարմար:  
Է՛խ-վախի, հօրեղբայր... Վէր կառնի Աստուած.  
Մըհեր այս տեսակ գանձ լինի թողած,  
Ես բան չիմսմնմիմ, ինձանից ծածկես,  
Սընդուերի մէջ պինդ փակած պահես...  
Ինձ յայտնի էր, որ միտյն գևերը  
Սիրում են ծածկել իրանց գանձերը  
Հեռու աեղ, խաւար քարանձաւներում,  
Մութըն աշխարհում.

Ոչ իրանք են այն գանձերից օգտուում

Ոչ ուրիշներին թողնում մօտենալ...

Նըրանք գևեր են, դու—մարդ կատարեալ:

Շատ երկչուրն ես, ես ու իմ հողին...

Է՛հ, հիմա մընաց Քուսկիկ-Զալալին:

Գընամ նըրան էլ հանեմ ախոռից:

(Դնում է:)

Զէն.-Յոն. Ինչպէս մի խընձոր՝ կէս արած միջից,

Մըհեր ինքըն է առաջիս կանգնած:

Սառ. Մանաւանդ հիմա՝ հօր շորըն հագած:

Զէն.-Յոն. Բայց հաստակող է. ասածըն արաւ:

Ափսոս այն շորեր... ո՞նց խըլեց տարաւ:

Սառ. Զարմանալի է, ոչ մի ահ չ'ունի:

Զէն.-Յոն. Տայ Աստուած, իր հօր արժանի լինի:

Մառ. Ասենք կըտրիձ է, բայց շատ է ջահէլ,  
Մբթէ կարող է Մելիքին յաղթել:

Զէն.-Յոն. Նըրա հասակում մարդու ուժերը  
Օր օրի վըրայ աւելանում են.

Իսկ հասակաւոր մեղ պէս ծերերը  
Օրէցօր ընկնում և թուլանում են:  
Մելիքըն ինչքան էլ ուժեղ լինի,  
Առաջուան ոյժը պակած կը լինի:

(Կառում է ձիու ուրախ խրխնջիւն: ՄՏնում է Դաւիրը՝  
խիս ուրախ:)

Դառ. Լըսհւմ էք, ինչպէս ուրախութիւնից  
Խըրխընջում է իմ Քուոկիկ-Զալալին...  
Վերջապէս ելաւ իր խաւար բանտից,  
Լոյս-արև տեսաւ, տէր ըզգաց մօտին...

Զէն.-Յոն. Դաւիթ, քանի որ ասածըդ արիր,  
Լըսիր, մի բարի խորհուրդ տամ ես քեզ:  
Ինչ որ քեզ ասեմ, լաւ միտըդ պահիր,  
Եւ դու փորձանքից հեռու կը լինես:  
Տէր մի՛ արացէ, թէ քեզ պատուհաս  
Կամ ձախորդութիւն մի օր պատահի,  
Խաչ-պատարագի անունը կը տաս,  
Նա քեզ փորձանքից աղատ կը պահի:

Դառ. (Համբուրելով աջ քեւի խաչը:)  
Ես մեռնեմ, ով խաչ, քո սուրբ զօրութեան:  
Տունըդ շէն կենայ, հօրեղբայր Յոնան:

Զէն.-Յոն. Հա, մի աղբիւր էլ կը տեսնես ճամբին,  
Որ հըրաշալի զօրութիւն ունի.

Ով որ լողանայ այն Ջըրի միջին,  
Նա կը զօրանայ և նոր ոյժ կ'առնի:  
Հայրըդ էլ երբ որ ճամբայ կը գընար,  
Կաթնաղբիւրի մէջ միշտ կը լողանար:  
Եւ եթէ դու էլ լողանաս այնտեղ,  
Քառամնապատիկ կը դառնաս ուժեղ:

Դառ. Վերջապէս ահա լըսեցի քեզնից  
Հայրական խօսքեր: Տնւր պաղեմ ձեռըդ,

Սուրբ պիտի պահեմ ինչ ասացիր ինձ.  
 Երկարացընի՛ Աստուած օրերըդ:—  
 Դէհ, մընաս բարեաւ, հօրեղբայր Յոնան:  
**Զէն.-Յոն.** Աստուածինը քեզ լինի պաշտպան:  
 Յաջողակ լինես, թշնամուն յաղթես,  
 Հըրեղէն սըրով խոտի պէս հընձես:  
 Թո՞ղ Տէրը Փըրկի Սասումը քեղնով,  
 Եւ, ինչողէս առաջ, ազատ, ապահով  
 Օր օրի վըրայ ծաղկի, շինանայ,  
 Բարգտուաճ լինի և պայծառ մընայ:  
**Դաւ.** (Արտասուազին եւ համբուրելով Զէնով-Յոնանի  
 ձեռքեր՝)  
 Ամէն, օհ, ամէն, իմ հօրեղբայր չան...  
 Դու արժանացրիր ինձ քո օրհնութեան...  
 Վերջապէս դու ինձ հայրութիւն արիր,  
 Հայրական սիրոյ կարօտ չթողիր:  
 Հիմա ինձ ներիր, թողութիւն արա,  
 Քեզ քանի՛ անդամ վիրաւորել եմ,  
 Բայց հաւատան ինձ, Աստուած է վըկայ  
 Յետոյ ինքըս էլ միշտ դղչացել եմ:  
 Ի՞նչ կը վայելէր ինձ պէս ջահէլին,  
 Անպատուել քեզ պէս ծեր ալևորին:  
 Դու էլ ինձ համար, մայրիկ, աղօթիր,  
 Ու սրտանց բարի ճանապարհ մաղթիր:  
 Շատ դըժուար գործի առաջ եմ կանգնած.  
 Սըրա ելքից է մեր բախտը կախուած:  
**Սառ.** Բարի ճանապարհ: Թո՞ղ Զարխափանը  
 Ամեն տեղ լինի քո օգնականը:  
 (Կրկին լսում է ձիու խրխնջյունը:)  
**Դաւ.** Կըրկին խըրիսընչաց Քուոկիկ-Զալալին,  
 Հըրեղէն իմ ձին:  
 Հիմա ուղղակի դէպի Սեղան-սար:  
**Զէն.-Յոն.** և Սառ. Բարի ճանապարհ, բարի ճանապարհ:  
 (Դաւիրը նեռանում է:)

ԶԵՆ-ՅՈՒ. ԱՌԱ, հազար ավասոս Քուռկիկ-Զալալին,  
Քուռկիկ-Զալալին.

ԱՌԱ, հազար ափսոս մեր գըլխի դիւտին,  
Մեր գըլխի դիւտին.

ԱՌԱ, հազար ափսոս կապէն—խաբուկին,  
Կապէն-խաբուկին.

ԱՌԱ, հազար ափսոս քամարը մէջքին,  
Քամարը մէջքին.

ԱՌԱ, հազար ափսոս մեր թուր կայծակին,  
Թուր կայծակին,

ԱՌԱ, հազար ափսոս խաչ-պատարագին,  
Խաչ-պատարագին...

(Նկատելով, որ հեռուից Դաւիթը ականջ է դնում:)

ԱՌԱ, հազար ափսոս Դաւիթն անգին,  
Դաւիթն անգին...

Դաւ. (Հեռուից) Հօրեղբայր, թէ դու ինձ չյիշէիր,

Գըլուխդ ուսիդ չոլիտի մընար...

Բայց դու յիշեցիր, անունըս արւիր,

Թո՞ղ Տէր Աստուած էլ քեզ կեսնք տայ երկար:  
(Գնում է:)

### Պ Ա Տ Կ Ե Բ Բ 8.

Սեղան-սարի մօտ մի բարձրութեան վրայ կանգնած է  
Դաւիթն իր զինակիցների հետ: Այս բարձրութեան մօտից  
սկսում է Մսրամելիքի բանակը: Դիշերն անցնելու վրայ է:  
Արևելեան հորիզոնում խաւարի թանձրութիւնը մեղմանում է,  
և երկինքը գնալով աւելի և աւելի յղկած արծաթի փայլ է  
ստանում: Մսրամելիքի ամբողջ բանակը խոր քնի մէջ է և իր  
լուրթեամբ գերեզմանատան տպաւորութիւն է թողնում: Հեռ-  
ւում շարժւում հն միայն մի քանի ստուերներ. դրանք պահա-  
պաններ են:

1-զին. Ի՞նչ մեծ բանակ է, Արարիչ Աստուած:

2-զին. Ուր որ նայում ես—վըրան է խրփած:

3-զին. Կարծես թէ մի ծով լինի անսահման։  
 4-զին. Բոլորը ձերմակ ձիւնի են նըման։  
 Դաւ. ՀՀյ-վանս, ընկերներ,  
      իմ քաջ կտրիճներ,  
      Այս վրամները թէ լինեն բոմբակ  
      Ու մենք թէժ կըրակ,  
      Ելի չենք կարող բոլորն այրել,  
      Թէ սըրանք լինեն գարնան գառնուկներ,  
      Մենք քաղցած գայլեր,  
      Ելի չենք կարող բոլորը մաքրել։  
 3-զին. Հիմա ամենքը պինդ մրրափում են։  
 4-զին. Պահապանները միայն արթուն են։  
 1-զին. Յարմար միջոց է. եկէք յարձակուենք  
      Եւ բանակի մէջ շրփոթմունք գրցենք։  
      Մինչև կը զարթնեն, զէնքերը կ'առնեն,  
      Մենք կէսը բըրդած կը լինենք արդէն։  
 Դաւ. Մենք գողեր ենք, որ գողերի նըման  
      Յարձակում գործենք թընամու վրան,  
      Որ յետոյ կանզնեն առեն մեր դիմաց.  
      «Դաւիթ գող եկաւ, Դաւիթ գող զընաց...»  
      Ո՛չ, թողէք առաջ ես իմաց անեմ,  
      Որ զարթնեն քընից և սլատրաստ լինեն։  
      (Բարձրաձայն գոչում է:)  
 Եյ, վեր կացէք,  
 Արթուն կացէք.  
      Ով արթուն է, թող ձին թամքի,  
      Ով ձին թամքեց, թող զէնքն առնի,  
      Ով զէնքն առաւ, թող ձին հեծնի։  
 1-զին. Ի՞նչ իրարանցում...  
 2-զին. Ի՞նչպէս խըռնուեցին...  
 3-զին. Ի՞նչ գոռում-դոչում...  
 4-զին. Փողերն հընչեցին...  
 Դաւ. Պատրաստ կացէք ահեղ կըռուին.  
      Դաւիթն եկաւ ձեր հաւարին...  
      Դէ, իմ քաջեր, հանէք սըրեր,

Վըրայ տըւէք, իմ կըարիճներ,  
Զահէլ-ջիւան իմ ընկերներ...

(Դաւիթը ձին հեծած և կայծակի-թուրը ձեռքին շողոզոցնելով առաջ է ընկնում. Կրա եսեից դինակիցները: Մը թերների մօտ մնում են միայն մի քանի պահապանները, ուրոնք դիտում են կոխւը և իրանց զգացումները հաղորդում իւրար):

- 1-պահ. Բահ, Դաւթին մըտիկ... Քուոկիկ-Զալալին  
Թըռչում է առես երկընքի առաջին...  
2-պահ. Այս ի՞նչ է... կարծես կայծակ է խըփում:  
1-պահ. Դաւթի թուրն է այնպէս Փըրֆըռում:  
2-պահ. Հաստու, լաւ հաստու անիբաւներին:  
1-պահ. Ընկերներն էլ ահա մօտեցան:  
2-պահ. Գըլուխներ է որ թըռչում են գետին:  
1-պահ. Տես, մի անգամից քանիսըն ընկան:  
2-պահ. Մերոնք կանգուն են:  
1-պահ. Ի՞նչպէս հընձում են...  
2-պահ. Մըրայ բանակում սարսափ է ընկել.  
Այս տեսակ աղէտ հեչ չէին տեսել:  
1-պահ. Ի՞նչպէս են մերոնք նըրանց հալածում...  
Իսկ և իսկ նըման ուժեղ փոթորկի,  
Որ ոչխարների հօտերը քըշում  
Խառնում է իրար, իրարով տալի:  
2-պահ. Բայց ուր է ինքը Մըրամելիքը:  
1-պահ. Զես տեսնում նըրա կոնաչ վըրանը,  
Ամենից մեծը և զեղեցիկը.  
Սյուեղ է հիմա Մըրայ իշխանը:  
2-պահ. Այս ի՞նչ ծերուկ է Դաւթին մօտենում:  
1-պահ. Դաւիթը նըրան ձեռքով է անում:  
2-պահ. Վահ, հէր կըսիւը դադարեց յանկարծ:  
1-պահ. Կարծեմ, ծերուկըն ինչ որ բան ասաց:  
2-պահ. Երեխ, խընդրեց իրանց խընայել  
Եւ յաղթութիւնը տարած համարել:  
1-պահ. Շուտ խելքի եկան, թէ չէ բանակում  
Ոչ ոք կենդանի չը պիտի մընար.  
Բոլորը պիտի փըռուէին դաշտում,

Եւ դաշտըն արեան ծով պիտի դառնար:  
Հ-պահ. Գալիս են... Տէսնենք, ի՞նչ լուր են բելում:  
(Քիչ յետոյ գալիս է Դաւիթը մի ծերումու հետ: Գալիս  
են և զինակիցները: Խաղաղութեան միջնորդը մի զառամիալ ա-  
լեռը է՝ երկայն և փառաւոր մօրուրով:)

Դաւ. Տեղ տըւէք ծերին: Պապիկ մօտեցիր:  
Դաղըմծ ես: Ասած քիչ հանգըստացիր:  
Մի ասա, տեսնեմ, այդ ծեր հասակում  
ի՞նչ գործ ունիս սաք ճակատամարտում:  
Քեզ ի՞նչ վայել է ձեռքդ թուր առնել  
Եւ տըմբտըմբալով կըռուի դաշտ ենել:  
Ախ, հագար անէծք Մըսրամելիքին:  
Զոռով է բերել, առանց մեր կամքին:  
Ի՞նչպէս թէ զոռով:  
Դերը զա, Դաւիթ, զոռով:  
Ինչքան զառամեալ ծերուկներ կային,  
Որ թուրըն հազիւ կարող են ըըռնել,  
Ինչքան նորելուկ արդաներ կային,  
Որոնք խաղերից գեռ չեն կըշտացել,  
Գանով, բըռունցքով  
Եւ մըտրակներով  
Այսեղ քըշեցին:  
Մըսուր մընացին  
Միայն խեղճ կանայք,  
Փոքրիկ երեխայք:  
Դաւ. Այս, ես տեսայ կային թէ ծերեր  
Եւ թէ նորելուկ շատ պատանիներ:  
Ժատաղ քո հոգուն, մեռնեմ արեիդ,  
Դըրանց մեղքի տակ մի՛ մըտնի, Դաւիթ.  
Որը կայ թագա փեսայ է—հարսին  
Թողել է իր տան արցունքըն աչքին.  
Որը՝ ճար-ճըրադ որդի է—իր մօր  
Թողել է մենակ խեղճ ու սդաւոր.  
Եւ որը՝ մանրիկ իր ճադուկներին  
Անոէր-անտէրունչ յանձնել է բախտին...

Դու հէր ես այդ խեղճ մարդկանց կոտորում  
Եւ մեզ, մեր որդոց ու մեր թռոներին  
Կայծակի թըրովըդ անխընայ փըրթում  
Առատ հընձի պէս թափում ես գետին...  
Քեզ ի՞նչ են արել այդ ժիւարները,  
Այդ խեղճ ու կըրակ արարածները...  
Թէ քէն ունիս գու, քո սըրտի քէնը  
Հանիք անիրաւ Մըրամելիքից.  
Մեզ էլ է նեղում այդ անօրէնը,  
Մենք էլ ենք այրուած նըրա չար ձեռից:  
Իսկ մեզ խընայիր, խընայիր, Դաւիթ,  
Դնւ, կանաչ-կըրարիճ Սասմայ քաջ իգիթ:  
Տես, ծեր տեղովը չոքած առաջիդ՝  
Ոտքերըդ ընկած՝ փէշդ պագնում եմ,  
Յատուկ աղաջում և պաղատում եմ—  
Գըմա, ողորմի՛ր, խընայիր դու մեզ:

**Դաւ.** Վեր կաց, խեղճ ծերուկ, հերիք լաց լինես:  
Կարծում ես, թէ շատ ուրախ էի որ  
Տեսնում էի ես թըրիս տակ կանդնած  
Անբեղ պատանի կամ ծեր ալեոր՝  
Ինչպէս մեռենիր՝ ահից գունատուած...

Բայց ի՞նչ անէի... կըուում տաքացած՝  
Զէի խընայում ձեզնից ոչ մէկին,

**Ժնըլ.** Ինչպէս վայել է պատերազմողին:  
Մեղնուկ կայ մի հին, լու սովորութիւն,

Որին Մըհերը միշտ կը հետևէր.

Երբ որ մի հըսկայ ոխ ունէր սըրտում,  
Իր թըշնամու հետ այսպէս կը վարուէր:

Կըուուի մէջ ոչ ոք չպիտի խառնուէր,  
Այլ երկու հոգով ելես առ երես

Պիտի ելնէին արձակ ասպարէզ.

Սովորութիւնըն այսպէս էր ահա.

Միմոյնըն էլ դուք արէք հիմա:

Մեծ ուրախութեամբ ընդունում եմ այն,

Ինչ որ ինձ, ծերուկ, առաջարկեցիր.

**Դաւ.**

Բայց կը ցանկացի իմանալ միայն,  
 Քո՞ իդձըն էր այդ, որ ինձ յայտնեցիր,  
 Թէ Մըսայ տէրը նոյնպէս կ'ուզենար,  
 Որ մեր կըռիւըն այսպէս վերջանար:  
**Ժաւ.**  
 Ես երաշխառոր կարող եմ լինել:  
**Դերը.**  
 Ուրեմքն այժըմ կարող ես մեկնել:  
 Գընա և յայտնիք Մըսրամելիքին,  
 Որ ըսպասում եմ իր պատասխանին:  
**Ժերը.**  
 Հէնց որ շեփորի ձայներ կը լըսես,  
 Դա կոչի նըշան պիտի համարես:  
 (Մերը զնում է:)  
**Դաւ.**  
 Աստուած խընայեց խեղճ տղաներին  
 Եւ այս ծերուկին ուղարկեց մեզ մօտ,—  
 Թէ չէ շատ մայրեր ոլիտի ողբային:  
 Որդոց տեսութեան յաւիտեան կարօտ:  
**1-զին.**  
 Բայց գիտես, Դաւիթ, թէկքեզ Աստուած  
 Տըւել է մեծ ոյժ և կարողութիւն,  
 Բայց վախենում եմ, մի՛ դուցէ յանկարծ  
 Քո դէմ կազմել են դաւադըրութիւն...  
**2-զին.**  
 Թո՞ համարձակուեն... Հապտ այսոեղ մենք  
 Ինչի՞ համար ենք, ո՞ր օրուայ համար...  
 Այնպիսի անգութ կոտորած կ'սնենք,  
 Որ ոչ տեսել է, ոչ լըսել աշխարհ...  
**3-զին.**  
 Ամենակարնդ մեր Տէր Երկնային,  
 Պահապան եղիք մեր ազիդ Դաւթին:  
**4-զին.**  
 Աստուած, մեր պետին հովանի եղիք  
 Եւ մի փառաւոր յաղթութիւն բաշխիք:  
**Դաւ.**  
 Իմ հաւատարիմ և քաջ ընկերներ, —  
 Ա՛խ, մասսագ լինեմ ամենքիդ հոգուն,  
 Աստուած կը լըսի ձեր աղաչանքներ  
 Եւ մեզ յաղթութիւն կ'ուղարկի փայլուն:  
 (Թշնամու բանակից խում են ժեփորի ձայներ:)  
 Նըշանը տըւին... Դէ, մընաք բարեւ:  
**1-զին.**  
 Տար մահ մըսլացուն, գու մեր լոյս-արեւ:  
**Դաւ.**  
 Մարութայ բարձր, սուրբ Աստուածածին,

Եւ դու աջ թեփս խաչ-պատարագին,  
Օդնական եղէք նորելուկ Դաւթին:  
Քոլորեքնան. Օդնական եղէք:  
Հնոների արձազանիքը. Օդնական եղէք: —

## Պ Ա Տ Կ Ե Բ Ծ 9

Մարամելիքի բանակը: Առաջնակողմում երևում է նրա  
վրանը, որը առանձնացած է միւս վրաններից և վերջին-  
ներից տարրերում է իր մեծութեամբ և կանաչ գոյնով:  
Մուսքի երկու կողմում կանդնած են խափշիկ պահապաններ՝  
զինուած. երկայն նիզակներով:

Մարամելիքը պատուէրներ է տալիս Կոսրադինին և Զար-  
խաղինին:

Մարամ. Դաւթի ծուղակը ճարողիկ կը հիւսէք,  
Որպէս զի ոչինչ կասկած չտանի,  
Եւ իր գեսնափոր բանալիցը երբէք  
Զելինի լոյս-աշխարհ, արև չտեսնի:  
Կը փորչէք քառսուն նետաչափ մի հոր,  
Բերնին կը ձըդէք երկաթէ մի թոռ,  
Թաղիք կը փըռէք թոռի երեսին,  
Որ իսպառ ծածկւի մեր այս մեծ գաղտնին.  
Եւ երբ կը ձըդէք ճաշի սեղանը,  
Կը տաք նըշանը:

Կոս. Վըստահ եղիք, տէք: Գընանք, Զարխադին:

(Կոսրադինը եւ Զարխադինը զնում են:)

Մարամ. Երբ՝ Դաւթիթ կը գայ, քաջ պահապաններ,  
Կ'ասէք ըսպասի. Ես քընած եմ գեռ:

(Մարամելիքը մտնում է վրանը: Քիչ յետոյ երևում է Դա-  
ւթիթը՝ նստած իր հրեղէն ձին, որը մօտալուտ կոխւը նախազ-  
գալով՝ խրինջում է: Դաւթիթը կանգ է առնում վրանի մուսքի  
առաջ:)

Դաւ. Մըսրամելիքին կանչեցէք այսոեղ,

Որ ըսկըսենք մեր կըսիւըն ահեղ:  
1-ին պահ. Նա քընած է գեռ. եօթն օր է քընում:

2-ըդ պահ. Երեքըն անցաւ. չորս օր է մընում:

Դաւ. Ել քընիլ չկայ.

Կանչեցէք թող գայ:

Թէ անմահ է նա, ես մահ եմ բերել,

Թէ անգըրող է, զըրողն եմ բերել:

1-ին պահ. Նա չի արթնանայ,

Մինչև որ քընից լաւ չկըշտանայ:

Դաւ. Զարթեցրէք նըրան տաքացրած շիշով,

Թէ այդ ել չօդնեց,—դութանի խոփով:

Շնուտ արէք, թէ չէ խըփեցի սըրով:

(Չեւըլ տանում է սրին: Պահապանները սարսափած ներս  
են մանում վրանը: Քիչ յետոյ կրկին դուրս են զալիս. երեսում  
է Մարամելիքը և, Դաւթին տեսնելուն պէս, հպարտ փչում է  
նրա վրայ:)

Դաւ. Քո փըչելովք Դաւիթ վայր ընկաւ:

Մսրամ. Քո յանցանքներըն անթիւ են, անբաւ:

Դաւ. Ասա գէթ մէկըն իմ յանցանքներից:

Մսրամ. Մըհերի աըղայ, լաւ մըտիկ տու ինձ:

Քեզ ով իրաւունք տըւեց նորոգել

Մարութայ սարի Զարիսափան վանքը,

Որ քանդել եմ ես, աւերակ դարձրել.—

Ահա առաջին քո մեծ յանցանքը:

Դաւ. Այդ իրաւունքըն ինձ Աստուած տըւեց

Հըրեղին պայծառ լոյսի նըշանով...

Այս, նա էր, որ ինձ հըրամայեց

Տաճարը շինել վաղեմի շըքով:

Դու կարծում էիր, այն աւերակը

Նոյն խեղճ գըրութեան միշտ պիտի մընար,

Եւ խըժդուժ գործիդ սև յիշատակը

Սերունդից սերունդ անցնէր գարէդար...

Ո՞չ, վերականգնեց Մարութայ դըլսին

Պայծառ տաճարըն անխախտ, անսասան,

Եւ տաճարի մէջ նորից հընչեցին

Հոգեոր տաղեր, սաղմոս, շարական...

(Լաւում է զանգերի ձայնը:)

- Ահա—լըսում ես—վանքի զանգերը...  
 Նըրանց ձայն տըւին բոլոր ձորերը...  
**Մարամ.** Ես այդ ձայները շուտով կը կըտեմ.  
 Տաճարը նորից քարուքանու կ'անեմ:  
**Դաւ.** Քանի որ շունչ կայ Դաւթի բերանում,  
 Մուրութայ վանքը կը մնայ կանգուն:  
**Մարամ.** Քանի կեանք ունիս, Մըհերի տըղայ,  
 Որ հըպարտ կանգնած՝ խօսում ես անահ.  
**Այ.** Ճեզ չը տեսնուած համարձակութիւն...  
 Բայց ես կը կոտրեմ քո հապատութիւն:  
 Դու եօթը տարուայ իմ խարջը պահնոս  
 Եւ հաւասարիմ իմ ծառաներին  
 Բազմութեան առաջ ծեծես, անարդես,  
 Եւ առնես կոտը տաս ճակատներին...  
**Դաւ.** Այս, արել եմ և չեմ ուրանում:  
 Բայց գեռ գըլխաւոր մի գործ է մընում,  
 Որի համար ես քեզ մօտ եմ եկել:  
**Մարամ.** Դու կամենում ես քո ոյժը փորձել:  
 Շատ լաւ, կը փորձենք: Քիչ համբերութիւն:  
 Դաւթի, մենք ունինք մի սովորութիւն—  
 Կըուելուց տառաջ սեղանի նըստել  
 Եւ լնկերաբար աղ ու հաց ուտել:  
 Կուզես հետեւել մեր սովորութեան:  
**Դաւ.** Ես հակասակ չեմ հիւրասիրութեան:  
 (Գալիս են Կոստադինը եւ Զարխադինը:)  
**Մարամ.** Ուրեմն զընա կոսբազինի հետ.  
 Ես էլ գալիս եմ. և խոկոն և եթ:  
 (Կոսբազինը առաջնորդում է Դաւթին գէտի պատրաստած տեղը: Նրանց ետեկից գնում է և Զարխադինը:)  
**Այսպէս** կը խոբեն անխելք յիմարին:  
 Քո որոգայթը պատրաստ է արդէն:  
 Գլնա, մօտեցիր քո գերեզմանին.  
 Հաշուած է կեանքիդ ամեն մի ըովէն:  
 (Մտնում են Խամբի խանում եւ Լելլա:)  
**Էյ.** Հայրիկ, Դաւթի հետ, թէ ինձ կը սիրես,

- Կըոփւ չը մըտնես:
- Մսրամ.* Ի՞նչո՞ւ, աղջիկը, նո՞ր բան ես լըսել:
- Լէյ.* Մի սարսափելի երազ եմ տեսել:
- Մսրամ.* Իսկ ես տեսել եմ մի շատ լաւ երազ.  
Եւ եթէ պատմեմ, դու կ'ուրախանաս:
- Լէյ.* Ո՞չ, հայր, ինձ լըսիր, սիրազս շատ կախ է:
- Մսրամ.* Իսկ իմը, Լէյլա, այսպէս ուրախ է:
- Լէյ.* Դու ծերացել ես, իսկ Դաւիթը—ջահէլ.  
Նա շատ ճարտիկ է, կարող է յաղթել:
- Մսրամ.* Ինձ յաղթողը դեռ մօրից չէ ծընուած:  
Ո՞վ է Դաւիթը—մի խեղճ գառնարած:
- Լէյ.* Ա՛խ, նըրա մասին ի՞նչեր են պատմում...
- Մսրամ.* Օրինակ, ասա, ես նոր եմ լըսում,
- Լէյ.* Քառսուն հարամի դեերին յաղթել,  
Զանդակ է զըրկել կոպալի զարկով.  
Քառսուն առիւծի բերան է պատուել  
Պողպատի նըման ամուր ձեռքերով:
- Մսրամ.* Ի՞նչ կայ որ, ես էլ կարող եմ անել.
- Լէյ.* Ասում են, նըրա աջ թեփ վըրան  
Կայ մի զօրտւոր խաչ-պատարագի,  
Որ պողովատէ երկաթի նըման  
Արգելք է լինում թուր ու նիզակի:
- Մսրամ.* Ես էլ շատ ունիմ այդ թըլիսներից,  
Եւ ապահով եմ պատահարներից:
- Լէյ.* Մի ձի էլ ունի, որ, ի՞նչպէս կայծակ,  
Կըտրում է օդը և թըռչում հեռուն,  
Արձակուած նետից աւելի արագ  
Հասնում է իր դէմ կանգնած թըշնամուն:  
Իսկ նըրա կըտրուկ հըրեղէն սուրը,  
Հազիւ մի անգամ շարժում է կուռը,  
Երկաթէ ձողը միջից կիսում է:
- Մսրամ.* Իսկ իմ կոպալը ջարգում անցնում է:
- Իսմ.* Մելիք, աղջիկըդ լաւ բան է ասում.  
Դու նըրա խօսքին իզուր չես լըսում:
- Մսրամ.* Ի՞նչո՞ւ, ասա ինձ, ես էլ իմանամ.

- Գուցէ դու էլ ես վատ երազ տեսել:  
 Իսմ. Երեխաների սիրուը շատ անգամ  
 Կարողանում է նախագուշակել  
 Ամեն մի վրտանգ, ամեն մի աղետ:  
 Ի՞նչ գործ ունիս դու Սամայ ծրոփ հետ:  
 Մսրամ. ԱՇ, երկուսըդ էլ երազ էք տեսել.  
 Զուր մի՛ աշխատէք, չէք կարող պահել:  
 (Երեւում են Կոսբաղինը եւ Զարխաղինը, երկուսն էլ  
 անջափ ուրախ:)
- Մսրամ. ԱՇ, սա մեզ համար բերում է մի լուր.  
 Ի՞նչ լուր է, տեսնենք, ուրանի թէ տըխուր:  
 Դաւիթն ի՞նչ եղաւ:  
 Կոս. Դաւիթը զընաց և անհետացաւ:  
 Աէյ. Այժըմ մւր է նա:;  
 Կոս. Մի խոր ձորի մէջ փռուած է հիմա:  
 Մսրամ. Կեցցէ Կոսբաղին: Այդ գործի համար:  
 Ընծանել կը տամ անթիւ անհամար:  
 Աէյ. Ուրեմըն... Դաւիթին զըցեցիք հորը:  
 Մսրամ. Այն, թող գընայ գանգատուի հօրը:  
 Կոս. Ի՞նչ միամիտ էր... ոչխարի նըման...  
 Սեղանի ծայրին հազիւ մօտեցաւ,  
 Ոտի տակ փըլուեց, ու զըլիսի վըրան  
 Ալընթարթի մէջ գետինըն անցաւ:  
 Աէյ. Հայր իմ, ուրեմըն էլ երկիւղ չկայ:  
 Մսրամ. Ի՞նչ երկիւղ... Հորում կը փըտի հիմա:  
 Դաւիթ էլ չկայ:  
 Բո պայծառ աստղը, Սասում, խաւարեց,  
 Գալիս եմ ահա ես քո հաւարին...  
 Դաւիթն աշխարհի երեսից, ջընջուեց,  
 Անտէր մընացիր, օ, վայ քո օրին...  
 Լաց, Սասում, ողբան.  
 Դաւիթ էլ չկայ:  
 Իէհ, ուրախացէք, իմ զօրականներ,  
 Թլմբուկ դարկեցէք, հսչեցրէք փողեր..  
 (Կառում է թմբկի ձայն եւ փողահարութիւն:)

Հրամայում եմ ձեզ—վաղ առաւօտեան  
Ամեն տեղ սըփուել ահեղ կոտորած,  
Հըրդեհել գիւղեր, քանդել Զորխափան՝  
Մարութայ դըլխին նորից կառուցուած...  
Պատերազմական հարուստ աւարից  
Դուք առատ բաժին կը ստանաք ինձնից.  
Մերըն են Սասմայ բոլոր դանձերը,  
Ես եմ այսուհետ և նըրա տէրը:  
Զգիպչել միայն գեղեցիկ կանանց  
Եւ կոյս աղջկանց.  
Դըրանք բոլորը մեզ են պատկանում,  
Դըրանց կը փակենք մեր հարեմներում:  
Իսկ տղամարդկանց՝ թէ ծեր թէ ջահէլ՝  
Անխընայ փըրթել սըրի անցընել...  
Մեր վըրէժը կուշո կը լուծենք հիմա.  
Դաւիթ էլ չկա:

## Պ Ա Տ Կ Ե Բ Ռ 10

Մորամելիքի բանակը մի ուրիշ կողմից, բաց ասպարէզ:  
Սեղան-սարի դլխից լսում է Ղճնով-Յոնանի որոտաձայն կոչ:

Զէնով-Յոնանի ծայնը. Որտեղ ես, Դաւիթ.  
Ի՞նչ եկաւ գըլխիդ...  
Յիշիր Մարութայ բարձր Աստուածածին,  
Յիշիր աջ թիկիդ խաչ-պատարագին...  
(Քիչ յետոյ Մորամելիքի բանակի մէջ սկսում են առաջակել. «Դաւիթը, Դաւիթը»... Մորամելիքը զուրս է դալիս իր վրանից՝ զարմացած և անհանդիսու: Հեռուից շտապով գալիս է Կոստադինը՝ սարսափահար և մեռելի պէս գունատ:)  
Մորամ. Այս ի՞նչ աղմուկ է լըսւում այն տեղից:  
Կոս. Տէր իս... Դաւիթը... ելել է հորից...  
Մորամ. Դաւիթը... ի՞նչպէս... և ի՞նչ հընալքով...  
Կոս. Մենք էլ չգիտենք, թէ ի՞նչպէս և ով...  
Կարող էր նըրան հորիցըն հսնել:

- Մարամ.* Ես հասկանում եմ... պարան են գցել...  
Նըրան օգնել են... Դաւաճանութիւնն...  
Դու պիտի գըտնես այդ չարագործին.  
Իմ առաջ դժւ ես պատասխանատուն...  
Գըտիր, եթէ ոչ—օ, վայ քո օրին...  
*Կոս.* Տէր, մի վըրգովուիր, եղիր ապահով,  
Որ յանցաւորը կը զըտնուի շուտով:  
*Մարամ.* Դէ իսկոյն և եթ, զըտէ՛ք և բերէ՛ք:  
(Կոսբաղինը կամենում է գնալ, նըրա հանդէպ երեսում է  
Դաւիթը՝ սաստիկ զայրոյթից աչքերն արնակալած:)  
*Դաւ.* Կանգնեցէք անշարժ... Տեղից չը շարժուէք...  
Ամօթ, բիւր ամօթ Մըսրամելլիքին,  
Աշխարհահըռչակ, անյաղթ հըոկային...  
Կըուռելուց առաջ լաւ պատուեցիր ինձ.  
Շընորհակալ եմ քո աղ ու հացից:  
Բայց հեշտ կամեցար ինձնից ազատուել...  
Դէ, շընորհ արա մէյդանը ելնել:  
*Մարամ.* Կ'ելնեմ. քեղանից վախեցող չկայ.  
Լեզուդ քեղ քաշիր, Մըհերի տըղայ:  
*Դաւ.* Եթէ ինձանից բընաւ վախ չը կամեցար  
Ինչու ուրեմն գու չը կամեցար  
Բաց կըուռում յաղթել քո ախոյեանին,  
Ինչպէս վայել է աղնիւ զինւորին...  
Այլ ցածահողի, վատ գողի նըման,  
Իմ դէմ լարեցիր գարշելի դարան...  
Մի նայիր այնտեղ—այն բըլրի զըլլին  
Քաջերիս գունդը պատըաստի կանգնած.  
Նըրանք ինձ խընդըռում, թախանձում էին,  
Որ հըրամայեմ վըրայ տալ յանկարծ,  
Երբ քո բանակըն առաւօտեան դէմ  
Մըրափի էր մըտել՝ անփոյթ և անդէն...  
Բայց ես չը թողի յարձակում գործել  
Եւ յաղթութիւնը գողութեամբ կորդել...  
Աղնիւ կըտրիճին վայել եր այսպէս:  
Բայց դու ի՞նչ արիր իմ դէմ, սեերես...

*Մարտ.* Լըռիր դու, ուամիկ, արխմար խոզարած.  
Ինչպէս ես խօսում իմ առաջ կանգնած:  
Ինձ համար մի մեծ պարծանք չէր, որ ես  
կըոփւ անէի և յաղթէի քեզ:

*Դաւ.* Դա քեզ համար մեծ պատիւ կը լինէր:  
Ինչի՞ համար են այդ գոռող խօսքեր.

Թէ պիտի կըոռւես, ըսկըսենք շուտով.

Ինչ որ ասացիր, ցոյց տուր և զործով:

*Մարտ.* Ցոյց կը տամ խւկոյն: Թո՞ղ առաջ գընամ  
Զըրահըս հագնեմ, պատաստուեմ և գամ:

*Դաւ.* Քեզ ըս չասում եմ անհամբերութեամբ:

(Մարամելիիլ զնում է դէպի իր Վրանը: Դաւիր հա-  
նում է սուրը եւ նայում:)

Ո՞վ թնւր-կայծակի, հաւատարմութեամբ

Ծառայիր դու ինձ, Մըների որդուն,

Ինչպէս որ իմ հօրն էիր ծառայում:

(Երեւում են Խամիլ եւ Ալյա եւ մօտենում են Պարփին:)

*Իսմ.* Դաւիթ, զաւակըս, ինձ չես ճանաչում:

Ես քո հարազատ մայրըն եմ, Դաւիթ:

*Դաւ.* Ի՞նչպէս հաւատամ ես քո խօսքերիդ...

Երանի չէ որ մայր ունենայի:

Մայր լինէր, ինչու որք կը մընայի:

Եթէ մայրըս ես, ինչպէս ասացիր,

Հապա հէր դու ինձ մայրութիւն չարիր:

Ես որք եմ եղել հօրից ու մօրից:

Ո՛չ, թէ հեռու էինք իրարից,

Բայց ուշ ու միտքըս քեզ հետ է եղել,

Քեզ միշտ սիրել եմ, կարօտըդ քաշել:

Եթէ դու, իրաւ, ինձ սիրում էիր,

Ինչու ուրեմըն ինձ հեռացըրիր,

Թողիր, որ մընամ անհէր ու անմէր,

Ամենքի աչքից ընկած ու անտէր...

Կամ ինչպէս է, որ դու յանձըն առար

Մըրամելիքին գընալ կընութեան,

Որ իմ հօր ծաղկած երկիրըն խալառ

Մատնեց իր գօրքի ասպատակութեան...

Իսլ. Եթէ դա կախուած լինէր իմ կամքից,

Զէի թողնի քեզ բաժանեն ինձնից:

Դաւ. Իսկ հօ գիտեի՞ր, ինչպէս նենգաբար

Վըճուել էին ինձ կենդանի թաղել.

Ի՞նչ արիր որդուդ փըրկութեան համար.

Հարադատ որդուդ այդպէս ես սիրել...

Իսլ. Վայ, ջուխտ աչքերով թռալ ես կուրանամ,

Եթէ միայն ինձ յայտնի էր մի բան:

Դաւիթ, զաւակըս, կըոփւ մի՛ արեք.

Հաշտուեցէք և մեղ ուրախացըրէ՞ք:

Դաւ. Այգքան ցաւում ես քո մարդու համար:

Իսլ. Ցաւում եմ թէ՛ քեզ, թէ՛ նլուա համար:

Լէյ. Ա՛խ, կանաչ-կըտրիճ Սասմայ քաջ իգիթ,

Հաշտուիք հօրըս հետ, մեռնեմ արեփու:

(Գալիս է Մըսրամելիքը զրահաւորուած. գլխին մատաղեայ սաղաւարտ, մի ձեռքում ահապին վահան, իսկ միւս ձեռքում ծանր գուրզը:)

Մ'սրամ. Եթէ պատրաստ ես, դուրս եկ ասպարէզ:

Դաւ. Վաղուց պատրաստ եմ, լսպասում եմ քեզ:

Մ'սրամ. Դու անցիր այն կողմ, իսկ ես — այստեղից: —

(Դաւիթն անցնում է:)

Առաջին զարկը պատկանում է ինձ:

Դաւ. Երկրորդ և երրորդ հարուածըն էլ քեզ,

Եթէ առաջին անգամ վըրխակես:

(Մարամելիքը ձեռքով նշան է անում, փողերը հնչեցնուեն: Դաւիթը ճարպիկութեամբ խուսափում է գուրզի հարուածից, որ նետում է Մըսրամելիքն իր բոլոր ուժով: Երկրորդ և երրորդ հարուածներն էլ չեն համուում նպատակին:)

Մ'սրամ. (զայռոյրով) Անիծեալ եմ գուրզ գաւաճանեցիր...

Դաւ. Իմըս է հերթը: Տեղումըդ կանգնիր:

(Դաւիթը հանում է կայծակի սուրբ: Իսմիլը և Լէյան միջամտում են:)

Լէյ. Դաւիթ, խընայիր իմ հօր, մի՛ սոլանիր...

Իսլ. Այս խեղճ աղջըկան հօրից մի՛ զըրկիր...

Դաւ. Եյ, աշխարհ, աշխարհ... երբ նա էր խըփում,

Դուք, մայր և աղջիկ, սլավանձուել էիք,  
իսկ երբ որ հերթը Դաւթին է համառմ,  
Յանկարծ լաց եղաք և հեկեկացիք...  
Նըշանը արւէք: (Փողերը հնչեցնում են:)  
Ով դու, Մարութայ սնորբ Աստուածածին  
Եւ դու, աջ թիվս խաչ-պատարագին,  
Օգնական եղէք...

(Դաւթիթը մի զօրաւոր հարուած է տալիս հակառակոր-  
դին: Մորամելիթը մի զարհուրելի հառաջանք է արձակում և  
ընկճում է գետին այնպիսի թափով, կարծես մի ահագին քա-  
րափ փլուեց և վայր ընկաւ գետին:)

Լէյ. (նչարով) Ա՛խ, հայր իմ, հայր իմ...

Իսմ. Օ՛, վայ մեր գըլխին...

Ժերը. Կեցցէ՛ գոչեցէ՛ք. կեցցէ Դաւթիթը:  
Ամենքը կեցցէ՛ Դաւթիթը... կեցցէ Դաւթիթը...

Դաւ. Մըսրայ ժողովուրդ, դէ՛, երթաք բարով:

Զեզ համար մի նոր իշխան ընտրեցէ՛ք,

Իմաստուն խելքով և գրթոտ սըրտով,

Եւ հաշտ ու խաղաղ կառավարուեցէ՛ք:

Ուրախացըրէ՛ք կըրկին ձեր կանանց,

Զեր խեղճ մայրերին, որդոց, աղջըկանց,

Որ սե սղի մէջ լալով շարունակ

Զէին ըսպասում, որ ետ կը գառնաք:

Զեր սուրբ վաթանը ես ձեզ եմ թողնում,

Զեզանից ոչինչ ես չեմ պահանջում:

Թող այսուհետև Սասում և Մըսուր

Մուսանան անցած օրերը տըխուր,

Քող ծըլեն, ծաղկեն, մընան միշտ դալար

Սասում իր համար, Մըսուր իր համար:

Լիւն Մանուէլնան

Վ Ե Բ Զ

# Դ Ե Պ Ի Ա Ն Ի

Լուսարացին ամսձկանոք էի սպասում, որ աւերակներին վերստին այց ելնեմ: Եւ եկաւ այդ լուսաբացը, աշնանային մի սիրուն առաւօտ արարաշխարհի հետ շողագարգեց նաև աւերակունքն: Երկնքում ոչ մի ամպ, լեռնակատարները առես մի առանձին հաճոյքով պայծառ ճակատները բացել են արևի առաջ և ժապում են վեհօրէն: Ախուրեանի թիկունքից բարձրացող բարակ շամանդավաղը արևի առաջին ցոլքերի տակ ցրիւ եկաւ և մոայլ ձորը իր նօթոտ ժայռերի տակ նոյնալէս մի փոքր փայլ առաւ: Այս ու այն տեղ թուչուններ էլ երեացին: Մայր եկեղեցու կորի վրայից հնչուեց նաև աղաւնիների կըզդոց: Լուս և մշտապէս հեացող խլէզներ կան, աւերակների սիրահար զիսուններ, որոնք իրանց խոռոշներից տափակ, նողկալի գլուխներ հանած՝ արևի առաջին շողերի տակ աշխատում են տաքացնել իրանց միշտ սառն մաշկը: Ծաղկաձորում հընչուեց մի հովուի ճիչը, այնտեղ ոչխարներ կան, որոնք արածում են քարերի տակ, ջրերի ափին, փոսերում մոռացուած վտիտ խոռոշերը: Իմ գլխի վրայից անցաւ կոռւնչէնը մի երամ և նրանց մելամաղձիկ երգը հնչուեց աւերակներից բարձր, և ապա հեռանալով մեղմիւ մարեց օդեղին բարձունքում, որպէս լալկան քնարի վերջին հեծկլտանքներ: Ահա բոլորը, Անին համարեա լուռ է նաև ցերեկով:

Եւ ես քայլում եմ այն վայրերով, ուր դարերի ընթացքում այնքան սերունդներ տքնել են, չարչարուել, յուսացել ու երագլւ, ուրախացել են ու լացել, ապա անցնելով թաղուել են մութ անյայտի ծոցում: Եւ այս քարերը այլանդաւկօրէն փշուրփշուր՝ ինչպէս մի խօլ մըրկի ժամանակ հոկայ ձեաներով իւրար զարկուած՝ թափուել են վրայ կոյտ-կոյտ, անձև, վհատեցուցիչ վիրաւորական: Որքամն աշխատանը և որքամն խանդ, որքան յոյսեր և երազներ փշուրփած նրանց հետ: Կարծես քարեր

\* ) Տես «Մուլք» № 4

չեն առաջդ, այլ կոխվըրտուած, անողորմ կերպով խեղաթիւրուած կեանքեր, որոնք դեռ երէկ ապրում էին խանգալառ ու յուսալից:

Առանց որոշ նպատակի, մոլար ու յուսարեկ քայլում ես անվերջ, խորդ ու բորդ թումբերի վրայից, դարիվեր, դարիվար, և ամեն տեղ քարեր ու քարեր Մի անիծուած ձեռք կամեցել է, որ սրանք անվերջ լինին, այս յղկուած, քանդակուած, դրուագաղարդ քարերը, որոնցից իւրաքանչիւրի վրայ գործել է մի հմուտ ձեռք, իւրաքանչիւր զարդի վրայ կուցել է մի գլուխ, խոհուն, երազուն և սքանչելի:

Հայկական արուեստի, ճարտարութեան, փայլուն քաղաքակրթութեան մի հսկայական դամրարան—ահա թէ ի՞նչ է նըշանակում Անի: Այստեղ հազար ձեռներով սպանուած է մեր ցեղական սրանչելի հանձորը և հազարհազար կտորներով վըռուած է անձրևների և հողմերի տակ: Արևելքի և արևմուտքի դարաւոր ու արիւնոտ պայքարի պատմութիւնն է գրած այս աւերակների վէրքերի վրայ, այս փշուրփշուր քարակոյաերի տակ: Այստեղ՝ հրէշաւոր սպանալի կերպով դէպի երկինք ցցուած պարիսպների, խորտակուած գմբէթների ու աշտարակների, այս գաղանախորհուրդ բլուրների սասորերկեռեայ շէնքերի մէջ, քարերի այս ծովում խողխողուած է արևմտեան մտքի, ստեղծագործող սրանչելի իդէայի յառաջսպահը, ինքը հայ ժողովուրդը: Համաշխարհային քաղաքակրթութեան պատմութեան մէջ, աւերուած Անին՝ ուս ոճիրն է, բարբարոսութեան զարհուրելի յաղթանակը, վերադարձը՝ դէպի արիւնի և սոսկումի դարերը, երբ միտքը երկնում էր բարին ու գեղեցիկը լոկոնչութեան համար:

Սալամինում և Մարաթոնում սկսուած արեւելքի և արևմուտքի վիթխարի պայքարը Հոռմի լէգէոնների շնորհիւ անցաւ Հելեսպոնտոսը և հազար տարիներ շարուակ նրա աւերիչ կրակը մըխաց հայկական բարձունքներում, և լափեց, մաշեց մեր բոլոր ոյժերը, մեր եռանդը, մեր կեանքը: Դեռ երբէք մի պայքար աւելի երկարատեն, աւելի խոշոր ու կատաղի չեղաւ, քան ասիւական ոռնացող խուժանների կոխու արևմուտքի քաղաքակրթութեան դէմ, և, Յունաստանից մինչև Հնդկաստան, ոչ մի տեղ նրա յեղյեղումները աւելի աւերիչ, աւելի արիւնոտ չեղան, քան Հայաստանում, յատկապէս Անիում: Սա աւերած չէ, այլ ոչընչութիւն, խսպասսպու ջնջումն: Կարծես այս շքեղ քաղաքի ճոխութիւնն ու գեղեցկութիւնը վիրաւորել է անապատների ամայութեանն ու խստութեանը սովոր բիրտ հոգիներին, որոնք խորշակներով թափ առած՝ կատաղօրէն փշել են, ոչ ատամ-

ներով կրծել են այս քարերը և ընկել, ոչնչացել նրանց հետո  
Ամեն մի քար, ամեն մի պտառ ու շնչը գեռ կրում է իր վրայ  
բիրտ, քարքարոս ասիացիների, արխմոնուշտ թաթարների  
հարուածների հետքերը. քաղաքակրթութիւնը, գեղեցկութիւնը,  
արուեստը, սպանուած են, բայց վայրենութիւնը գեռ ապ-  
րում է: Անին տեսնելուց յետոյ հասկանալի է դառնում, թէ  
Բնչու արևելքի այնքան հինաւուրց, խոշոր քաղաքներից լոկ  
անուններ ու յիշողութիւններ են մնացել:

Արևելքն իր զաւակները լափող կոռնում է: Դեռ այսօր  
էլ Փոքր Ասիայում նա կանոնած է սպանուշտ,  
և հայկական բարձունքների վրայ նրա ճիրանների մէջ թրպըր-  
տում է հինաւուրց կուտուրական ազգը, անկարող կատարե-  
լու իր քաղաքակրթական միսիան, որի համար տառապանքը  
իր պատմական ճակատագիրն եղաւ:

Ահա թէ Բնչու տւերուած Անին և՛ հին է և՛ նոր. նա  
նոյնքան անցեալ է, որքան և այժմէութիւն: Մեր չտեսնուած  
էպոպէայի մի արիւնու էջն է նա:

Ծանր, խեղղող խոհներ, Բբր կը թողնէք մեղ. բայց ճնշող  
կոշմարը վախճան չունի, ու մտքերը թունաւոր բգէզների ալէս  
պաշարում են այցելուի գլուխը և նրա հետ գնում անվերջ:

Քայլում եմ առաջ, միշտ առաջ:

Եւ այս շնչը բը... պալատոններ, աշտարակներ, մատուռ-  
ներ, եկեղեցիներ, պարխապնկեր ցաւագնօրէն հոյակառ՝ իրանց  
խեղաթիւրումների մէջ, արտասուելի ու գեղեցիկ՝ իրանց մշտա-  
կան աւերածով՝ յաւիտենապէս բողոքող մի բան ունեն իրանց  
խրոխ կերուածքի մէջ և վերջնական անկումից առաջ սպառ-  
նալիք են ուղղում նրանց թշնամիներին: Եւ թշնամիները չկան,  
այն բիրտ, անասնական գլուխները, որոնք երբէք դէպի վեր  
չնայեցին, վսեմն ու սրանչելին ըմբռնելու անկարող եղան: Դարեր  
շարունակ նրանք կրծել են ճարտարապեսութեան այս  
հրաշալիքների հիմքերը, փշրել են և աւերել՝ ինչով կարողա-  
ցել են և սակայն այս շնչքերը իրանց վիրաւոր հիմքերով,  
տապալուած կատարներով գարձեալ չեն փչում. կանգնած են  
գեռ՝ իրանց նազելի իրանով յենուած մի հատ սիւնի, մի քա-  
րի, աւել կամարի, մի փոքր շաղախի վրայ, կանգնած են հեղ-  
նելով ժամանակը ու չարագործ ձեռները: Գետնից համարեա  
կարուած՝ հիմքերի քարերը ցաք ու ցրիւ, պատուանդանները  
վշուր-վշուր իրանց ոտքերի տակ, նրանք ամենքն էլ, առես  
նղովելով աշխարհը, փոքրում են խափ առնել և տարուել դէպի  
անհունը, վեհ ու ցաւոտ մի բան կայ այս փոքրիկ փնջածե ե-  
կեղեցիների լուռթեան մէջ, որոնք համարեա կախուած են օղի  
Մայիս, 1905.

մէջ, զժկոհելով մայր երկրից, ուր գեղեցիկը դժբաղդ է, լարին՝ անարդուած, միտքը՝ սպանուած, ազատութիւնն ու խիղճը՝ արորուած, ուր գարերը՝ արխիսի և ոճրի հարուստ աւարով ծանրաբեռնուած՝ անվերջ շրջաններ են կատարում միւնոյն տեղում: Եւ գարերի յետելից մարդը՝ այս յաւիտենական զոհն ու դահիճը, սողում է իր հոգու աւերակների վրայ, սողում է, լալիս, կրծոտում, բրձրում սեփական միտը, սուանց ազատուելու իր գլխին ծանրացող չարիքից:

Քայլում եմ առաջ և ինձ հետ է քամին... աւերակների մշտական քամին, որ հեծեծում է անվերջ, և չգիտես ինչու է ամեն տեղ: Նա որ խօսեցնել զիտէ երկնքից կախուած այս շէնքերը, նա է որ ուշ գիշերին, լուսութեան ու խաւարի մէջ բաց է անում այս քարերի լեզուն և նրանց հետ միասին կարծես շշնջում է մի հատիկ բառ՝ «անէծը...»

Աւերածն այսուղ այնքան զարհուրելի է, այնպէս համատարած՝ որ երբ մարդ կանգուն է տեսնում մի շէնք, մի կամար, մի սիւն, զարմունում է և գուցէ չլշտանայ, եթէ նա էլ հէնց իր աչքի առաջ ընկնի ու խորտակուի միւսների պէս: Հոգիների ներգաշնակութեան պահանջը առեղծուածային է. անգամ աւերածի մէջ նա փնդում է կատարելութիւն: Երբ մահը համատարած է, բնչ արժեն մը քանի կեանքերը, երբ անտառը արմատախիլ չնշուած է փոթորկով, երկու ճղակոր ծառերի տեսքը դառնում է վրդովիցուցիչ: Ուզում ես, որ գերեզմանը կատարեալ լինի, ոչնչութեան և սարսափի իր բոլոր թափով իշխի:

Ինչպէս որ ճակատամարտի զաշտում փռուած զիտակների տակ ծածկուած են լինում կիսակինզան, տնքացող վիրաւորներ, ճիշտ այնպէս Անիի այս արտաքին տեհրածի, այս փշրուած քարերի, հիմն ի վեր տապալուած շինութիւնների ատկ կան տակաւին կիսաւեր, կամ գուցէ բոլորովին կանգուն շէնքեր: Ստորերկրեայ Անին է այնուղ ծածկուած, նա է, որ այնպէս խուլ զինդիւն է բարձրացնում, այցելուի ոտների տակ: Խաւարի աշխարհն է այն, որ զարերից ի վեր զրաւել են մողէսները, օձերը, խլէզները, հաղար ու մի դժնիանի սոզունները: Նրանք երբեմն գուրս են սողում այնտեղից, իրանց հեղնող համրութեամբ զայրացնում հետաքրքիր այցելուին, ապա շտապով ծածկուած, կարծեն ցոյց տալու համար, թէ իրանց յետելից ոչ ոք սիրտ չի անի իջնել թէ այնուեղ՝ ներքևսւմ, իրանք միահեծան տէր են:

Փոքրիկ, կանաչաւուն բաղմաթիւ թմբեր կան, մոռացուած, մաշուած գերեզմանների նման: Զգոյշ քայլիր նրանց

վրայով, նայիր ոտքիդ առաջը, տեղ-տեղ հերդիկներ կան բացուած, ուր կարելի է ներս դորուել: Նայում ես այդ անցքեցից, հողի վլուածքն է փակում հայեացք, կամ խաւարը: Այն տեղ է միւս Անին, և դու տեսնել չես կարողանում: Յուսահատ ու գայրացած ոտքով դոփում ես գետինը, որ վերստին դնդում է ցաւով, ու դու առաջ ես անցնում դէպի նոր յուսախարութիւններ, նոր կոկիծներ:

Ահա և մի բազանիք, բազմանկիւնի, կամարակապ, ցածրիկ մի շինութիւն: Աւազանները չկան, բայց մնում են դեռ ջրատար անցքերը, պատերի միջից, ցածրիկ դռները, բաժանմունքները: Անարուեստ չէնք է, բայց և այնպէս ուշագրաւ: Մասնաւոր էր արգեօր աս, մի իշխանի սեփականութիւն, թէ հասարաւկան: Իշխանական պալատներին կից անշուշտ կային ուրիշները, ինչպէս էին կաղմուած նրանք, և ինչու հետքն անգամ չկայ, ովզ կարող է ասել:

Ահա բազմաթիւ ձիթահանքեր, պատերից միայն հիմքերն են մնացել և նրանց վրայ է ընկած դեռ կոլոր տհագին ձիթահան քարը: Հին աշխարհին լոյս մատակարարող գործարաններն են որպանք, տաճարներ ու մասնաւոր տներ այստեղից էին ստանում իրանց կանթենիների ձէթը: Ինչո՞վ էին լուսաւորում պալատները, ինչ ձեւ ունեին ջահերը, ճրագները, կանթեղները, զարձեալ չղիտենք:

Դարձեալ աւերակներ, դարձեալ հիմքեր, պատեր, կամարների մնացորդներ, որոնք եկեղեցիներ չեն, և ոչ էլ մասնաւոր ընակարաններ, և որոնց բոլորին էլ մեր ժողովրդական փութեկոտ, միամիտ, երբեմն համարձակ հնասէրները մի մի անուն են դրել: Իրանց կամքն է, հնասէրը եթէ բանաստեղծ չէ, բայց դարձեալ երևակայութիւն ունի ստեղծագործեան հետամուս է, որ սիլում է պարզութիւն, գաղտնիքից խորշում է: Այնուամենայնիւ Անին շարունակում է մնալ մի համը վհուկ, որ եռանդով թստինուում է մեր աչքերից: Եկեղեցիներից դուրս, որոնց անունները յայտնի են, արձանագրութիւններից մնացած շէնքերի ինչ լինելը այնքան անորոշ է, որ նրանց մասին խօսելիս՝ «գիտակ» անձինք ստիպուած են միշտ սկսել «ասում են» բասից:

Ասում են... և ճշմարտութիւնը դեռ ոչ ոք չասաց: Վերելիշած բազանիքն ու ձիթահանքերը դարձեալ «ասում են». ոչ աւանդութիւն կայ, ոչ պատմութիւն և ոչ էլ գիտութիւն: Մընում է խղճալի «ասում են»-ը, որի հիմունքը սովորաբար մի մարդի բերնից դուրս փախած միամիտ կարծիքն է:

Այլքանը չափազանց քիչ է!

Դուրս ես զալիս մի շնոքից և զարձեալ քայլում ես վեր՝ վար, վեր՝ վար, մեռած քաղաքի բեկորների, փշրուած քարերի այս ժխորի միջից։ Այնքան էլ հեշտ չէ. ոտքդ գիտչում է այս ու այն կոյտին, իշնում ես այս կամ այն փոռը, կրկին բարձրանում, զարձեալ իշնում։ Եւ հոգիդ յոգնում է անորոշութեան, անյայտութեան մի ծանր բեռի տակ, որ Մեծ Լոռոթիւնը զնում է կրծքիդ, ինչպէս կապարի մի ահազին զանդուած։ Զգիտես ինչի՞ վրայ ես քայլում, ի՞նչ ես կոխոսում ուսներով, ուսկորնե՞ր ես արորում, թէ արիւն ու արցունք, գերեզման, բնակութիւնն, թէ ամնշան ըլլուր։ Ո՞վ է սալրել այս ստորերկրեայ շնոքերում, քեզանից առաջ. ով է շնջել այս օդը, կոխել այս հողը, աղօթել այն տաճարներում, ի՞նչ է երազել, ի՞նչ երդել, ի՞նչ անիծել կամ պաշտել։ Կ'ուզէիր այդ բոլորն իմանալ, որովհետեւ ով և լինի նա, ըստ նախահայրն է, նրա արիւնը երակներիդ և երազները հոգուդ մէջ ես կրում, նրա պէս ես լալիս, նրա պէս ծիծաղում և աղօթում։ Եւ հողիդ այրեւում է հետաքրքրութիւնից, կ'ուզէիր իմանալ այդ բոլորը, և սակայն հնար չկայ, մութ անյայտը հական վհուկի պէս թուխս է նստել գաղտնիքների վրայ, պահում է այդ մանցած-գնացած աշխարհը իր ու թեերի տակ, պահում է մի յամառ, յուսահատկուցիչ նախանձախնդրութեամբ։

Եւ ցաւի ու զայրոյթի մի խորին զգացմունք պաշարում է հոգիդ, ուրցնում է կուրծքդ այս անողորմ ու խեղդող անյայտութեան զարերի այս խաւարի առաջ, որ ծածկում է քեզանից հայրերիդ կեանքը, թաղյնում է այնքան նուիրական ու թանկագին ճշմարտութիւններ։ Քիչ է մնում խելազարօրէն տարուհս այս ցից-ցից քարակոյտերի միջով, ընկնես, արիւնոտես ձեռք ու ոտքդ, վեր կենաս, զարձեալ վազես մի շնոքից միւսը, մի թմրից, մի պատից միւսը, և շարունակ ճշաս սրտապատառ, «Խօսեցէք, խօսեցէք, էյ համր ու անողորմ քարեր, նազդք ձեզ, եթէ դուք լոէք. խօսեցէք... զարհուրելի է ձեր լուռթիւնը...»

Բայց վազիր, փշրիւ ձեռքդ ու ոտքդ, որքան կ'ուզես, ճշամի ձախ ունիս, քեզ պատախանողը զարձեալ այս լալկան քամին է։ Քարերը լուռ են, և շնոքերը՝ համր ու վիրաւոր, շարունակուն են թափ առնել դէսի երկինք փախչելու համար քեզնից, աշխարհից, ամենքից։

Եւ պատախան չկայ, ճշմարտութեան ծարաւ հողին մնում է պապակուած։ Ո՞վ վերջապէս խօսը կը տայ այս համր սփինքսին, ով գուրս կը քաշի զամբարանից մեր Անին, մեր երեկուայ անցեալը, մեր վասոքը, նա՞ որ չի թողնում մեղ՝ ճաշկատներս կախել օտարի առաջ, որ ազատում է մեզ արհամարհ հանքից և հնար է տալիս վիրաւորանքի հանդէպ խրոխտալ։

Նա այստեղ է, այս աւերակների մէջ, այս քարակոյտերի ու թմբերի տակ: Միթէ չպէտք է մի օր նա լոյս աշխարհ գայ: Թող նա թաղուած լինի, թող մահուան զեղնութեամբ ծածկուած լինի նրա գեղանի գէմքը, գլխին մոխիր ցանուած և բազուկները անողորմ կերպով փշուուած, նա այնուամենայնիւ այնպէս հարուստ է հմայքով, փայլով, գեղեցկութեան այնքան գանձեր ունի իր հետ թագրած: Յետ քաշէր զերեղմանի դեղին հողը, և թողէր մենք տեսնենք, թող աշխարհ տեսնի, չը որ նա իր հետ բերելու է մեր հոգին, մեր ցեղական հանճարը, ստեղծագործող կարողութեան գաղտնիքը: Նա իր հետ կը բերի պատմակոն ճշմարտութեան անզուգական լոյսը. մեռանք խաւարի, անյայտութեան մէջ խարխափելով: Ոչ մենք ենք մեղ ճանաչում, ոչ օտարը: Մեր ամբողջ կեանքը նրա մոխիրների տակն է: Անողորմ գիտութիւն, յետ տուր մեր մեղ Անին:

Յունաստանը, իտալիան աւերակների միջից դուրս սուզացին, փոշոտ, վիրաւոր ձեւներով, մաղերը մոխրապատ ու խոխ, զէմքերը գունատ ու վտիտ, ծնկների վրայ զողգողալով բարձրացան իրանց զերեզմաններից և աշխարհը ժատաց նըրանց, աշխարհը սքանչացաւ: Դարերի մառախուզի միջից նըրանք իրանց հետ բերում էին Վերածնութեան սքանչելի աստղը, և կարողացան համարձակութեամբ կարկառել բազուկները, արեի տակ անկիւն խնդրել:

Լուս կաց, լուս, ինեղճ, երազող անցուրական, յափշտակութեան փայլվուն թերի վրայ գուր ես տարւում զէպի Միջերկականը, ուր հին աշխարհի երկու գեղանի քոյրերը՝ Յունաստան և Իտալիա, վաղուց են մոռացել իրանց վէրքերի մորմոքը և իրանք եռանգով հանում են հողերի տակից իրանց փառքն ու գանձերը: Անիունն հս գու, արենքի սև երկնքի տակ, ուր մահն արագ է ու ահաւոր, իսկ վերածնութիւնը չափազանց դանդաղ:

Եւ ով պէտք է խաւարի միջից դուրս հանի Անին. թիւրքն ու քիւրով, գժբախտարար նաև հայերը՝ փշուել, կողոպտել ու տարել են սրա զարգերը, ժամանակը կըծել է քարերը, իսկ մեր ողորմելի սերունդը շարունակում է նոյն վանդալութեան ու սրբապղծութեան գործը նոյն եղանակով: Նա զալիս է այստեղ, անհամ, ճռճռան, ձանձրալի բառերը վուում մի համբերատար մատեանի թերթերի վրայ, որ վարդապետը սիրով գնում է այցելուի տրամադրութեան տակ, և տափա դուրս է գալիս իր խղճուկ տխրութիւնը ման ածում աւերակների մէջ, քարերի վըրայ զըռտելով իր ոչինչ անունը: Գեղարուհսա, միտք, պատմութիւն, ամբողջ քաղաքակրթութիւնը, սպանուած այստեղ և նը-

բանց նուիրական գերեզմանի վրայ մենք տեսնում ենք միայն զանազան թշուառ ոչնչութիւնների անուններ: Սնամէջ, անմայլ գոյութիւնների անմահանալու տեսչը աւելի ողորմելի, աւելի դատարկ արտայայտութիւն չէր կարող ունենալ, քան այս: Մարդիկ նեղութիւն են կրել, եկել են այստեղ, տխրել են, ման եկել, և կ'ուզէին, որ յաջորդ այցելուները, ի՞նչ եմ ասում, յաջորդ սերունդներն անդամ իմանան նրանց կեանքի այդ միակ սխրագործութիւնը: Անիի քարերը յարմարագոյն յուշարձաններն են, համր, համբերող, անտէր և յըդկուած, գրիր որչափ ուզում ես, ի՞նչ ուզում ես: Եւ անմահութեան այս հոկայ գամբարանի վրայ փորձել են անմահանալ այնքան ոչնչութիւններ...

Ո՞ւր առես չեն գրուած անուններ, ո՞ր պատը, ո՞ր քարը, ո՞ր յիշատակարանը իր վրայ չի կրում մի քանի տաւոննեակ անուններ: Քիւրզը, թիւրքը չանգուելով բարձրացել են վեր մի սիրուն զարդ, մի քար պոկելու համար, հայը եկել է նոյն տեղերում իր անունը գրելու: Ես տեսել եմ ուրիշ երկրների աւելակների վրայ էլ անուններ, այս ողորմելի ունայն անմահութեան հետամուտ ամբոխներ և ամբոխամիտներ, բայց հայը գրանց բոլորին գերազանցել է: Այստեղ հայ ամբոխը կանխամտածուած կերպով բերել է իր հետ զանազան գոյնի ներկեր և նրանցով զրել իր անունը, որ իր անհամ յիշատակը անջնջելի մնայ: Նոյնիսկ Մայր եկեղեցու, ինչպէս Ս. Լուսաւորչի եկեղեցու սեղանները, խաչկանները, պատկերներն անդամ ծածկուած են զանազան անուններով:

Ո՞ւհ այդ անունները... Նրանք ամեն տեղ են, նրանք անտանելի են, արտասուելի՝ մինոյն ժամանակ վհատեցուցիչ է մեծաղործ հայրերի թողած այս սրանչելիքների վրայ տեսնել՝ նրանց խեղճ որդիների չնշին անունները:

Աւ. Ահարոննեան

(Կը շաբունակուի)

# ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Կատուների եւ մկների կոխը \*)

(Պարսկական երդիծական պօէմա)

ԵՕՅԵԼՅԴՀ ԶԱՔԱՆԻՇ

Յանոն ամենատղարմած եւ ամենազութ Աստծոյ

## I

Եթէ հասկացող ես զու, ունիս լսելք, ուշիմութիւն—լսիր,  
որ պատմենք քեզ կատուի և մկների առակլը:

Յանգաւոր է նա, շարուած մարջանի նման. և եթէ յէ՛  
բաւի կարողանաս ըմբռնել միտքը—կը հիանաս իմաստովը:

Կար մի ժամանակ—անշուշտ Աստծոյ հրամանով—խոշոր  
մի կատու, նման առիւծի: Աչքերը սաթանման, թերթերունքը՝  
ները սուր-սուր, պոչը՝ օձապտոյա, ճակատը՝ վազրի: Շատ  
խորամանի էր անառակը. իսկ փորը թմբկաձև, կուրծքը՝ լաւ  
բրդու, յօնքն՝ աղեղնաձև, ատամները՝ որի պէս կտրող:

Եւ այս իսկ կատուն, իր ընկերներով ապրելու էր եկել  
Քիրմանում:

Ճշմարիտ է, քիչ չէին լլում նրանք կաթսայ ու պնակէ,  
գգալ ու աման, բայց և ուշիմ էին, խելօք ու ճարպիկ:

\*) Այս չին, շատ հին այլաբանական երգիծաբանութիւնը, որ գրուած  
է 11 սոնեայ ոտանաւորով, մեծ հոչակ ունի պարսկական զբականու-  
թեան մէջ: Գրելու թուականը անյայտ է: Հեղինակն է մի սմն Էրեյդ-Զա-  
բանի:

Թարգմանութեան մէջ պօէման կորցնում է իր երգիծական յատկու-  
թիւնից շատ բան,—սակայն ջանացինք հնար եղածին չափ բառացի թարգ-  
մանել:

Այլաբանութիւնը պարզ է. կատուն՝ ներկայացուցիչ կըօնաւորու-  
թեան (մոլլաների) և մկները—ժողովուրդը:

Եւ ահա մի օր կատուն մտաւ գինեառն, որ գուցէ այս-  
տեղ մի մուկ զտնէր, փորը կշտացնէր:

Նազանքով, քսմսուելով պատերին՝ ներս սպատեց նա, գը-  
տաւ գինու կարասը, կծկուեց ետևում, գարանի մտաւ ճիշտ  
այնպէս, որպէս էլ բանելու համար գայլը՝ անապատում:

Ու որտեղից որ էր, մի մուկ յանկարծ դուրս պրծաւ, ցատ-  
կեց, գինու կարասի բերնի մօտ գնաց, զլուխը ներս կոլսեց ու  
մի լաւ գինի խմեց:

Խմեց ու խմեց և շատ վատ հարբեց: Եւ երբ առիւծի  
սիրտ էր ստացել, ցցուից ոտքերի վրայ ու այսպէս խօսեց.

—Ո՞ւր է, զոչեց նա—ուր է այն վատ, զնդ կատուն, թող  
գայ մէկ անմնեմ, եթէ սիրտ ունի... զլուխը մի հարուածով  
կը պոկեմ մարմնից ու դուրս կը նետեմ... թող գան նոյն խակ  
հարիւր կատուներ... ջարովում բոլորին, զլուխներն էլ՝ ընկեր-  
ներիս նուէր ուղարկեմ... Կատուն ում շունն է, որ յանդզնի  
դէմս ենել. չչ որ մուստամի որդի Զալի նման եմ ես, այդ  
միթէ շատ պարզ չէ...

Կատուն որ լսեց այս, պոչն օրօրեց, ատամները միմեանց  
քուց, ապա յանկարծ ուստինց ու մկան՝ ճանկերի մէջն առաւ:

Ծուաց խեղճ մուկը, շունչը կտրուեց, խմած զինին՝ քթից-  
պնչիցը թափեց, ապա սկսեց աղաչել.

—Գերիդ հիմ, ասաց, ստրուկդ շինիր ինձ, միայն թէ նե-  
րիր. հարբած էի... հարբածն ինչեր չի դուրս տայ... մի ու-  
տիլ ինձ. թոկ ձգիր վզիս, ծառադ թող դառնամ...

—Լսիր, կանչեց կատուն—ներս քաշիր խարերայ լեզուդ.  
Հիմ է սուտ-մուտ խօսքերիդ հաւատ լնծայող...

Ասաց, պատառոտեց ու անուշ արաւ:

## II

Եւ երբ կերել էր, փորը տողացրել, խկոյն մեղքերը միտ-  
քըն ընկաւ, ջերմեռանդ դարձաւ:

Ելաւ զինեանից, գնաց մի մղկիթ, արդասատը \*) կատա-  
րեց, ձեռքն ու ոտքը լուաց, արիւնոտ դունչը որբեց, մեղիսկն  
առաւ ու աղօթքի չոքեց:

—Ռղորմած Աստուած, զոչեց նա լացով, քաւիր՝ մեղքերս,  
թողութիւն առւլ յանցանկներիս... Ահա, այս լուպէից սկսած  
խօսք եմ տալիս որ այլևս ոչ մի մուկի չփառեմ, նրա մի մա-  
զին չդիպչեմ... Գթա ինձ, ներիր արածիս... Քամ, քամ լիցի,

\*) Մահմեդական լուացումն՝ աղօթքից առաջ:

որ այլես անմիզ արիւն թափեմ... Ահա, խոսահնում եմ, ով  
տէր, որ իբր քաւութիւն, երկու բաթման<sup>1)</sup> հաց ցրուեմ տը-  
նանկների...

Ասում էր կատուն, կոծում էր կուրծքը, լալիս, արտաօ-  
ւում և ջերմեանդութիւնմբ աղօթում, ովրում...

Մուկ ո՞րաեղ չկայ, Մզկիթում եղած մի մուկ այդ լոեց,  
զարմացած լոեց: (Կատուն լաւ տեսաւ որ իրան լոող մուկ  
կար): Լոեց ու շնչառառ ուրախութիւնից վազեց իւրայիննե-  
րի մօտ:

—Շնուտ, մուշտուլուլս<sup>2)</sup> տուէք, գոչեց նա հրճուած—ա-  
հա կատուն այժմ դարձել է բարեպաշտ, աղօթում է մզկիթում,  
ովրում է, թողութիւն խնդրում, ձեռքերը միմիանց միացրած  
զթութիւն հայցում, որ տղիտութիւնմբ սիսալ է գործել և մուկ  
է կերել... Մոլլա է դարձել կատուն, մեղեսիկը ձեռքին աղօթք  
է մոմում, այլես մուկ չուտելու՝ Աստծուն խոսառութներ ա-  
նում...

Երբ մկներն այս լոեցին, սաստիկ ուրախացան ու խնդա-  
ցին: Խսկոյն նրանց իշխանները (քէթխութաներ) պատրաստուե-  
ցան ընծաներով գնալ կատուի մօտ: Մէկը՝ գինու շիշ, միւսը  
գառան մսից խորոված, երրորդը՝ մի աման չամիչ, մէկը՝ աղա-  
ման, միւսը՝ նշով փլաւ, մէկը շաքարեղին, միւսը՝ միծ կտոր  
սպանիր, մէկը՝ պիստակ կոտրտած, միւսը՝ մի աման արմաւ,  
մէկը՝ փշատ, միւսը՝ պատուղ... դրին զլիներին և պատկառան-  
քով ճանապարհ ընկան: Շորեր ու զլիարկ էլ էին տանում  
կատուին ընծայ, սուլթանին նուէլներ տանող ստրուկների,  
խոնարհ հպատակների նման:

Երբ մօտեցան կատուին, խորը գլուխ տուին. «Քեզ մենք  
երախապարտ ենք, առաջին, գու մեր բարի տէրն ես»:

Կատուն հեղութեամբ ընդունեց ընծան ու ասաց այսպէս.  
—Ես ձեղ սիրում եմ այժմ, ահա, Աստծուած էլ գիտէ,  
մուկ ուտել այսուհետեւ ես ընդմիշտ թոքաւ<sup>1)</sup> եմ արել և Աս-  
տծուց շնորհակալ եմ, որ իբ զզչացող աղօթողին անօթի չէ  
թողնում: Քանի օր է, որ ծոմ եմ, այժմ կ'ուտեմ ձեր բերած-  
ները... բայց, ինչո՞ւ այդպէս հեռու էք կանգնել. մօտ եկէք,  
սիրելիք, կողքիս նատեցէք, որ ձեղ լաւ պատուեմ, բերածնե-  
րիդ համար շնորհակալ լինեմ:

Մէկները թէկ մօտեցան, բայց դողում էին, սաստիկ վա-  
խենում:

1) Պարսկական չափ—12 ֆ. 2) Աչքալուսանքի ընծայ.

1) Խօսք եմ տուել չանելու:

Եւ իրաւունք էլ ունեին թշուառները: Հէնց որ մօտ գնացին, կատուն փէհլիւանի նման ոստնեց, ընկաւ նրանց մէջ, մնարեց չաղերին, երկուսին մի թաթովն ապանեց, երկուսին՝ միւսովը և մէկին էլ, առիւծի նման—ատամներով:

Հազիւ երկուսը միայն մազապուրծ փախան և մկներին այս բօթը տարան:

—Ի՞նչ էք նստել, զոռացին նրանք, ով մկներ, անազնիւ կատուն մեղ՝ անմիտներին՝ խորամանկ կեղծաւորութեամբ խարեց, մոլլա է դարձել իրաւ է, բայց առաջ, որ մի մի հատ էր բռնում մեղ, այժմ, մոլլա դատնալուց ի վեր՝ հինգ-հինգ է բռնում...

Մկները տակն ու վրայ եղան, սկսեցին ողբալ ու վայել, իրանց գլխաւորների տխուր մահը սգալ:

Յետոյ, խօսքը մէկ արին և ելան, իրանց թագաւորին, որ Քիրմանումն էր, դանդատի գնացին:

Պէտք էր տեսնել, թէ ինչպէս նրանք ողբ ու կականով, կուրծքները ծեծելով, արտասուր թափելով սուլթանի մօտ հասան:

Մկների Շահը նստել էր գահի վրայ:

—Մեծ ես դու արքայ, զոչեցին դանգատաւորները—մեր տէրն, իշխանն ես, արգարութիւն արա մեզ... Կատուն այն աշհող, խորամանկ ու կեղծ՝ սաստիկ ջարդում է մեզ: Առաջ, քանի մոլլա չէր, մէկ-մէկ էր ուտում մեղ. այժմ, բարեպաշտա դարձած, ազօթք անելով՝ հինգ-հինգ է որսում, մեղ պատաստում:

Շահը զայրացաւ՝ եռացող ջրի նման, հրամայեց լինամել ելողներին և ասաց.

—Մի վախենաք, ես մի այնողիսի մեծ վրէժ հանեմ այդ կատուներից, որ իրանց հետ էին բերել սպանուած

մկների մնացորդները, մեծ սուլ-շխանով թափոր կազմեցին, տարան թաղեցին: Թագաւորը հրամայեց հալուա եկել տալ սպուղներին ու յուղարկաւորներին ուտեցնել-միսիթարել:

Եւ երբ վերջացել էր այդ էլ, Շահը գահ նստեց ու հրամայեց որ ամեն կողմից գան ու հաւաքուին զօրք հարիւր-հազար:

Ու հաւաքուեցան մեծամեծները, խորհրդի նստան:

—Ո՞վ զօրապետներ, զուք մեծ իշխաններ, ճառ. խօսեց արքան՝ կատուն անիրաւ պետութիւնո քարուքանդ արեց, հըպատակներիս կերաւ, ոչնչացրեց. ի՞նչ է արժան, որ մենք ձեռնարկենք:

ՄԵծամիջները զլուկնին խոհսարհեցրին.

—Տէր, ասացին նրանք—կատուն ճարպիկ է, զօրեղ, խորամանկ, ի՞նչ կարելի է անել:

—Ահա թէ ինչ, ի՞նչ էք վախենում... գնացէք, զօրքը յառաջ տարէք և կատուին բանեցէք:

Եւ այն ժամանակ, ամեն կողմից հաւաքուեց 330,000 զօրք ըլուրը նետերով, հրացան-թնդանօթներով: Վաշտ առ վաշտ, ձիւուր և հետեւակ, փողերը հնչեցնելով՝ կաղմ-պատրաստ եկան, արքային շուրջը ժողովեցան:

Բայց յառաջ քան կոռուի ենելը, Շահը հրամայեց որ մի հարպիկ մուկ դեսպանութեան զնայ կատուի մօս:

Ու յանձնեցին այդ պաշտօնը, յիրաւի, ճարպիկներից ամենաճարպիկին: Շահն առաց նրան:

—Կերթաս աւագակի մօս, կասես՝ «Անպիտան, եկ Շահի ձեռքն համբուրիք, թողութիւն ինդրիք, ապա թէ ոչ՝ կոռուի պատրաստուիր»:

Դեսպանը քաջարար, անապատի կարճ ճանապարհով, քամիի նման եկաւ ու կանդնեց զող կատուի առաջ:

—Էյ, կատու աւաղակ—գոչեց նա հեռուից—չվնի թէ ինձ վրայ էլ յարձակուես. իմացիք, զեսպան եմ ես մկների ամենազօրիղ սուլթանի կողմից, ահա ասում եմ, որ կամ պիտի գաս, Շահի ձեռքն ու ոտքը համբուրես, հպատակ դառնաս, և կամ կոռուի պատրաստուես. թէ զու առիւծ ես՝ մինք էլ վագր կը լինենք, գլուխիդ կը թուցնանք...

Կատուն վեր սասնեց.

—Եորիք, կանչեց. ձեր Շահը շատ... է կերել...

Ասաց և լուր ուզարկեց Խորասան՝ բոլոր կատուներին, որ հաւաքուին, մկների դէմ կոռուի ենեն, նրանց ոչնչացնեն:

Եւ ահա ամեն կողմից կատուները ձիաւորուած, առիւծների նման հաւաքուեցին: Մկներն էլ միւս կողմից, բիւրաւոր թուով առաջ եկան, Աստուած կանչելով մօտեցան ու կոիւն սկսեց...

### III

Կատուները նետով, մկները՝ թնդանօթներով այնքան միւմնաց զարկին և գեանի վրայ այնքան զիակներ փոեցին, որ ձիերն այլևս ոտքեր դնելու տեղ չունէին:

Կոռուի թունդ աեղում, կատուների զօրավարներից մէկը քաջարար ինքն-իրան ձգեց մկների մէջ, շատերին ջարդեց, շատերին փախցրեց, բայց ինչպէս եղաւ, ոտքը սայթաքեց, ընկաւ և մկները շրջապատեցին և զերի տարան:

Զօրավարի այդ անկումը կատուների մէջ յուսահատութիւն ձգեց և նրանք փախան: Մկները յաղթել էին:

Այնունեաւ դռւ պէտք է տեսնէիր, թէ որպէս մկները թմբկահարեցին, շեփոր լիչեցին և ուրախացան:

Դերի կատուին էլ մի լաւ ջարդեցին, ամեն կողմից կծուցին, թաթերը միմևանց կապեցին, սուլթանի առաջը տարին:

Սուլթանը յաղթական՝ ելաւ, նստաւ գահ, ու այնտեղից նայեց գիրի կատուին:

—Ո՞վ լիրը, կանչեց նա, այդ զ՞մւ էիր որ իմ զօրքին ջարդում էիր, զու ուրեմն չվախեցար ինձնից՝ մկների ահեղ թագաւորից:

Կատուն վախեցած սաստիկ այդ գոռ խօսքերից, զլուխը ծուեց և մեղաւորի նման լուռ մնաց քիչ յետոյ, աղաչեց. Այսուրուկը հմ», ասաց՝ «մի սպանէք ինձ, ձեր ծառան կը լինիմ ընդմիշտ»:

Բայց Շահը մնաց անողոք, հրամայեց որ տանիին նրան կախաղան հանեն, որպէսզի բոլոր կատուները տեսնեն և սարսափեն:

Եերին վողերը, Շահը նստեց վլուն, զօրքերը մեծ հանդիսով առաջ լնկան, որպէսզի բոլոր կատուները տեսնեն և սարսափեն:

—Շնուտ, ձայնեց սուլթանը գահճին. մօտ գնա, կալսիր աւաղակին, յետոյ կտոր-կտոր կանես նրա մարմինը:

Եւ ի՞նչ էք կարծում, եղաւ որ մկների մէջ ըարեխօս, կատուին ազատելու միջնորդ գտնուեց, եկաւ Շահի ոտքերն ընկաւ, երաշխաւորեց:

Բայց Շահը չընդունեց այդ և գոռաց.

—Կախէք, կախէք չարագործին...

Բայց... երեակայեցէք, «կախէք» ասելը հեշտ էք, սակայն ոչ մի ժուկ սիրտ չարաւ. կապուած կատուին մօտենալ, չուանը նրա վիզը ձգել, գահճի սպանոնը կատարել:

Ու կատուն մնաց առանց կախուելու:

—Ե՞խ դուք վախկոտնե՞ր, գոռաց սուլթանը. արժանի էք որ ձեզ մկներն ուտեն, հետու կացէք և տեսէք թէ ևս որպէս երկու կտոր կ'անեմ այդ աւազակին:

Ասաց, սուրը գուրս ըաշեց և կատուի վրայ վազեց: Մինչ այդ, կատուն յաջողել էք կոծելով՝ թաթերը կապից ազատել: Եւ երբ թագաւորը մօտեցաւ, մի սոտիւնով վլայ պրծաւ, բըռնեց մկների արքային ու բիրնի մէջն առաւ:

— Աստուած գթն մեղ... կահչեցին բոլոր մկները ու մի-  
մեանց զլխի վրայով, տակն ու վրայ եղած՝ փախնելու ելան:  
Փախչող՝ փախչողի էր:

Կատուն երկու հարուածով Մուկ-արքային պատառոտեց,  
յետոյ ցատկեց, միւս մկների միջից այնքան կոսորեց, որ թիչ  
յետոյ այլ ևս ոչ մի մուկ չմնաց մշշտեղ. ամենքը փախան,  
մի-մի ծակ մտան...

Այսպէս էր ահա, որ կատուն միշտ կատու մնաց և մըկ-  
ները միշտ մուկ...

Իսկ եթէ կուղես իմանալ, թէ ո՞վ զրեց այս տարօրինակ  
առակը՝ հեղինակի անունն է Էօբէյդը Զաքանի:

Ազատ փոխաղըութիւն պարսկերէնից

Ա. Փափազեանի

## ԴԱՍԱԿԱՐԳԻԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵԽՐՈՊԱԿԱՆ ՀԱՍԱ- ՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ

### I

Յայտնի է, որ պատմական զանազան շրջաններում մարդկային հասարակութիւնների մէջ տիրել են տարբեր քաղաքական ձևեր, կամ քաղաքական սփառեմներ: Այդ սփառեմների վորոխութիւնները, նրանց առաջնական գարդացումը միշտ համապատասխանել և հետեւել են հասարակութիւնների ներքին սոցիալական կեանքում կատարուող փոխխութիւններին ու զարգացմանը: Մարդիկ, միշտ և ամեն տեղ ենթարկուած լինելով գոյութեան կոռու անողոք օրէնքին, աշխատում են անընդհատ գիտակցաբար և անգիտակցաբար զարգացնել իրանց արդինագործական ոյժերը (Produktivkräfte): Նայած այդ արդինագործական ոյժերի գրութեան, ուրիշ խօսքով, նայած այն բանին, թէ ի՞նչ միջոցներով, կամ գործիքներով և ի՞նչ ձևով են մարդիկ զանազան ժամանակներ հայթնայթել իրանց ապրուստը, արդինագործել իրանց գոյութեան համար անհրաժեշտ բարիքները, հասարակութեան մէջ զանազան ժամանակներ տիրել են տարբեր արդինագործական յարաքերութիւններ (Produktionsverhältnisse) տարբեր դասակարգային բաժանումներ (Klassengliederung): Այդ դասակարգերի փոխազգեցութիւնը, նրանց անխուսափելի կոիւը միմեանց դէմ կազմել են միշտ համապատասխան պատմական շրջանների բովանդակութիւնը և պայմանաւորել են, վերջին հաշուով, քաղաքական կազմակերպութեան այս կամ այն ձևի տիրապետութիւնը:

Այդ պատճառով, որևէ պատմական շրջան կամ քաղաքական սփառեմ լաւ հասկանալու համար, անհրաժեշտ է ամենից առաջ ծանօթանալ այդ շրջանում տիրող արդինագործական սփառեմի և հասարակութեան դասակարգային կազմի հետ Յունական ու հռոմէական անտիկ քաղաքական կազմը յենուում էր ամբողջովին այն ժամանակ տիրող ստրկական տնտեսութեան վրայ, և հնադարեան պատմութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ

այն ժամանակ դոյութիւն ունեցող երկու զլիսաւոր դասակարգիքին ստրուկների և ազատների, նրանց դասակարգային կը ուինների սլատմութիւնը: Միջնադարեան ֆէօդալական պետութիւնը կարելի է հասկանալ նոյնպէս միմիայն աչքի առաջ ունենալով այդ ժամանակուայ արդիւնագործական սխսեմը՝ մանր գիւղացիական և տրնեասաւորական արդիւնագործութիւնը և միջնադարեան դասակարգերի՝ զլիսաւորապէս հոգատէր-տղնուականութեան և ճորտ-գիւղացիութեան յարաբերութիւնները:

Ժամանակակից քաղաքացիական, կամ բուրժուական պետութիւնն էլ (etat civil, bürgerlicher Staat), ունի իր յատուկ արդիւնագործական սխսեմը և իր յատուկ դասակարգային բաժանումը: Այդ սխսեմը, ինչպէս յայտնի է, կապիտալիստական արդիւնագործութիւնն է, իսկ այն դասակարգերը, որոնց փոխազդեցութիւնը լցնում է ժամանակակից եւրոպական պետութիւնների ամրող սոցիալական ու քաղական կեանքը, կազմում են զլիսաւորապէս բուրժուազիան և պրոլետարիատը:

Ներկայ ահսութեան նպատակներից գուրս է՝ խօսել կուպիտալիստական արդիւնագործութեան եղանակի մասին: Մենք կը զբաղուենք այսաեղ երկրորդ խնդրով. կը փորձենք բնորոշել մի քանի ընդհանուր դերով, ժամանակակից դասակարգերի պատմական ծագումը և նրանց ներկայ վիճակը:

Մենք կը սկսենք պրոլետարիատից, որ ներկայիս ամենասուրբին և ամենաուշազրաւ դասակարգն է:

Բայց նախ մի քանի խօսք ընդհանրապէս ժամանակակից հասարակութեան դասակարգային կազմի մասին:

Ժամանակակից բուրժուական հասարակութեան մէջ աչքի են ընկնում ամենից առաջ, ինչպէս ասացի, երկու մեծ դասակարգեր. կապիտալիստ դասակարգը կամ բուրժուազիան և պրոլետարիատը: Բայց կայ և մի ուրիշ բաւական մեծ դասակարգ, որ մնացորդ է նախկին ֆէօդալական վշանից, բայց բաւական նշանաւոր գեր է կատարում ժամանակակից հասարակական-քաղաքական կեանքում: Այդ ազնուական կամ հողատէր դասակարգն է: Ո՞րոնք են այդ երեք դասակարգի յատկանիշները, ի՞նչն է, որ այդքան խիստ ու որոշ կերպով բաժանում է միմիանցից այդ դասակարգերը և այդքան ուժեղ անսապնդում ու երեմն այդքան կատաղի կը ուիւ է առաջայնում նրանց մէջ:

Հողատէր դասակարգի գոյութեան ազբիւրը կազմում է, ինչպէս յայտնի է, նրա հողային կամ կալուածային հասոյթը (Grundrente): Դրամատէր կամ կապիտալիստ

դասակարգը ապրում է իր կապիտալի շահով (Profits), իսկ բանուոր դասակարգը՝ իր ստացած աշխատավարձով։ Առաջի ինչն է, որ տարբերում և բաժնում է միմեանցից այդ երեք դասակարգերը։ Բայց այդ գործ բաւական չէ. բաժանելուց յետոյ նա միևնույն ժամանակ հակադրում է միմեանց այդ դասակարգերը և անխուսափելի կերպով կուր է առաջացնում նրանց մէջ։ Հողատէրը իր հսոյթները ստանում է կապիտալիստից և բանուորից։ Առաջինն նա հող է տալիս՝ տուն և գործարան շինելու համար։ Երկրորդին՝ տուն է տալիս բնակուելու համար։ Այդպիսով նա խում է՝ կապիտալիստից՝ նրա շահի մի մասը և բանուորից՝ նրա աշխատավարձի մի մասը։ Զգտելով աւելացնել կամ զոնէ պահպանել իր արդիւնքները, հողատէրը ակամացից ընդհարւում է միւս երկու դասակարգերի շահերին։ Կապիտալիստն էլ իր կողմից ամենայն իրաւամբ պաշտպանելով իր շահերը, աշխատում է որքան կարելի է քիչ հասոյթ տալ հողատէրին և քիչ աշխատավարձ բանուորներին։ Եսկ բանուորները աշխատում են, որքան կարելի է շատ աշխատավարձ ստանալ կապիտալիստից և որքան կարելի է քիչ վճարել հողատէրին։ Այդպիսով ամբողջ ազգային եկամուտը (Nationaleinkommen) ներկայ հասարակութեան մէջ բաժնուում է երեք դասակարգերի մէջ, և մի դասակարգի արդիւնքների աճումը անհրաժեշտորէն նշանակում է միւս դասակարգերի արդիւնքների նուազումը։ Ահա այդ հանգամանքն է, որ հակառակ բարեկարգ ու խաղաղամեր մարդկանց «ազգային» քարողներին, անհրաժեշտ և անխուսափելի է դարձնում ներկայումս ամեն մի ազգի մէջ առանձին դասակարգերի փոխադրձ կուր, — կուր՝ յանուն որոշ բաժնեկ՝ ազգային եկամուտի մէջ։

Բայց այդ կոուի մէջ բոլոր դասակարգերի շանսերը, նըրանց յաղթութեան կամ պարտութեան գրաւականները միատեսակ չեն։ Կոուի և յաջողութեան զիմանը գէնքը արդիւնագործութեան միջոցներն են (Produktionsmittel) ներկայումս հողը և կապիտալը, որ պատկանում են սեփականատէր դասակարգերին, աղնուականութեանը և բուրդուազիային։ մինչդեռ պրոլետարիատը, զուրկ լինելով ամեն սեփականութիւնից, կոուի ասպարէզ է մտնում առանց որևէ զինքի, ասպաւնելով միմիայն իր բազուկների ոյժին։ Պարզ է, որ յաղթութիւնը պէտք է լինի ուժեղի կողմը, և որ պարտուղը և տուժողը՝ ներկայ պայմաններում, պէտք է լինի բանուոր դասակարգը։ Ամեն տեղ մէնք ահանում ենք, որ սեփականատէր դասակարգերը անսահ-

ման իշխում են պրոլետարիատի վրայ: Ամեն տեղ պետական մարմինները, ամբողջ օրէնսդրութիւնը, բոլոր հասարակական-իրաւական հիմնարկութիւնները ծառայում են բուրժուազիայի ձեռքին իրեր գէնը՝ նուիրագործելու մասնաւոր սեփականութեան «սրբազն» ու «անձեռնմխնլի» իրաւունքը, ամրացնելու և յաւերժացնելու կաղիտալիստական շահագործութեան հրէշտաւոր հիմունքները:

Ի՞նչպէս է ստեղծուել իրերի այդ գրութիւնը և ի՞նչ ազգեցութիւն ունի նա ժամանակակից ժողովուրդների կեանքի վրայ,—այդ ցոյց կը տայ մեղ առանձին դասակարգերի պատմութիւնը և նրանց վիճակը՝ նուիրագործելու մէջ: Այս առաջին յօդուածում մենք կը խօսենք, ինչպէս ասացինք, յատկապէս պրոլիտարիատի մասին: Մէնք չենք շօշափի այսուեղ այն բոլոր խնդիրները, որ կապուած են այդ դասակարգի առուան և գոյութեան հետ, չենք կարող խօսել նրա ողատական միստիայի, նրա դասակարգային կուտի և այդ կոխւը զեկավարող քաղաքական կուսակցութեան մասին, և այն: Մէնք կանգ կ'առնենք միայն, համառօտ կերպով, նրա ծագման պատմութեան վրայ և կը ներկայացնենք, կրկնում ենք, մի քանի ընդհանուր գծերով, նրա վիճակը, նրա գոյութեան նիւթական պայմանները ներկայ հասարակութեան մէջ:

## II

Պրոլետարիատի ծագումը անրաժան կերպով կապուած է բուրժուազիայի, խոշոր արդիւնաբերութեան, առ հասարակ ամբողջ ժամանակակից հասարակութեան ծագման հետ: Միջին դարերում, ֆէօլալական հասարակութեան մէջ, որի արգանդում ծնունդ է առել ժամանակակից բուրժուական հասարակութիւնը, — ինչպէս յայտնի է, շատ անհշան դեր էին կատարում արհեստը և վաճառականութիւնը: Եւրոպական ժողովուրդների գոյութեան գլխայւոր աղբերը հողն էր և հողագործութիւնը. (և հէնց այդ էր պատճառը, որ հողատէր, կամ աղնուական դասակարգը այնքան մեծ ոյժ էր ներկայացնեում միջին դարերում): Ժամանակի ընթացքում, թէ արհեստները և թէ վաճառականութիւնը աւելի ու աւելի զարգանում էին: XIX և XX դարերի ընթացքում տեղի ունեցան մի շաբթ համաշխարհային գէպքեր, որոնք արժանապէս յեղափոխեցին եւրոպական ժողովուրդների կեանքը: Այդ գէպքերն էին. 1) նաւազործութեան ուժեղ զարգացումը և կողմնացոյցի գիւտը, որ հասարաւութիւն տուեց եւրոպացիներին դուրս գալ ակատ Մայիս, 1905.

ծովը և նոր երկիրներ փնտռել նրա խորքերում. 2) Ամերիկայի գիւտը, որ մի նոր ընդարձակ շուկայ բացեց եւրոպական վաճառականութեան համար և որսութից անհուն քանակութեամբ ոսկի և արծաթ հոսեց գէպի Եւրոպա. 3) ծովային ճանապարհի գիւտը զէպի Հնդկաստան, որ հնարաւորութիւն տուեց եւրոպացիներին փոխանակ ցամաքով, ուրիշ ազգերի միջնորդութեամբ ու թանկ գնով ստանալու այնուղի ապրանքները, անմիջական վաճառականական յարարերութիւններ սկսելու այդ երկրի հետ. 4) վառօղի և հրածիկ զէնքերի գիւտը, որ հնարաւորութիւն տուեց, մի կողմից՝ հեշտութեամբ տիրամալու նոր գտած երկրներին, և միւս կողմից՝ սանձահարելու ֆէօդալտկան իշխանների կամայականութիւններն ու աւագակութիւնները և ուժեղ կենդրուսական իշխանութիւն ստեղծելու եւրոպական երկրներում. Դրանց պէտք է աւելացնել թղթի և տպագրութեան գիւտը և այլն:

Այդ բոլոր գիւտերը մինչև հիմքերը ցնցեցին Եւրոպական ժողովուրդների տնտեսական կազմը և միանգամայն կերպարանափոխեցին նրանց ամրողջ կեանքը: Վաճառականութիւնը ըսկըսեց զարգանալ հսկայական քայլերով: Հողի, այդ «անշարժ կայքի» կողքին, որը մինչև այդ միակ արդիւնագործութեան միջոցն էր, երևան եկաւ և սկսեց դեր կատարել մի նոր արդիւնագործութեան միջոց. «Չարժական կայքը» վողը: Բայց նոր երկրներից և նոր հարստութիւններից կարող էր օգտուել պարզ է, միայն ունենոր դասակարգը, վաճառականութիւնը, որը հնարաւորութիւն ունէր սեփական նաւեր ձեռք բերելու և ճանապարհորդելու գէպի այդ հեռաւոր երկիրները: Այդպիսով նախկին հողատէր դասակարգի կողքին ծնունդ առաւ մի նոր ուժեղ փողատէր դասակարգ, որը ժամանակի ընթացքում սկսեց կրել մեզ յայտնի բուրժուազիա անունը: Մինչև այդ վաճառականութիւնը, ինչպէս յայտնի է, միջնորդի գեր էր միայն կատարում, միջնորդի՝ արդիւնաբերողի և սպառողի միջև: Վաճառականութիւնը՝ բառի բուն նշանակութեամբ՝ առ և տուր էր: Իսկ այժմ նրա առաջ բացւում էր մի նոր ասպարէզ: Եւրոպական մանր արդիւնաբերողները, գիւղացին և արհեստաւորը, անկարող էին այնքան ապրանք արդիւնաբերել, որով կարելի իշնէր բաւարարութիւն տալ նոր բացուած ընդարձակ շուկաներին: Վաճառականները, որնք իրանք ամենից լաւ ճանաչում էին այդ շուկաների պահանջները և իրանց ձեռքին եղած ահագին դրամական միջոցներով հնարաւորութիւն ունէին աւելի խոշոր արդիւնաբերութիւն սկսելու, բնականորէն պէտք է իրանք ձեռնարկէին այդ գործին: Նրանք սկսեցին դործարաններ հիմնել

և հիմք գրին այդպիսով խոշոր մասսայական արդիւնաբերութեան:

Բայց այդ տեսակ արդիւնաբերութեան համար հարկաւոր էին աշխատող ձեռքեր: Կեանքը արդէն նոզացել էր այդ մասին և պատրաստել էր այն տարրը, որից պէտք է օգտուէին կապիտալիստները: Այդ սատուլացած մրցման, փողային անտեսութեան առաջ քերած յեղափոխութեան անմեղ զոհերն էին, իրանց կտոր հողից և տնտեսութիւնից զրկուած նախկին մասը արդիւնագործները: Զուրկ ամեն բանից և օժտուած միմիայն բնատուր ֆիզիրական ոյժով, աշխատելու լնդունակութեամբ, նրանք թափուեցին այդ գործարանները, որպէսզի, ծախելով իրանց բանուորական ոյժը, կարողանան պահպանել իրանց գոյութիւնը: Այդպիսով ճնունդ առաւ մեղ զբաղեցնող պրոլետարիատը, այն դասակարգը, որը, ինչպէս արդէն գիտենք, ոչ մի սեփականութիւն չունի և ապրում է միայն կապիտալիստներից ստացած աշխատավարձով:

Սկիզբներում այդ տեսակ սեփականագուրկ մարդկանց թիւը քիչ էր, և բաւարարութիւն չէր տալիս արդիւնաբերութեան պահանջներին: Բայց նոյն «կեանքը» նորից օդնութեան հասաւ կապիտալիստներին: Փողային տնտեսութեան զարգացումը քաղաքներում և այդ քաղաքների հսկայական աճումը աղդեցութիւն ունեցան նաև զիւղական տնտեսութեան վրայ: Քաղաքները պահանջում էին հում նիւթ, փայտ, բուրդ, վուշ և այլն: Այդ բանի շնորհիւ գիւղական արդիւնագործութիւնը հետքինեաէ աւելի ու աւելի դառնում էր ավրանքային արդիւնագործութիւն, այսինքն արդիւնագործութիւն, որը նշանակուած է ոչ թէ սեփական անմիջական կարիքներին բաւարարութիւն տալու, այլ վաճառելու և փող վաստակելու համար: Փողը մուտք գործեց այդպիսով և սկսեց գեր կատարել նաև զիւղական կեանքում: «Այդ հանգամանքը, նկատում է կառց կին, մի կատարեալ դժբախտութիւն էր գիւղացիների համար: Փողը զրգուում էր նրանց կեղերիչների՝ հողատէրերի և կառավարութեան ազահութիւնը: Եթէ մինչեւ այդ բնական տնտեսութեան ժամանակ նրանք վճարում էին իրանց հարկերը աւելուրդ բնական բերքերով, նրանք պէտք է վճարէին այժմ փողով: Բնական բերքերից կարելի էր վերցնել միայն այնքան, որքան կարելի էր անմիջապէս սպառել, իսկ փողի համար, ի հարկ է, ոչ մի սահման գոյութիւն չունի: Եւ այդ ժամանակուանից գիւղացուն սկսեցին անխնայ կողոպտել: Վերցնում էին նրանից ոչ միայն այն, ինչ որ մնում էր նրա գրպանում անհրաժեշտ կարիքները հոգալուց յետոյ, այլ բոլորը, ինչ որ

կարող էին: Գիւղացիների ընտանիքները և տնտեսութիւնները սկսեցին արագ քայլացուել: Մի քանի յուսահատ ճիղերից յետոյ, հաւաքալան դիմազրութեան, վորբիկ ապստամբութիւնների անհետանանք վորձերից յետոյ, նրանք ստիպուեցին թողնել իրանց տուն-տեղը և փախչել դէպի քաղաքներ:

Դրան աւելացու և մի ուրիշ հաճգամանք: Նոր, լայնացած շուկաներին բաւարարութիւն տալու համար բաղաքներուն սկսուած խոշոր, մասսայական արդիւնագործութիւնը անհրաժեշտ դարձրեց նոյն անսակ խոշոր արդիւնագործութիւն նաև գիւղական տնտեսութեան մէջ: Հողատէրերը, ազնուականները, փորձեցին գիւղերում անել նոյնը, ինչ որ վաճառականները անում էին քաղաքներում: Աշխատաւոր ձեռքերի պակասութիւն չէին զգում: Ճորտ գիւղացիների բաղմութիւնը ամբողջովին նրանց տրամադրութեան տակ էր: Հողագործութիւնից ազնուականները սկսեցին անցնել անտառապահութեան և անտառային տնտեսութեան, որպէսզի քաղաքների համար բուրդ և փայտ արդիւնաբերեն: Այդ նոր գործի համար նրանց մինչև իսկ աւելի քիչ էին հարկաւոր աշխատաւոր ձեռքեր, քան մինչև այդ՝ հողագործութեան համար: Բայց դրա փոխարէն նրանք սասափիկ կարիք էին զգում նոր ազատ հողերի՝ անամնապահութեան համար:

Սյստեղ բացւում է մեր առաջ պատմութեան ահեղ ու արիւնալի էջերից մէկը, որ յայտնի է սկզբնական ակումուլացիա՝ հարստութիւնների կուտակումն՝ անունով, և որ այնպիսի վարպետութեամբ նկարագրել է Մարքոս իր անմահ «Կապիտալի» մէջ \*): Իրանց այդ հողի կարեքը լրացնելու համար, ազնուական-կալուածատէրերը մի բարբարոսական անգթութեամբ սկսեցին հալածել իրանց գիւղացիներին, քանդել նրանց օջաղները, աւերել ամբողջ համայնքներ, քշել գիւղացիներին իրանց գարաւոր բնակավայրերից, որպէսզի իւրացնեն այգպիսով տղատուած հողերը: Խաբերայութիւնը, թալանը, աւաղակութիւնը, հրդեհածգութիւնները և բնոնութիւնը՝ իր բոլոր տեսակներով, գործում էին գիւղացիների գէմ անսանձ վայրացութեամբ: Եւ այդ սոսկալի ոճագործութիւնները, որ կատարում էր իշխող ու արտօնեալ փորբամանութիւնը՝ ազդաբնակութեան իրաւագուբէ մեծամանութեան գէմ, շաբունակում էին XVi դարից սկսած՝ մինչև XVIII դարի վերջերը: Կառավարութիւնները եւրոպական բոլոր երկրներում, որոնք, հթէ հաւատանք պետական իրաւունքի թէօրեաթիկներին, բարձր են կանգնած

\*) «Kapital» հատ. 1, գլուխ գիրջին:

բոլոր գառակարգերից և կոչուած են պաշտպանելու արդարութեան սկզբունքը գառակարգերի փոխադարձ յարաբերութիւնների մէջ ու հոգալու ընդհանուրի բարօրութեան համար,—ոչ միայն չէին դիմագրում ազնուականութեան այդ բարբարութիւններին, այլ, ընդհակառակը, ամեն կերպ նպաստում էին նրանց իրանց հեղինակաւոր միջամտութեամբ։ Մարգսը, խօսելով անզլիսկան գիւղացիութեան էքսպրոպրիացիայի մասին, մի շարք վերին տատիճանի պերճախօս պատմական դոկումենտներով, կայսերական և պարլամենտական օրէնքներով ու կարգադրութիւններով, ոյց է տալիս, թէ ի՞նչ սոսկալի դեր է կատարել այդ խնդրում անզլիսկան կառավարութիւնը։ Մի կողմէ թողած եկեղեցական կալուածների և պիտական հողերի անտմօթ կողոպտաւը, որ կատարուել է ազնուական կալուածատէրերի կողմէից՝ կառավարութեան անմիջական աջակցութեամբ լէնդլորդները 1801 թուից մինչև 1831-ը պաշտօնապէս իւլել են գիւղացիներից 3,511,770 ակր համայնական հող և պարլամենտական ճանապարհով նուիրել են իրանը իրանց, առանց մի կողէկ վարձատրութիւն տալով կողոպտուած գիւղացիներին<sup>\*)</sup>։ Մինչգետ վաճառականները հարստութիւններ էին զիգում թալաններով ու աւերելով նոր գտած երկիրները՝ եւզոպական զարութները, ֆէօզալական ազնուականութիւնը թալանում և կողոպտում էր իր սեփական հարատակներին։ Ի՞նչպէս առաջինները, նոյնպէս և այդ վերջինը կանգ չէ աւնում ոչ մի միջոցի առաջ։ Եւ այդ բոլորի հետևանքը եղաւ այն, որ երկիրը լցուեց անտուն ու անտէր, դոյութեան ամեն ազբիւրից զըրկուած, թշուառ բազմութիւններով։ Ազբատութիւնը, սովը, աւազակութիւնը թագաւորեցին մասսաների մէջ։ Սյդ մասսաներից շատերը ուղերուեցին դէսի քաղաքները գործ ու աշխատանք զանելու յոյսով։ Նրանք գարձան այդտեղ գործարանական բանուորներ և լրացրին այդպիսով այն պակասը, որ զգում էին մինչև այդ՝ կապիտալիստները։

Սյդպէս ստեղծուեցին հողազուրկի, սեփականազուրկ, «թաջունի նման ազատ» պրոլետարիների լեպէօնները։ «Ժամանակակից կապիտալիստական արդիւնագործութիւնը, ասում է այդ առիթով կարլ կառուցկին, ստեղծուեցաւ բոնի էքսպրոպրիացիայի միջոցով, մի այնպիսի կատաղի ու արիւնահեղ յեղափոխութեամբ, որի նմանը դեռ չէր տեսել համաշխարհային պատմութիւնը։ Ի հարկէ այդ յեղափոխութիւնը հարուստների և ուժեղների յեղափոխութիւն էր, ուղղուած՝ թոյլերի ու աղ-

\*) Ibid.

քատների դէմ, և այդ պատճառով այն դարեշրջանը, երբ կատարւում էր այդ յեղափոխութիւնը, հոչտկուած է պատմաբանների կողմից, որպէս հումանիզմի և մտքերի ազատազրութեան դարեշրջան։ Ներկայումս ամենից շատ գոռում են այդ մասին նրանք, որոնց վրայ սարսափ են ազգում պրոլետարիատի յեղափոխական ձգուումները։ Բանտուրական մասսաների էքսպրոպրիացիան, նրանց անջատումը սեփական արդիւնագործութեան միջոցներից, նրանց պրոլետարականացումը, անհրաժեշտ նախադասութեամբ կապիտալիստական մասսայական արդիւնագործութեան, բայց ինչպէս միշտ, նոյնպէս և այս դէպքում, առաջաւոր գասակարգերը շբաւականացան պասսիւ, հանգիստես գերով իրանց աշքի առաջ բնուկան անհրաժեշտութեամբ կատարուող զարգացման վերաբերմբ։ Նրանք դիմեցին ոյժի օգնութեան՝ իրանց շահերը պաշտպանելու և այդ զարգացման պրոցեսով արագացնելու համար։ Կապիտալիստական հասարակութեան ծնուելու ժամանակ նրա մանկարար ձուհին ըռնութիւնն էր՝ իր ամենասպես և վայրենի ձեւերով։

## III

«Սկզբնական ակումբուլացիայի» այդ գեղեցիկ իդիլիան կատարւում էր, ինչպէս զիտենք, ֆէօդալական պետութեան սիրասուն հովանու տակ։ Ժամանակի ընթացքում այդ պետութիւնը, որ այնքան նպաստաւոր էր սկզբներում accumulation-ի հերոսների համար, փոխանակ նպաստելու արդիւնագործական ոյժերի զարգացման, խոչընդուռ հանդիսացաւ նրանց համար։ «Սկսուեց սոցիալական յեղափոխութեան դարեշրջանը» \*)— հասունացած ու ամրապնդուած նոր «անտեսական ստրուկտուրը» ժայթքեց հրաբուղիսի նման և օդը ցնդիցը իր վրայ ծանրացած ու կապարի նման իրան ճնշող հին, ֆէօդալական «իրաւական վերնաշնորը»։ Ծնունդ տուա ժամանակակից բուրժուական պետութիւնը, որը միանդամայն փոխեց իրերի դրութիւնը։ Նա ստեղծեց նոր, աւելի լոյեալ ձևերը սնատեսական զարգացման համար։ Նա իրազործեց բուրժուական լիբերալիզմի «ազատութիւն», հաւասարութիւն և եղբայրութիւն» հնչող իրեք նշանաբաններից մեկը—«ազատութիւնը»... շահագործութեան համար—և աւելորդ դարձրեց այն բռնի միջոցները, որ գործադրում էր մինչեւ այդ ֆէօդալական պետութիւնը։ Տնտեսական զարգացումը առաջ դնաց տներեակայիլի արագութեամբ։ Մանր արդիւնաբերութեան անկումը և զիւղերի դիֆ-

\*) Ibid.

Քերենցիայի պրոցեսը այնպիսի տհաւոր չափեր ընդունեցին, որ խոշոր արդիւնարերութիւնը, չնայած իր հսկայական ծառալման, չէր կարողանում կլանել իր մէջ ահագին մասսաներով պրոլետարականացող ազգաբնակութիւնը: Եւ որքան առաջ էր գնում տնտեսական զարգացումը, որքան լայնացնում էր իր տիրապետութեան շրջանը կապիտալիստական արդիւնարերութիւնը, այնքան աւելի ու աւելի աճում ու ստուարանում էին պրոլետարիատի շարքերը:

Ներկայումս եւրոպական համարեա ըոլոր երկրներում պրոլետարիատը կազմում է արդէն ազգաբնակութեան անազին մեծամասնութիւնը: Դրա մասին վկայում են այդ երկրների վիճակագրութիւնը:

Մենք գիտենք արդէն, որ պրոլետարիատի դասակարգացին յատկանիշն այն է, որ նա սեփականացնութիւն չունի և ապրում է միայն իր աշխատավարձով:

1895 թուին Գերմանիայի ազգաբնակութիւնը համաձայն պետական ստատիստիկայի կազմել է մոտ 51 միլիոն հոգի: Այդ թուում եղել են՝

Աշխատավարձով                          ապրողներ—28,757,058=55,55%/<sub>0</sub>

Զքաւոր սեփականատէրեր — 6,492,384=12,54%/<sub>0</sub>

Միջին կարգի սեփականատէրեր—15,874,600=30,66%/<sub>0</sub>

Խոշոր կապիտալիստներ և

Հողատէրեր                                  — 646,242= 1,25%/<sub>0</sub>

Այդպիսով, Գերմանիայի ազգաբնակութեան մեծագոյն մասը, 55<sup>1</sup>/<sub>2</sub> առկոսը, ըոլորովին պրոլետարականացած է: 12<sup>1</sup>/<sub>2</sub> տոկոսը կաղմում են չքաւոր սեփականատէրերը, այսինքն այնպիսիները, որոնց սեփականացնութիւնները այնքան խղճուկ են, որ նրանք հարկադրուած են սովոր չմեռնելու հոմար գիմել կողմնակի աշխատանքների: Դրանք էլ ուրեմն կիսով չափ օգտում են աշխատավարձոց, կիսով չափ պրոլետարիատներ են: Պրոլետարիատները և կիսապրոլետարիատները կազմում են միասին ազգաբնակութեան 68%/<sub>0</sub>, այսինքն աւելի քան 2/3 մասը: Այդ վիճակաղը պրութիւնը կազմուել է 10 տարի սրամից առաջ: Ներկայումս արդէն իսկական պրոլետարիատների թիւը կազմում է Գերմանիայի ազգաբնակութեան առնուազն 2/3 մասը: Մասնաւորապէս Պրուսիայում, որ կազմում է աւելի քան Գերմանիայի կէսը, աշխատավարձով ապրողների թիւը հաւասար է եղել 63,2%/<sub>0</sub>-ի, սեփականատէրերի թիւը—36,8%/<sub>0</sub>-ի:

Քրանսիայում սեփականատէրերը կազմում են ազգաբնակութեան 44,6%/<sub>0</sub>, մնացած 55,4%/<sub>0</sub>—ըանւորներ են, սեփականացուրկ պրոլետարներ: Այդ 44,6%/<sub>0</sub> սեփականատէրերի կէսից ա-

ւելին, մօտ 10 միլիոն հոգի, զիւզացիներ են. Դրանցից 5 միլիոնը այնքան աղքատ են, որ իրանց գոյութիւնը պահպանելու համար հարկադրուած են ծառայելու հարուստ հողատէրների մօտ, և ուրեմն նոյնակէս աշխատավարձ են ոտանում:

Աւոտրիական վիճակագրութեամն մէջ դասակարգերը բաժնեռում են այսպէս \*).

Ինքնուրոյններ (Selbständige) — 3.841,640

Պաշտօնեանեաններ (Angestellte) — 539,117

Բանուորներ (Arbeiter) — 8.084,714

Օրավարձով աշխատողներ (Tagelöhner) — 1,102,656

Այսուղինքնուրոյնների թւում հաշուած են ոչ միայն կապէտալիստները, հոգատէրները, առհասարակ սեփականատէրները, այլ նաև սեփականագուորկ խոշոր պաշտօնեանները, դիրեկտորները և այլն: Երկրորդ կարգին պատկանում են բոլոր հասարակ պաշտօնեանները, ծառայողները, որոնք 3-րդ և 4-րդ կարգերի հետ միասին կազմում են աշխատավարձով աղբող աղքարնակութիւնը: Ամեն մի 100 աշխատելու ընդունակ (Ervorbstthätig) մարդկանցից՝ սեփականատէրների թիւը կազմում է այդ ստատիստիկայի մէջ 28, 3 սեփականագուորկ, և աշխատավարձով ապրողների թիւը՝ 71, 7: Այս վերջինները կազմում են ուրեմն շատ աւելի, քան  $\frac{2}{3}$  մասը:

Նոյնը մենք տեսնում ենք Շվեյցարիայում, Բելգիայում \*) և այլն:

Անգլիայի վելաբերմամբ ընդհանուր վիճակագրական տեղեկութիւններ չկան, բայց յայտնի է, որ Անգլիան ներկայում տնտեսապէս ամենազարգացած երկիրն է Եւրոպայում: Գիւղական աղջարնակութիւնը, որ կազմի է Անգլիայում, մի 100 տարի սրանից առաջ, ամբողջ աղջարնակութեան 760/0-ը, այժմ կազմում է ընդամենը 130/0: Մինչդեռ Գերմանիայում, վերջին պետական վիճակագրութեան համաձայն, գիւղատնտեսութեան մէջ զրադուած պերսոնալը կազմում է 510/0: Յայտնի է որ Անգլիայում վաղուց արդէն անյայտացել է վերջին զիւղացին, այսինքն զիւղական մանր սեփականատէր-արդիւնաբերողը: Հողագործութիւնը, ինչպէս և գիւղատնտեսութիւնը առհասարակ, դարձել է ամբողջովին խոշոր կապիտալիստական արդիւնաբերութիւն և ոչնչով չի տարրիւում ինաստրիդուկան արդիւնաբերութիւնց: Պարզ է, որ այսուղի պրոլետարների թիւը պէտք է անհամեմատ աւելի լինի, քան եւրո-

\*) Conrad—«Handwörterbuch der Staatswissenschaften», B. 2., Berufsstatistik.

\*\*) Ibid

սպական մայրացամաքի երկրներում։ Այդ ցոյց են տալիս մեզ անգլիական արդիւնաբերութեան առանձին ճիւղերի վերաբեր- մամբ եղած վիճակագրութիւնները։

Ծնդհանուր առմամբ կարելի է ուրեմն ասել, որ ներ- կայումն երավական համարեա բոլոր երկրներում՝ պրոլե- տարիատը կազմում՝ է ազգաբնակութեան առ նուազն՝ <sup>2/3</sup> մասը։

#### IV

Յայտնի է, որ պրոլետարիատը,—նոյնը կարելի է ասել ի հարկէ, և միւս գասակարգերի վերաբերմբ,—ըաժանուում է ներքուստ մի քանի խաւերի, որոնք տարբերուում են միմեանցից իրանց կացութեամբ, իրանց հոգերանութեամբ և իրանց անմիջա- կան, առօրեայ շահերով։ Պրոլետարիատի ամենալավորոշ տարրը, նրա սազմական առաջապեանը, կազմում է գործարանական, կամ ինգուստրիական պրոլետարիատը։ Յետոյ գալիս են՝ մտաւոր կամ ինտելիգենտ պրոլետարիատը, առևտրական պրոլետարիա- տը, գիւղական ոլրուետարիատը, անային ծառաները, պետա- կան և հասարակական հիմնարկութիւններում ծառայողները և այլն։

Այդ բոլորին միացնողը, ինչպէս ղիտենը, նրանց լայն, գասակարգային շահերի նոյնութիւնն է ներկայ հասարակու- թեան մէջ—այն, որ նրանք բոլորն էլ գուրկ են տնտեսական ապահովութիւնից, ապրում են աշխատավարձով և բոլորն էլ շահագործում են սեփականատէք գասակարգերի կողմից։

Կանգ առնենք մի փոքր այն ինդրի վրայ, թէ ինչումն է կայանում և ինչով է պայմանաւորուում այդ շահագործու- թիւնը։

Մենք ղիտենք, որ բանուորը այն ժամանակ է գալիս ծա- ռայելու կապիտալիստի մօտ, եթե նա զրկուում է իր սեփական հողից և արդիւնաբերութեան գործիքներից։ Նա այդ ժամանակ ոչինչ չունի, բացի իր բանուորական ոյժից, որը նա, սովո- մահ չլինելու համար, ավրանիք է դարձնում և գալիս է ծա- խելու իր այդ միակ ավրանիքը գործարանատիրոջ։ Պարզ է, որ բանուորական ոյժի գնահատութեան չափը կախուած կը լինի այդպիսի պայմաններում գործարանատիրոջից, կամ առ հասա- րակ գործառնուերից (Arbeitgeber)։ Մենք ասացինք վերև, որ ներկայումս ազգաբնակութեան պրոլետարականացումը այնպի- սի չափեր է ընդունել, որ գործարաններում և առհասարակ արդիւնաբերութեան մէջ չեն կարողանում գործադրութիւն

գտնել բոլոր աղաս ոյժերը: Մեքենաները, շոգին, էլեկտրականութիւնը, XIX-րդ դարի այդ վիթխարի արդիւնագործական ոյժերը, մի կողմից նպաստելով խոշոր արդիւնաբերութեան յաջող մրցանալ՝ արագացնում են մանր արդիւնաբերութեան անկումը և ստուարացնում այդպիսով «թռչունի նման աղաս» մարդկանց թիւը, միևն կողմից աւելի ու աւելի մեծ չափերով իրանք փոխարինում են արդիւնաբերութեան մէջ մարդկային բանուորական ոյժը: Այդպիսով, աշխատող ձեռքերի պահանջը յետ է մընում նրա առաջարկից, և վաճառանոցը լցում է բազմաթիւ անգործ մարդկանցով, որոնք կազմում են Մարքսի ասած սկանեստի զունդը (Reservearmee): Սուլամահ չինելու համար այդ մարդիկ պատրաստ են աշխատելու ամենաաննշան վարձատրութեամբ, և օգտուելով այդ հանգամանըից, գործատուները ձգտում են իջեցնել աշխատավարձի նորման մինչև նրա մինիմումը, այսինքն մինչև այն գումարը, որը անհրաժեշտ է, որ բանուորը կարողանայ պահպանել իր գոյութիւնը և ոյժունենայ աշխատելու կապիտալիստների համար: Ժամանակակից բանուորական շարժման, կամ բանուորի գասակարգային կոռի անմիջական նպատակներից մէկն է դիմագրել որքան կարելի է կապիտալիստների այդ ձգտմանը, կապիտալիստական արդիւնաբերութեան այդ բնական, պատմական տեխնիկային: Բայց որքան էլ ուժեղ կազմակերպուած լինի բանուոր գասակարգը, որքան էլ յաջող լինի նրա կորիւը, նա չի կարող ներկայ հասարակութեան մէջ այնքան բարձրացնել աշխատավարձը, որ վերջ զբուի պլոտետարքատի շահագործութեանը: Կապիտալիստը գործարան է հիմնում և հնարաւորութիւն է տալիս բանուորներին իր գործարանում, իր արդիւնաբերական գործիքների (մեքենաների և այլն) միջոցով՝ աշխատել և ապրանքներ պատրաստել: Այդ աղքանքները նա ծախում է և ստացած արժէքի մի մասը տալիս է բանուորներին, — այնքան, որքան անհրաժեշտ է նրանց գոյութիւնը պահպանելու համար: Մնացածը, բացի այն ծախքերից, որ նա մնում է մեքենաների վրայ և ըենտ է վճարում հողատէրներին, նա դնում է իր զըրպանը: Բանուորների ուրդիւնաբերած աղքանքների արժէքի այն մասը, որ չեն ստանում իրանք բանուորներ, այլ իւրացնում են կապիտալիստներն ու հողատէրները, կազմում է այն, ինչ որ, ըստ մարքսիստական տերմինոլոգիայի, կոչում է յունեալ արժէք (Mehrwerth): Եթէ չիներ այդ յաւելեալ արժէքը, կապիտալիստները երբէք գործարաններ չեն հիմնի: Իսկ եթէ գտնուել մի այնպիսի բացառիկ բարեսկրտ կապիտալիստ, որը չուզենար օգտուել յաւելեալ արժէքից և վճարէր բանուոր-

ներին այնքան, որքան նրանք արդիւնաբերում են, նա չէր դիմանայ մրցմանը, կը սնանկանար և նորից փողոց կը շպրտէր իր բանուորներին։ Ահա այդ մտքով ենք ասում, որ ներկայ հասարակութեան մէջ, որը հիմնուած է մասնաւոր սեփականութեան և ազատ մրցման վրայ, երբէք չէ կարելի վերացնել շահագործութիւնը։ Ընդհակառակը, մենք տեսնում ենք, որ բոլոր կապիտալիստական երկրներում, քանի գնում՝ յաւելեալ արժէքի նորման, ուրիշ խօսքով՝ բանուորների շահագործութեան աստիճանը աւելի ու աւելի բարձրանում է։ Անգլիական բանուորների ստացած աշխատավարձերի ընդհանուր գումարը՝ 1860 թուականից մինչև 1874, կազմելիս է եղել միջին թուով ամբողջ ազգային հկամուտի 45 տոկոսը, մինչդեռ յետոյ, 1877-ից մինչև 1891-ը, նա կազմել է միայն 42<sup>2/3</sup> տոկոս։ Յաւելեալ արժէքի ամբողջ քանակը, որ ստացել են կապիտալիստները, 1860 թուականին 320 միլիոն մարկով պակաս է եղել աշխատավարձերի ընդհանուր քանակից։ Իսկ 1891 թուին նա արդէն ոչ միայն պակաս չի եղել, այլ ընդհակառակը գերազանցել է 1,600 միլիոն մարկով։ Այս թուերի համեմատ, յաւելեալ արժէքի նորման, ուրիշ խօսքով, ինչպէս ասացինք, բանուորների շահագործութեան աստիճանը, յիշուած ժամանակամիջոցում, 96 տոկոսից բարձրացել է մինչև 112 տոկոս։ Այս թուերը վերաբերում են անգլիական արէդ-իւսիօններում կազմակերպուած բանուորներին։ Զկազմակերպուած բանուորական մասսաների վերաբերմամբ շահագործութեան աճեցողութիւնը անհամեմատ աւելի ուժեղ է։

Բանուոր զասակարդի տնտեսական թշուառ վիճակը քայլայում է բանուորական ընտանիքը և հարկադրում է նաև բանուորի կնոջը և երիխաններին կապիտալիստին ծառայել։ Դրա հետևանքը լինում է այն, որ պահեստի գունդը՝ աւելի և մեծանում է և աշխատավարձի նորման էլ աւելի ընկնում։ Եթէ մինչև այդ, բանուորին վճարելիս՝ կապիտալիստը աչքի առաջ էր ունենում մասսամբ բանուորի ընտանիքը, որովհետև նրան անհրաժեշտ է, որ այդ ընտանիքը գոյութիւն ունենայ և բանուորների նոր սերունդներ մատակարած արդիւնաբերութեան համար,—այժմ, երբ այդ ընտանիքի անդամները իրանք արդէն սկսում են աշխատել, նա վճարում է բանուորին միայն այնքան, որքան անհրաժեշտ է նրա անհատական գոյութիւնն համար։ Այդպիսով ամեն մի նոր քայլ, ամեն մի նոր երևոյթ տնտեսական կեանքում (ինչպէս ներկայ դէպքում կանանց և երիխանների մասնակցութիւնը արդիւնաբերութեան մէջ)՝ ծառայում է ներկայ պայմաններում, քանի դեռ տիրում է մաս-

նաւոր սեփականութիւնը, յօգուտ կապիտալիուների և ի պաս  
պրոլետարիատի:

Այդ բանը չեն ուրանում, ինարկէ, և չեն կարող ուրանալ  
մինչև անգամ բուրժուական գիտնականներն ու քաղաքագէու-  
ները: Դեռ Գլադիատոնը իր պարլամենտական ճառերից մէկում  
տաել է ժամանակակից տնտեսական զարգացման մասին հե-  
տեւալ նշանաւոր խօսքերը, որ բերւում է «կապիտալի» յառա-  
ջարանում, «Ոյժի և հարստութեան այդ առասպելական աճումը  
տեղի է ունենում ամբողջովին յօգուտ ունենոր դասակարգերի»:

Պետերբուրգի յայտնի պրոֆեսոր Իւանիւկովը, որ քաղաքա-  
տընտեսութեան պատմական շկոլայի ներկայացուցիչն է Ռու-  
սաստանում, քննելով «ազատ մրցութեան սիստեմի» բացա-  
սական կողմերը, վերջացնում է իր խօսքը հետեւալ տողելով.

«Ներկայումս ահագին բանակութեամբ կուտակուած վի-  
ճակագրական հետազոտութիւնները պարզել են հասարակու-  
թեան համար այն թշուառ պայմանները, որոնցում ապրում են  
բանուոր դասակարգերը: Եւ որ ամէնից ուշագրաւը այդ ու-  
սումնասիրութիւնների մէջ, այն է, որ պատմութեան մէջ օ-  
րինակը չունեցող ազգային հարստութեան աճումը XIX դ. ըն-  
թացքում գնում է ամբողջովին յօգուտ ունենոր դասակարգերի  
և միայն աննշան ազգեցութիւն է ունենում բանուոր դասա-  
կարգերի վիճակը լաւացնելու վրայ:»

Ս. Շ.

(Վերջը յաջորդ համարում)

## ԲԱՅՐՈՆԻ

Այսօր վերջացնում եմ երեսուն վեց տարիս: \*)

Միստրոնդի, յունուար 22, 1824

Ժամ է որ սիրալու շարժելուց դադարէ,  
Երբ դադրած է ուրիշ սրաեր շարժելուց.  
Բայց ինձ թէկ էլ ոչ մի սիրա չսիրէ՝  
Ես չեմ դադրիլ սիրելուց:  
Կեանքըս հասաւ աերևթափին դեղնորակ.  
Սիրոյ ծաղկունք ու պըտուղներ գընացին.  
Ճճի և որդ և փրտութեան եղանակ  
Եւ կսկիճներ մընացին:  
Կուրծքըս այլող ու ճարակող այս կըրակ  
Հրաբուխային մի կղզու պէս մենակ է.  
Նըրա բոցից չէ վառում ջահ ու ճըրադ  
Դիակնակէզ խարոյկ է:

\*) Այս ըերթուածը, Բայրոնի վերջինը, գրուած է Միստրոնդում, ուր նա կուռւմ էր Յունաստանի ազատութեան համար: Շատերի կարծիքով՝ նրա բոլոր երգերի գոհարն է այս. մեսնելուց քիչ առաջ զրուած այս անտակի տխուր տողերի մէջ՝ ըանաստեղծը կարծես մարդարէական հողով գուշակում է իր մօտալուտ մահը. ոչինչ չէ կարող աւելի լաւ պատկերացնել Բայրոնի հոգին, քան այն վսեմ շեշտը, որով հրաժարւում է ամեն եսական զգացումից, աւելի ազնիւ նպատակի համար ապրելու և մեռնելու համար, այդ հոգին, որ այնքան տարօրինակ կերպով լի էր տղեղ և գեղեցիկ կիրքերով, բայց որի մէջ վերջ ի վերջոյ, զեղեցիկը յաղթում է:

Յոյս և երկիւղ, յոյզ և նախանձ վերջացաւ.

Չունիմ բաժին վշտի հետ խառն խնդութեան,  
Եւ սրտիս մէջ սիրոյ ոյժը մարեցաւ.

Միայն կըրում եմ շղթան:

Բայց ոչ այսպէս, և ոչ այսանդ է վայել,

Որ այս խոհեր ցնցեն հոգին իմ տրառում.

Ոչ արդ, երբ փառքը հերոսի ճակատը

Կամ դագաղն է պլասակում:

Ի՞նչ եմ տեսնում իմ շուրջ.—ոքրեր, դրօշակներ,

Եւ դաշտ ռազմի, և փառք, և հին Յունաստան.

Սպարտացին, որի դագաղն ասպարն էր

Զէր աւելի ինքնիշխան:

Զարթիր, ոգիս, Յունաստանը զարթել է.

Տես ո՞ւմ միջով քո կեանք—արիւնըդ կըկին

Պիտի հոսէ դէպի ծընող իր լիճը

Եւ այնուհետ՝ զարկ ուժգին:

Կոխ տուր ոտքով նորից յուզուած այդ կրքեր,

Ո՞վ անարժան մարդկութիւն.

Քեզ ի՞նչ փոյթ են գեղեցկուհու գդուանքներ,

Ժպիտը կամ բարկութիւն:

Ավսոսում ես երիտասարդ օրերիդ.

Էլ ի՞նչ կեանք է ու արտունջ.

Այս է երկիրը պատուաբեր մահերի.

Օ՞ն դէպի դաշտ, տնւր քո շունչ:

Գընա վնտոիր (վնտոող քիչ կայ, գտնող շատ)

Գընա վնտոիր զինուորի մահ քեզ համար.

Այն է միայն քեզ արժանի. նայիր շուրջ,

Ըստըիր քո տեղ, հանդիսա առա

Շովի. Մասենան

## ՓԻԼԻՍՈՓԱՅ ՍՈՅԻՇԼՈԳ

Փիլիսոփային մի կողմը թողնենք և դիմենք սոցիօլոգին,  
հասարակագէտին:

Բնագանցական ու բնափիլիսոփայական սպեկուլեացիա-  
ներով հարուստ է մարդկութիւնը, այնինչ քչերն են մեծ հան-  
ճարներից լրջօրէն զբաղուել մարդկային հասարակութեամբ,  
նրա էռթիւնով, նրա աստիճանական զարգացման օրէնքներով:

Անման վարպետութեամբ Հերքերո Սպենսեր միացը-  
նում է իր մէջ՝ մեր տեսութեան ճակատին զրուած երկու տիտ-  
ղոսները: Երկումն էլ կազմում են նրա հոչակն ու հմայքը: Իր-  
եւ սոցիօլոգ, նա հիմնեց շկոլա և ուսեցաւ հետևողների ու եր-  
կըրպագուների լէպիօնների: Այսօր ևս, չնայած որ արդէն բաւա-  
կանաչափ հնացել, մաշուել են նրա հիմնական հայեցակչութը,  
Սպենսերի ճնշող հեղինակութիւնը, իրրե սոցիօլոգի, տակաւին  
զգալի է դիտական աշխարհում:

Սոցիօլոգիան մի նորաբողբոջ գիտութիւն է, և նրա նիւ-  
թը՝ վերին աստիճանի կնճուոտ: Նա ընդգրկում է մարդկային  
բոլոր հասարակութիւնները՝ տարբեր տեղերի և ժամանակնե-  
րի: Նա ուսումնասիրում է հաւասարապէս մեծ հետաքրքրու-  
թեամբ՝ և ամերիկական՝ կարմրածորթներին, և՝ աֆրիկական  
ու աւստրալիական վայրենիներին, և եւրոպական հին ու նոր  
քաղաքակրթութեան պատկանող ազգերին:

Բարձր, առաջադէմ հասարակութիւնները ճանաչելու հա-  
մար՝ անհրաժեշտ է ծանօթանալ նախապատմական վայրենի  
ու բարբարոս համայնքների հետ, որովհետև նրանց վայրենու-  
թիւնից ու բարբարոսութիւնից է առաջացել մեր բաղաքակըր-  
թութիւնը:

Սոցիօլոգիան առանձին ուշադրութեամբ ուսումնասիրում  
է հասարակական «սկզբնաւորութիւնը» (les origines). ընտանիք,  
սեփականութիւն, իրաւունք, կառուվարութիւն, պետութիւն,

\*.) ՏԵս «Մուլք» № 1.

կլրօն, բարոյականութիւն և այն,—այդ լուսրի ծագումն է վնասում և աշխատում է բացատրել նրանց աստիճանական դարգայտումը կամ էվոլյուցիան։ Մարդկային նախնական հորդաներից նա բարձրանում է մինչև քաղաքակալը թութեան դադաթնակէտը, քննելով հաստրակութիւնները առանձին-առանձին, իրանց Փիզիքական ու սոցիալական միջավայրերում, իրանց աճման ու դարգայտման պրոցեսում, ապա քննում է բոլոր այլազան հաստրակութիւնները իրանց փոխադարձ յարաբերութիւնների մէջ, սահմանում է նմանութիւններ և այդ համեմատական ուսումնասիրութիւնից աշխատում է սինթէզ անել զուրս բերել ընդհանուր օրէնքները, որոնք զեկավարում են համայն մարգկութեան էվոլյուցիան։

Օրէնքներ մշակել, բաց անել այն, ինչ որ կոչում է պատճառատականութիւն երևոյթների մէջ, դա առաջին պայմանն է գիտութեան ամեն մի ճիւղի. գիտութիւնը միայն դրանով է գիտութիւն։ Դժուար է առել, թէ իրադործուած լինի սոցիօլոգիայի այդ հիմնական ձգուումը՝ դուրս բերել մարդկային էվոլյուցիայի ընդհանուր օրէնքները։ Սոցիալական աշխարհում երեւոյթները աւելի բարդ են, քան բնութեան մէջ, այդ պատճառով սոցիօլոգիայում այնպէս զիւրութեամբ չեն մշակուում օրէնքները, ինչպէս բիոլոգիայի, կամ Փիզիկայի ու քիմիայի մէջ։

Երբ մենք ասում ենք՝ ծզողութիւն՝ (attraction) հասկանում ենք մի երեսյթ, ոչ ինքն իրան հաւասար է ամեն տեղ և ամեն ժամանակ, նա իշխում է նոյնութեամբ տիեզերքի բոլոր ծայրերում, նա օրէնք է։ Նոյնպիսի օրէնքներ են բիոլոգիայի մէջ զոյտութեան կողիւ իրողութիւնը, ժառանգականութեան ու յարմարման երեսյթները և այլն։

Որքան դժուար է գանել մի այնպիսի օրէնք, որի զօրութիւնը տարածուէր համայն մարդկութեան և նրա առանձին ընտանիքների վրայ։ Երկրագնդի երեսին սփռուած անթիւ մարդկային համայնքները իրանց աշխարհագրական միջավայրերով, ցեղական-ազգայնական առանձնայատկութիւններով, մտաւոր, բարոյական, քաղաքական և այլ պայմաններով այնպիսի մեծ այլազանութիւն են ներկայացնում, որ նրանց բոլորի համար դարգայտման ընդհանուր օրէնք գտնելը առաջին հայեացքից թւում է երազ, ուսուպիա։

Աւելացրէք և այն՝ որ հաստրակական երեսյթների ուսումնասիրութիւնները առհասարակ սուբէկտիւ են լինում. սոցիօլոգների մէջ գրեթէ միշտ զեր են խաղում անհատական ու ըսուշ համականքներ ու հակակրանքներ կամ որոշ շահեր՝ աղ-

դայնական, զասակարգային, կուսակցական՝ որոնք գժուտրացնում են անաշտու, օրեկախիլ ուսումնասիրութեան գործը:

Նկարագրել պաղ ու անոռարբել կերպով տիեզերական երևոյթները, աստղաբաշխական, երկրաբանական յեղաշրջումները, անասնական աշխարհի գոյութեան աւերիչ կոփները և այլն—գիւղին բան է: Բայց նոյն չափով սամասիրա մնալ ի տես մարդկային պատմութեան արհաւիրքների, գարաւոր բնաջնջող պատերազմների ու արիւնհեղութիւնների, ստրկութեան և ծովածաւալ թշտառութեան, մասսային հարստահարումների, սովի, բնակալտկան սարսափների, ժողովրդային արիւնահեղ բռնկումների, որոնք, աւազ սլըլից մինչև վերջ լցնում են նախապատմութեան և պատմութեան էջերը, նկարագրել այդ բոլորը անդամանատող անատոմիստի անխռով հանդարտութեամբ—զրեթէ անհսարին է:

Ահան թէ ի՞նչու այնքան գժուարին է սոցիոլոգի պաշտօնը, և ահա թէ ի՞նչու սոցիոլոգիան, իր հիմնադիր Օդիւստ Կոնտի արտայայտութեամբ, հանդիսանում է ամենակնճռոտը գիտութիւնների երկրածիկ սանդուխքի վրայ:

Սպեհնսերն անդամ իր հակայածաւալ ու օրեկտիկ ուսումնասիրութիւններով, իր գիտական հաղուագիւտ դիսցիպլինով չկարողացաւ խուսափել մարդկանց զատաստանից.—Նրան հոչակեցին բռւրժուագիայի սոցիոլոգ, իշխող գասակարգի շահերի փաստաբան:

Մարդիկ աւելի և հեռու գնացին և գասակարգային շահերի անգլուակից ջատագով գամն նոյնիսկ յանձին Սպեհնսերի մեծ ուսուցչը՝ աշխարհահաչակ բիոլոգ Դարվինի: Այդ կարծիքն էին յայտնում 1877 թուին, մի տաք բանակառուի մէջ, գերմանացի երեք հոչակաւոր բնագէտներ՝ Վիրխով, Հէկկել և Օսկար Շմիդտ:

Բնագիտական թէօրեաններն էլ կարող են, ընթերցող, խըրախուսել մէկ կամ միւս սոցիալական զասակարգի շահերը... Խիստ տարօրինակ է թւում այդ: Այնուամենայնիւ, այդպէս պնդում էին երեք մեծանուն դիտնականները: Վիրխով, որ մինչև վերջը մնաց հակադարվիննեան, յայտարարում էր, որ դարվինիզմը, մարդու ծաղման վարլապեսութիւնը ուղղակի առաջնորդում է զէսի հաւասարութեան վտանգաւոր թէօրիաները: Հէկկել և Շմիդտ պնդում էին ընդհակառակը, որ եթէ դարվինիզմին կարելի է վերագրել որևէ քաղաքական-սոցիալական աենդենցիա, ապա այդ վերջինը կարող է միայն լինել արխստոկրատական, երբէք սամկավարական:

«Դարվինիզմը, ասում է Հէկկել, բացարձակապէս յայտացիւսին, 1905,

բարում է, որ անհատների հաւասարութիւնը անկարելի է և երազական, որ նա գտնուում է կատարեալ հակասութեան մէջ այն անհրաժեշտ անհաւասարութեան հետ, որ գոյութիւն ունի իրօք ամեն տեղ:

«Ինչպէս անսամբական, այնպէս էլ մարդկային հասարակութեան մէջ, երբէք չեն կարող հաւասար լինել՝ ոչ իրաւունքներն ու պարագականութիւնները, ոչ բարիքներն ու վայելքները... Բնարողութեան թէօրիան ուսուցանում է, որ մարդկութեան կեանքում ևս,—ինչպէս բոյսերի ու կենդանիների մէջ —միշտ, և ամեն տեղ, միմիայն մի չնչին, առանձնաշնորհեալ փոքրամասնութիւն կարողանում է ապրել ու զարգանալ, այնինչ՝ ահագին մեծամասնութիւնը ընկճում ու կորսում է շատ թէ քիչ վաղաժամ:

«Դաժան, անողորմ «գոյութեան կախը», որ աւերածներ է անում ամեն տեղ չնչաւոր բնութեան մէջ, ապրող էակների այդ յաւիտենական ու անազորոյն մրցակցութիւնը անժխտելի մի իրողութիւն է. մի փոքրիկ թիւ միայն—ամենից ուժեղները կամ ամենից աւելի ընդունակները, յարմարուղները—կարողանում է յաղթականօրէն տանել այդ մրցումը»...

Մոայլ, յոռետես եզրակացութիւններ...

Սպենսերն ևս, որ վաստակել է «Սոցիօլոգիական Դարվին» անունը՝ յանգում է այդ դաժան եզրակացութիւններին. Էվոլյուցիայի, պըոգրէսի ճանապարհը ողողուած է եղել և պիտի լինի միշտ մարդկային արտասուրով... Պիտի լինի միշտ ահեղ մրցակցութիւնը մարդկանց աշխարհում և պիտի լինին միշտ յաղթողներ ու յաղթուղներ...

Բարեբախտաբար, այդ եզրակացութիւնները չեն համապատասխանում իրականութեան: Դարվինը ինքը այլ կերպ էր մտածում, երբ հարցը վերաբերում էր մարդկային աշխարհին: Այնտեղ, մենք կը տեսնենք, որ բացի մրցումից, գոյութեան կռուից՝ ուրիշ համազօր գործօններ են հրապարակ գալիս, ուրոնց շնորհիւ, թոյլերի և հարստահարուածների լէգիօնները փոխանակ ընկճուելու և չքանալու, կազմակերպում են մի հզօր, անպարտելի բանակ՝ ապագայի նուաճման համար...

Յամենայն դէպս, Սպենսերի, Հէկկէլի և ուրիշ դարվինեան մտածողների այդ պեսսիմիստ եզրակացութիւնները իրաւունք չեն տալիս մեզ, մի կարգ ուղղափառ մարգսիստների պէս, ժխտել նրանց մեծ գիտական արժէքը և թեթև սրտով յայտարարել, թէ՝ «Ժամանակակից գիտութիւնը բուրժուազական է»:

Դառնանը Սպեհսոերին:

«Աղջիալական Դարվին»—աչող է որակումը: Դարվինի թէօրիայով ներշնչուած՝ նա հիմնեց զրական, պոզիտիվ սոցիոլոգիայի շնչքը, զուրս բերեց մարդկային հասարակութիւնը տարտամ հասկացողութիւնների աղջամուղջից և որոշեց նրա տեղը տիեզերական գարգացման զրամայի մէջ:

Մինչ այս՝ մարդիկ ընդհանրապէս տեսնում էին հասարակական էվոլյուցիայի մէջ կամ աստուածային մատը, կամ հերոսների և զօրավարների կամքը, կամ կլիմաների, միջավայրերի ազդեցութիւնը, կամ գաղափարների, մեծ մտածողների ուժը: Ֆատալիստներն էլ համարում էին ամբողջ պատմութիւնը մի տեսակ պատահար, ճակատագրի, Բատմ-ի մի գործ:

Հասարակական երևոյթները ընութեան մէջ են և ուրեմն ենթակայ տիեզերական դէտերմինիզմն: Դարվինի թէօրիայով արդէն վտարուած էին մետաֆիզիկական աւանդութիւնները, որոնք մարդկութիւնից ստեղծում էին մի ջոկ աշխարհ, բընութիւնից դուրս, բոլորովին տարբեր կենդանական աշխարհից: Արդէն հաստատուած էր, որ մարդ-էակը կապուած է մանրիկ մոնիերների հետ՝ օրգանիզմների մի երկարածիկ, անընդհատ շղթայով, որ նա վերջին աստիճանն է մի շարունակական էվոլյուցիայի, որ սկիզբն է առնում պրոտոպլազմային նախնական զանգուածից:

Դա մի անժխտելի ճշմարտութիւն էր, համաշխարհային մտքից սրբագործուած և էվոլյուցիօնիզմի անունով որակուած: Դա մի կարդինալ ճշմարտութիւն էր ոչ միայն բիոլոգիական գիտութիւնների, այլ և սոցիոլոգիայի համար, մանաւանդ «Նախապատմական սոցիոլոգիայի» համար, քանի որ այնուհետև մարդիկ բնականաբար սկսեցին որոնել հասարակական այլ և այլ երեսյթների արմատները անամնական կեսմնքում: Սակայն պէտք է ասել, որ այդ որոնումներն էլ որոշ սահման ունին. մի կարգ գիտնականներ շատ յափշտակուեցին նրանցով և տրամադրիր են ծխտել սոցիոլոգիայի ու հոգեբանութեան գոյութիւնը, իբրև ինքնուրոյն գիտութիւնների, յայտարարելով նրանց որպէս բիոլոգիայի ճիւղաւորութիւններ:

\*  
\* \*

Սպեհսոերը ևս բիոլոգիայով յափշտակուողներից էր, բայց նա այնքան հեռու չկնաց: Մեթոդը, որով նա զեկավարւում է իր հետազոտութիւնների մէջ, էթնոգրաֆիական է, ցեղագրական: Նա շահագործում է այն անհամար փաստերը, որ մատա-

կարարում է ժամանակակից վայրենի ցեղերի ուսումնասիրութիւնը:

Իր «Սոցիօլոգիական ոկտոնաքների» համարեա ամրոջ առաջին հատորը Սպենսեր նուիրում է նախառնապրոց ուսումնասիրութեան. ոչ մի ուրիշ գիտնական չէ ներկայացրել այնքան իմաստալի մի նախապատմական սոցիօլոգիա: Ճիշտ է, մեր հեղինակը աշխարհաշրջիկ ճանապարհորդութիւններ չեն արել ինչպէս Տայլսը, Լըբրոկ, Մարս-Միլլէր և այլն. նա միմիան շահագործել, սիստեմի է վերածել նրանց տուած զիայնթիւնները վայրենիների մասին. նա կառուցել է սոցիօլոգիայի շնոքը իր առանձնասենեակում... Այդ զարմանալի մարդը բիոլոգիական գիտութիւններով ևս (կենդանաբանութեամբ, սաղմագիտութեամբ, ֆիզիօլոգիայով և այլն) երբէք մասնագիտորչն չէ զբաղուել, նա երբէք չէ աշխատել լարորատորիաներում և այնուամենայնիւ, նրա գիտողութիւնները այդ բաժիններում գեռ այսօր ևս մեծ արժէք են ներկայացնում զիտական աշխարհին:

Ուշի ուշով և տարածութեան վրայ գիտում է Սպենսերը վայրենիներին, ըննում է նրանց՝ իրանց ֆիզիքական, մասաւոր ու հոգեկան արտայայտութիւնների մէջ. և այդ նախնական ընութեանց յատկութիւններով նա բացատրում է վայրենի ցեղերի մէջ գոյութիւն ունեցող հասարակական հաստատութիւնները, որոնք յետոյ, ոլատմութեան ընթացքում աստիճանաբար զարգացել են էվոլյուցիայի օրէնքների համեմատ:

Նախ անհատներին է նա ուսումնասիրում, հասարակական այդ «միաւորներին» իրանց բոլոր կողմերով, ապա և քննում է այն երևոյթները, որոնք բղխում են այդ միաւորների փոխագարձ շփումից, նրանց համերաշխ գործակցութիւնից:

Որքան բարդ ու բազմազան են այդ երևոյթները... Ըստանեկան կազմակերպութիւն, բաղարական կազմակերպութիւն, կրօնական-կղերական կազմակերպութիւն, լեռու, արուեստ, գիտութիւն ևայլն—հասարակական կեանքի այդ բոլոր տարրերը ազդում ու փոխազդում են յաւիտենապէս, և ուցիօլոգիայի նպատակներից մինչ է ցոյց առաջ, թէ ինչպէս այդ անվերջ այլազանութիւնից առաջ է գալիս մի ներկաշնակ ամբողջութիւն, որ մենք անուանում ենք հասարակութիւն:

Ի՞նչ է մարդկային հասարակութիւնը...

Սպենսեր պատասխանում է, որ դա անհատների մի ազը ըեղատ է (agrégat, շեղակոյա), բայց ոչ պատահական, առանց յարակցութեան ու յարատեսութեան: Հասարակութիւնը մի կը եւ էակ է, որ առըրում է ամբողջ սերունդներ ու նոյնիսկ

դարեր շարունակ։ Նա մի կենդանի իրականութիւն է, մի մարմին, օրգանիզմ՝ նման բիոլոգիական օրգանիզմներին։

Եւ Սպեսեր երկարօրէն համեմատում է երկու հասկացողութիւնները, հասարակութիւնը և օրգանիզմը (խօսքը անհատական բարձր տեսակի օրգանիզմի մասին է, մի մարդու կամ բարձր կենդանու), սահմանում է նրանց մէջ բազմաթիւ նմանութիւններ, անալոգիաներ։

Հասարակութեան և օրգանիզմի նմանութեան գաղափարը պատկանում է իսկապէս Փրանսիացի Օգիւստ Կոնտին, որ առաջին անգամը մացրեց սոցիոլոգիան գիտութիւնների շարքը, իբրև ինքնուրոյն մասնագիտութիւն։

Սպեսերը տուեց այդ գաղափարին ընդարձակ դարդացում և կիրառութիւն։ Հասարակութիւնը օրգանիզմ է, ասում է նա, և օրգանիզմն էլ հասարակութիւն է։ Մարդուց սկսած մինչև անասնական սանդուխքի ամենաստորին աստիճանները՝ կենդանի էակները ներկայանում են մեզ բարդ ագրեգատների ձևով, կազմուած անհամար բջիջ—անհատներից ու օրգաններից։ Այդպէս է ուսուցանում Վիրխովի հոչակաւոր բջիջային թէօրիան։

Որտեղ են սակայն նմանութիւնները, ինչ առնչութիւն կայ մի մարդկային հասարակութեան և մի կենդանու կամ մարդու միջև։ Սպեսեր պատասխանում է, որ երկուն էլ առում են, թէ հասարակութիւնը և թէ անհատական (մարդու կամ կենդանու) օրգանիզմը։ Եւ աստիճանաբար աճելով՝ երկուն էլ ստանում են միշտ աւելի ու աւելի կատարեալ կերպարանը։

«Ստորին կարգի մի էակ կամ բարձր կենդանու մի սազմ կրեթէ բոլորովին հոմոժէն է, միապաղադ, բայց նրա զանգուածը աստիճանաբար աւելանալով՝ նրա մասերը դառնում են միշտ աւելի բազմաթիւ և աւելի որոշ։ Զէ որ, ասում է Սպեսեր, նոյն երկոյթը նկատելի է և մարդկային հասարակութեան մէջ։ Նա էլ արտայայտում է երկու միաժամանակ կատարուող շարժումները—ամրողչացում և զանազմնաւորում (intégration, différenciation) \*։»

«Քրեթէ բոլորովին հոմոժէն, քանի գեռ փոքրիկ է, հասարակութիւնը աճելով ու ծաւալուելով՝ արտադրում է բաժանումներ ու ենթաբաժանումներ միշտ աւելի բազմաթիւ և աւելի շեշտուած։ Եւ երբ գալիս է նրա կատարեալ հասունութեան շրջանը, նա սկսում է կազմալուծուելու..»

\*.) Տես «Մուրճ», յունուար 1905 թ.։

«Թէ մարդկային հասարակութեան և թէ անհատական օրգանիզմի մէջ, որքան աւելի է բարդանում կազմը, այնքան աւելի են բազմանում պաշտօնները, ֆունկցիաները։ Ամենաստորին կարգի կենդանին չունի ոչ ստամոքս, ոչ ջնշառութեան օրգաններ, ոչ անդամներ. նա կատարում է իր բոլոր պաշտօնները իր մարմնի բոլոր մասերով։ Զկայ ֆիզիոլոգիական աշխատանքի բաժանում, ոչինչ է նոյնպէս մարմնի մասերի փոխադարձ կախումը։»

«Բարձր կենդանու մէջ, ընդհակառակը, օրգանները բազմաթիւ են, պաշտօնները որոշուած, իրարու ստորապրուած, իրարից կախուած։»

Նման երեսիթներ և հասարակութեան մէջ, Նախնական վայրենի մարդկային համայնքներում գրեթէ չկայ աշխատանքի բաժանում։ Ամեն մի անդամ ինքն է գոհացնում իր կարիքները. նա և՛ որսորդ է, և՛ զինուոր-ռազմիկ, և՛ իր տուն ու գործիքները շինող... Բայց ժամանակի ընթացքում համայնքը հետզհետէ զարգանալով՝ աշխատանքը բաժանում է, մասնաւորում, պաշտօնները բազմանում են ու որոշուում։»

Ուրիշ բազմաթիւ նմանութիւններ ևս. օրինակ, ջղային սիստեմը անհատական օրգանիզմում համապատասխանում է զինուորական կառավարութեանը՝ հասարակութեան մէջ։ Արիւնատար անօթները համապատասխանում են ճանապարհներին ու երկաթուղիներին՝ բարձր քաղաքակիրթ հասարակութիւնների մէջ և այլն և այլն։

\* \* \*

Սպենսերը շատ յարձակումներ կրեց իր այդ «օրգանական թէօրիայի» առիթով։ Նրա սահմանած անալոգիաները մեծ մասսամբ արհեստական են, կամայական։ Թէօրիան ունի ընդարձակ գրականութիւն և շատ ուրիշ ականաւոր ներկայացնեցիչներ, Շէֆլէ, Լիլիէնֆելդ, Վորմս և այլն։ Ոմանք Սպենսերից աւելի հեռու են զնում և համարեա նոյնացնում են հասարական ու անհատական օրգանիզմները։

Շէֆլէ, որ մեռաւ գրեթէ Սպենսերի հետ միաժամանակ, զրել է մի ընդարձակ ու հեղինակաւոր աշխատութիւն «Հասարակական մարմնի կազմն ու կեանքը» ընորոշ վերնագրով (Bau und Leben des sozialen Körpers), ուր նա մանրամասորէն ներկայացնում է մարդկային հասարակութեան անատոմիան, ֆիզիոլոգիան և հոգեբանութիւնը։

Այդաեղ հասարակական այլ և այլ հաստատութիւնները նմանեցւում են անհատ-մարմնի օրգաններին, մարդիկ ու ապրանքները (աշխատանքի արդիւնքները) նմանեցնուում են հիւս-

ուածքներին, ընտաճնիքը՝ օրգանական բջիջին, մարդկային մկանները՝ հասարակութեան ուժին ու գեղարուեստին ևայլն:

Ո՞չ, յարատու ժողովրդականութիւն չունեցան և չէին կարող ունենալ անալոգիայի այդ փորձերը: Իրանք իսկ հեղինակները ի վերջոյ խոստովանեցին նրանց կամայական ու խախուտ լինելը:

Մարդկային հասարակութիւնը մի մարմին է, ի հարկէ, բայց նա նման չէ կենդանական մարմին: Անասնութեան շարունակութիւնը լինելով հանդերձ՝ մարդկութիւնը ներկայացընում է իրանից մի տարբեր աշխարհ, իր տարբեր յատուկ արտայայտութիւններով:

Թէպէտու բարձր կենդանիների ու նոյնիսկ մարդու հոգեկան արտայայտութիւնները վերջին քննութեան մէջ վերածում են զուտ կենսական, Փիզիօլոգիական հակումներին, պրոտոպլազմի մուժ, անորոշ գրգիռներին, այնուամենայնիւ, մարդու հոգեկան աշխարհը այնքան մեծ բարդութիւն ունի, այնքան բնորոշ բոլանդակութիւն, մարդկային հոգեկան արտայայտութիւնները այնքան հեռու են պրոտոպլազմի զուտ օրգանական պահանջներից, որ կարելի է ասել, թէ մոնէրից մինչեւ մարդը մի անանցանելի խորխորած կայ, որ այդտեղ տարբերութիւնը լոկ քանակի ու աստիճանի մէջ չէ, այլ և որակի և էռթեան մէջ:

Մարդկային հասարակութիւնը, ուրեմն, կենդանական մի պետութիւն չէ, այլ մի տեսակ գերօրգանիզմ՝ (superorganisme): Եւ սոցիօլոգիան լոկ բիոլոգիայի ճիւղաւորութիւնը չէ, այլ մի նոր, բարձր գիտութիւն, գերօրգանիզմի գիտութիւնը:

Սպեսսերը ևս չէ թագցնում, որ կայ «ծայրայեղ տարբերութիւն մի հասարակութեան և մի օրգանիզմի միջև, Եւ ասում է՝ ինչու: «Կենդանու մասերը կաղմում են մի կոսկրետ ամբողջութիւն, այն ինչ մարդկային հասարակութիւնը մի տարբուջութիւն է»:

Մի տեղ բաղադրիչ տարբերը շղթայուած են իրար, միւս տեղ—հասարակութեան մէջ—այդ տարբերը յրուած են, ազատ: Կայ մի աւելի ցայտուն տարբերութիւն, կենդանու կամ մարդու մօտ, ասում է Սպեսսեր, զիտակցութիւնը կենդրուացած է մարմնի մի փոքրիկ մասի մէջ,—միւս մասերը մօտաւորապէս զուրկ են նրանից: Միւչդեռ հասարակութեան մէջ նա տարածուած է ամեն տեղ...

«Զի կարելի համեմատել հասարակական օրգանիզմը, որ ցըւած է, անհամաշափ և գիտակից իր բոլոր միաւորների մէջ, —չի կարելի համեմատել նրան անհատական օրգանիզմների

որևէ տիպի հետ: Միակ ընդհանուր կէտը, որ կայ նըանց մէջ, այդ այն է՝ որ կազմակերպութեան հիմնական սկզբունքները ընդհանուր են մէկին և միւսին:

Սպեսաբի սովորաբար պայծառ միաքը դժուար կացութեան մէջ է զնում ընթերցողին իր այդ հակասական յայտնութիւններով: Նման, բայց և «ծայրայեղ տարբեր»... Զարմանում էք, ինչու է նա այնքան երկար ծանրանում նմանութիւնների վրայ, ինչու է երկու օրգանիզմի անալոգիան այնքան մեծ գերխաղում սպեսաբեան սոցիոլոգիայի մէջ:

\*\*

Անալոգիայի փաստով յափշտակուած՝ անհատական օրգանիզմների նման, հասարակական օրգանիզմի մէջ ևս կայ արտաքին օրգանների մի սիստեմ, որը յարաբերութեան մէջ է գրափ հետ, պաշտպանուելու և յարձակուելու կոչումովն և կայ ներքին օրգաններիմի սիստեմ, որը ապահովում է հասարակական մարմին մննդառութիւնը:

Նայած թէ որն է երկու սիստեմներից գերակշռող՝ հասարակութիւնը կամ գլխաւորապէս զինուորականն է հիմնուած բանի գործակցութեան վրայ (Coopération forcée), կամ թէ գլխաւորապէս ինդուստրիականն, հիմնուած կամաւոր գործակցութեան վրայ:

Եվոլիցիան, որ Սպեսաբի մօտ նոյնանում է առաջադիմութեան, «պրոդրէսի» հետ, գոյութեան կոխը, բընական ընտրութիւնը «առաջ են բերել նախ զինուորականութեան, միլիտարիզմի զարգացումը և կառավարութիւնները, բայց նրանք արդէն բերում են մեղ և պիտի բերեն միշտ աւելի ու աւելի, ճակատագրական անհրաժեշտութեամբ, ինտրստրիալիզմի (ճարտարարուեստի) և լիբերալիզմի զարգացումը» Վերջինը Սպեսաբի կարծիքով անրաժման կապուած է ինդուստրիայի առաջադիմութեան հետ:

Այս թէօրիան կազմում է կենտրոնը սպեսաբեական սոցիոլոգիայի: Նրանից բղխում են բոլոր միւս թէօրիաները, որ Սպեսաբ տալիս է քաղաքական, անտեսական, կրօնական, ընտանեկան էվոլիցիայի մասին: Նա ցոյց է տալիս, թէ ինչպէս ճարտարարուեստի զարգացման շնորհիւ քաղաքական էվոլիցիան ձգտում է միշտ դէպի քաղաքական ազատութիւն, տընտեսական էվոլիցիան՝ դէպի առեստի ու աշխատանքի ազատութիւն, կրօնական էվոլիցիան՝ դէպի խղճի աղատութիւն, ընտանիքի էվոլիցիան՝ դէպի կանանց և երեխաների իրաւունքների ճանաչումն ու ազատութիւնը:

Մ'իջ. Ցովհաննիսեանց

## Ա. ՊէՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Պէշիկթաշլեանի մանկութիւնն ու պատանութիւնը

Մկրտիչ Պէշիկթաշլեան ծնուծ է 1828-ին Պոլսոյ Օբթաքէօյ թաղին մէջ: Իր մայրը զինքն աշխարհ բերելէն բիչ ետքը մեռած է: Հայրը՝ հայ-կաթոլիկ հասարակութեան պատկանող աղքատիկ ու անուսանձ մը, երկրորդ անգամ ամուսնաւանէ յետոյ, մեռած է Մկրտիչի մանկութեան միջոցին: Այդ մօրուին համար, որ, զաւակ չունենալով, ճշմարիտ մօր պէս սիրած ու խնամած է զինքը, Պէշիկթաշլեան մինչև վերջը երախտագէտ ու խանդադատագին զգացում մը տածած է, որ յստակօրչն կ'արտայայտուի իր «ի բերանոյ մանկան առպաշտպանուհին» քերթուածիկին մէջ.

Տէր, ազբիւր յորդ բարեաց,  
Դեռարոյս իմ կենաց՝  
Գորովովն ամրաւ՝  
Հայրաբար գութ կալու:

Ո՞վ առատ պարփակաց.  
Զի կրկին ինձ չնորհեաց  
Հըրեշտակս պահապանս՝  
Հովանի մանկութեանս:

Ինձ զուարթնոյն ըզտիպար  
Զիսկուհին տալով մայր:  
Որպէս զով շաղ հեղիկ՝  
Դալարեայըն փափկիկ,

\*) Արշակ Զօսպանեանի՝ «Պէշիկթաշլեանի կենսագրութիւն» աշխատութիւնից, որ ինչպէս հեղինակը մեզ յայտնում է, առանձին լոյս կը տեսնէ ձմեռը, մենք հրատարակում ենք մի քանի զլուխներ, որոնք լրացնում են ամսագրիս մէջ տպուած յօղուածը՝ Պէշիկթաշլեանի մասին (1902 թ. №11):

Այնպէս գութ իւր և խնամք  
Անուշիկ են ինձ կեանք:  
Հեղ և դու քաղցրաբուղիս  
Վեհ նորայն ի գըլուխ  
Շընորհաց քոց ըղցօղ,  
Ո՞վ անմահդ ըՍտեղծող:

Պէտիկթաշեան ունեցած է անդրանիկ եղբայր մը և քոյր  
մը, որոնք երկուքն ալ թոքախտէ մեռած են. եղբայրն իրմէ  
շատ առաջ, քոյրն իրմէ յետոյ, ինչ որ ցոյց կուտայ, թէ այդ  
ախտը, որուն զոհ զնաց ինք ալ, ժառանգական էր այդ  
ընտանիքին մէջ: Իր անդրանիկ եղբորը մասին ուրիշ տեղե-  
կութիւն չունինք, բայց եթէ այն զմայլելի տողերը՝ զոր Պէտիկ-  
թաշեան նուիրած է անոր գերեզմանին.

Իխորշ ուրեք Վոսփորոնի բըլուր մի կայ ասկառաժուտ  
Որ զինքն ի ծովըն նայի ծիծաղ ծաւալ առ իւր ոտիւք.  
Ոչ առ նովաւ ոսկեհունձ ծածանին մարգք և արտօրայք,  
Ոչ վարսագեղ ծառոց շարք, ոչ արծաթի ջուրց խոխոջանք,  
Հողմն որ անդէն փըչէ ըզթևս թացեալ յալիս Ելեսպոնտեայ,  
Տիրագին թափառի զի չիք ծաղիկ առ ի գունել.  
Ոչ անդ շըքեղ գաստակերտք, ոչ հանգըրուանք անդէորդաց,  
Այլ ի գագաթըն մի ծառ և մի բնակիչ կայ ընդ ծառով,  
Մի բնակիչ անդ ընդ ծառով, և այն ծածկեալ է ի հող,  
Եւ այն եղբայր իմ է, աւանդ, բարձեալ յինէն վաղամեսիկ:  
Եղբայր իմ, գու ընդ այս ծառովս ախորժէիր բազմիլ ըստէպ,  
Որ զհովանին չնորհէր քեզ, ըզփուտ տերես իւր արդ սփուէ  
Ի վերայ շիրմիդ ուր ես բազմիմ տըխուր և մըտախոն.  
Նախանձեցայ քում հանգատեանով, ընկալ և զիս, ոհ, ոչ թողից  
Վարատական տերևոց լինել միակ ընկեր շիրմիդ...

1839 ին (օդոստոս 29) Պէտիկթաշեան մտաւ Մուրատ-  
Ռափայէլեան վարժարանը, որ այն ատեն Փատուա էր հաս-  
տառուած: Վարժարանին անօրէնն էր, այդ միջոցին, Հ. Իգ-  
նատիոս Փափազեան, որ վերջէն ձեւնադրիչ եպիսկոպոս եղած  
է Հոռմ և որ ձգած է կարգ մը դործեր՝ գրաբար լեզուով, ինչ  
պէս «Եկեղեցական պատմութիւն» մը, «Մարդավարութեան»  
գիրք մը: Դպրոցին ուսուցիչներու շարքին մէջ կը գտնուէին  
Հ. Եսայի Մղրաքեան և մանաւանդ Հ. Պետրոս Մինասեան: Այս  
վերջինը Միհիթարեան միաբանութեան ամենէն ազնիւ ու բազ-  
մարդին գործիչներէն մին է, թէպէտ անարդար մոռացութեան  
մը մէջ ինկած՝ չի վայելեր մեր հասարակութեան մէջ այն

պատիւն ու հռչակը, որոնց արժանի է: Այս աշխատութեան յաջորդ գլուխներէն ումանց մէջ առիթ պիտի ունենամ չ: Մինասեանի գործունէութեան ինչ-ինչ կէտերուն վրայ մանրա-մանորէն խօսելու. այստեղ պիտի շատանաս իր կեանքին մէկ հակիրճ ուրուազիծը տալով. ծնած՝ Պոլիս, 1799 հոկտեմբեր 9-ին, 1823-ին Վենետիկի վանքին մէջ քահանայ է ձեռնա-դրուած. որովհետեւ քաջ հմուտ էր եւրոպական լեզուներու և գրականութեան, ձեռնազրուելէն անմիջապէս յետոյ վանքին աշակերտներուն ուսուցիչ կը կարգուի: Երբ Մուրատեան վար-ժարանը կը բացուի ի Փատուայ (1836-ին), Հ. Մինասեան կը զրկուի հոն իրը ուսուցիչ. երբ այդ վարժարանը կը փոխա-դրուի Փարիզ, պահ մը հոն ալ կը զրկուի իրը ուսուցիչ. յե-տոյ, Միխթարեան միաբանութիւնը կորոշէ դպրոցներ բա-նալ Պոլիս ու գաւառները, Մուրատեան ու Ռաֆայէլեան վար-ժարաններուն համար աշակերտներ պատրաստելու նպատակով. Հ. Անանիա Շիրալեանի կը յանձնուի Պոլիս, Փերայի մէջ, այդպիսի նախապատրաստական դպրոց մը բանալ իսկ Հ. Գետրոս Մինասեանի՝ Տրապիզոնի մէջ: Դէպի Տրապիզոն ու-ղերած ատեն, Հ. Մինասեան Պոլիս կը մնայ միջոց մը, և այդ պահուն իր նախակին աշակերտներուն ինսպրանքով՝ կը շա-րադրէ կանոնազրութիւնը Համազգեաց ընկերութեան: Տրապի-զոնի մէջ կը բանայ ցանկացուած դպրոցը, որ մեծ ծառայու-թիւններ կը մատուցանէ տեղին հասարակութեան, բայց Հասունեանց կողմէ հալածուելով, Հ. Մինասեան կը ստիպուի Հոռոմ երթալ բացաւրութիւն տալ յետոյ Վենետիկի վանքին մէջ դարձեալ քահանայացու տղոց դաստիարակ կը կարգուի, վերջապէս կրկին Փարիզ կը զրկուի իրը ուսուցիչ Մուրատեան վարժարանին և այնտեղ կը վախճանի 1867-ին: Հրատարակած է երկու ինքնազիր ողբերգութիւն, Խոսրով մեծն և Սմբատ Առաջին, Արտեստազրութիւն մը, Մտատը թուաբանութիւն մը, և Լոյոլայի Հրահանգ յաւիտնեական կենացին թարգմանու-թիւնը: Խանդավառ ուսուցիչ մը եղած է, իր աշակերտներէն պաշտուած. ջերմ սիրող էր գրականութեան, գեղարուեստի (մանաւանդ թատրոնի). իր երկու ողբերգութիւնները հայերէն լեզուով տպուած առաջին ինքնազիր գործերն են այդ սեսին մէջ: Փափաքող էր հայ ժողովրդին մէջ ուսման, ազգասիրու-թեան, միութեան տարածումին: Այսպիսի ուսուցիչ մը խո-րապէս աղդած ըլլալու է Պէշիկթաշլեանի մտքին ու հոգւոյն վրայ: «Եղբայր եմք մեք»-ի ու Արշակ Բ.-ի հեղինակին գոր-ծունէութիւնը մեծ մասամբ ուրիշ բան չէ, բայց եթէ աւելի լիակատար ու փայլուն կերպով իրադումը այն ձգտումնե-

ըուն ու երազներուն, զոր Հ. Մինասեան յղացած ու մասամբ ալ իրականացուցած է:

Պէշիկթաշլեանի հետ' Հ. Մինասեանի աշակելուած են նաև ի միջի այլոց, Յովհաննէս Հիսորիեան, որ յետոյ հրատարակեց «Բանասէր» զրական ու քաղաքական ամսագիրը, և Պետրոս Ռոկեան նկարիչը, որուն տարաժամ մահը կողքայ Պէշիկթաշլեան իր գեղեցկագոյն քերթուածներէն մէկուն մէջ, և որ ինքն իսկ գծած է Հ. Մինասեանի երկու ողբերգութեանց սկիզբը դրուած պատկերները:

Բացի Հ. Մինասեանի անձնական աղգեցութիւննէն, Պէշիկթաշլեան կրած է նաև Մխիթարեան միջավայրին ընդհանուր ներգործութիւնը, ոչ միայն կարդալով ամեն ինչ որ Մխիթարեանները հրատարակած էին մինչև այն ատեն, այլև Փատուայի վարժարաննէն ելեկէ յետոյ, երկու երեք ամիս մնալով վեճնետկի վանքը, հաւանութեամբ միարանութեան, որ անոր խոստմնալից տաղանդը գուշակած և համակրանքով ու խրախուսանքով պաշարած է. այդ պահուն Միարանութեան պլուխը կը գտնուէր զրատէր, հմուտ ու աղնուաբարոյ Սուքիաս Սոմալը: Պէշիկթաշլեան իւրացուցած է ամեն ինչ որ կար գեղեցիկ՝ այդ միջավայրին մէջ—բուռն սէր գեղարուեստի ու բարձր գրականութեան, յարում դէպի դասական ճաշակը, պաշտում զիւցաղնութեան, խանգոտ հայրենասիրութիւն:

Պէշիկթաշլեան կրած է վերջապակնս «եւրոպական» բարքերու ուղղակի աղգեցութիւնը: Աւնեցած է, վարժարանին մէջ իտալացի ուսուցիչներ. Փատուայի մէջ, զպրոցէն դուրս, անշուշտ ծանօթացած է իտալացիներու հետ, իտալական ընտանիքներու մէջ մտած, իտալական հանրային ու սոսկական կեանքի շատ մը գծերն անձամբ տեսած, ուսումնասիրած և իւրացուցած է: Ինքը՝ յայտնապէս՝ ի ծնէ օժտուած էր նուրբ խառնուածքով ու փափուկ զգայնութեամբ. բայց, որպէսովի այդ խառնուածքն ու այդ զգայնութիւնը իրենց ամբողջական զարգացումն ստանային, որպէսովի Պէշիկթաշլեան դառնար այն ճշմարտապէս «եւրոպացած» հայը, որ եղաւ իր ամբողջ կեանքին ու գործունէութեանը մէջ, անհրաժեշտ էր որ այդ ուղղակի շփումն ունենար եւրոպական միջավայրին հետ: Պոլիս կամ արևելեան որ և է քաղաք մը մնալով, ուշիմ ու տաղանդաւոր արևելցի մը կարող է, եւոպական զրբեր կարդալով, եւրոպացի անհատներու հետ յարաբերութեան մտնելով, արևետեան ողին իւրացնեկ՝ մտաւորապէս. բայց որպէսովի ասխական ստրկութեան ու կոպտութեան մէջ դարերէ ի վեր թրծուած արևելցին կարենայ եւրոպական բարքերը, կենցաղավարութիւնը, բարեկըր-

թութիւնը հիմնապէս իւրացնել, անհրաժեշտ է երկայն լոգանք մը զուտ եւրոպական միջավայրի մէջ, —ինչպէս որ արձանագործութեան, նկարչութեան վրայ որոշ գաղափարը կազմելու համար՝ չի բաւեր նկարագրութիւններ կարդալ, կամ նոյնիսկ լուսանկարներ դիտել, պէտք է զործերը տեսնել: Գրիգոր Օտեան, որ իր կրթութիւնն ստացած էր եւրոպացի ուսուցիչներու ձեռքով ու արևմտեան գրականութեանց լաւագոյն էջերը կարգաբար, բայց որ Պոլսէն չէր ելած բնաւ՝ կազմութեան այդ շրջանին մէջ, հոյակարգորէն եւրոպական միտք մը և հոգի մը յօրինած էր իրեն համար, բայց ինչպէս զինքը բոլոր ճանչնողները կը հաստատեն՝ կատարեալ ասիացի մըն էր իր ձեւերուն ու վարժունքներուն մէջ:

Պէշիկթաշեան նկատած է գլխաւորապէս այն շատ մեծ տեղը, զոր կը բանէ զեղարսուեասը եւրոպական կետնըին մէջ. զնացած է յաճախ թատրոն, տեսել զեղեցիկ խաղեր՝ աղնիւ զգացումներ ներշնչող, ճարտար գերասաններէ ներկայացուցած. զնացած է մուսէոնները, զմայլանքով զիտած է նկարչութեան, արձանագործութեան հրաշակերտները. լսած է յաճախ երաժշտութիւն, զոր այնքան խանդավագորէն կը սիրէ խտալացին՝ զայն իր կեանքին տարբական, էական պէտքերէն մին նկատելու աստիճան: Տեսած է այն աւանդական խորին պաշտումը, զոր խտալացին կը տածէ բաջութեան համար, և զոր նոյնիսկ այն շրջաններուն, երբ զուրկ էր քաղաքական անկախութենէ՝ միշտ պահպանած է: Նկատած է այն բոլոր թարուն ու հզօր ճիշդ, որ կը խմորուէր հոռմէտական հսկայ անցեալին ինքնինը ժառանչորդ նկատող այդ ալինուատոնմ ժողովրդին մէջ անցեալը վերակենդանացնելու, ազատութիւնն ու մեծութիւնը վերագունելու համար: Ներկայ զտնուած է հանրային հաւաքումներու, ուր կը յորդէ լատին պերճախօսութիւնը՝ ուժեղ, ներդաշնակ, ասատարութի, պատկերաւոր, ու հանգէսներու՝ ուր կը պայթի եւրոպական հարաւի ցեղերուն բնածին սէրն ու ճաշակը՝ պերճ, զունագեղ, եռուն, երգեցիկ կեսնաքի համար: Ճանչցած է իտալացի անհատը, խորազզաց, խանդավառ, շարժկոտ, միանգամայն յանդուկն ու ճապուկ, սրտոտ ու գերասան, քնարերգական ու կատակարսան: Այս բոլորը անշուշտ ազդուծ են իր վրայ և մեծապէս նպաստած՝ իր նկարագիրին ու միտրը կազմելու:

Այդ ի բնէ քաղցր, ներգաշնակ ու շնորհալի խառնուածքը, ծնողձ՝ Պոլսոց վճիտ երկնքին տակ ու հեշտական կլիմային մէջ, իր պատահնեկան շրջանը խտական բնութեան ու մարդկութեան պայծառ, գունագեղ ու աշխոյժ ներդործութեանը

տակ անցուցած, սահմանուած էր գեղեցկութեան ու սիրոյ երդիչը ըլլալ, «քիչ մը իտալիա» բերել մտցնել մեր ասիական բարքերուն մէջ:

Պէշիկլաշլեան՝ զործիչ

Պէշիկլաշլեան, որ կոչուած էր այնքան կրակոտ ու բազմաձև գործունէութիւն մը կատարելու, ֆիզիքապէս քիչ օժտուած էր բնութենէն, այդ տեսակէտով՝ նոյնիսկ անիրաւուած մը, ժառանգազուրկ մըն էր: Ի ծնէ թոքախտաւոր, բոլոր կեանքին միջոցին քաշկրտեց փափուկ, տկար, միշտ վտանգուելու ենթակայ առողջութիւն մը, որ վերջ ի վերջոյ յանգեցաւ իր հուսկ աարիներուն երկայն մարտիրոսութեանը: Զինքը ձանչցողները կը նկարազրեն զայն՝ միշտ նիհար, ուսերը ցըցուած, մսկոտ, ամառ ձմեռ վիզը բուրդէ շալով մը փաթթուած, ու կուրծքը միշտ չարագուշակ հազովը պատուաւած: Իր գէմքը, որ զայն յաւերժացնող լուսանկարին վրայէն այժմ մեղի այնքան հրապուրիչ կը թուի՝ իր նուրբ ու աղնուական զլոշմով, տղեղ էր կիներուն համար, որոնք զիծերուն ներդաշնակութիւնն ու գոյներուն փայլը կը փնդռեն և ոչ արտայացութեան «սերքին» գեղեցկութիւնը. և ինք որ գիտակցութիւնըն ունէր այդ տղեղութեան, տառապած է ատկէց խորապէս, տառապանք որ միշտ թաքուն մնացած, ինքզինքը կը մատնէ միայն իր ամենէն հոյակապ եղերեզներէն մէկուն սա աղեխարշ տողին մէջ:

Տես, զիարդ գեղեցկեացոյց զիս մահ, արար զիս տարփելի...

Միջահասակ էր, բարակ մարմնով մը, որուն վերև կը կանգնէր անհամեմատականօրէն մեծ զլուխ մը: Դէմքը մսազուրկ էր, ցամքած, դալկագոյն, և անոր վրայ կը ցցուէր քիթ մը չափազանց հայկական. մութ-շագանակագոյն երկայն զանցուր մազեր կը շրջանակէին լայն գմբէթարդ ճակատ մը, զոր գանկին առաջամասը մերկացնող փոքրիկ ճաղատութիւն մը ալ աւելի կ'ընդլայնէր. աչքերը, սեփ-սև, մանր, տարտամօրէն շիլ բայց տարօրիանապէս սուր ու հրուտ. ցանցառ մօրուք մը շագանակագոյն, մերկ այտերէն հեռու՝ կզակին վրայ բուսած, բաւակայն լայն կիսաբոլորակով մը կը պատէր այդ գէմքը, որուն վրայ բարակ շրթներ՝ բարակ պեխերով պսակուած, տոհմիկ նրբութեան նօթ մը դնէին:

Եւ սակայն այդ խարխուլ ու զաղփաղփուն մարմնին մէջ բնութիւնը դրած էր ամենէն կրակոտ ու միանգամայն ամենէն զողարիկ հողին, այդ անսերդգաշնակ ու մահագոյն գէմ-

քին ետև՝ ամենէն շնորհալի և ամենէն կենդանի միաբը։ Ի՞ր անձին արտաշնչուող բարոյական հրապոյրը անդիմագրելի էր։ Անոնք՝ որ զինքը առաջին անդամ կը տեսնէին, նախ պահ մը իր արտաքին երեսյթին ֆիզիքապէս անախորժ տաղաւորութիւնը կը կրէին։ բայց հազիւթէ կը սկսէր խօսիլ—մանաւանդ երբ խօսքը իր սիրած մէկ նիւթին վրայ էր—աշքերը կը վատէին, դէմքը կը լուսաւորուէր, կ'այս լափոխուէր, և ունկնդիրն ինքզինքը բռնուած կը զգար տիրական հայքի մը մէջ կապուած, աննիւթական, բայց ատով իսկ հզօրագոյն կապով մը՝ այդ մոգական էակին հետ, անխուսափելիորէն զայն սիրեկու գատապարտուած։ Այդ «հրապոյրը» մեծագոյն զէնքերէն մէկն է եղած, գրեթէ միշտ անվրէպ, Պէշիկթաղլեանի ճենասարկներուն յաջողման մէջ, այնքան մեծ զէնք մը որքան իր արուեստագէտի ամենանուոր տազանդը, իր առողջ ու պայծառ հմտութիւնը, իր կազմակերպիչի, խօսակցողի կարողութիւնները։ Այդ հրապոյրը կազմուած է շատ մը տարբերու համախմբումէն։ մտախոհ ու տրտում խորք մը, որ (մասնաւանդ երբ մինակ էր մտերմի մը հետ, կամ երբեմն նոյնիսկ բազմութեան մէջ) ազնիւ ծանրութիւն մը կուտար իր դէմքին արտայայտութեանը. և ատոր հետ, յաճախ, երբ պաշարուած էր բարեկամներով, մանկական գծիտ զուարթութիւն մը, սիրուած ընկերներու հաճոյք պատճառելու գողար բաղձանքէն ծնող ու ուեէ չարութիւնէ զերծ սրամիս կատակաբանութիւններով թարգմանուած։ միշտ անկեղծ ու բնական, հեռու ամէն քապութիւննեէ, —ինք որ սակայն ունէր՝ և զայդ փայլուն կերպով ապացուցուց քանի մը անգամ՝ զերասանի իրական յատկութիւններ, ձեերու, խօսուածքի բնիկ բարեկամութիւն մը, ստացիկ եւրոպական քաղաքավարութեան բոլոր նրբութիւններովը շեշտուած, և զոր աւելի զրաւիչ կը զարձնէր մեղմ, զգուող քաղցրանչիւն ձայնը, որով օժտուած էր. տարապայման համեստութիւն, ներողամտութիւն, տարապայման անձնութութեան միացած, մէր մը անսպառ, անշահախնդիր, այնքան քնքոյշ, որքան ջերմ. արժանապատութեան խորին զգացում մը՝ եղբայրական գորովոտ պարզութեան մը հետ, միանգամայն պատկառանք ու սէր ներշնչելով ամենուն, անկարողութիւն ուեէ տգեղ զգացման կամ արարքի, նախանձի, եսամուլութեան, զուսպութեան, ցուցամոլութեան, բինախնդրութեան, բարբառանքի, էնթրիկի. ներքին հանգարտ, բայց ամուր բաջութիւն մը՝ տիրական փափուկ հեղութեանը տակ, բայց միշտ առանց յոխորտանքի, առանց զարգմանակի, առանց թմրուկի, միշտ ոլարդ ու բնական. աշհամարհանք ուեէ անպատեհութեան

կամ վատանգի՝ երբ հանրային լարիքը կը պահանջէ զոհողութիւն մ՞ընել։ Եւ որպէսզի պատկերը կատարեալ ըլլայ, պէտք է տւելցնել նաև թէ այդ սիրով ու քաղցրութեամբ խմորուած հոգին ատել ալ գիտէր, այն պարագաներուն մէջ, ուրի նոյնիսկ յանուն սիրոյ՝ անհրաժեշտ կը գառնայ ատելլի։ «Պէտիկթաշեան երկու բան միայն կ'ատէր, —ըստ է ինձի զինքը մօտէն ճանչցողներէն մին, —ստութիւնը և ազգատեցութիւնը. բայց այդ երկու բանը սաստիկ կ'ատէր։»

Բարոյական այս չքնաղ ձիրքերովն է որ Պէտիկթաշեան կլցաւ ազգել յարգանք մը՝ ինչպէս մինչև այն ատեն ոչ մէկ հայ մտաւորական թերեւ չէր կրցած ազգել՝ գէթ Պոլսոյ հայութեան մէջ։ Խ՛նչ էր հայ մտաւորականը, մինչև այն ատեն, հայ հասարակութեան աչքին. ուսուցիչ կամ խմբագիր, գիտուն կամ գրադիր, ան «ծառայ» մըն էր ընդհանրապէս՝ ամիրաներուն համար, և նոյնիսկ մողովովին համար՝ ամիրայէն, հարուստ սարաֆէն, Տէրութեան պաշտօնեայէն շատ վար անձ մը. Ամիրաները գրեթէ բոլորն ալ մէկ կամ երկու «պատուելլի» կը պաշտպանէին միշտ. ատի տեսակ մը սովորութիւն գարձած էր, իրենց դիրքը պահպանելու համար անհրաժեշտ տարր մը. բայց կը պաշտպանէին զանոնք իրեւ «ստորակարգեաներ», իրեւ «բարերարեալներ», ու մտաւորականներն ալ «բարերարեալլի», բարձր տեսակէ պնակալէզի հոգեբանութիւն մը անկեղծօրէն ու խորապէս իւրացուցած էին յաճախ, և կը խրախուսէին ամիրաները իրենց նկատմամբ անոնց բռնած այդ դիրքը շարունակելու՝ անոնց ո և է մէկ «չնորհը» երեւանկեալ երախտագիտութեան ուսուցիկ և տաղաչափեալ բացագանչութիւններով փողարելով, անոնց հարսնիքը, մէկ զաւկին ծնունդը կամ ազգականին մահը ազգային մեծ զէպքերու պէս քնարերգելով։ Դանուած են անշուշտ, բացատութիւններ. եղած են քանի մը ամիրաներ՝ մտաւորականներու յարդը իրականապէս գնահատելու կարող, և մտաւորականներ՝ շատ սակաւաթիւ, որ զիրենք յարգել տալ զիտայած են մինչև աստիճան մը։ Տատեան, Տիւղեան, Պալեան դերզաստաններուն մէջ մամնաւորապէս՝ գտնուած են անձեր անկեղծօրէն սիրող գրականութեան ու գեղարվուստի, զանոնք քաջալերելը «պարտականութիւն» նկատող. ատոնց վրայ միծապէս ազգած են Միխթարականներ, որոնք, երոպական բարերը իւրացուցած, զիտցած են պատկառանք ներշնչել։ Արդէն, Տիւղեաններէն, Տատեաններէն, Պալեաններէն շատերը եւրոպա ուսում առած մարդիկ էին, մտքով ու հոգով ճշմարտապէս զարգացած։ Տիւղեաններու տունը գեղարվուստի, գրականութեան, ազգասի-

րութեան վասարան մը եղած է. այդ տան մէջ է որ Հ. Մինաս Բժշկեան Մխիթարեանը, Անտոն Զելչպի Տիւգեանի աշակեռութեամբ, առաջին հայերէն լեզուով թատերական ներկայացումները սարբած (1815 էն առաջ) և հայկական երաժշտութեան մասին աշխատութիւն մը պատրաստած է. այդ տան մէջ է որ Պապա Համբարձում հայկական ձայնագրութեան գիւտը կատարած է օգնութեամբ Տիւգեան Յակոբ և Անտոն Զելչպիներուն, ինչպէս ինքն իսկ իր մէկ ձեռադիր յիշատակարանին մէջ (Ճաղիկ, 15 մարտ, 1903) կը գրէ. «Այս երաժշտական արուեստը գրելը գտնուեցաւ Տիւգեաններու ապարանքը. խաղերուն ձեւ ես ինքս՝ տիրացու Համբարձում՝ գտայ, բայց կոշտ էր. Յակոբ Զելչպին եւրոպական նօտան աղէկ դիտնալով և հօրեղբայրը Անտոն Զելչպին օսմանցի մուզիքան աղէկ գիտնալով, ես ալ իփսալթիքան գիտնալով՝ երեքնիս միասին նըրբացուցինք, այս վիճակին բերինք Աստուծոյ զօրութեամբ»: \*)

Այդ գերդաստանին մէկ ուրիշ անդամը Միհրան պէյ Տիւգ, 10—15 տարի իր տան մէջ պահեց Հ. Արսէն Բագրատունին, անոր տալով բոլոր դիւրութիւնները իր Հայկը ինչպէս և Հոմերի, Վիրպիլի, Միլտոնի հրաշակերտներուն թարգմանութիւնները խմբագրելու և տպագրելու համար: Նմանօրինակ իւրողութիւններ կարելի է գտնել Տատեան ու Պալեան գերգաստաններուն պատմութեան մէջ: Կարելի չէ չիշել, օրինակի համար, Յովհաննէս պէյ Տատեանը, որ Մխիթարեանց գրական ազգային գործունէութեան մեծ աշակից մը եղած է, Նիկողոս ու Յակոբ Պալեանը, որոնց երկրորդը ճշմարիտ Մեկինաս մընէր՝ բային ամենաազնիւ իմաստովը, գեղարուեստի խանդավառ երկրագու մը, մտաւորականներու հիացող և սրտագին պաշտպան: իսկ Նիկողոս Պալեան, սքանչելի դէմք մը, զոր կ'արժէ օր մը իր բոլոր գծերով վերակենդանացնել, մտաւորականներու հիացողէ և աշակից է աւելին եղած է, ինքն իսկ մտաւորական մընէր՝ ամենաարձր զարգացմամբ, ամենանուրը ու փափուկ

\*) Յակոբ Զելչպին մէկն է այն 12 գաւակներէն, որոնց հայրն էր Յովհաննէս Զելչպին (1749—1812), Անոնցմէ երկուքը Սարգիս և Միքայէլ հմուտ էին արևելեան երաժշտութեան: Ծնած է 1793 յունուար 3-ին: Մասնաւորապէս մեծ ունէր նկարչութեան. 1819-ին Մորէա կը գտնուէր և մինչև 1822 եւրոպա շըջագայած է: Անտոն Զելչպին որդին է Միքայէլ Զելչպին և եղբայրը Յովհաննէս Զելչպին, որոնց պաշտպանութեան տակ կը գտնուէր Պապա Համբարձում: Անտոն Զելչպի քաջ քնարահար էր և Յովհաննէս Զելչպիի Սարգիս և Միքայէլ որդիներուն հետ, որոնք փանդըռնահար էին՝ բարձրագոյն գնահատութեան արժանացած է: (Հանդէս Ամսորեայ, 1890):

հոգւով, և հայկական Սահմանադրութեան խմբագրման ու մեր մէջ հաստատման առաջին նախաձեռնարկներէն մին եղած է: Այս երկու վերջին անձերը, ինչպէս և Միհրան պէջ Տիւզը՝ Պէշիկթաշլեանի ժամանակակից էին արդէն: Պէշիկթաշլեանէն առաջ, այս ոգւով ամիրաները գոյութիւն ունէին լոկ իր «բացառութիւն»: ամիրաններու մէջ տիրապետող ոգին ամբարտաւան ինքնամոլութիւնն էր: Պապա Համբարձում պաշտպանութիւն գտած է Տիւզեաններէն, բայց վայրագօրէն հարծուած է միւս ամիրաններէն, ինչ որ կը հաստատուի իր յիշատակարանին սա տողերով. «Իրաւ, եթէ մեռնիմ, ալ ցաւ մը չունիմ. այս արուեստը չկորսուիր՝ այս գիրը երեան հանելէս ի վեր. սիրով չարչարուելով ազգիս համար աշխատեցայ, հէլալ ըլլայ, խերը թող տեսնան: Շատ ծեծ կերայ աղաներէն, ամենն ալ հէլալ ըլլայ. բայց ազգիս մեծերուն խնդիրը մը ունիմ. յանցանը մը, պակասութիւն մը եթէ ունիմ՝ թող ներեն, վասն զի ոսկորներս հալեցան, մէկ մըն ալ եթէ զարնեն՝ այլ եւս բոլորովին կ'երթամ: Կ'աղաչիմ, մի՛ ղալիք ինծի: շատ պէտք եմ դեռ. այս գիտութեան գաղտնիքները գեռ շատ են. Աստուած եթէ արժանի ընէ, անոնք ալ՝ առաջ Աստուած՝ երեան կը հանեմ մեզի համար...» Ո՞րքան ցաւալի է այս ծեծ կերած շան մորմոքը կտնել այդ հանճարեղ, բազմերախտ գործիչին բերնին մէջ. ո՞րքան ընորոշ ալ է ան սակայն, անոր մէջ կ'ընդնշմարենք թէ «աղանները» ի՞նչ արհամարհուս ու բիրտ ընթացքով վերաբերուած էին այդ մեծ վերանորոգչին նկատմամբ, և վայրենի տփեղութիւնն այդ վարմունքին—որուն մէջ կրօնական մոլեսանդութիւնն ալ մաս ունեցած ըլլալու է, որովհետեւ Պապա Համբարձում կաթողիկէր, —այսքան տիսուր կը թուի մեղի այժմ, որքան Պապա Համբարձում՝ այդ վարմունքին հանդէս բռնած լեզուին ստրկական խեղճութիւնը:

Պէշիկթաշլեան բարձրացուց մտաւորականին դիրքը Հայոց մէջ: Իր կատարած այդ գերը, անշուշտ, մասամբ զիւրացած էր սա իրողութեամբ որ այն միջոցին, երբ Պէշիկթաշլեան Պոլիս գարձաւ Վենետիկէն (1845), այնտեղ կային արդէն ամիրայական շրջանակներուն մէջ, ինչպէս և անոնցմէ դուրս՝ եւբոպական կրթութիւն ստացած և կամ արևմտեան քաղաքակրթութիւնն իւրացնելու ձգտող բաւական թուով անձեր: Բանաստեղծին գործերուն առաջին տպագրութեան յառաջարանին մէջ մեծ մասամբ յիշուած են այն ընտանիքներն ու անձնաւորութիւնները, որոնց հետ յարաբերութիւն ունեցաւ ինքը— Դրիգոր Օտեան, Սաքըզ Յովհաննաս, Տիգրան Եռու-

սուփեան, Տր. Բարունակ պեյ, Տր. Մողեան, Տր. Շիշմանեան, Տր. Խափայէլեան, Տր. Քեաթիպեան, ընտանիքներ Ապտուլահեան, Արդումանեան, Էսայեան, Միսաքեան, Նէվրուզեան, Նորատումնկեան, Հէքիմեան, Հիւրմիւզեան, Վահանեան, Փորթուգալեան: Առոնց վրայ պէտք է աւելցնել նաև Պայեան, Էրամեան, Տատեան, Կոստանեան, Ճանըմեան ընտանիքները: Այս յիշուած անձնաւորութիւնները մեծ մասամբ Եւրոպա ուսում ստացած էին, և այդ ընտանիքներէն ոմանց մէջ եւրոպական ձկտումներ ու բարքեր արդէն մտած էին, ոմանց մէջ ալ խանդու միաւում մը դէպի եւրոպացում: Պէշիկթաշլեան եղաւ ճիշտ այն մարդը որ պէտք էր այդ վայրկեանին, մարդը որ իր շուրջը պիտի համախմբէր այդ բոլոր արդէն պատրաստ կամ կիսապատրաստ տարրերը, զանոնք ալ աւելի առաջ մղէր եւրոպացումի ճամրուն մէջ իր անձնական հմայքին ու ճիգին շնորհիւ, քանի մը էական մեծ զգացումներու մէջ միայնէլ զանոնք, և այդ միացումով իրագործեր կարգ մը հանրօգուտ ծրագիրներ: Պէշիկթաշլեան օգտուեցաւ այդ անձերուն և ընտանիքներուն մէջ արդէն գտնուող ազնիւ ուժերէն ու նուրբ տարրերէն. բայց այդ ընտանիքներն ու անձերը ալ աւելի մեծ չափով օգտուեցան Պէշիկթաշլեանին, օգուտ մը որ շնորհիւ Պէշիկթաշլեանի անձնական գերին՝ տարածուեցաւ ամբողջ ազգին վրայ: Ուրիշ մը՝ Պէշիկթաշլեանի տեղ՝ նոյնիսկ այդ ընտանիքներէն ու այդ անձերէն պիտի չընդունուէր այնպէս, ինչպէս ան ընդունուեցաւ, պիտի չաղղէր այն պատկառակն ու սէրը, զոր ան ազգեց:

Զի բաւեր որ ազգի մը մէջ մտաւորականները յարգել ու սիրել գիտցոլներ գանուին. պէտք է որ մտաւորականն ալ ինքզինքը յարգել ու սիրել տալ զիտնայ: Պէշիկթաշլեան որ գրպանը սանթիմ մը չունէր Պոլիս հասած օրը և տտեն մը հիւրընկալուեցաւ Հիւրմիւզեանց տունը՝ իբր ուսուցիչ անոնց զաւակներուն, առաջին օրէն իսկ մեծ յարգանք ներշնչեց ամէն անոնց, որոնց հետ ծանօթութիւն հաստատեց. յետոյ, բաղմաթիւ հարուստ ընտանիքներու մէջ զասեր գտնելով՝ յաջողեցաւ իր ապրուսաը դիւրութեամբ ճարել. բայց վերջապէս անշուք ընտանիքէ մը սերած «վարպետ» մըն էր լնաբը, և սակայն այդ բոլոր էֆէնտիններէն, պէյերէն, այդ մեծահարուստ ամիրայական ընտանիքներէն ընդունուեցաւ միշտ ոչ միայն իբրև հաւասար մը, այլ իբրեւ իրենցմէ բարձր անձնաւորութիւն մը, իբրև առաջորդ մը, իբրև վարպետ մը: Ահա ինչ որ իր անձնական զերը կը ներկայացնէ: Ու Պէշիկթաշլեան այդ արդիւնքին կրցաւ համսիւ,

որովհետև երբէք չզիջաւ շողոքորթելու, քծնելու, իրեն արուած աշակցութիւնը երբէք իրեն բարերարութիւն չնկատեց, այլ իրկև գործակցութիւն մը հանրային գործի մը մէջ իր բերած ջանքերուն: Իրմէ առաջ, իր ատենը և իրմէ ետքն իսկ, այս-քան բանաստեղծներ այս կամ այն մեկենասին ներբողեանը երգած են ոտանաւոր կամ արձակ բացագանչութիւններով, այս կամ այն ամիրային անձնական կեանքի դէպքերն անգամ իրենց քնարին նիւթ են առած. նոյն իսկ Մխիթարեանները այդ տկարութիւնէն զերծ չեն մնացած մերթ. Բագրատունին իր Հայկը ձօնած է իր հիւրընկալ ու աջակից Միհրան պէյ Տիւ-գեանին՝ հատորին սկիզբը զրուած քերթուածիկով մը, որուն սա տողերը—որքան ալ ճշմարտապէս յարգելի մեկենասի մը ուղղուած ըլլան—արևելեան շողոքորթութեան ամենատիւոր կնիքը կը կրեն.

Մըտերիմ ընդ իս գըթոյդ և երախտեաց խուն տրիտոր, Ռւղերձիմ մըտագիւր յազնըւագործ ի քո ձեռաւ.

Դոյզն ընծայն իմ պատուեալ յարգոյ մատունսդ օժտագիր, Պարծեսցիի շնորհիւդ յաւէժ, և Մայրն յանուան քում ի փառա:

Այսպիսի տողեր անսերելի են Բագրատունիի պէս մեծ մտաւորականի մը համար, որովհետև գրական զլուխ-զործոց մը՝ ինչպէս Հայկը՝ չի կրնար պարծենալ Տիւգեանի մը անոր իրագործմանը նուրիւած նիւթական աջակցութեամբ, ընդհակառակը Տիւգեանն է որ պէտք է պարծենար այգպիսի գործի մը օգնած ըլլալով հայ գրականութեան հանդէպ իր պարտականութիւնը կատարած ըլլալուն, իսկ Մայրը (Մայր-Հայաստան) բնաւ պատճառ չունի Տիւգեան Միհրան պէյի անունին փառքովը պարծենալու, որովհետև Միհրան պէյ աղնիւ և առատաձեռն զրասէր մը եղած է, բայց ոչ իր աղգը իմաստարելու բնութիւն ունեցող անձնական մեծ ձիրքերով օժտուած գործիչ մը:

Արշակ Զօսլաննեան

(Կը շաբունակուի)

## ԹԻՒՐՔԻԱՅԻ ՑԵՆԱՆԱՆԵՐԸ \*

Հանրային պարտքերի վարչութիւնը

Մէսը արդէն ակնարկեցինք, որ Թիւրքիայի պարտքերը, նրանց վճարումը ու կարգադրութիւնը գտնուում է հւրոպացիների ձեռքը. զբանումն է «Հանրային պարտքերի վարչութեան» գործունէութիւնը: Այդ վարչութիւնը կոչում է նոյնպէս «Միջազգային Յանձնաժողով՝ թրքաց պարտքերը կառավարելու համար»:

Ինչպէս ասացինք, «Հանրային պարտ. վարչութիւնը» առաջարկուեց Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների կողմից և վաւերացուեց «Մուհարրեմ»-ի նշանաւոր իրադէով:

Հանրային պարտ. վարչութիւնը կազմուեց հետևեալ անդամներից. մի անգլիացուց, որ նիրկայացնում է անգլիացի, բելգիացի և հոլլանդացի պարտատէրերի շահերը, մի ֆրանսիացուց, մի գերմանացուց, մի իտալացուց, և կ. Պոլսի պարտատէրերի մի նիրկայացուցիչից: Անգամները ընտրուում են հինգ տարի ժամանակամիջոցով զանազան երկրների պարտատէրերի ընդհանուր ժողովի կողմից, առանձին-առանձին:

Ֆրանսիայում գլխաւոր պարտատէրերն են՝ Crédit Lyonnais, Société Générale, Comptoir d'Escompte բանկերը, Գերմանիայում—Deutsche Bank-ը և բանկային տուն Բէյխերտէրերը \*), անգլիացիները, իտալացիները և ուրիշները—նոյնպէս իրանց բանկերի միջոցով կապուած էին թիւրքական արժէթղթերին, այսինքն Թիւրքիայի պարտքերի հետ:

\*) Տես «Մուրճ» № 4

\*) Մի քանի նշանաւոր դիպլոմատներ, որոնք 1877—78 թ. նշանաւոր գեր խաղացին Թիւրքիայի ճակատագրում, խոշուր գումարներ գրած էին թրքական արժէթղթերում. հետևապէս մասամբ Թիւրքիայի գոյութեան հարցը իրանց անձնական գլուխներ էր. մանաւանդ այդ կարելի է ասել Բիոմարկի մասին, որը Բէյխերտէրեր և ընկ. բանկային տան միջոցով գնել էր մեծ քանակութեամբ թրքական արժէթղթեր:

Այստեղ ընթերցողը անկառակած նկատեց, որ միայն Ռուսաստանը չունէր իր ներկայացուցիչը այդ վարչութեան մէջ. բայց դա բացատրում է այն բանով, որ ոչ մի թիւրք փոխառութեան չի կայացել Ռուսաստանում, կամ ոռուս կապիտալիստների միջոցով: Ճիշտ է, և ինչպէս արդէն ասացինք, Թիւրքիան մի մեծ գումար պարտք է Ռուսաստանին, բայց դա ուստերազմի հարկ էր և ոչ վոխառութիւն, հետևարար այդ գումարը չէր էլ կարող անցնել վարչութեան տնօրինութեան տակ: Պէտք է յիշել այստեղ և այն՝ որ թէև Հանրային պարտքերի վարչութեան կազմակերպութեան առաջին օրերում եւրոպան չձանաչեց Ռուսաստանի իրաւունքը—մասնակցել այդ վարչութեան մէջ, սակայն յետոյ սաստիկ զղաց, և թէ եւրոպան և թէ Թիւրքիան աշխատեցին, որ Ռուսաստանը ունենայ իր ներկայացուցիչը այդ վարչութեան մէջ: Բայց Ռուսաստանը այլ կերպ էր նայում հարցի վրայ. կապուած չլինելով եւրոպացիների ընդհանուր շահերի հետ, նո իրան անկախ դիրք պատրաստեց Թիւրքիայի Փինանսների, հետևապէս և Թիւրքիայի ամրող գոյութեան վերաբերմամբ: \*)

Հանրային պարտքերի վարչութեան մէջ թուրք կառավարութիւնը ունի իր պատգամաւորը, որը գուտ խորհրդակից անդամ է, և եթէ երբէք մի որևէ վէճ պատահելու լինէր վարչութեան ու թիւրք կառավարութեան մէջ, գործը յանձնուած էր միջնորդ դատարանի վճռին: Մինչև այժմ սակայն այդ չի պատահել:

Հ. պարտ. վարչութեան գործունէութիւնը ու իրաւունքները շատ մեծ են և լայն. իսկ որովհետեւ նա ինքը ուղղակի ստա-

\*) Անկարելի է այստեղ չյիշել ֆակտքի մէջ հետևեալ պատմական գէպը: Երբ յոյն-թքքական պատերազմից ու հայկական կոսորածներից յետոյ, թիւրք կառավարութիւնը պետքերի համար մտադիր էր Հանրային վարչութեան յանձնուած հարկերը իր ձեռքը առնել և զբանով իր առօրեայ ծախսերը հոգալ, այն ժամանակ Թիւրքիայի զլիսաւը պարտէրը Ֆրանսիան՝ ուրիշ ելք չգտաւ, եթէ ոչ դիմել Ռուսաստանին, խնդրելով որ վերջինս մասնակցէ Հանր. պ. վարչութեան մէջ: Ֆրանսիան ինչպէս և միւս պարտատէրները համոզուած էին, որ այդպիսով Թիւրքիան ոչ մի «կողմնակի յենարան» չի ունենայ և ուրեմն Հանր. պ. վարչութեան շահերին չի համարձակուի գովչել Ռուսաստանը թէև չմտաւ Հ. պ. վարչութեան մէջ, բայց ամենապարզ կերպով հասկացրեց Բարձր Դրան, որ Հ. պ. վարչութեան շահերին դիպչելով՝ Թիւրքիան հրապարակի վրայ դրած էր լինի քուրք կառավարութեան եւ Թիւրքիայի գոյութեան խնդիրը: Եւ Թիւրքիան տեսնելով՝ որ այդ դէպիում ոչ մի կողմից օգնութիւն չի կարող սպասել՝ քաշեց իր պոչը և զսպեց իրան:

նում է պետական մի քանի անուղղակի հարկեր, ինչպէս օր. աղի հարկը և ուրիշները, ուստի և նու ստիպուած է ունենալ ծառայողների ահազին քանակութիւն (մօտ 5,000 հոգի) և բաժանել իր գործունէութիւնը 728 ճիւղերի՝ պետութեան զանազան գաւառներում: Թուրք կառավարութիւնը հչ միայն իրաւունք չունի խանուել վարչութեան գործերում, այլ պարտական է ամեն անհրաժեշտ դէպքում նրան օդնել իր գօրքով և ոստիկաններով:

Առ հասարակ Հ. պարտ. վարչութեան գործունէութիւնը անկախ է, իսկ նրա սեփականութիւնն ու ծառայողների կեանքը՝ անձեռնմխելի:

Երբ 1871—77 թուականներում պաշտօնապէս հաստատուեց թիւրք կառավարութեան մնանկութիւնը, նրա բոլոր պարտքերի գումարը համառում էր մօտ 2 միլիարդ ֆրանկի: Այդ պարտքից կամաց-կամաց ամեն տարի պէտք է պարտատէրերին վճարուէր որոշ մաս այն գումարներից, որ Հ. պարտ. վարչութիւնը ստանում էր իրան յանձնուած անողողակի հարկերից, այդ հարկերի թւումն են. աղը, ծխախոտը, ալկոլը և մետաքսը, նոյնպէս Բուլգարիայից, Մոնտենեգրօից, Արևելեան-Ռումելիից, Կիպրոսից, Աերբիայից ստացուելիք հարկերը:

Այստեղ մենք կանոն կառնենք դրանցից ամենադիխաւորների վրայ:

Աղը.—Զնայած, որ աղի հանքերը Թիւրքիայում մեծ հարըստութիւն են կազմում, բայց և այնպէս, համեմատարար, նա շատ քիչ շահ է տալիս Հ. վարչութեանը (մօտ 21 միլիոն թրք. ոսկի): Սա բացատրում է գլխաւորապէս այն բանով, որ աղի արտադրութիւնը չէ կենտրոնացած միայն մի տեղում, այլ գտնուում է 117 զանազան տեղերում. ճանապարհների հաղորդակցութիւնը վատ է և փոխադրութիւնը թանգ է նստում: Բայց այդ՝ սաստիկ զարգացած է մաքսանենդութիւնը, կոնտըրաբանդը գրսից. այսպէս՝ Խրիմի թերակղզուց զաղոնի աղ են բերում և ծախում Թիւրքիայում աւելի էժան: ծխախոտը.—Սրա արդիւնագործութիւնը յանձնուած է մի մեծ ակցիօներական ընկերութեան: Ընկերութիւնը ունի մենաշնորհ (թէժի) գնելու, արդիւնագործելու և ծախելու Թիւրքիայում, բայց ի իբանանից և Բաղդատի նահանգից: Այդ իրաւունքի համար նա վճարում է Հանրային պարտքերի վարչութեան մի քանի միլիոն ֆրանկ: Այդ ակցիօներական ընկերութեան գործերը մինչև վերջի տարիները թոյլ էին գնում և նա կորցրեց իր հիմնական կապիտալի 20<sup>0</sup>/օ-ը. անյաջողութեան զիսաւոր պատճառներից մէկն

էլ այն էր, որ ինքը կառավարութիւնը զանազան խոչընդուներ էր գնում ընկերութեան գործունէութեան առաջ։ Այդպէս՝ նա ստեղծեց «Պարսկաստանի ծխախոտի շահագործման ընկերութիւնը», օգտուելով այն բանից, որ մենաշնորհը տրուած էր միայն «թիւրք» ծխախոտի համար։ Պարզ է թէ՝ Ռէժի-ընկերութիւնը ստիպուած էր գնել այդ նոր ստեղծուած ընկերութեան բոլոր ակցիաները, որպէսով էապէս մենակ մնար։ Տալ մենաշնորհն և ապա զանազան խաղերի գիմել—սա էլ մի օրինակ է, թէ ի՞նչպէս սպաշտոնական թիւրքիւն մի քիչ աւելի եկամուտ ստանալու նպատակով դիմում է ամեն տեսուկ խարիբայական միջոցների։ Եերում ենք այստեղ մի քանի թուեր ծխախոտի եկամուտի վերաբերմամբ, համեմտաւած միւս երկըրների հետ։

**Թբանսիան (38 միլ. ժողովուրդ)** ստանում է զուտ արդիւնք ծխախոտից 328 միլ. ֆր.

**Աւստրիան (27 միլ. ժող.) . . . . . 136 միլ. ֆր.**

**Թիւրքիան (16-20 միլ. ժող.) . . . . . 25 միլ. ֆր.**

Դեռ թիւրքիայում ծխում են աւելի, քան թէ յիշեալ երկըրներում։ Մեծ էր Հանր. պար. վարչութեան հիասթափումը, երբ տեսաւ որ ծխախոտի հարկը իսկապէս շատ աւելի քիչ էր, քան թէ կարծւում էր։

**Ալյոլլ.—Ինչպէս ամեն, նոյնպէս և այս հարցում թիւրքիայում ամեն ինչ գլխիվայր է։ Այդպէս՝ մինչդեռ բոլոր երկրներում ակցիով սպիրտի վրայ է նշանակուած և զինիի վրայ ոչինչ, կամ համարեա ոչ մի հարկ չկայ—թիւրքիայում ընդհակառակն է, սպիրտի վրայ շատ չնշին հարկ է նշանակուած (10 անգամ աւելի քիչ, քան թէ թրանսիայում) և դա՝ չնայած այն երևոյթին՝ որ թիւրքերը աւելի սպիրտ և արագ են գործածում, քան թէ խալողի գինի։ Գինուց վերցնեում է 15 տոկոս ընդհանուր բերբից, այն էլ վիղողվ։ Շնորհիւ մաքսային անկանոն ու անկարգ սիստէմի, արտասահման արտահանուած թրքական գինին նորից թիւրքիա ներմուծուելիս՝ գինու տիրոջը վերագարձնւում է  $7\frac{1}{2}$  տոկոս ընդհ. զնից, այնպէս որ օտար երկրի գինին, օր. Յունաստանի՝ թիւրքիայում աւելի էժան է ծախուում, քան թէ հարկերով բեռնաւորուած բընիկ գինին, ուստի և վերջինս չի կարող մրցել դրսից եկած գինիների հետ։**

Հանրային պարտքերի վարչութեանն է տրուած նոյնպէս կ. Պոլոի և Փոքր Ասիայի ափերի ձկնորսութիւնը, որի տարեկան եկամուտը համենում է մինչև 3 միլիոն ֆր.։

Հանրային պարտքերի վարչութեան տնօրինութեանն է

յանձնուած մետաքսի բոժոժների եկամուտը։ Փոքր Ասիայի մետաքսը երբեմն յայտնի էր իբրև միակը իր ամրութեամբ և գեղցիլութեամբ, բայց վերջին կէս զարում այդ արդիւնաբերութիւնը բաւականին ընկաւ։ Մետաքսէ բոժոժների արժողութեան վրայ վրուած է  $18\frac{1}{2}$  տոկոս հարկ, որից  $10\%$ —գընում է Հանրային պարտփերի վարչութեան, իսկ  $2\frac{1}{2}\%$  յօպուտ զանազան պետական հաստատութիւնների։ Եթէ զեռ Թիւրքիայում բոժոժների արդիւնաբերութիւնը գոյութիւն ունի, այն էլ չնորհիւ չ, պ. վարչութեան եռանդին է։ Բոժոժի տարեկան եկամուտը հասնում է մինչև  $1\frac{1}{2}$  միլ. ֆր.։

«Մուհարրեմի» իրադէի 11 և 12-րդ յօդուածներում առուած է նոյնպէս, որ հանրային պարտփերի վարչութիւնը պէտք է ստանայ Արևելեան Ռումելիից, Մոնտենեգրօից և այլ վասսալ երկրների տուրքեր, որոնք սակայն վերին աստիճանի անկանոն են վճարուած։ Կիպրոս կղզուց վարչութիւնը ստանում է 100 հազար ֆունտ ստերլինգ, իսկ ինչ վերաբերում է Մոնտենեգրօին, Սերբիային և Բուլղարիային, պէտք է առել, որ չնայած Բերլինի գաշնազրի  $\S$ . 9, 33, 42-ի՝ այդ երկրներից ոչինչ չի մտնում վարչութեան գանձարանը։ Բերլինի համաժողովում այն միտքն էր արծարծուած, որ՝ քանի որ այդ երկրները երբեմն Թիւրքիայի մասն են կազմել, հետեւապէս Թիւրքիայի նախկին պարտփերի որոշ մասի վճարումն էլ նըւրանց բարոյական պարտականութիւնն է։ Ընդհանուր հաշուով չ, պարտփերի վարչութիւնը տարեկան եկամուտ ստանում է մօտ 50 միլիոն ֆրանկ, այդ գումարից է, որ նա վճարում է Թիւրքիայի պարտփերը ամեն տարի։

Այդուեղ իսկապէս պէտք է կանգ առնէր Հանր. պարտ. վարչութեան գործունէութիւնը և զերը, եթէ նրա իրաւունքները վերջին տարիներս աւելի չընդարձակուէին։ Բացատրենք մեր միտքը։

Ինչպէս արդէն ասացինք, Մուհարրեմի իրադէի հիման վրայ, չ, պ. վարչութեան է յանձնուած Թուրքիայի պարտփերի վճարումը եւրոպայիներին՝ պետական մի քանի եկամուտներից։ Սակայն 1880 թ. համարեա պատահամամբ, և իմիջի այլոց թիւրք կառավարութեան խնդրանքով՝ Հանր. պարտ. վարչութիւնը ճողովեց բոժոժից վորխանակ  $10\%-\text{ի}$ ,  $12\frac{1}{2}\%-\text{ը}$  տուրք, որից  $10\%$  ընդունուած պայմանի համաձայն պէտք է վարչութեան տնօրինութեան յանձնուէր, իսկ  $2\frac{1}{2}\%-\text{ը}$  յօպուտ թիւրք կառավարութեան։ Այդպիսով չ, պարտ. վարչութեան յանձնուում էր մի նոր պաշտօն—գործել ոչ թէ միայն յօպուտ եւրոպացի պարտատէրերի, այլ եւ թիւրք կառավարութեան՝ հեշտա-

ցնելով սրա տուրքերի հաւաքումը։ Այդ թիւրք կառավարութեան համար օգտաւէա էր զանազան տեսակէտներով։ Նախ և առաջ Հանր. պ. վարչութեան ծառայողները աւելի ճշտութեամբ ու ազնւութեամբ կը կատարէին հարկահանութեան գործը, քան թէ իրան՝ կառավարութեան պաշտօնեաները, և երկրորդ՝ այդ  $2\frac{1}{2}\%$  հարկը ստանալու համար կառավարութիւնը ստիպուած պիտի լինէր նոր ծառայողների մի ահազին ցանց ստեղծել. մինչդեռ թիւրք կառավարութիւնը Հանր պ. վարչութեան այդ փոքրիկ ծառայութեան համար պայմանաւորում էր վճարել զանձուածից  $5\frac{1}{2}\%$ -ը, իբրև կոմիսարիա։ Հ. պ. վարչութեան, ինքնըստինքեան, և առաջին հայեացքից հասարակ՝ այդ նոր գործուաչութիւնը ունեցաւ իր խոշոր պատմական հետևանքները։

Հանրային պարտքերի այդ նոր ֆունցիան ազատեց և գուցէ քանից ազատելու է թիւրք կառավարութիւնը այն նեղ դրութիւնից, որին պարբերաբար հնթարկւում է այս վերջինը փողի պակասութեան պատճառով։

Հէսց որ առաջին փորձը յաջող անցաւ, և լաւ եկամուտ բերեց թէ վարչութեան և թէ թիւրք կառավարութեան՝ 1880 թուի վերջերը՝ գերմանական Deutsche Bank-ը առաջարկեց թիւրք կառավարութեան շինել Փորք Ասիայում երկաթուղի, բայց մի անհրաժեշտ պայմանով. այն է՝ կառավարութեան երաշխաւորած garantie kilométrique-ը \*) ստանալ ոչ թէ թիւրք կառավարութեան պաշտօնեաների, այլ Հանրային պարտքերի վարչութեան միջոցով, որովհետեւ վերջինս ճանաչուած էր եւրոպացիների ձեռքով կառավարուած, ընդունակ և ճշտապահ մի մարմին, մինչդեռ թիւրք ֆինանսների մինիստրութիւնը յայտնի էր իբրև անընդունակ և անկարող այդ տեսակ դործեր կառավարելու մէջ, և հետևապէս թիւրք կառավարութեան «երաշխաւորումը» ոչ մի զին չունէր երկաթուղին շինող ընկերութեան համար։ Յայտնի բան է, թիւրք կառավարութիւնը ընդունեց այդ առաջարկութիւնը, մանաւանդ որ Deutsche Bank-ը նոյն ժամանակները պատրաստել էր թիւրքիայի համար 30 միլիոն ֆրանկի փոխառութիւն (երաշխաւորուած ձկնորսութեան եկամուտներով)։ Զինորսութեան եկամուտի տնտեսութիւնն էլ յանձնուեց Հանր. պ. վարչութեան, որը ընդունեց այդ յանձնարարութիւնը, որովհետեւ դրանից միայն շահ ունէր։ Հ.

\*) Ամեն մէկ պատրաստ երկաթուղի վերստից տնօնս եկամուտի երաշխաւորութիւն՝ թիւրք կառավարութեան կողմից՝ յօդուա երկաթուղուական ընկերութեան։

պ. վարչութեան այդ նոր կործունէութիւնը, բնականօրէն, անսկատելի չանցաւ Եւրոպայի Փինամնաների համար և ահա սկսեցին զանագան առաջարկութիւններ թիւրը կառավարութեան, ի հարկէ մի անհրաժեշտ պայմանով՝ որ Եւրոպական Փինամնանուստները գործ ունենան կառավարութեան հետ ոչ թէ ուղղակի, այլ չ. պարտքերի վարչութեան միջոցով:

Աւթը տարուայ ընթացքում առաջարկուեց և ընդունուեց վեց հաստ խոշոր երկաթուղու ծրագրներ, որոնցից երեքը գերամանացի, երկուաը Փրանսիացի և մէկը՝ բելգիացի կապիտալիստների կողմից. միենոյն ժամանակ առաջարկուեց և երեքնոր փոխառութիւն: Հ. պարտ. վարչութեան այդ նոր Փունկցիայից ի հարկէ օգտառմ էր նոտի և առաջ և ամենից շատ ինքը՝ թիւրը կառավարութիւնը, որովհետև Հանր. պարտ. վարչութեան միջոցով և վարչութեան երաշխաւորութեամբ նրա առաջ բացուեց, բոլորովին սլատահմամբ, խոշոր Եւրոպական կրեպիդ, մի բան որի մասին նա չէր կարող երազել, մի բան, որ Եւրոպացի կապիտալիստն էլ երբէք չէր կարող ենթալրել. Զեռնարկութ են երկաթուղիների շինութեան և Թիւրքիան Եւրոպական բորսայի աջքում կամաց-կամաց սկսում է երևալ, որպէս մի բարգաւաճ պիտութիւն:

Սյդպիսով զուգընթացար Թիւրքիայի նախկին պարտքերի հետ, որոնց համար և նշանակուած էր Հ. պ. վարչութիւնը—սկսում են և նոր փոխառութիւններ և պարտքեր յատկապէս պետութեան համար և նրա պատասխանատութեամբ, բայց մի որևէ հարկի երաշխաւորութեամբ և Հ. պարտ. վարչութեան տնօրինութեան տակ:

Վերջին երկու տարին Թիւրքիայի և Եւրոպացի կապիտալիստների տնտեսական շահերը գնալով աւելի ևս խառնուեցին և ամրացան: Խոկ Թիւրանսիայի բանկատէր Մորիս Թուվիէի, այժմեան Փինամնաների մինիստրի ծրագիրը՝ Թիւրքական պարտքերի «միացման» (unification) մասին, որ արգէն իրականացած է, այնքան ոերս կապերով ձուլում, խառնում է իրար Եւրոպացիների և թիւրք պետութեան փողային հաշիւները և շահերը—այն էլ 48 տարուայ ընթացքում—որ առանց չափաղանցութեան կարելի է ասել, թէ Եւրոպական բորսան՝ Հանրային պարտքերի վարչութեան միջոցով հանդիսանում է մնունդի մի անսպառ աղբիւր Թիւրքիայի հիւանդ մարմնին և փրկում է նրան վերջնական նեխումից:

### ԹԻՒՐՔԻԱՅԻ ԵՐԿԱԾՈՂԻՆԵՐԸ

Երկաթուղիների ազգեցութիւնը՝ մի որևէ երկրի ֆինանսների վերաբերմանը՝ անստահման մեծ է: Նախ այն կողմից, որ նա կուտակում է այդ երկրում կապիտալների ահապին քանակութիւն, ապա և այն կողմից, որ այդ երկաթուղիներից նոր նոր եկամուտներ է ստանում պետական գանձարանը. բացի այդ՝ երկաթուղիների, իրքի ճանապարհների, անուղղակի ազգեցութիւնը՝ ժողովրդի անտեսական բարօրութեան վրայ, ինքն ըստ ինքեան անվիճելի է:

Այս վերջին, անուղղակի ազգեցութիւնը տնտեսական կեանքի և ֆինանսների վրայ այնքան խոշոր հետևանքներ է ողարում իր մէջ, որ դառնում է և ամենազբարաւականը ժողովրդի շահերի տեսակէտից էլ: Բայց, որպէսզի երկաթուղու մի որ և է զիծ իսկապէս ունենայ իր մեծ նշանակութիւնը՝ պէտք է որ այդ գծի շուրջը շինուին՝ գիւղերից և քաղաքներից՝ խճուղիներ և սալլի ճանապարհներ, որոնք անհամեմատ հեշտացնում են ապրանքների տեղափոխումը զեպի երկաթուղու կայարանները:

Եւ ահա հէնց այս անհրաժեշտ պայմանն է պակասում թրքական երկաթուղիներին: Վերջին տասը տարուայ մէջ շինուեցին մօտ 2000 վերստ երկաթուղու զանազան գծեր, բայց զիւղային ճանապարհները մնացին առաջուայ նահապետական վիճակի մէջ և ապրանքների տեղափոխումը՝ գիւղերից դէպի մեծ կենարոնները՝ նոյնքան սուղ է նստում, որքան և առաջ:

Թիւրքիայում երկաթուղային առաջին դիմը շինեցին անգլիացիները 1856 թ. այդ ժամանակից յետոյ, մինչի այժմ շինուած են 4,554 վերստ երկաթուղու գծեր, որից 2,000-ը եւրոպական Թիւրքիայում, մնացեալը ասիական գտառներում:

Երկաթուղիներից թիւրք կառավարութիւնը ստանում է տարեկան 35—40 միլիոն ֆրանկ եկամուտ: Բայց երկաթուղիներից մի քանիսը կառավարութեան հասցնում են նիւթական խոշոր վեասներ. այսպէս Սալոնիկ—Մոնաստըր գիծը 1900 թ. կառավարութեան տուել է մօտ մի միլ. ֆր. եկամուտ, մինչդեռ կառավարութիւնը այդ գծի համար վճարել է կոնցեսսիոններներին, որպէս նուազագոյն (minimorum) երաշխաւորութիւն՝ 4 միլիոն ֆր. մի տարուայ համար: Ճիշտ է, թիւրք կառավարութիւնը մի բանում կարող է մխիթարել իրան. մակեդոնա-

կան ապստամբութեան գէպքում, թուրք զօրքերը ամենայն արագութեամբ կարող են տեղափոխուել գէպի ապստամբութած վայրերը: Վերջին տաս տարուայ ընթացքում եւրոպացի զանազան կոնցեսուիօններ ստացել են Թիւրքիայից մօտ 10 հազար վերստ երկաթուղու նոր գծեր անցկացնելու իրաւունք:

Այդ կոնցեսուիաններից ամենաաչքի ընկնողները հետևեալ երկուսն են. 1) Դամասկոս-Մելկա, և 2) Բաղդադի գիծը: Առաջնի համար, որի երկարութիւնը հասում է մօտ 2,200 վերստի և արժելու է ամենաքիչը 300 միլ. ֆրանկ, թիւրք կառավարութիւնը ցանկութիւն է յայտնել իր «սեփական» միջոցներով շիներ: Այդ նպատակով ևս ձեռնարկեց մի «աղքասիրական» ժողովարարութիւնը բաց անել \*), բայց ամրող ժողովարարութիւնը հազիւ նրան 9 միլ. ֆր. տուեց. բնորոշ է հետևեալ հանգամանքը. հաւատացեալների եռանդի վրայ ազգելու նպատակով թիւրք կառավարութիւնը հետևեալ զուտ արեելեան միջոցը առաջարկեց. ստեղծել երեք տեսակ մեղայլ, տասը, յիսուն և հարիւր ոսկուց աւելի նուիրողների համար. Անս առաջարկեց:

Մինչև այժմ այդ ճանապարհի համար 60 վերստ հողէ հարթուած, այն էլ առանց երկաթուղու գծերի:

Գալով «Բաղդադի» գծին, պէտք է ասել, որ նա դեռ 40-ական թուակամներից գրաւել էր եւրոպական Փինանսների ուշագրութիւնը, որոնց նպատակն է եղել՝ կրծատել եւրոպացից Հնդկաստան տանող ճանապարհը, անցկացնելով երկաթուղին Աստիոքի ծոցից մինչև Պարսից ծոցը, սակայն Թիւրքիան միշտ գերադասել է կանքել այդ գիծը Կ. Պոլսի հետ: Զմոռանանք այստեղ ընդգծել, որ ճանապարհը անցնելու է Միջագետքի ամենաարգաւաւած հողերի վրայով, իսկ այդ հողերի 3/4-ը սուլթանների մասնաւոր սեփականնութիւնն է: Բացի այդ՝ աչքի առաջ պէտք է ունենալ և այն համսգամանքը, որ Բաղդադը և Կ. Պոլսը միմեանց կապելով՝ թիւրք կառավարութիւնը միջոց կունենայ զօրքերի հեշտ տեղափոխումը այդ երկու հեռաւոր կէտերի համար: Ռւսոի գեռ 1875 թուականից, սուլթանական իրադէում ասուած է, որ այդ գիծը պէտք է շինուի նոյնաչս... սեփական միջոցներով. «սեփական միջոցներով» 2,500 վերստ...

Այդ գծի վերաբերմամբ՝ բազմաթիւ առաջարկութիւններից վերջերս ընդունուեց Deutsche Bank-ի ծրագիրը (1902 թ.): Ծրագրուած է անհրաժեշտ կալիտալի 60<sup>0</sup>/օը առնել գերմանա-

\*.) Զի՞՞ որ Մելկան—մահմեղականների սրբազն վայրերից մէկն է:

ցիներից, իսկ մնացեալ 400/օ-ը ֆրանսիացիներից. գիծը կոչուելու է «Կոնիա—Բաղդադ—Բասրա»։ Աւելորդ է ասելն էլ որ ամեն մի վերստի համար կառավարութիւնը ակց. ընկերութեան երաշխաւորութիւն է տալիս 4,400 ֆր. տինիում տարեկան եկամուտ. կոնցիսիան տրուած է 89 տարով. բացի այդ՝ ակց. ընկերութիւնը իրաւունք ունի շահագործելու գծի երկու կողմը գտնուող հողերը մինչև 20 վերստ տարածութեան վրայ երբ որ էլ իրագործուի այդ ծրագիրը՝ Բաղդադի երկաթուղին կունենայ իր խոշոր միջազգային նշանակութիւնը, թէ քաղաքական և թէ տնտեսական տեսակէտից։

Ուուրէն Բերլնընեան

(Կը շարումակուի)

### Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ.

...Ասում ես, եղբայր, թէ զուր ենք սպասում,  
թէ խորտակուեցան արդէն մեր յոյսեր,  
Վերջին փոթորկի թէ ձայնն ես լսում  
եւ հայրենի տան տեսնում ես աւեր...

—Շէն չէ երեսում ինձ էլ նու բնաւ,  
Բայց և աւերակ ես չեմ համարում,  
Չեմ ասում, թէ մեր վերջին ժամն հասաւ,  
Եւ էլ տեղ չունինք մենք այս աշխարհում:  
Քանի չէ մարել օջախի կըրակ,  
Տունն էլ է կանգուն, տան տէրն էլ կենդան.  
Էլ չկան բոցեր, բայց պաղ մոխրի տակ  
Կայծերը երկար դեռ պիտի մնան...

Կը գայ ժամանակ, սիրով կեանք կը տանք  
Ու կը բորբոքենք մենք հուրը թաքուն,  
Եւ դու կը տեսնես չքնաղ ապարանք  
Այնուղ, ուր հիմա տեսնում ես աճիւն:

Յովհաննէս Յովհաննիսնան

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԻՆ ԹԻՒԹՅԻՍՏԱՆՈՒՄ

(Վանից—Շէմզուինան)

190...թ. մայիսի կեսին էր ճիշտ, երբ ես Վան քաղաքից, քրդական մի մեծ կարաւանի հետ, որ բաղկացած էր 80-ից աւելի բեռնակիր ձիերից և ջորիներից, գուրս եկայ Այգեստանի հարաւակողմը գտնուող Հաջի-Բաքրի կոչուած յորդանոս աղբիւրի մօտից և ճանապարհ ընկայ մի սիրուն ձորակի միջով գէպի արևելք: Կուռու-Բաշի գետ կոչուած փոքր ջրի ձախ ափից նրա հակառակ ընթացքով բարձրանում էինք թիշքիչ գէպի վեր մինչ նոր-Գիւղի գետիւկը:

Հաջի-Բաքրի քահրէզից (աղբիւր) կէս ժամու ճանապարհ անցած, մեր աջակողմը՝ գետի հարաւային ափի վրայ տարածւում էր Կուռու Բաշ գիւղը իր ընդարձակ խալուղի և այլ պըտղասու ծառերի այդիներով, որի հարաւի սահմանի վրայ անմիջապէս բարձրանում է Ս. Խաչի ըլուրը՝ իր լանջի վրայ Ս. Խաչ փոքր վանրով, որը իր բարձրանայեաց գիրքի շնորհիւ անարդել իր աչքի առաջն ունի Վանալ հրաշալի պանորաման: Ս. Խաչը ունի մի հայկական որբանոյ իր տիրացու վարժապետով, 15 որբերով և մի մոկացի զաղթական վարդապետով: Վանը աղքատ է, հաղիւ մի քանի տասնեակ ոչխարներ, մի քանի արտօրայք, մի քանի լծկաներ և Վանի բազարում մի քանի խանութներ—ահա նրա ամբողջ հարստութիւնը:

Բլրի ստորոտ տարածուող Կուռու-Բաշը համարեա զուտ հայաբնակ է, 96-ի արիւնաշաղախ սարսափներից առաջ գիւղը ներկայացնում էր 100 տնից աւելի ընակչութիւն ունեցող բաշը շէշէն մի ապատ, շրջապատուած ճոխ բուսականութեամբ, աղբիւրներով և առուակներով, որոնք պտտեցնում են բազմաթիւ ջրաղացներ, ունէր եկեղեցի և ուսումնարան: Սակայն այժմ... Կուռու-Բաշը բոլորովին այլ բան է ներկայացնում. բնակչութիւնը պակասել է, իսկ մեացածներն էլ չքաւոր, աղքատ և անպատպար, աղքատացել է և ընութիւնը, հարիւրաւոր լիտրներով գինի մատակարարող երբեմնի սաղարթախիտ այգիները՝ այգետերե-

բին՝ աշնան ժամանակ ուտելու խաղող անդամ մատակարարելու կարողութիւնից զրկուել են...

Կուսու-Բաշից քիչ զէպի արևելք՝ Վարագայ վանքը տանող ճանապարհի վրայ երեսում են հեռուից այն մի քանի փոքր ժայռը, որոնց ներքն աղաստանած՝ 21/2 յունուար 1898 թուին ընկել են հերոսաբար, երեք հարազատ հայեր:

Զախակողմը բարձրանում է Վարագայ լեռը, որի վրայ երեսում է Վարագայ հօչակաւոր վանքը իր ցից գմբէթներով։ Շատ չանցած ճանապարհի հովիտը վերջանում է և սկսում նոր Գիւղի գեաղիւկի զառիվեր վերելքը, որը տեսում է 2 ժամից աւելի։ Ահա գեաղիւկի բարձրութիւնների վրայ ենք. Վարագայ սրածայր գմբէթները փայլում են հեռաստանում արեի ճառագայթների ներքոյ, որպէս և նրան շրջապատող ծառաստանները Վարագայ ձորակում. քիչ բարձրանալուց յետոյ նրա գըմբէթները մի անգամ էլ բարեհաճում են ցոյց տալ մեզ իրանց կոնաձև կատարները, և ապա ծածկում բլուրների երկար ստուհներում. ծածկում է նոյնպէս Վանայ ընդարձակ և հարթ դաշտավայրի հրաշալի պատկերը՝ լայնանիստ քաղաքով և անտոիկ ամրոց-բերդով. ալեծածան ծովը միայն չի ուզում տակաւին թաքնուել մեր կարօտ աչքերից։

Նոր-Գիւղի գեաղիւկի բարձրունքի վրայ լինում է մեր առաջին իջևանը, հանգստավայրը զիշերուայ համար։ Օրուայ երկարութիւնից յոզնած, ճանձրացած՝ արեգակի խոշորացած սկառառակը զանգազօրէն զէպի իր մուտքն է դիմում, և տակաւ առ տակաւ կորչում ծովակի արևմտեան և հիւսիսային սահմանները եզերող Ներութ-Գրգուռ և Սիփան լեռների յետել հանդիսացնելով Վանայ հրաշալի վերջալոյներից մէկը։

Մայիսեան զեփիւոը փչում է մեր բացօղեայ իջևանի յատակին փռած ընդարձակ, բնութեան դալար և խայտաճամուկ թելերից հիւսած, ճոխ գորգի վրայից և ծածանում նրան։ Մեր շրջապատի բազմաթիւ վճիտ աղբերակները սնունդ են տալիս այդ բնական գորգի դալար հիւսկէններին և աւելացնում նրանպատճելի հմայքը։

Ինչքան խաղաղ և անվրդով է լինում քունը գիշերային այս զով պահին, բնութեան աղատ գրկում, սարի կատարին, կանաչութիւնների ծոցը, երկնային աստեղագարդ մութ-կապոյտ կամարի ներքոյ։ Գիշերային այդ վեհ խաղաղութիւնը ընդմիջւում է սակայն մեր շրջակայքը արածող ձիանների զուարթ խրիզն-ջոցով և քիւրդ ձիապանների, լեռների այդ աղատ որդիների վայրենի երգի մեղմ լօ-լօ-ներով։

Դեռ արշալոյսը չբացուած, կէս գիշերին դուրս եկած կի-

սալուսնի արծաթ ճառագայթների ներքոյ, որ լուսաւորում էին պայծառ լուսով մեզ և մեր կանաչ շրջակայքը՝ շարունակում ենք մեր երեկուայ ընդհատած ճանապարհը \*), իշխելով Նոր Գիւղի գեադիւկից, որի արևելեան հարաւային էջքը հետզհետէ կորցնում է իր բուսական հարստութիւնը և ստորոտներում բոլորպին ժայռոտ է դաւնում:

Բլրի ստորոտում մի տափարակի վրայ ընկնում է Նոր Գիւղը 200 տուն հայ բնակիչներով։ Առաւօտեան մթնաշաղին անցնում ենք այդ գիւղի մօտով, լուսնի աղօտացած շողերի ներքոյ։ Գիւղի հայ բնակիչները ընդունակ, կտրիճ և աշխատասէր մարդիկ են, մի եկեղեցի ունին և մի ուսումնարան, վերջինս փակած դռներով։

Դուրս գալով գիւղից և մանելով Վերին-Խոշաբ կոչուած գաւառակի սահմանում, արևածագի ժամանակ առհասարակ փչող արևելեան մրկեցուցիչ ցրտի տակ, անցնում ենք Զեւնակաւտար կոչուած մերկ, քարքարոտ, բարձր լեռնադաշտի վրայից, որի հարաւ արևեմուեան ստորոտով անցնում է Խոշաբի (անուշ-ջուր) գետը՝ յորդացած՝ գարնան անձրևներից կազմուած հեղեղների շնորհիւ։ Շատ չանցած՝ Խոշաբի վրայ կապուած մի փայտեայ, բաւականին հաստատուն կամրջի վրայից անցնում ենք գետի հանդիպակաց ափը։ Կամրջի կողքին մնում է զեռ կանգուն, անցորդների հակողութեան և ապահովութեան համար շինուած պահականոցը, ուր սակայն այժմ ոչ է ապրում։

Ըսթանալով գարնանային արևի մեղկ շողերի տակ, այս անգամ Խոշապի ձախ ափով, ցերեկուայ շողից ստիպուած՝ հանգիստ ենք առնում Խոշաբի եղեգնուտ ափի մօտ, նրա բուսառատ ընդարձակ հովտում։ Ապա բարձրանալով մի բլրակ՝ նրա գագաթից մեր առաջն է բացւում Խոշաբի ընդարձակ դաշտի համայնապատկերը։ Մշուշի մէջ հազիւ նշմարւում է Խոշաբի բերդը, որի ստորոտում տարածուած է Խոշաբի գիւղաքաղաքը։ Նախորդ գիշերուանից մինչեւ այժմ զեռ ոչ մի չէն չէր երեացել մեր աչքին շրջապատի բլուրների պատճառով, որոնց պարփակած հովիտով ընթանում էր մեր ճանապարհը։

Գիշերուան երեք ժամ մնացած, մենք մօտենում ենք Խոշապ գիւղաքաղաքին։ մեր առաջ անկուած է Խոշապի հըսկայական քարաշչն բերդը՝ բարձրացած Խոշապ գետի աջ ափի

\*) Պէտք է նկատել որ վահից-Շամզդինան տանող բնական, անկանոն, անիմամ թողնուած ճանապարհը երկարում է հարաւարեկելեան ուղղութեամբ, երբեմն դէպի արևելք փոքր շեղութիւնով։

անմատչելի քարաժայոի գագաթին <sup>1)</sup>): Խոշապ բերդաքաղաքը տարածւում է բերդի ստորոտում, գետի վրայ կապուած մի հին, հոյակապ կամուրջով:

Երբեմնի շնորհ և մարդաշատ Խոշապը, այժմ համարեա ամայի է և կիսաւեր՝ հազիւ հարիւր տուն բնակիչներով, որոնց երդիկների բուխարիներից վաղուց է մարել հայկական օճախի սրբազն ծուխը: Անցեալ գարի առաջին կէսին բերդաքաղաքը ունեցել է մօտ 1,500 տուն բնակչութիւն, մեծամասնութիւնը հայ, իսկ փոքրամասնութիւնը՝ թիւրդ ազգաբնակութեամբ: Նոյն գարու քառասնական թուականներին՝ Բէդհրիան բէկի, խան-Մահմուդի և այլ քրդական բնականների տիրապետութեան օրերում, Վասպուրականում, Խոշապի տիրոջ՝ Ամին-բէկապարոնի, թիւրք կտուակարութեան դէմ մղած անկախութեան կուների, սարսափների ժամանակ վնասուած հայերը թողնում են իրանց բնակութիւնը Խոշապը, և խտանում շրջակայ հայաշատ վայրերը, Աղբակ և այլն, և կամ ապաստան որոնում՝ համեմատաքար խաղաղ՝ վաս քաղաքում: Այժմ հազիւ 100 տուն թիւրք և թիւրդ բնակիչներով այս բերդաքաղաքում, որ գայմազամանիստ է (գառապապետի վայր) տեղ տեղ նշանարուում են տակաւին հայկական հին եկեղեցիների վլատակներ, մերթ կանգուն կամարներով, մերթ գլխովին խոնարհած, որոնցից մէկը բերդի ստորոտում: հետքեր և նմուշներ՝ անցեալի հայ ազգաբնակութեան գոյութեան, բրդաբնակ այս հեռաւոր վայրերում: Այժմ միայն գետի ձախ ափում, կամրջին շատ մօտ, ճանապարհի վրայ, երեսում են վասից պանդխտած մի քանի հայ առետրականների և զանազն արհեստաւորների խանութները: Ժամանակի տարաժամութիւնը դժբախտաբար արգելը է հանդիսանում Խոշապի այդ հոչակաւոր անցեալ ռւնեցող, բայց այժմ կիսաւեր բերդը իր մանրամասնութիւններով դիտելու <sup>2)</sup>, և մնաք

<sup>1)</sup> Այդ հինաւուրց ամեհի բերդի լուսանկարը տես «Գեղունի» 1904 թ. Վենետիկ:

<sup>2)</sup> Այս մասին տես Մ. Միքալորեանի, «Ռւղեռութիւն ի հայ, գաւառու արեելեան Տաճկաստանի», Ա, Ին. Պոլիս: Պէտք է ասել, որ Խոշապայ բերդը, որը կը ունի է խոր հնութեան զրօշմը, որպէս և՛ շրջականներ, շատ քիչ անգամ խուզարկութիւնների, զիտնական հետազօտութիւնների առարկայ են եղել, առաջինը՝ զիտնական էդ. Շուլցն է եղել, որ անցեալ գարու քսանական թուականների վերջերին՝ «Աշբուդ-Տարդայի» (Մալախանէ գիւղի մօտ, ոչ հեռու Խոշապից) հոչակաւոր բեռապիր արձանագրութեան առիթով այցելել է այս կողմերը. ինչպէս յայտնի է տարաբազդ զիտնականը սպանուել է քիւրդ աւազակների ձեռքով Զիւլամմերկ գաւառում ե-

թողնում ենք Խոշապը և գետի աջ ափով, Խոշապի ընդարձակ դաշտավայրի հիւսիսային սահմանով ընթանալով, երեք ժամից յետոյ համնում ենք Չուխ լեռան ստորոտը, ուրից բղխելով Խոշապայ գետի ակունքները՝ կազմում են ըիշքիչ Խոշապ-ջուրը: Գետը տակաւ յորդելով կտրում է Խոշապ և Հայոց-Ձոր, Վանայ նահանգին պատկանող գաւառները, և ոռոգելով նրա դաշտորայքն և մարգագետինները, թափւում է Վանայ ծովը, Խարաբայ-Քէօշկ (աւերակ պատլատ) կոչուած մի հին ամրոցի պարլսպաների ներքոյ, ուր, ըստ աւանդութեան, անցեալում իշխել է ոմն Եղիդ-աղա քիւրդ բէկը: Խարաբայ-Քէօշկից ոչ հեռու ընտրում ենք մեր ճանապարհորդութեան երկրորդ գիշերուայ հանգստավայրը, մի կանաչաւէտ տեղում, դարձեալ երկնքի կամարի բաց, աստեղազարդ, կապոյտի ներքոյ, ուր մեր առաջից անուշ խոխոջելով հոսում է, խոտերի և փարթամ ծաղիկների արանքից, Խոշապ գետի օժանդակ առուակներից մէկը:

Առաւոտեսն մթնշաղին շարունակելով մեր ճանապարհը, անցնում ենք մի քարքարոտ լեռնադաշտ՝ տարածուած Չուխ լեռնաշղթայի ստորոտում, երբ մեր առաջ բարձրանում է խոնաւ մշուշի մէջ պարուրուած Չուխ լեռը (9,000 ոոր բարձր ծովի մակերեսոյթից), որ իր օժանդակ շղթաներով երկարում է, արևելքից արևմուտք, Վանի և Հին Հէքիարիի կուսակալութիւնների սահմանագլխի վրայ և բաժանում Խոշապ գաւառը Աղբակ գաւառից: Չուխի երկու ստորոտներում շինուած են մի-մի պահականոցներ (խան), ուր ճանապարհորդների և ճանապարհների պաշտպանութեան համար հոկում է մի տեղացի պահապան զինուոր միայն՝ իշխանութիւնից կարգուած, ընկեր, ի հարկէ, շրջապատի աւազակների և թալանողների:

Առաջին խանի մօտ, լեռան ստորոտից բղխող մի ջինջ աղբերակից քիչ վերև, մեր ցոյց են տալիս, անցեալ դարու 80-ական թուականների վերջերին, Աղբիպասեանի և ընկեր Գոլոշեանի սպանման վայրը, մերձակայ բլրի վրայ, ուզմական տեսակէտից մի ոչ այնքան յարմար ժայռի մօտ, քրդերի հետ ունեցած անհաւասար կուռում: Նշանակելի է այն զարմանալի գու-

Ծիտասարդ՝ հասակում (1829 թ.): Շուլցից յետոյ նոյն ն զատակներով այցելել է և անգլիացի գիտնական Ա. Ա. Sayce: Դեռ սըանից մի քանի տարի առաջ, այս լրջաններում ծանօթ բեկուագիր արձանագրութիւնների ընագիրը ճշտելու, վերականգնելու, և նոր սեպաձև արձանագրութիւնների խուզարկութեան մտքով ճանապարհորդութիւն են կատարել գերման գիտնական-բնեռագէտներ՝ D.-r. Waldemar Belk և G. H. Lehmann անցնելով ապա դէպի Շէմպդինան և Մուսուլի կողմերը:

գաղիպութիւնը, որով մեզ ուղեկցում է այդ յիշատակութեան արժանի կոռուին մասնակցող մի քիւրդ, մեր ձիապաններից, չորացած, սև և նողկալի կերպարանքով մի մարդ, որ ինքնաբաւականութեամբ պատմում էր իրանց այն սիրագործութիւնների մասին, որ կատարուել էր քիւրդ վոհմակի և երկու, միայն երկու, ամսմուանալի անձնուրացների միջև եղած ընդհարման ժամանակ:

Չուխի լանջերով, քարքարոտ ձորակի միջով սկսում է ելքը Չուխ լեռան, որը տեսում է երեք-չորս ժամ մօտաւորապէս: Մայիս ամսի վերջի կիսին՝ Չուխի գագաթը ներկայացնում է տակաւին նորարողբոջ գարնան բոլոր հրապոյրները. արեգում տեղերը դալար կանաչով և պէս-պէս ծաղիկներով ծածկուած, հակառակ կողմը՝ ձիւնի նոր հալած կողերից, ձիւնի նօսրացած շերտի միջից դուրս է տնկել իր սպիտակ, սիրուն գույխո՞ Չուխի ձիւնծաղիկը: Չուխի հարաւ արևելեան աւայրէջքը պարզում է մեր առաջ գարնանային ամենահրաշալի պատկերը՝ բազմազան տեսարաններով. նեղ շաւիղի երկու կողմերը լիքն են, խիտ բուսականութեան թափշի հետ գիրկընդիման, բազմագունեան ծաղիկներ՝ ամհամար պէսպիսութեամբ, խստապահանջ բուսարանի հետաքըրքիր խուզարկութեան և ժողովածուներին առատ նիւթ և տեսակ մատակարարելու ընդունակ:

Իջնելով Չուխի ստորոտը, մենք մանում ենք Աղբակ երբեմնի հայաշատ գաւառը, ուր մեր հանդիպած առաջին գիւղը լինում է Չուխը, ճանապարհի աջակողմ՝ շինուած մի բըրրակի տափարակ գագաթի վրայ, հայ և թուրք բնակչութեամբ: 1896 թ. հայկական կոտորածներից առաջ, գիւղը ունեցել է 24 տուն բնակիչ սերմ՝ 80 բեռ, ոչխար՝ 800, եզ և կով՝ 112, գոմ՝ 35, ջրաղաց՝ մէկ, ձիթահան՝ մէկ. կոտորածի ժամանակ, գիւղը ամբողջապէս ենթարկուել է քրդական թալանի, ունեցել է անգի կորուստ՝ 2 հոգի սպանուած. գիւղը մասնուել է այժմ վեչին ծայր թշուառութեան...

Ճանակարհի ձախակողմը, Չուխ գիւղի ճիշտ գէմուգէմ ընկնում է Բաբէսսան փոքրիկ գիւղը, որ ունեցել է մի ժամանակ 14 տուն հայ բնակիչ, 60 բեռ սերմ, 250 ոչխար, 28 գոմ, 130 եզ և կով. գիւղը թալանուել է ամբողջապէս, անձի կորուստ է տուել՝ մէկ հոգի սպանուած, մի կիս առևանգուած, և չորս տուն էլ կրօնափոխ է եղել բնի ստիպման ներքոյ:

Անցնելով Բաբլասսանի մօտով, և քիչ յետոյ Զապ գետի օժանդակ փոքր ձիւղերից մէկը անցկենալով՝ բարձրանում ենք Եղի-Թէփէլէր (եօթ բլուրներ) կոչուած կանաչապատ բլուր-

Ների մի երկար շարք՝ մայիսեան դալար խոտերով և ծաղիկ-  
ներով հարուստ, և որի գագաթի մօտ, կանաչ բուսականու-  
թեան գրկում, կառնենք մեր ճանապարհորդութեան երրորդ  
գիշերային հանգիստը:

*η—gh*

(Կը շարունակուի)

\* \*

Քաղած վարդը թփին չի դառնայ նորից.  
Յետ չի դայ յաւերժ ժամն անցած օրից:

Անցած կեանքդ հիմա երազ է, մշնւշ.  
Վիշտ ու սէրդ հիմա յուշեր են անմնւշ:

Սիրտդ մաքուր պահէ ու բարի արա  
Ռը ամազ չը նստի յուշերիդ վրայ:

Մի վռազիր... մահին կ'համնիս վաղուշ,  
Զեղածի պէս կանցնին երազն ու մշնւշ...

Աւ. Խահակեան

## ՈՒՐՄԻԱՅԻՑ—ԽՈՅ

Անցեալ տարուայ օգոստոսի 21-ին մի քանի ճանապարհորդակիցներով կառք վարձեցինք Ռւրմիայից դէպի Խոյ գնալու համար: Ամբողջ ժամերով մեր կառքը ընթանում էր անծայր, բացառապէս ուռենիներից կազմուած՝ ծառուղիներով: Ծառերի մէջ կորած գիւղերը շրջապատում էին ճանապարհը երկու կողմից մինչև Կըղ-Կալա-Բուռունի կոչուած հրուանդանը, որից յետոյ գուրս եկանք Նազլու-Զայի հովտից և մտանք մի փոքրիկ դաշտ, մի քանի գիւղերով, որոնց բնակիչները առաւելապէս «չրալսէօնդիւրան» աղանդաւոր թուրքերից են:

Երեկոյեան, մայրամուտին հասանք կուշչի: Մեղ ցոյց տուին մայրիսին տեղի ունեցած հեղեղի աւերածները, որոնք խօսում էին սարսափելի աղէտի մասին: Ամբողջ մի թաղ իր տներով, բնակիչներով ու կենդանիներով զոհ էր գնացել հեղեղին, որը ամեն ինչ սրբել, տարել, Ռւրմիայի ծովն էր լեցրել բոլորի տեղը թողնելով մի աւագուտ տարածութիւն: Հինաւուրց ուռիներ, որոնք դիմացել էին հեղեղին՝ կեղևազերծ, վիրաւոր ցցւում էին: Նրանց հաստ ճիւղերը կարծես զիտմամբ սրել էին: Բնութեան այս աղէտին շարունակ ենթակայ է կուշչի մեծ գիւղը, որովհետև շինուած է Սոմայի լեռներից իշնող հեղեղատի վրայ: Ամեն տարի եկած մեծ ու փոքր հեղեղները ցանքսերին մեծ վնաս են հասցնում:

Տեղացիները առաւելապէս նշենիներով են զրադում, որովհետև թէ տեղի նուշը շատ ընտիր և առան է լինում և թէ աւելի ապահով զբաղմունք է: Ընդարձակ տարածութեան վրայ տնկուած են նշենու ծառաստաններ, որոնց պառուղը մեծ քանակութեամբ արտահանում է:

Դէպի Սալմաստ տանող ճանապարհը, այնուհետև, թողնում է ծովագնեայ տափարակ ուղին, և բարձրանում է մի լեռ, որի միւս կողմը տարածում է Սալմաստի դաշտը, Զոլագետի ընդարձակ հովիտը: Ճանապարհը բարձրանում է անտանելի քարքարուտ ձորով, հեղեղի հունով: Վերելքը տեսում է

մօտ երկու ժամ, երբ ուղևորը ոտով պէտք է բարձրանայ: Բարձրութեան վրայ կայ հաստատուած մի պահականոց (կարսավուլիանա), որպէս զի ճանապարհը պահպանի Սոմայի քրդերից: Հազուաղէպ չեն կողովուտներն և սպանութիւնները, որոնք միայն քրդերի գործը չեն. պահապաններն էլ, իրանց վարձը—երկու զռան—ստանալուց յետոյ, դարձեալ կողովառում են:

Գեադիւկի բարձրութիւնից դէպի Սալմաստի դաշտ իջնելը աւելի կարծատեւ է, որովհետեւ Սալմաստի մակերեսոյթը բարձր է Ուրմիի գաշտի մակերեսոյթից: Նախ քան դաշտ իջնելը, ճանապարհի երկու կողմերում բարձրանում են ուղղաձիգ ժայռեր. այս տեղերն են ճանապարհի ամենավտանգաւոր կէտերը: Ժայռերից մէկի վրայ, հէնց ճանապարհի կողքին, նըկատում են մի քանի մարդկանց նկարներ, քարի մէջ փորուած. առաջից գնում է մի ձիաւոր, որին թագաւորի են նըմանեցնում, նրանից յետոյ հետիւնն մի ուրիշ մարդ, շղթաներով կապկապուած, որը դարձեալ թագաւորի տեսք ունի. ապա գալիս են երկու մարդ, շղթայուած մարդուց յետոյ: Ուղեկիցներս, որոնք մի քանի անգամ անցել էին այդ տեղերով, ասում էին, որ այդ պատկերը ներկայացնում է իրը թէ Արշակ Բ. հայոց թագաւորի գերեվարութիւնը: Թուրք ուղեկիցները ոչինչ չկարողացան ասել այդ մասին:

Ճանապարհին մօտ է մի սպիտակ բլուր, որտեղ կան մի քանի հանքային աղբիւրներ—Գըռ-Աւներ (Քոսի-Զըր): Ամեն օր շատ հիւանդներ են գալիս լողանալու. բայց վերջին ժամանակներու վտանգաւոր են դարձել, որովհետեւ աղբիւրները գըտնուելով շատ մօտ Սոմայի լեռներին, բըդերը թալանում են այնտեղ ելողներին: Հանքային ջուրը Հայաստանում յաճախ թթու, կրային ջուր է, և ճիշտ Տաթերի մօտ եղած Սատանի-կամբըջի հանքային ջրի բաղադրութիւնն ունի. բոյսերի և ուրիշ առարկաների վրայ հանգչած կրային շերտը, երկու տեղերի ջրերում էլ, միատեսակ է: Գըռ-Աւների ջուրը մի քիչ տեղ յետոյ քար է դառնում, որից կազմուել է մի մեծ, սպիտակ, կրային բլուր:

Այս բլուրի մօտից ճանապարհը մանում է Սալմաստի տափարակ ու ընդարձակ դաշտը: Մեր առաջ տարածուած է Գըռիշկի-Զըրմանը, այնքան հարթ, այնքան ուղիղ, որ ինչպէս ժողովուրդն է ասում, եթէ մի ծայրում հաւկիթ դնես, միւս ծայրից կերսի: Այս ընդարձակ մարգագետնում է, ամեն տարի, պարսից բանակը վրան խփում, նստում, և պատիժ դառնում ամբողջ սալմաստեցիների գլխին: Այս ամառ, կտուի

պատճառով, շատ զինուորներ կային: Արդէն լսած լինելով որ զինուորները ճանապարհներին անցորդներից իրեղէններ էին յափշտակում, մենք պատրաստուել էինք ոչինչ չտալու: Սակայն, այդ օրը, ճանապարհները սարվագներից ազատ էր, որովհետև կոռուի էին գնացել Զաֆար աղայի դէմ: Առանց մի պատհարի հասանք գաւառի կենտրոնը Դիլման (դիլ-մեկան=գաւառի-սիրտը): Մեր տեղ համելու ժամանակ Դիլման և կան Այան գիւղի թուրք ընակիչները, որոնք բոլորովին կողոպտուած՝ Զաֆար աղայի մարդկանցից, եկել էին կառավարութիւնից օդնութիւն խնդրելու, և տեսնելով որ կառավարութիւնը չի կարողանում իրանց ապրանքները ետ խել, սկսեցին խիստ հայհոյանքներ թափել թէ կառավարութեան և թէ Շահի հասցէին: Նախատում էին իրանց ցեղակիցներին և գովում հայերին, որոնք բաջութեամբ փախցնում էին թալանող քուրդերին: Յուսահատուած այանցիները հայերին էին դիմում և խնդրում որ իրանց օգնեն:

Զաֆար աղայի ասպատակները թալանել էին մօտ 30, գլխաւորապէս թուրք գիւղեր: Կառավարութիւնը աւերել է նրա ծարա գիւղը միայն, և ուրիշ գգալի վկաս տալ չի կարողացել:

Զաֆար աղան և Շարաֆ բէկը, անցեալ տարիներում, անընդհատ անցնում էին սահմանագլուխները և թալաններ անում: Անցեալ գարնան թիւրք կառավարութիւնը ուղարկեց իր գայմագամին Սալմաստ, որ քննութիւն կատարէ այս շարունակական թալանների գործի մասին և վերջ դնէ նրանց: Հաշուից երևաց, որ Զաֆար աղան 33,000 գլուխ ոչխար աւելի է բերել թիւրքիայից, քան Շարաֆ բէկը Պարսկաստանից տարել է: Գայմագամը պնդեց, որ կառավարութիւնը այդ աւելորդ մասը Զաֆար աղայից առնի և յանձնի իրան: Համաձայնութիւն կայացել էր, և արդէն Զաֆարը 3,000 գլուխ ոչխար պատրաստուել էր տալու, երբ թափաժառանգը Սալմաստ է հասնում և արգելում է, ասելով, որ երբ մի անգամ յանձն առնենք տալ այդ՝ թիւրք կառավարութիւնը հիմք կունենայ ամբողջը պահանջելու: Եւ մինչդեռ գայմագամը իր կառավարութեան անունով պահանջում է, որ Զաֆար աղան պատժուի, թափաժառանգը քուրդ աւազակին մի թանկագին սուր է ընծայում: Այս յայտնի վերաւորական վարժունքից յետոյ, գայմագամը զայրացած՝ ասում է. «Սրանից յետոյ Զաֆար աղան հէնց ձեր, պարսիկներիդ՝ գլխին ցեց պիտի դառնայ», և վեր է կենում ուղղակի գընում Զաֆար աղայի մօտ:

Այժմուայ գէպքերը վերագրում են թիւրք կառավարու-

թեան, իբր թէ Զափար աղան ծածուկ հրահանգներ է ընդունում նրանից, և հարկ եղած դէպքում, կարող է ազատ անցնիլ այն կողմբ:

Ստիպուած լինելով մի օր յետոյ շարունակել ճանապարհը դէպի Խոյ, աշխատեցի ման գալ մի քանի հայաբնակ գիւղերում: Ազգաբնակութիւնը կոռուի պատճառով երկիւղի մէջ է:

Յուլիս և օգոստոս ամիսներում ծաղիկը խիստ մեծ թուով զոհեր է տարել. եկեղեցիներում օրական 2—3 մեռելներ անպակաս են եղել: Ուրմիում, այս հիւանդութիւնը, դեռ չէր երնացել: Սալմաստում սովորական փորահարութիւնն էլ պակաս զոհեր չի ունեցել, դարձեալ մասուկների մէջ: Ամբողջ Սալմաստի 70-ի չափ գիւղերում միայն երեք բժիշկ կայ. ի՞նչ կարող է անել այս չնչին թիւը:

Փայաջուկ գիւղում ներկայ եղայ մի ցաւալի երևոյթի: Մի ինչ որ ուսուցչի պատճառով գիւղը երկու մասի է բաժանուած, յարաբերութիւնները խիստ լարուած են: Երկու հակառակորդ կողմերն էլ ուժով ստորագրութիւն են առել զպրոցի բարերար Մանասէրեան եղբայրներից, որով այդ ուսուցիչը թէ վարձուած է լինում և թէ չվարձուած: Խնդիրը այնքան սուր կերպարանք ստացաւ, որ Մանասէրեանները ստիպուած եղան Ուրմի փախչել, որովհետև երկու կողմերն էլ սպանալիքով պահանջում էին որ իրանց կամքը կատարուի:

Այդ պարոն ուսուցիչը իր կոչման բարձրութեան վրայ կանգնած կը լինէր, եթէ զոհէր իր անձնականը գիւղի հասարակութեան համերաշխութիւնը ապահովելու համար ու չխառնուէր խոռվութեանը:

Հաֆթուան գիւղում, այգիների մէջ, պատմեց մէկը, դէմս ելան մի քանի սարվագներ, ցանկացան հովանոցս «տեմնել». ապա ձեռք ձգել ժամացոյցիս և քսակիս: Ոչ մի համոզիչ խօսք չազդեց նրանց վրայ. միայն օտարահպատակութիւնս և արած սպառնալիքներս արժէր ունեցան: Սարվագները հեռացան իրանց հետ տանելով իմ հովանոցը... «տեմնելու» համար: Սրանով բախտ ունեցայ անձամբ տեսնելու, թէ ի՞նչ է քաշում խեղճ սալմաստցին, ամեն ամառ, սարբազների ձեռքից: Արոգէն ճանապարհին մենք էլ ականատես եղանք, թէ ինչպէս մրգերով բարձած բեռները գատարկուում էին, և խեղճ թուրք իշապահը դատարկածեան ետ էր դառնում, սարվագներից լաւ ծեծ կերած:

Ամեն տարի Սալմաստի այլակրօն և այլացեղ բնակիչները բողոքներ են ներկայացնում կառավարութեան: Խոսրովա-

յուժ նստող ասորի կաթոլիկ Աքունա \* ) Իսախը (Իսահակ հպիսկոպոս), իրան տուած այցելութեանս միջոցին, ինձ ցոյց տուաւ Փրանսերէն լեզուով գրուած երկու բողոք, ուղղուած թագաժառանգին: Այդ բողոքագրերի մէջ, սրբազնը մատնացոյց էր անում կառավարական պաշտօնեաների և զինուորների կատարած զեղծումները և ժողովրդի տառապանքները, որոնց հետեանքով աղքատացած ժողովուրդը, գլխաւորապէս տառիները, թողնում են, հեռանում, կամ օտարահպատակութիւն ընդունում: Ի՞նչ խօսք որ բողոքագրերն էլ միշտ անհետեանք են մնում, ինչպէս և ինսդրագրերը:

Այդպէս է եղել, և այդպէս էլ պիտի շարունակուի: Պարսիկ կառավարութիւնը Բրբ է լսել իր ժողովրդի բողոքի ձայնը...

Հայերի գրութիւնը Սալմաստում շատ անհախանձելի է: Աջէմեան, Մատթէոս վարդապետով երրորդ դէպքն է, որ փոխանորդները կարճ ժամանակ մնալով Սալմաստ, ստացել են զրեթէ փոխանորդական տարեկան ոռճիկ և 2—3 ամսից յետոյ հեռացել են: Մատթէոս վարդապետը իր փողասիրութեամբ միւս բոլոր առաջնորդական փոխանորդներից անցաւ. մինչև 350 թուման փող ստանալուց յետոյ, երրորդ ամսում, երբ հրաժարեցրուած էր, մինչև անգամ Հաֆթուանի եկեղեցու կապերաները ծախել ուկեց... ինչու համար, որպէսզի ճանապարհածախս ունենայ Ամերիկա գնալու:

Այժմ նորից փոխանորդի տեղը թափուր է, հետեաբար և ժողովուրդը անտէր: Հոգեոր գործերը անկարգ են. այս ամսուայ ընթացքում տեղի ունեցան մի քանի անհամապատասխան ամուսնութիւններ, բոլորի հարսներն էլ 13 տարեկանից ցած: Մի 12 տարեկան հարս, հարսանիքի հետևեալ օրը փախել է իր հօր մօտ:

Ուսումնաբանները հետզհետէ կանոնաւոր վիճակի մէջ են մտնում: Մի եռանդուն երիտասարդ դպրոցների վերատեսչ պաշտօնն է ստանձնել: Ասպարէզից քշւում են անպէտք ուսու-

\* ) Այս մարդը պըռազագանդի գարոցում սովորած, և առա հայրենիք վերապանալով՝ եպիսկոպոս-հովիւ է կարգուած եղել Սալմաստի կաթոլիկ ասորիների վրայ: Սակայն միսիօնարների հետ ունեցած մի քանի վէճերի պատճառով՝ երբ ժողովրդի շահերն է պաշտպանել՝ երկու տարի է որ զրկուել է իր պաշտօնից և առանձնացած ապրում է: Նա աղեցիկ մարդ է կառավարութեան առաջ. և ասորիներից խիստ սիրում է: այն ինչ կաթոլիկ միսիօնարները ամենեին չեն սիրում, իրանց յատուկ անազնիւ միջուներով գիւղին տէր դառնալու պատճառով:

ցիչները, և նրանց տեղը կանչւում են թեմականներից դուրս ե-  
կածները:

Սալմաստին էլ ունի իր թերթը: Ընթերցարանում, «Մը-  
շակի», «Մուլճ»-ի և ուրիշ թերթերի կողքին գրւում է «Զո-  
լա» թերթը, լրագրի ամէն բաժանմունքներով: Սիրով կ'ող-  
ջունէինք «Զոլայի» (Սալմաստի Զոլա գետի անունով է, վիպա-  
սան Զոլայի հետ Հափոթուի) ծնունդը, եթէ մի լուրջ գոր-  
ծի տպաւորութիւն թողնէր: Թերթը զբաղուած էր Հափ-  
թուան գիւղի մի հարուստին երկինք բարձրացնելով, որը ի՞նչ  
է արել.—ոչինչ, մի քանի տարի հոգաբարձութիւն միայն: Ո՞վ  
չի կարող 5 թերթ թուղթ գտնել և շաբաթը մէկը ցնդաբա-  
նութիւններով մրոտել և «թերթ» հրատարակել: Ասենք Պարսկաս-  
տանը ազատութեան երկիր է. ի՞նչ ուզես, կարող ես անել...

Դաշլուսութիւն

\* \*

(Նմանութիւն)

Մարդկանց արցունքներն թափւում են անվերջ,  
Թափւում են անյայտ, անտես, անքանակ  
Անապատներում թէ ծովերի մէջ.  
Եւ ժպիտների, համբոյըների տակ,  
Եւ դարպաններում, և խրճիթներում  
Թափւում են լոիկ, անձայն, անհատնում...

Եւ այդ ամենքը, կաթիլ ու կաթիլ,  
Ամեն կողմերից հաւաքւու մգալիս՝  
Թափւում են անվերջ վշտոտ սրտիս մէջ...

Աւ. Խասհակեան

## ՀԱՐՍԻԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Ներկայ պատմական մոմենտում, երբ ընտրողական սկզբ-  
րունքը կարող է մեր կեանքի մէջ մեծ նշանակութիւն  
ստանալ, առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում՝ Հարա-  
ւային Կովկասի<sup>1)</sup> երեք գլխաւոր ազգութիւնների՝ հայ, վրա-  
ցի, թիւրք, համեմատական թիւը։ Հիմք բռնելով 1897 թու-  
կանի ժողովրդագրութիւնը և Կովկասի ստատիստիկ. Կոմիտե-  
տի առաջ բերած լրացումները («Կավազս. Կալ.» 1904 թ.) միայն  
Հարաւային Կովկասում հայերի թիւը կարելի է հաշուել այժմ  
1,300 հազար<sup>2)</sup> վրացիները, բոլոր ցեղերը միասին վերցրած<sup>3)</sup>  
—համարեա նոյնքան։ Աւելի մեծ է թուով թուրք-թաթարական  
տարրը, որ հաշում է 1,800 հազար։

Հարաւային Կովկասում, 1897 թուականի ժողովրդագրու-  
թեան համաձայն, ապրում էին 5,565,547 շունչ, որոնցից  
2,580,687 շունչ մահմեդական, մնացածը ամբողջովին քրիս-  
տոնեայ և չնչին քանակութեամբ (25,000) մովսիսական կրօ-  
նին պատկանող։ Ուրեմն, ոչ-մահմեդական տարրը հաւասար  
էր 2,984,860 հոգու. այսինքն աւելի քան մահմեդական տար-  
րը։ Եթէ մահմեդական տարրն էլ վերլուծենք լսու ազգութիւն-  
ների, հիմք ընդուելով լեզուն, այն ժամանակ կը ստանանք հե-  
տևեալը. մօտ 600 հազար լեզգիական ցեղեր, իրանց ծագու-  
մով հնդկա-եւրոպական ազգերին պատկանող. պարսիկներ մօտ  
50 հազ., թաթեր մօտ 65 հազ., թալիշներ մօտ 75 հազ. և  
քրդեր 150 հազ.. տարբեր են և աջարցիները, ինդիլոյցիները—  
մօտ 60 հազ., որոնք վիրական ծագում ունեն։ Բոլոր յիշած

1) «Անդրկովկաս» յորչորջումը, միակողմանի է և անճիշտ։ Կովկասին  
լեռնաշղթայից այս կողմ ապրողներս ի՞նչպէս մեզ համարենք «այն կողմ»  
կամ «անդր» գտնուողներ... Քանի որ գոյութիւն ունի «Հիւսիսային Կովկաս»  
անունը—աւելի լաւ չէ գործածել և Հարաւային Կովկաս տերմինը։

2) Տես «Մուրճ» 1904 № 1.

3) Քարթուելի, իմերել, մինդրել, գուրիացի, խևուր, փշաւ, թու՛  
ավանեթ, յազ և այլն։

ցեղերը միայն կլօնով են կապուած թուրք-թաթարական տարրի հետ...

Յիշած երեք գլխաւոր ազգութիւններից հայ տարրը նշանոր թիւ է կազմում Երևանի, Գանձակի և մասամբ Թիֆլիսի նահանգներում. վիրական տարրը գերակշռում է Բաթումի, Թուրքայիսի և մասամբ Թիֆլիսի նահանգներում, իսկ թուրք-թաթարական ցեղը ստուարաթիւ է Բագուի, Գանձակի և Երևանի նահանգներում. Այդպիսով հայ տարրը Թիֆլիսի նահանգում խառն է վրացական մեծամասնութեան հետ, իսկ Երևանի և Գանձակի նահանգներում շրջապատուած է թուրք-թաթարական ազգաբնակութեամբ:

Սակայն այդ երեք նահանգներում կան մի քանի գտառներ հայկական մեծամասնութեամբ: Այլպիսի գաւառների թիւը շատ չէ, միայն հինգ, այն է. Ալէքսանդրոպոլուր հայերը կազմում են ամբողջ ազգաբնակութեան  $80^{0}/0$ -ը, Ախալցխաք— $70^{0}/0$ , Նոր-Բայազէթ— $67^{0}/0$ , Եջմիածին— $62^{0}/0$ -ը և Շուշի— $53^{0}/0$ -ը: Կէսից պակաս, թէև ոչ աննշան տոկոս են կազմում հայերը հետեւեալ գաւառներում. Զանգեզուրի ( $45^{0}/0$ ), Երևանի ( $40^{0}/0$ ), Ղազակի ( $38^{0}/0$ ), Կապուանի ( $37^{0}/0$ ), Բորչալուի ( $35^{0}/0$ ), Կարսի ( $34^{0}/0$ ), Նախիջևանի ( $33^{0}/0$ ) և Սուրմալուի ( $30^{0}/0$ ) գաւառներում: Աննշան չեն թուով հայերը նաև Ախալցխայի ( $28^{0}/0$ ) և Շարուր-Դարալագեզի ( $28^{0}/0$ ) գաւառներում:

Հարաւային Կովկասի մնացած գաւառներում հայ տարրը, բաց առած Թիֆլիս և Բագու քաղաքները, ցիր ու ցան և նուազ թիւ է կազմում:

Հարաւային Կովկասի առաջադիմութեան տեսակէտից մը-խիթարական է գէթ այն երեսյթը, որ Կուլտուրանկէս աւելի բարձր հայ-վրացական տարրը, միասին վերցրած, թուով պակաս չէ թուրք-թաթարական մասսայից, որի ցաւալի յետամացութիւնը կարող է մեծամեծ խոչընդոտներ յարուցանել մեր երկրի խաղաղ-կուլտուրական էվոլիւցիայի առաջ...

## ՔՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Ամարէ Կընդըր

(Մարտական)

Քարուան պատրաստուեց որ Ամիդ<sup>1)</sup> գնար,  
Բայց իսկապէս, նա Բշշէրիկ<sup>2)</sup> կ'երթար.  
Դեր-Կոլայ դաշտից քարուան անցկացաւ,  
Սևքարի աղբիւրի մօտը թափուեցաւ:  
Ֆլիթէ Կոթօն<sup>3)</sup> ելաւ այնոտեղից,  
Ամարէ Կընդըրին կանչեց հեռուից.  
«Ճնոր, ասաց, բաժըս<sup>4)</sup>, յետոյ անցկացիր,  
Ռազկոլցոց փէշքէշն մտիցդ հանեցի՞լ...»  
Ամարէ Կընդըր պատասխան տուեց.—  
«Ֆլիթէ Կոթօն՝ բաժդ աչքիս վրայ,  
Ա՛ռ, առջին ջորին և կամ վերջին եղ—  
Ո՞վ բաժ չի տուած կ'ուզէ հեռանայ:»  
Ֆլիթէ Կոթօն՝ եղ, ջորի չուզեց.  
«Ամարէ Կընդըր՝ ռ, ասաց, պէտք չէ ինձ,  
Ո՛չ առջին ջորին, ոչ էլ վերջին եղ.—  
Ուսիդ շաշխանան<sup>5)</sup> գու պիտի տաս ինձ:»  
—«Ո, Կոթօն, կանչեց Ամարէ Կընդըր,

1) Դիարբեկիր քաղաք, 2) Մի աւան Դիարբեկիրից հիւսիսարեկը:

3) Այս երգը 30—40 տարուայ հոռոթին ունի. Ֆլիթէ Կոթօն՝ ռազկոյցի քրդական ցեղին է պատկանում. այս ցեղը բնակում է՝ ամբողը Դիարբեկիրում, ձմեռը՝ Բշշէրիկում: Սըանք հարամիներ—գողեր են: Միմիայն քրիստոնեաները և առանձնապէս հայերը չեն որ քուրդ հարամիներին են ենթակայ. դաշտաբնակ խաղաղ քրդերն էլ իրանց ցեղակիցներից հարստանարում են, մանաւանդ առաջներում: Ուսու ժամանակից ի վեր՝ համեմատապէս անցեալի հետ՝ այժմ քուրդը քրդի մալը շատ չի յափշտակում, քուրդը քրդի արինը շատ չի թափում, այլ... քրդի մէջ՝ որոշ չափով իրանց հակադղեցութիւնն են ունեցելն ըրա քրիստոնեայ հին դրացի ազդի վերաբերմամբ բռնկցրած նոր խորիչ զգացումները...»

4) Քուրդ յուղկահարներն՝ առհասարակ՝ նախ ճանապարհորդներից բռնի կերպով նուէր են ուզում, եթէ իրանց պահանջը կատարուի՝ որ ինչ խօսք յաձախ մեծ է լինում՝ բաց են թոփնում, իսկ եթէ գիմազըութիւն ցոյց տրուի, այն ժամանակ կողոպուտի կամ սպանման է դիմում: Բռնի պահանջուած այս տեսակ նուէրը բաժ է անուանուում:

5) Վեց անկիւնի փող ունեցող հրացան, որը՝ փամփուշտաւոր հրացանների մոււա գործելուց առաջ շատ թանգ էր գնահատուում:

Հեռու կաց ինձնից, ես խաղաղ մարդ եմ,  
Ես մուսուլման եմ, խօ չեղայ քաֆըր, <sup>6)</sup>  
Ուզածդ բաժ՝ բաժ չէ, թող ինձ, ինդրում եմ.  
Ճիշտ երեք օր է մեր տանեցիներ  
Ինձ են սպասում, ճամբէս աչք բռնել:  
Կոթօն ձայն տուեց Ամարէ Կընդրին.  
«Իմ աչքն ընկել է քո շաշխանային...»  
Ամարէ Կընդըրն ասաց զայրագին.  
«Ֆլիթէ Կոթօն, ուսիս շաշխանան՝  
Իմ արնագինն է կամ քո արնագին,  
Կամ թէ պառաւ մօրդ—Շամլէի՝ կալան <sup>7)</sup>:  
Կոթօն էլի ասաց Ամարէ Կընդրին՝  
«Քո շաշխանայից սիրտըս չի կտրի...»  
Ամարէ Կընդըր բեռ գետին բերաւ,  
Իր առջև գրեց և գիրքը մտաւ.  
Ուսից ցած բերեց շաշխանան՝ կանչեց,  
«Նաալաթ լինի քեզ, Էն եօթ ջոջ պապիու...»  
Ապա թէ մէկ էլ այդ թփի տակից,  
Անփորձ դուրս եկար, փրկեցիր հոգիու՝  
Աւեախս տանեն թող քո Շամլէ մօր.  
Մի տղայ ծնուեց, ասեն, նրան նոր:»  
Ամարէ Կընդըր մոոցաւ իր Աստուած,  
Եւ սկսեց թունդ շաշխանան գցել.  
Ֆլիթէ Կոթօն յոյսից զրկուած՝  
Ասաց՝ «Հի լուսանում զիշեր վրաս էլ.»  
Աչաց՝ «ուաշկոլցիք, հասէք, գժուեցի  
Էս շան տղայի հրացանի ձայնից...»  
Կոթօյի ձայնից վեր կացան եկան՝  
Տեսան Կոթօյին վէրք առած կրծքից:  
Ամարէ Կընդըր կանչեց անխոռվ՝  
(Միաժամանակ հրացան լցնելով)  
«Առաջ ընկնողներ, լսէք, մի եկէք,  
Ես քարվանչի եմ, ես խօ քաֆըր չեմ,  
Մըսըլմանութիւն չէ էդ որ կանէք,  
Ես էլ իմացէք՝ ես գեաղայ էլ չեմ:

Թարգմ. Ս. Յով.

<sup>6)</sup> Հայնոյող, հերետիկոս. այս ածականը բոլոր ոչ-մուսուլմաններին են տալիս:

<sup>7)</sup> Փեսայից աղջկայ հօր տրուելիք պարտադիր նուէրը՝ կալան է կոչում:

## ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ\*)

Հոգեհարազատ եղբայր Գէորգ.

Այս օրերս ես սաստիկ հիւանդ գոլով նամակդ չի կարողացայ համալսարանից ստանալ, ուր նա աւել երկար կարող էր մնալ, եթէ նիկոլեան այնքան բարի չլինէր, որ գնաց և բերեց. կըկին և երիցս կարդացի, նախ և առաջ շնորհակալ եմ մանր տառերու. համար առաւել քան թէ մնացեալներու. այնքան ուրախ եմ այդ մասէն, որքան դու պիտի ուրախանա շ կամ 3 ամսից, երբ որ առաջի անգամ կը կարդաս գոյն այդ տառերով տպած ոտանաւորներ մեր սիրական, բայց ծոյլ ֆամառի մէջ. ես շատ բանով չեմ հրճուանում, բայց այս գիւտը, որ մի տարի առաջ մտածեին անգամ ինձ համար խելացնորութիւն պիտի համարէի՝ ինձ մխիթարում է բոլոր կրած նեղութիւններուս համար, որ տպագրութիւնը ինձ նիւթեց այս 2 տարին: Այժմ մենք ոչ մի բանէ երկիւղ չի պիտի ունենանք, այսուհետև մեր ձեռին է մեր բարօրութիւնը և խայտառակութիւնը. առաջ մեր վիճակը շատ պայմաններից էր կախած, այժմ միայն երկու ծիշը և անսխալ ճանապարհ ունինք, մէկը նոցանից կ'տանէ մեզ փառքի, պատուի... և միւսը ամօթի... և այլն. մէկ խօսքով մեր արիութիւնը և ծուլութիւնը պիտի վճռէ մեր վիճակը: Թշուառութիւնը երկար կուռեցաւ մեր ուխտի հետ. հալածանքը, նեղութիւնը, չքաւորութիւնը, թշնամեաց ծաղը ու բամբասանքը անպակաս էին նորանից, մեր ուխտը ազնուութեան վրայ հիմնած գոլով՝ մեծանձնութեամբ տարաւ այդ անցաւոր ցաւերը. մենք դուրս եկանք այդ պատերազմից անվասս, պարզած զրօշակով: Գուցէ թուի քեզ այս խօսքերս անձնասիրութեան պտուղ. ի՞նչ անենք. այս է մեր միակ պարծանքը: Եւ ի՞նչպէս չի հրճուիմ մեր գործի յառաջադիմութեամբ. ընդհանուր սէրը տարածած է մեր չորս կողմը. յարգանք և ակնածութիւն մեր գործին, ergo և ուխտին:

\*) Տես «ԵՄՈՒՐՃ» № 4.

թշնամիք՝ ոև երես մեր տռաջ, և մենք պարզերես նոցա առաջ, որոնք մի ժամանակ մեր խօսքը գոօշի չէին առլի:

Լսիր. ես քեզ գրել էի «Հայոց Դիւցազունքի» մասին, բայց խիստ հարեանցի, ինչ զիրք պիտի լինի, ինչ է դորա գլխաւոր նպատակը, ինչ օգուտ պիտի բերէ մեղ—բոլորը բու լորը ես չէի յայտնել քեզ: Այս զիրքը, ես միտք ունիմ, մի այնպիսի handbuch դարձնել, որ ամեն Հայ կարեոր համարէ ունենալու իր տան համար ամենօրուայ կարգալու, ինչզէս որ ոռուի համար Կոիլովի առակներն են, աւելորդ է ասել, որ այդ խիստ հարաւոր բան է, եթէ մենք կարողանանք մի քանի հարկաւոր պայմաններ կատարել, մէկ որ մենք այդ զիրքը պիտի տպենք անակնկալ արդիւնքով, որ կարողանանք անաշ-կլնկալ արժան ծախել. մի ծիծադիլ—30 կոպէկով: Գուցէ զու ա-սես թէ 30 կոպէկն էլ շատ Հայի համար բան նշանակում է, 'ի հարկէ, եթէ նա այդ փողը գէնը ձգելու լինէր. բայց եթէ նա տա-լիս է այդ փողը և ձեռք բերում է այնպիսի բան, որ կարծէ 2 մանէթ, այդ ժամանակ 30 կոպէկը նա ուրախութեամբ կ'տայ և մեր զիրքը կ'առնու և միաքումը մեզ յիմար կ'կարծէ: Գուցէ զու էլի կ'զարմանաս կամ կ'կասկածիս, որ 2 մանէթ կարող է արժենալ «Հայոց Դիւցազունքը»: Հայ, կարժենայ. մէկ որ նա բաղկացած կ'լինի խիստ սակաւից 8—10 թերթէ, գուցէ աւելի ևս. թուղթը պիտի լինի ամենապատուականը, և փայտափոր պատկերներով, որից ամեն մինը 12 մանէթ կարծէ և այդպի-սի պատկերներ 7—8 հատ պիտի լինին, առանձին դորա հա-մար շինած թղթի վրայ տպած: Բոլոր զիրքը (աղաչում եմ չի վախենաս) մեզ կ'նստի 450 կամ 500 մանէթ և 3000 օրինակ. ինչո՞ւ զարմացար և վախեցար. Նազարեանցի զիրքը ինեղճ Հա-յերուն 1400 մանէթ նստաւ. մի՞թէ, քու կարծիքով մեր «Հայոց Դիւցազունքը» նորանից ցած է և պակաս օգուտ կ'բերէ, լու-սաւորութեան չեմ ասում, այլ Հայոց գրականութեան: Հայոց Աղջիկ կամ Հարսանիք Արամայ, որ մեկնիչ արձակ շաբաթու-թիւն կ'ունենայ հետև, ուր պիտի բացայատուի բալլաղաի նշանակութիւնը. Զարմայր—նորա մեկնիչ արձակ շար. տրոյաց-ւոց պատմութիւնն է, որ շարազրել է հայրս ընտիր աշխարհա-բառ լեզուով Ե՞ւ լեցում քաշական բառում է Հայոց գրականութեանը նորա մեկնիչն է. Խիստ որտառուչ պատմութիւնն է, և անցքը բաւական զրդուիչ ուրեմն խիստ հարկաւոր ամեն մարդու ի-մանալու. Վարդան Մամիկոնեանի մահը և նորա մեկնիչ ար-ձակը է 5 զարու հայոց վիճակը. բաւականին մեծ, սիրուն և հետաքրքիր բան է. վերջապէս թերորի Սմբատը, որ կարդա-

յիլ: Բոլոր գիրքը քեզ է ընծայեած և կարդանը մանաւանդ կարելի էր, գուցէ ինչպէս զու կ'ցանկամայիր, որ բանը աւել արժան և անտեսական բռնել. բայց մի՛ մոռանալ որ տնտեսութիւնը միայն 70—90 մանէթի է և այն թղթի, աւել ոչինչ. կարելի էր ուրիշ կերպով բռնել բանը—50 կ., 70 կ., կամ 1 մանէթով ծախել գիրքը. այդ ժամանակ մենք կը հեռանայինք մեր նպատակից. մի՛տք արա:—Մուկովումը շատ մարդիկ կան, որոնք մեզ շատ կ'սիրէին, եթէ կարողանայինք նոցա մեզ վրայ մոռածել տալ. բայց, աւազ, մինչեւ այսօր մենք սպասում ենք հրաշքներու, այսինքն՝ մենք անգործ պառկած՝ մեծ յուսով ենք, որ տապակած ճուտերը մեր բերան գլորուեն և ու տույած. և եթէ մեզ սախլող, զրգող չինին՝ այդ քաղցր յոյսերը մինչ երկրորդ ֆալուստը մեզ պիտի օրորեն: ելի և կրկնում եմ առաջուայ խօսքերս. Նազարեանցը ոչ այնքան իւր աւտօրիտետով է բան յառաջացնում, որքան հեզնայ: Եխեանցը, ասում են, պատուական մարդ է, Ղարաբաղցի Գրիգոր նորա մօտ ծանօթն է, ևս այդ մասին արդէն լաւ պատրաստել եմ վերջինին. աւարտելը քեզ շատ աշխատանք չարժէ. իմացիր միայն յաջողակ բոպէն որսալ. մի՛ բամահիլ (ինչպէս որ ևս առաջ էի անում) կոպիտ Հայերու ընկերութեամբ. նորա գծուն են, քանի որ տաքացած չէ նոցա երևակայութիւնը. յետոյ լանը լաւ կ'երթայ: Մամուլի համար ևս քեզ շատ անգամ զրել էի. Ղարաբաղցի Գրիգորը ևս շատ յոյսեր ինձ տուեց նորա մասին. կարծեմ որ եթէ նորանից խորհուրդ հարցնում նարանը լաւ առաջած. մի՛ բաց թողնիլ նորան ձեռքից: Ղղլարի արտօնութեան համար խօսեցայ մի մարդու հետ, նա ասաց որ այդ կարելի է Յաշտարխանի կերպով. բայց մեծ գումար պէտք է տալ տէրութեանը. բայց աւելացուց, ևս կ'խօսեմ մի՛ ծանօթ օրէնսպէտի հետ և շուտով կտրական պատասխանը կ'տամ: Ով որ յանձն կ'առնու այդ գործը՝ վաճառականական պայման պիտի կապէ մի հարուստ մարդու հետ, որ եթէ բանը յաջողութեամբ աւարտէ՝ օրէնքով իրաւունք ունենայ իր վարձը ստանալու, իբր թէ նորա հետ առուտորի գործ ունեցած լինի և ոչ թէ վաշխ կամ քրթամ է պահանջում: Պոլղէքօքի թարգմանութեան համար այս իմացայ, որ ոչ մի օրագրի հրատարակիչ չի յօժարիլ իւր օրագրի մէջ մացնել այդպիսի հեղինակի թարգմանութիւն. խօսեցայ զրավաճառի հետ. նա ինձ կտրական պատասխան չի տուեց պորդիտես քրիստոնեաց, տեսնենք արժէ գնելը և տպելը. ուրեմն ուղարկէ ինձ. Կը որ ձեռփս ունիմ՝ բանը աւել հեշտ կ'աւարտուի. միայն պիտի իմանաս որ 5 մանէթ տպած թերթին տա-

լիւ են այդպիսի թարգմանութեան համար և այդ եթէ ապսպրած է: Հսկի թարգմանչից նորա պայմանները և կարական խօսքը: Դու խորհուրդ ես հարցնում այն աշակերտներու համար, որոնք պիտի կրթուին աղջասէր Ֆիդանեանի ծախսով: Հի բարկանաս վրաս, թէ քեզ իմ կարծիքը ասեմ. այսօրուայ օրս Լազարեան վարժանումը մօտ 70 հայ տղայ կը թութիւն են ստանում, մօտ 50 հայ տղայ զանազան համալսարաններումը ուսանողներ են, մօտ 100 տղայ զանազան կուսպումներումը և գիմնազիաներումը և այլն թագուրական կամ իրանց հաշուով սովորում են. ամեն հայաբնակ քաղաք ունի մասնաւոր և տէրութեան գվարոցներ. մօտ 40—50 հայ մարդիկ մասնաւոր կերպով վարժապետութիւն են անում զանազան հայաբնակ քաղաքներումը և ի՞նչ. այսքան ժամանակ ազգային հայոց լուսաւորութիւնը մի քայլ չի յառաջացել, օրէ օր մինք մոռանում ենք, մեր հայութեան պայմանները. ասա խնդրեմ, ի՞նչից է այս. միթէ պլ. Ֆիդանովի առաքինի զոհը պիտի օգնէ ազգի թշշուառութեանը: Բայց ուրիշ ոչուղացած կ'ստանար այսքան զոհերու պտուղները, եթէ 3 տղայ զուրկ լինէին այդ սուտ ուսումնի և ազգը ունենար այդ ծախսով մի անկախ կանոնաւոր տպարան, այն ժամանակ հայ տղաք կարօտ չէին լինիլ ուսման համար վաղել մեծ փողեր միսելով օտար աշխարհներ, այլ ուսումը ինքը կ'գար և կ'հանդիսանար նոցա առաջ: Եթէ դու բանը լաւ ես հասկանում, և իմ խորհուրդը սխալական չես համարում և եթէ ճշմարտութիւնը առանց գաղելու գիտես ասել մարդու՝ կրկնէ իմ ասածը. կամ ընդարձակէ այս միտքը: Սիներու ուսում առ ժամանակս ծիծաղական բան է հայոց համար, խիստ բաւական է եթէ առաջի նուագ բոլոր հայերը իմանային հայերէն լեզուով խօսել, գրել, իմանային ազգային պատմութիւնը և թեթև գաղափար զանազան գիտութեանց և արուեստից: Այսչափ գիտութեան համար չարժէր այն 10,000-ները, որոնք քամվում են մեր ազգից ՅՈ ԱՅԱ լոյնաց օբրացանիա: Միտք արա, այս խօսքերը տառւմ է քեզ այն մարդը, որ վլուխը գրել է ազգի համար. եթէ մինչև այսօր նա ոչինչ չի արել, բայց միշտ ցանկացել է մի բան անելու. և կանէր, եթէ բաց ՚ի բարի կամքից ունենար միջոց, հնարք. միտք արմա, անյաջողութիւնը մեծ մնունդ չէ մարդուս համար. աշխարումս յուսահատութիւն ևս կայ: Ո՛չ ոք այնքան շուտով մարդատեաց չի գառնալ, որքան եւանդուս մարդասէրը. ունայն ազգասիրութիւնը կ'զառնայ սաստիկ անձնասիրութիւն: Աստուած տայ,

որ մեր ուխտը միշտ անքակ մնայ, մեր սէրը անշէջ. Աստուած տայ, այդ իմ միակ ցանկութիւնն է. բայց...

Խոնարհ՝ Ռամիայէլ

Էլի մի անզգուշութիւն արի. 108 մանէթի պատկերներ ապսպրեցի «Հայոց Դիցաղունքի» համար:

### Եղբայր Գէորգ.

Խօսք չունիմ յայտնել քեզ հոգւոյս հրճուանքը, երբ որ ստացայ ք'ուղարկած մասր տառերը, որոնք երկար ժամանակ քունը հեռացը էին աչքերից: Փանդոյեանի բերած նամակը զրելու ժամանակ գեռ ևս չէի ստացել նոցա. բայց հազիւթէ փոքր ինչ առողջ զգացի ինքս ինձի իսկոյն վաղեցի հումալսարան, առի ՊՈՅԵՍՏԿԱՆ ու լեզուս կախ արած հոգնութիւնիցս շտապեցի նամակատուն. փառք Աստուծոյ, վերջապէս հասայ իմ ծտարուայ ցանկացածին, որ ոչ մի բոպէ չէր գուրս գալի մըտքիցս. իմ ուրախութիւնը ոչ չափ ունի, ոչ սահման. գլխաւորը արած է. բայց մի քանի պակասութիւններ ևս կայ, որ դու աշխատէ շուտով (լցնել. 1) նօտը տառերը մոռացար ուղարկելու. 2) ծոցատառերը, այսինքն՝ նոքա, որոնք մտնում են պոչատառի մէջ, զորօրինակ ը պոչատառ է, բայց նորա մէջի ըլս-ն ծոցատառ է որ ը-ի ծոցն է մտնել. ահա ծոցատառերու թիւը բ, զ, ը, թ, ի, ւ խ, դ, յ, շ, ջ, ր, ց. 3) կրկնատառեր, այսինքն նոքա, որոնք միմիանց հետ 2—2 կպած են. մե, մէ, մի, մի, մկ, մն, մլ. 4) կրճարառ՝ այս. զօր. ենե. ը, ըս 5) պատուատառերից մի քանիսը ե, ի, է, ը, ս, սլ, յ, ծ, մ. 6) շեշտատառ ևնշանատառան, ե, է, ը՛, ի, ո, օ, ա, է՛, լ՛, լ, ո, ծ, մ, ա, ե, է՛, ը՛, ի՛, ո, ծ:

Այս պահանջածներս ոչ թէ հարկաւոր են, այլ և կարևոր են. Այժմ ես այսքանը շինել կ'տամ, մնացածները դու աշխատէ շուտով հասցնել: Հիմի բանը այսպէս է. իմ կարծիքը քեզ հաշերի ուղում եմ յայտնել: Միտոք է որ ես քեզ ասացի՝ մենք պիտի ունենանք սեպհական տպարան, որ ազատուինք 1000-աւոր զժուարութիւններից և մեծամեծ ծախսից. դու այն ժամանակ խիստ յօժար էիր հետո. և մենք չզիտեմ որտեղից, արդէն զըտանք տպարանի փողը, և ունեցանք տպարան մեր մտքումք միայն. գիրքերս արժան տպվում էր և մենք բաւական էինք մեր վիճակն: Բայց մինչև այսօր մեր ձեռը չընկաւ կանոնաւոր

տպարան. ի հարկէ՝ մամուլի կորուստը մեր գլխաւոր արգելքն էր. բայց մենք մամուլի կորուստը ընդունեցինք թէն մեծանձնութեամբ, բայց այդ մեծանձնութիւնը մի ասիլ որ անզգայութիւն էր, և ոչ լի զիտակցութեամբ. ապա թէ ոչ մենք իսկոյն պիտի աշխատէինք այդ կորուստը վարձատրել և ամեն հնարը ի գործ դնելով նորից ձեռք բերել մի նոր մամուլ. խօսք չունիմ ամեն նամակի մէջ կրկնվում է մամուլի անունը. բայց... միայն կրկնվում է. դու սպասում ես, որ ես քեզ հասցնեմ նորա կարկտելու վարձը. ես սպասում եմ .որ Աստուած վերից կուղարկէ քեզ մի քանի հարիւր մանէթ աճքո պոյդէտ հա լած. մինչ այս մինչ այն մեր թերթերը ծանը գնով տպվում են օտարի տպարանումը. և օգուստը պիտի գլորուի օտարի գրպանը, մենք պիտի մնանք միայն դատարկլ յոյսերով. մեր յոյսերը այսպէս են. Աստծով կ'ծախուի այլբենարանը, տաղարանը, Աստծով Գամատի ստորագրութիւնը կ'յառաջանայ, 1000-ները, որ ձեռք կ'ձգենք հետօնու բլուե հա լուսաւ լուսաւ մատարանը, որ պիտի աժէք մեզ 2—50 մանէթ, այժմ նստում է 438 մանէթ. 'ի հարկէ 188 մանէթը մեզ համար խիստ հեշտ է հաւաքել. ու պաշտու պատճեն հաւաքանը մեզ ոչինչ չի նշանակիլ. այս տաղարանը, որ պիտի աժէք մեզ համար կ'ուղեն: իհարկէ, դու ինձ կը հարցնես՝ ի՞նչ անեմ, ի՞նչպէս օգնեմ, ունիմ կարողութիւն, որ մեր կարիքը կարողանամ լցնելու: Դու լիակատար իրաւունք կ'ունենայիր ինձ ամենավատ մարդ կարծել աշխարում, եթէ ես ուահանջէի բեզզանց ըու զօրութիւնիցդ վեր բան. և այդ երրէք չեմ արել. իհարկէ ժամանակ առ ժամանակ յաջտնել եմ մեր պակասութիւնը, որ դու գուցէ պահանջմունք ես կարծել: Բայց ոչ, առաջարկութիւնու լոկ առաջարկութիւն է եղել աւել ոչինչ: Բայց մի բան նկատելի է. Աստուած մեր վրան մեծ գութ ունի. նորա ողորմած ձեռքը հովանաւոր է մեզի, մանաւանդ մեր գործին. խօսք չի կայ՝ մենք շատ անդամ գժուար պարագաներու մէջ ենք եղել, բայց վերջապէս բաղզը ժպտացել է մեզի. միթէ քիչ բան ես համարում Թրիֆանովի, Սանասարեանի, իզմիրեանի են բարեկամութիւնները, որոնք ուղղակի մեր գործի վրայ մեծ օգնութիւն ունեցել են. թէ չէ՝ ի՞նչով պիտի մեկնուի մեր երեքիս չքաւորութիւնը, և գործերուս յառաջադրիմութիւնը, որի համար գլխաւորապէս պէտք էր մեծ փող կամ մեծ անուն. ոչ այս և ոչ այն ունենալով մենք մինչեւ այժմ ունեցանք վարձուած մօտ 1,500 մանէթի (տպարան, այլբենարան, 8 թերթ տաղարան և 5 տեսքը Գամատ), այս խիստ հետաքրքիր ինսդիր է: Ես մեկնում եմ

այնպէս, որ Աստուած ակներկ մեզ օգնում է. դու ասա՞ որ  
սցիքլենի եղանակ բայց միշտ կ'մնամ իմ վերջին կարծիքովս: Ergo,—մնաք  
այսուհետեւ ևս չի պիտի ընենք. մեզ պէտք է. 1) մամուլ. 2)  
տաղարան (տաղելու տեղ). 3) օնձութեած 6 ամսուայ. մնացածի  
համար Աստուած ողորմած է: Ճելո Եւ ՏՕՄ, որ կասես զու,  
այդ անսակլնկալ գումարը չունինք. ես էլ իմ կողմանէ կ'ա-  
ռեմ, ճելո Եւ ՏՕՄ, որ մենք կարող ենք ունենալ և անպատ-  
ճառ պիտի ունենանք, և անպատճառ կ'ունենաք: Լսէ. մեզ  
պէտք է 400 մանէթ մամուլի համար. 100 մանէթ 6 ամսուայ  
ընակարանի կամ տպարանի. այլս 150 մանէթ ամեն դիպուա-  
ծի. աւել ոչինչ. եթէ հին մամուլը հնար կայ կարկտելո՞ 2) մա-  
մուլը մեզ խիստ պէտք են, թէ չէ՝ մէկով էլ կ'շատանանք: Դու  
ասում ես որ պր. Ֆիդանեանը վառվուն մարդ է, խիստ լաւ.  
Նորա կրակը մի կողմը. մեզ պէտք չէ նորա արուեստական  
ազգասիրական ուղղութիւնը. թող նա հաշուատես մարդ լինի  
միայն այն գովելի առաքինութեամբ, որ կարեկից լինի բարի  
գործին. մեզ աւել բան պէտք չէ. դու ասում ես, որ նա պատ-  
րաստ է մի քանի հայ տղի լաւութիւն անէ. մենք նորան ցոյց  
կ'տանք միջոց 1,300 մարդու բաւականութիւն անել. եթէ նա  
մեզ կ'տայ այդ 650 մանէթը՝ մենք նորա ձեռագրով կ'խոստա-  
նանք կարճ միջոցումը տալ 1,300 հատ նոր տաելուս այբբենա-  
րանները, որ նա կարող է կամ ծախել, կամ ընծայել. կ'աշա-  
նակէ, որ նա բանի անգամ աւել լաւութիւն արած պիտի լի-  
նի. էլ էն չեմ ասում որ այն խեղճ հայ մանկունք, որոնց վրայ  
պիտի թափուի դորա ողորմութեան գումարը՝ աւել արժանի  
են կարեկցութեան, աւել պտղաբեր պիտի լինին իւր ուսմամբ:  
աւել երախտագէտ պիտի լինին իւր բարերարին, աւել վստահելու  
են, քան թէ մեր ընդհանուր ձեռնարկութիւնը, քան թէ մենք, քան  
թէ մեր պտուղները: Եթէ դու վստահիս (այսինքն այնքան բարձր  
լինիս նախապաշարմունքն, որ պարզերես կարուղանաս) կամ ցոյց  
տալու նորան այս նամակը կամ աւելի ընդարձակ և ճոխ պատ-  
մես նորան ասածներս, 'իհարկէ այն ժամանակ ես կ'իմանամ որ  
մեզ հրաշք պէտք չէ. որ մեր ձեռը երկնքից փող ընկնի, այլ ինք,  
այլ բարեացակամութիւն, այլ առողջ մտածողութիւն: Մենք չենք  
ուզում որ մարդիկ մեզ փող ընծայեն. մենք մուրացիկ չենք.  
մեզ թող տան միջոց թեհերս տարածելու. թող պահանջին մե-  
ղանից մեր գործի պտուղը, եթէ ճանաչում են որ այն օգտա-  
ւէտ է. ես կարծեմ որ եթէ 8 ամսից նորից և աւել ընտի-  
րը տպենք այբբենարանէն, զանազան տառերով աւելի լիակա-  
տար, այն ժամանակ նա մեծ յառաջադիմութիւն կ'ունենայ,

թէկ այս ևս Աստուծով պիտի ծախուի շուտով: Ուրեմն՝ յայտնէ Ֆիդանեանին մեր կարիքը և խոստացիր ասած վարձը. բայց եթէ նա օգուտ ևս ուզում է՝ այդ ևս կարող ևս հասուցանել տալով 15 որոշեց հարիւրին գրքով:—Եթէ այս առաջարկութիւնս կարողացար հասկանալու, հասկացնելու և... էացնելու՝ իհարկէ այդ ժամանակ մեր գործը պիտի արագաքայլ առաջ երթայ: Ես խօսել եմ տպարանի համար Բուգաղեանի հետ. նա ասաց, որ նորա անունով կարող ենք տպարան բանալ, որ նա կօգնէ մեզ իւր միջնորդութեամբ կամ ուրիշ գիտուածներին: Ես չուզացի նորան մեզ աղքատ ձեացնել որ մի կերպով նորա շլինքից դուրս հանել տպարանի կարգաւորութիւնը. բայց այդ ժամանակ նա չէր ունենալ այն յոյսը և յարգանքը, որ այժմ ունի, իր բոլոր կրց-ով. հէնց այն իմաստով, որ թշուառին ոչ ոք չի սիրել. ուրեմն ևս պիտի անմեղ ստեփ նորա առաջ, հաւատացնելով որ ամեն բան պատրաստ է, և թէ մենք ունինք բաւականին գումար լոկ տպարանուկան ծախուի համար, ես քեզ արդէն ասել եմ որ Գամառի համար այստեղ հաւաքուած է 400 մանէթ. ափսոս է այդ գումարը և այն, որ այսունետև պիտի հաւաքուի, երթայ ուրիշի տպարաններումը. աշխատէ այնպէս անել, որ տպարանի ծախուը գուրս գայ անակընկալ աղքիւրից, որ մենք կարիք չունենանք դէսից կտրել դէնը դնել, և դէնից կտրել դէսը դնել. թէ չէ՝ այդ կերպով մի տեղ որ ծոռի բան՝ ամեն բանն էլ կ'խանգարուի: Ամեն բանի լիակատար դումարը պիտի առանձին լինի. մինի արդիւնքը միւսի պակասորդը չի պիտի լցնէ. գոնէ մի քանի ամիս: Միաք արա, որ միայն նորերումն ազատուեցայ այրբենարանի պարաքից. բայց տաղարանի համար շատ պարտք կայ: Կարծեմ, դու ունիս փոքր ինչ ստորագրուողներ տաղարանի համար. և այսունետև որքան կարող ես շատացնել նոցա թիւը, պատճառ որ նա շուտով կ'աւարտուի: Գրիփորին տներ Գամառի և տաղարանի ստորագրութիւնը. նա, կարծեմ որ, կարող է իր շուրջումը փոքր ինչ յառաջադիմութիւն ունենալ. միտքը ձգէ նորան ինձ խոստացած յոյսերը Վարդանի ապի համար:

Սրապինի աներձագը (Иванъ Наумичъ Саргатовъ) գտնու է Մոսկով և այստեղից գնալու է Новороссийскъ. նա իմ լաւ ծանօթն է և ինքը ևս մի քանի բառեր գրել է Գամառի համար. Կարպուշկա, Նախջևան քաղաք Դօն գետին քովը են. դա խոստացաւ ինձ 15 օրինակ Գամանն-երից տարածելու համար առնել հետը իւր գնալու տեղը. դու տներ նորան այդ թիւը և իմացիր հասցէն, որ այսունետև ևս հետը գործ ունենանք: Ասա, ինդընմ, քանի անգամ ստացար ծրարած այրբենարանները.

ես քեզ ուղարկել էի 4 կապոց. եթէ դոցանից մինը չի ստացել՝ կ'նշանակէ 350 հատը կորել է. միամիտ արա ինձ:

Սիրելի եղբայր Քանանեան,

Չորս օր դորանից առաջ ես քեզ ուղարկեցի 50 հատ տաղարան. այժմ ևս ուղարկում եմ. տեսնում ես որ իմ խոստմունքները կատարվում են, թէ ուշ. բայց գորա պատճառը փողի կարօտութիւնն է, որ զգում եմ այժմ առաւել քան թէ երբ և իցէ. այդ 50 հատը որ ստացար, խնդրեմ հէնց Մոսկովումը ծախէց շուտով, եթէ ինչի համար և իցէ հաւաքած փող կայ ձեռքումդ կամ կանխիկ ստացած կամ ծախելով ուղարկէց շուտով. ինձ շատ նեղում է փողի պակասութիւնը. և այն, որ կ'ստանաս նմանապէս այդանեղ ցրուէ ամին հնարով և միջոցով: Ես փորձով տեսայ որ մամուլ չ'ունենալը մեզ իսպառ պիտի քամէ, ուրիշն առի մամուլ բանացրած, բայց գեղեցիկ 180 մանէթով, որի նորը կարժէ 500 մանէթ. Բուդագեանի անունով պիտի տպարան բացուի. հիմի ես արի այնքան, որքան իմ զօրութիւնս հասաւ, 1,500 տաղարան տպեցի. եթէ մանէթով ծախենք՝ պիտի միանգամայն ապահովուի մեր գործատունը հէնց մեր զօրութիւնով. ևս Սանասարեանցից առի պարոք 290 մանէթ և միսեցի տաղարանի վրայ, և բացի գորանից տպարանապետին պարտք ևմ 180 մանէթ: Մի շաբաթից կ'ուղարկեմ Յաժտարխան, Թիֆլիս, Ղրիմ և ուրիշ տեղեր տպարանը. գուցէ շուտով մի օգնութիւն հասնի, թէ չէ քու ստորագրութիւնը խիստ անյուսալի է, և մինչև այժմ նիւթապէս ինձ չօգնեց. որ օրուան պէտք ես համարում քնշիտելի մերք? գու վախենում ես բանի ծուռ գնալը. բայց այսքան ժամանակ ես յոյս տուածիցս աւել կատարում եմ. միթէ յուսալի մարդ չեմ ես: Ահա ուղարկում եմ քեզ երկու նամակ՝ Փարվից, մինը Դիւլօրիէից, միւսը Այլազովսրից: Եթէ կարող ես ջանա երկուսին ևս օգնելու: Մանը տառերը գրեթէ պատրաստ են: Մի ծուլանար: Փող, փող, փող: Քու ուղարկած ոօմանը տպած է. առաջ Սմիռդինը տուեց 150 մանէթ, բայց իմանալով որ արդէն տպած է նա, այժմ գուշ չի տալի. ով է մեղաւորը: Թէ չի հաւատան իմ արած չափին, կարող են գրով հարցնել Սմիռդինից, որ կենում է հա Նևսկոմ, յու Պոլիցեյսկаго Моста, Սմիրդին-սահն. — ես էլի մի քանի փորձ կ'փորձեմ անփորձ գրավաճառներու հետ, բայց չի կարծեմ որ յաջողութիւն ունենամ, թէ կարողանամ ծախելու ոչ թէ 150-ի, 25-ով էլ կ'տամ.

որովհետև անպիտան է այսուհետև: Թիմուրեանի նամակը ստացայ, խոստմունքները մխիթարիչ են, բայց աւել լաւ կ'լինէին, որ  $\frac{1}{4}$  նոցանից այս բոպէիս ձեռումն լինէին. պատճառ որ պարտատէրներից չզիտեմ որ տեղ փախչեմ: Ինչ և իցէ՞ պէտք է որքան կարելի է շուտով 800 հատ տաղարան ուղարկել Թիֆլիզ:

Այս նամակը մօտս մնաց 7 օր և չի կարողացայ ուղարկել, Աստուած հաւատա, փող չունենալով. այժմ գտայ 10 կոտմէկ: Խնդրեմ ինձ հասցուր փող, Աստուածդդ սիրես. 100, 75, 50. որքան կարող ես շուտով: Սասարիկ տանջւում եմ. անհամբերութեամբ սպասում եմ:

### Ուսիսյէլ

22 Գիւտըուարի,

1857. Ա Պետերբուրգ

### Սիրելի եղբայր Գէորգ.

Այս նամակիս հետ կ'ստանաս մի ուրիշ ծրաբած նամակ, որ որքան կարելի է շուտով կ'հասցնես ում որ պէտք է. այս կերպով անպատճառ հասցնես: Ես այս մարզու հասցէն չզիտեմ, բայց որ կարող ես իմանուլ Ալեքսեյ Զինօվյեվիչ Զինօվյեվ-ից, որ Լազարեանց վարժատան ոռւսաց լեզուի վարժապետն է. կամ Կատկով-ից, որ լոյս ընծայում է Ռու. Ենտ. օրագիրը, կենում է Հայոց գողոցումը, Լազարեան տպարանի դէմ ու դէմ: Ես քեզ պատմեմ թէ ինչ նշանակութիւն ունի այս նամակը: Ամիս ու կէս առաջ ես ծանօթացայ մի պատուական ոռւս կնկայ հետ, որի մօտ հաւաքւում են ընտիր մարդիկ. գորա անունը Մարյա Գրիգորյեանա Շեպանովա է: Գորա ծանօթներից մէկը ուսւ զինուորական, անունը Վladimír Միխայլովիչ Կաչենովսկի (որի հայրը մի ժամանակ տեղույդ համալսարանումը ռեկտօր էր) մեծ կարուութեան մէջ գոլով՝ յայտնում է իմ ծանօթ կնողը, որ ինը և իւր փեսան Գրիգորի Իվանովիչ Կոզիներ-ը (բժիշկ) պատրաստ են մեծ տոկոս տալ, եթէ նոցա նվ և իցէ կ'օդնէ փողով և խոստանում են ձեռագիր կամ վեքուի ևս տալ: Մարիս Գրիգորիի կանաչան ինձ առում է այս և ինդրում է՝ չեմ կարող արդեօք այդ խեղճերուն օգնել իմ հայ ծանօթներիս միջոցով: Ես հաստատ խօսք չեմ տալի. բայց գնացի Մամիկոնուին մօտ և յայտնեցի դոցա պայմանները: Նա ինձ առաց որ, այդ գումարը (120 մանէթ) կ'հաւատայ առանց տուկոսի ինձ և ոչ այն անծանօթներուն և կ'ինդրէ ինձանից ոչ

ձեռագիր, այլ գրաւ։ Ես այնպիսի թանկագին բան չունենաւ լով՝ ուղարկեցի 600 տաղարան և 100 այբրենարան։ ստացայ 120 մանէթը և տուի ծանօթ կնոջս, որ նմոնապէս առանց տոկոսիքի տուեց Կօզիներ բժշկին, որի կինը Կաченովսկի-ի քոյրն է։ Այստեղ ես մի սխալ արի. նոքա ուզում էին վեքսիլ տալ. ես հաւատալով նոցա աղնուութեան չտոփի, մանաւանդ որ՝ նոքա խօսք տուին ինձ մի շաբաթից յետ գործնել այդ գումարը, որ մինչև այժմ չեմ ստանում, և ամօթով և վասով մնում եմ իմ միամառութեանս համար։ Իմ ծանօթ կինը մի նամակ ուղարկեց Զինօվիեվի վրայ և նորա մէջ Կօզիներ-ին նամակ, որով միտն էր ձգում նորա խոստմունքը՝ բայց պատասխան չեկաւ։ Այս երկրորդ նամակն է։ Խնդրեմ գու Կօզիներ-ի ձեռքը հասցուր և իմացիք նորա պատասխանը. բայց նորա ձեռքը հասցուր Յայտնէ իմ նեղ գրութիւնը և նորա պարտաւորութիւնը։ Շուտ և անպատճառ սպասում եմ պատասխանը։

Քու խոնարհ եղբայր Ռափիսյէլ

1857 մարտի 26. Ս. Պ. Բ.

### Հոգեհարազատ եղբայր Գէորգ.

Քու այսքան ժամանակ նամակ չի գրելը, որին ես ահա մի ամրող ամիս է որ անհամրերութեամք սպասում եմ, ինձ յուսահատութեան մէջ է ձգում. աւել բան չեմ կարող ասել. թէն գու հաղարաւոր անհրաժեշտա պատճառներ ունենայիր այդպէս անելուր համար, բայց ես նոցանով չեմ միմիթարուիլ։ Այդ անորոշ գրութեան մէջ գոլով՝ ուրիշ անրաւականութիւններ եկան գլխուս, որ եթէ լսես ՚իհարկէ որ խիստ կ'ափսոսս քու թշուառ բարեկամին։ Սանասարեանը Զատկից յառաջ Մուկովումն էր. Խալաթով նորան ասել է թէ՝ քեզանից այբրենարաններ չի ստացել, որ ես քեզ 3 ամիս յառաջ քանի քանի նամակներով խնդրել էի նորան հասցնել. նա ինձ խիստ ամօթացուց, ասելով որ ես խօսքիս հաստատ չեմ, և... խարում եմ։ Այս բաւական չէ. Բուգաղեանը ստանում է իր եղբօրից նամակ թէ՝ ես Քանանեանից չեմ ստացել այբրենարաններ, որ գու նմանապէս իմ ինսդրանօք Յաժարիսան պիտի ուղարկէիր. այս մասին էլ ես ամօթանք ստացայ։ Այս ես բաւական չէ. Բուգաղեանի եղբայրը, որ Մուկովումն է կենում, և որ այժմ այստեղ է, ասում է իւր եղբօրը որ՝ ես քեզանից ստացայ պատուէր 30 հատ տաղարան ծախելու չեմ ստացել ոչ ոքից, այն-

ինչ ես քեզ ինդրել էի տալ նորան 30 հատ տաղարանը. այս մասին ես ես ստացայ ամօթանք: Ասմ ինդրեմ, ինչու ես այս քան զրպարտութեանց մէջ մտայ, միթէ ես մեղաւոր կամ խարերայ էի, որ իմ ընտիր բարեկամները այդպէս են կարծում. միթէ ես ափսոսալի չեմ. միթէ ես այն ամենը իւր ժամանակին անթիւ անհամար նամակներով քեզ չէի ծանուցանել. ափ, Քանանիան, ո՞րքան ինձ չես յարգում: Բայց պէտք չէ յուսահատուել. գոնէ այժմ ուղղէ արած սխալներդ, 400 հատ այրբինարան իսկոյն տուր Խալաթովին Սանասարեանի անուամբ, որ նա հասցնէ բժիշկ Յովհաննէսեանի տուն. այլես 100 հատ Տէր-Յովհէփեանին: 180 հատ այբբենարան ուղարկէ փոշով Յաժտարիան Բուղաղովին ես և 10 օրինակ ամեն Գամառ-Քաթիպանից: Եւ յետոյ զրէ նամակ Սանասարեանին և որքմն կարող ես արդարացներ ինձ, որ նա չի կարծէ ինձ խարերայ և ստախօս: Աստուած հաւատա՞ ես խիստ սաստիկ տանջվում եմ քո լրութեամբ և մնկործունէութեամբ:

Ստացա՞ 4 թուահամարը Գամառ-Քաթիպաներուն, որ 3 շաբաթ գորանից յառաջ ուղարկել էի. ի՞նչ արիր նոցա, և ինչու ինձ իմաց չես անուում: Ես քեզ զրել էի որ տոմսակները պատրաստ են և պէտք է փող տալ և ստանալ. դու լուս ես. բան չես զրում: Ասա, ինդրեմ, ի՞նչ անեմ ես: Միթէ այդ կերպով կարելի է բան յառաջացնել: Ես քու ինդիբները ճշշտութեամբ կատարում եմ. և զու իմը ոչ: Գամառ Քաթիպայի 4 թուահամարը որպէսկիցէ պարտքով տպեցի, 5-երորդի համար կոպէկ փող չունիմ. 3 ամսուայ ոռճիկներս տոի և զրի տպարանի վրայ այն յուսով որ շուտով մի կողմից օգնութիւն կլաստանամ. և ահա ինձ ինչ օգնութիւն է հասնում և ամօթանք և զրպարտանք: Փառք Աստուծոյ այս էր վարձը իմ աշխատանացը, որի վրայ թափում եմ արիւն քրտինքս:

Կարծելով որ դու տակաւին չես հասցել այբբենարաններից ոչ մի հատ Թիմուրեանին, ես ուղարկում եմ նորան 114 հատ. թերեւս նա ծախէ և ինձ այս նեղ ֆամանակուայ համար մի օգնութիւն հասցնէ. բայց ես նորան երկու նամակ էի ուղարկել մին մինի բամակից և խնդրել էի մի օգնութիւն անել. պատճառ որ ես այժմ ամեն պատրաստութիւնը տեսել եմ շուտով մեր սեպհական տպարանը բացելու. եթէ բանը այս կերպով երթայ յառաջ, ի հարկէ սերմը հողի մէջ կ'չորանայ տուանց բարերար անձրեկի: Բուղաղեանը Դղլարի գործի մասին խիստ արի առաջ է ընկնում. պէտք է նորա առաջ հաւատարիմ երկիլ. մանաւանդ ես քեզ նորա աչքին շատ և շատ բարձր եմ դրել. նորա հետ չի կարելի ափեխցիկես բան բռնել. պէտք է

ճշտութիւն։ Նա ինձ խիստ օգնում էր և ահա ես նորան ինչպէս վարձատրեցի։ ամօթ ինձ։ Բուզաղեանը ինձ ասաց որ Ղղարի գործոց մասին մի մարդ է զալու Պետերբուրգ։ մթթէ այդ ճշմարիտ է։ կ'նշանակէ Ֆիլանեանցներու խօսքերը Փօկուս էին։ լաւ չէ։ Խնդրեմ մի նամակ գրես նորից Բուզաղեանին (անցեալը ես տուի նորան և նա քեզ կ'գրէ նամակ) և բանը ճշտութեամբ և տեղեալի յայտնես։ նմանապէս պարզացրուր նրա առաջ այրբենարաններու յետաձգութեան մասին, որ նա մեզ շառլատաններ չի կարծէ։ Նմանապէս ինձ մի փոքրիկ հաշիւ զրէ՝ արգեօք մինչև այսօր ուր և որո՞նց վրայ և որքան ուղարկել ես մեր բոլոր տպած աշխատութիւնները և քանի՞ հատ ինչ բաններից մնացել է քու մօտ։ Այժմ տպում եմ Ռօբէնզոնը։

Մնամ քեզ բարեացակամ Ռասիայէլ

1857. ապրիլի 19

Ա. Պետերբուրգ

Հոգեհարազատ Եղբայր Գէորգ.

Քու Մայիսի սկզբանը զրած նամակը ես ստացայ Կուզանովից Յունիսի վերջերուն։ և ստանալուս միւս օրը կատարեցի քու խնդիրը թէն հիւանդ էի, թէն կոպէկ ասած բանը գրպանումս չունէի։ Աստուած ողորմաց վրաս և ուղարկեց ինձ այն օր մի եցրինս<sup>1/4</sup> գինը տալով տուեց ինձ հընար քեզ բաւականացնելու։ եթէ ես ուշացայ՝ վերը յիշած պատճառը իմ օգտիս է խօսում։ եթէ չես հաւատում, ես կ'պահնջեմ Կուզանովից որ նա իրան մեղագրելով ինձ արդարացընէ քու առաջ։ եթէ (վերջապէս) կարծում ես թէ ես ամիս յառաջ կատարած չէի լինիլ այն, ինչ որ այժմ կատարեցի։ դորա համար էլ այս կասում որ քու պահանջմունքը խիստ ըստիպողական էր, թշնամին չէր անիլ այնպէս։

Այժմ ես սկսեցի փոքր ինչ առողջանալ, կարողանում եմ տնից գուրս գալ և փոքր առ փոքր ուղղել մեր դորձը, որ միանդամայն խափանուել էր։ Լսիր, Գալ/Ամոները պէտք է այսպէս կարգադրել։

Պետերբուրգ—200 (իմ վրայ)

Թիֆլիս—150 (իմ վրայ)

Երևան—30 (չգիտեմ ով կ'օգնէ մեզ)

Գանջա — 50 (Թիմուրեանի միջնորդ)

Շամախի—50 (չգիտեմ)

Շուշի — 50 (Բուղաղեանը)

Օսմ. տէրութիւն—50 (իմ վրայ)

Մոսկով — 30 (Եթէ կարող ես)

Ստաւրապօլ—20 (ևս կամ դու)

Հին Նախիջևան—20 (չգիտեմ)

Նոր Նախիջևան—15 (իմ վրայ)

Ղրիմ—15 (իմ վրայ)

Աստրախան—25 (Բուղաղեան)

Ղզլար—30 (օ եմ ե՞լ ?) դու (?)

Այսքան ժամանակ մենք մի կանոնաւոր բան չենք բռնիւ.

Բայց ո՞րքան հեշտ էր այսպէս զործը հրաշապէս առաջ տանիլ.  
մի մտիկ արա՞ որքան հեշտ է այսպէս կանոնաւորած ցրուել:  
Հիմի ևս ուղարկեցի Թիֆլիս 50 հատ ամեն օրինակից բժիշկ  
Յովհաննիսուհանի վրայ, ևս և 100 հատ ուղարկելու եմ. բայց  
չունիմ 1 թուահամարից. դու ինձ զբէ քանի հատ կայ մօտդ,  
և անպատճառ նորանից հարիւր հատը ծրարէ և յանձնէ ուժ  
որ գիտես, որ նորան համնի: Նմանտպէս նշանակած բաղաքներու-  
մը ուղարկէ (եթէ չես ուղարկած) նշանակած թուով: Եւ ինձ  
իմաց տնիր, որ ես էլ այնպէս շարժիմ: Թողնենք, իմսրեմ,  
մեր զանգաղութիւնը. ժամանակն է արդէն արխութիւն բանա-  
ցնելու: Ես ստացայ Փարիզից յետագայ կարծիքը մեր վրայ.  
«Զեր տպած զրքերը շատ հաւանելի թուեցաւ մի քանի գիտ-  
նականաց ուստի և Մասեաց Աղաւնոյ մէջ շուտ կտեսնէք խորհր-  
դածութիւն Գամառ Քաթիւպայի լոյս ընծայողներու ազնիւ և-  
ռանդի և հայրենասիրութեան վրայ. քանի մի երգ և հատուած-  
ներ գուրս քաշեցին նորա մէջից և պիտի տան նորանով գա-  
ղափար թուսաստանի Հայ ուսանողաց բանքարի և հանճարի(?)  
մասին: Արաքսի արտասունը բաւական է կարդալ, որ իմա-  
նան թէ քանի՞ անգամ բարձր են բուն հայերը մեր կեղծեալ  
կիսահայ վենեսիկցիներից. այս Դիւլօրիէի կարծիքն է, որ  
թարգմանեց այս և տպելու է իւր Revue d'Orient-ի (օրագիր)  
մէջ: Մենք ասացինք, որ դուք ունիք տպելու մի աւել գերա-  
զանց բանաստեղծական հատուած՝ վարդան, Մամիկոնեան. նո-  
քա ցանկացան ունենալ ոչ միայն ձեռագիրն, այլ և տպելու  
հրաման և վարձն ևս կը հատուցանեն յօդուտ ձեր ուխտին  
և նորակազմ տպարանին (?) գինը գուք նշանակեցէք:» Ահա,  
եղբայր սիրական, քեզ յայտնեցի մի աղգային կարծիք, որ  
պէտք է մեզ խիստ խրախուսէ, եթէ ունինք մենք վառ սիրտ  
և ազնիւ հոգի: Դիւլօրիէն ևս զրեթէ նոյն խօսքերով խրախու-  
սում է մեզ (նա գիտէ մեր ուխտի պայմաններն և նպատա-  
կը): Քերորի գնալից յետ ես ծանօթացայ Ակադիմիք Բոօստէի

հետ: Նա իմացաւ մեր ձեռնարկութեան պայմաններն և մեծ յոյսեր տուեց թէ՝ մի օր մենք այնքան օգտաւէտ կ'լինինք մեր աղջին, որ բոլոր Հայոց գիտնականը միացած չեն կարող նոյնը կատարելու: Բայց որքան զարմացաւ նա, երբ որ լուց և իմացաւ ինձանից թէ մեր գործը սկսուեցաւ 30 մանէթով և այժմ ունինք ոչ թէ տպած գրքեր, այլ և տպարան: Նա նախագուշակեց որ դուք (մենք) միայն գուք կ'լինինք պատճառը, որ մի ժամանակ բուն Հայաստանի մէջ կ'ունենանք համալսարան, թատրոն, ճեմարան գիտութեանց: Այս, աւելցուց, երանի ձեր աղջին, որ ունի ձեզ պէս (մեզ պէս և ոչ ինձ պէս) կարեկիցը աղքատ պատանիներէ: Երանի նորան, որ դուք և ոչ տէրութիւնն սկսեց ջանալ նորա բարոյական կրթութեան համար: Զեղմով ազգը մի անգամ կ'բարձրանայ ըն մաս և ոչ գանդաղ և մի մի: Ես ցոյց տուի և կարդացի բոլոր քու նամակները նմանապէս և Թիմուրեանի: Դուք աւել բարձր էք Ձեր ազնիւ և անկեղծ զգացմունքով, ասաց, քան թէ մեր Ալուգեմիքները: Շատ ուրիշ դորա նման բաներ ևս ասաց, որոց ամբողջն է մտին և ոչ բառ առ բառ: Ի՞նչ կ'ասես: Միթէ բարի դործը թագչում է: Ո՞չ: Արդութեամբ և անկեղծութեամբ մենք ամեն բան կ'յաղթենք:

Եղբայր սիրական, ինձ դարմացնում է Թիմուրեանի լուսութիւնը. միթէ նա մեզ ուրացաւ: Աստուած հաւատա որ ևս սաստիկ նեղ դրութեան մէջ եմ: Ես առաւել այն մասին եմ չարչարվում որ այս վատ հանգամանքը հասաւ ինձ հէնց այն ժամանակ, երբ որ գործը սաստիկ լաւ ուղղութիւն ստացաւ: Թանանեան միթէ հնար չի կայ ինձ մի փոքրիկ օգնութիւն հասցնելու: Միթէ տաղարանի անյաջող տպուելլը քեզ յուսահատեցուց. միտք արա որ ուրիշները աւել մեծ սիսաներ են արել իրանց կեանքումը քան թէ ես. միթէ ես մեղյ վատ կամելով լսեցի մի քանի անհիմն մարդոց կարծիք. միաք արա և այն, որ ես միանգամայն ինքնակամ չի տպեցի, ինչպէս դու ինձ մեղադրում ես, այլ խորհրդով քանի մի անձանց, ինչպէս իգմիրեանցի, Աւագեանցի, Թերորի ևայլն: Եթէ վերջապէս դու անյուսացած են ինձանից, գրի գոնէ մի ուրիշ պատճառը, բացի տաղարանի անյաջող դուքս գալից. ես այս 2 տարուայ մէջ շատ եմ աշխատել, լսում ես, շատ եմ աշխատել. Եթէ չի կարողանամ այն ամէնը լոյս ընծայել... գոնէ իմ ԿԱՊԵ ձեռագիրները քեզ կ'ապացուցանեն որ այդքան օգտաւէտ գործերսվ ժամանակ անցնողը բացի ազնիւ զգացմունքից ուրիշ շարժառիթ չպիտի ունենար իւր-կեանքումը: Աստուած ինձ թող չարաչար պատուհասէ եթէ մի ժամ ես մոռացած լինիմ այն օրհասական

երեկոյեան խօսակցութիւնը, որ մէնք երեքս ունեցանք Թիմուռեանի սենեակումը. եթէ չեմ կարողացել 1,000 անգամ աւել անելու քան թէ արել եմ, պատճառը և միակ պատճառը չըաւորութիւնս է եղել: Քանանեան, ևս ինչ որ ունէի՝ տուի մեր ուխտին, որքան ոյժ կար մէջս թափեցի. որքան խօսք ունէի բերանում, յորդորեցի մարդոց դէպի մեր գործին գործակցութիւն. գուք էլ արիք, որքան կամեցաք, բայց արթիք արդեօք որքան կարողացաք:

1) Այս համակը, խնդրեմ տուր Սուլթան-շահին: Եւ պատասխանը առացցիր և ուղարկէ ինձ:

2) Յովհաննիսեանը ոչ պատասխան է ուղարկում, և ոչ խնդրած տասերը:

3) Գրէ, որքան տակած գրքերից կայ մօտումք: Եւ որքան և որտեղ ցըուել ես:

4) Ի՞նչ լուր կայ Թիմուռեանից:

5) Այս ուսանողի (ազատ լսող) մասին գու խիստ անորոշ ես գրում. գրէ աւել պարզ, որ ես հասկանամ և քեզ պատասխան դրեմ:

6) Հնար տես ինձ մի փոքրիկ օգնութիւն ուղարկելու:

Մնամ միշտ հաւատարիմեղայր և բարեկամ

բու. Ռատիսյէլ

Յունիսի 20.

Սիրելի Գէորգ,

Ահա քեզ մի նոր ապացոյց, սիրական Գէորգ, թէ որքան անբաւականութիւն է ծագեցնում երկու սերտ բարեկամաց մէջ երրորդի անպիտանի խառնուելը: Դու ուղիղ ամիս գորանից առաջ զրել ես մի կողկողագին նամակ, որի գլխաւոր պարունակութիւնը այն էր, որ ես շուտով ուղարկեմ Պօլգէքօքի ոսմանը. այդ նամակը և առնասարակ քեզանից վաղուց նամակ չի ստանալս ինձ մեծ տիրութիւն, յուսահատութիւն էր պատճառում. և ի՞նչ. այդ նամակը ամիս առաջ ստացել է Կուզանովը, առել ու տարել է հետը Վարչու սելո և թողել է մօտը մինչև երեկուայ օրը. նամակը նորա ծոցի քրտինքից գրեթէ անհնարին էր կարդալու. հազիւ հազ կարացի ջոկջկել քու գրութիւնը և շտապում եմ (առաջ) ուղարկել քու պահանջած գիրը և որքան կարելի է շուտով, այսինքն ինչպէս հրամայում ես, նամակը

ստանալուս միւս օրը ուղարկում եմ քու զիրքը։ Գնա ու  
մեղաղըէ ինձ։ Ա՛խ, հոգիս, ես գիտեմ որ զու ինձ շատ մեղա-  
զրում ես այս երկար միջոցումը։ բայց զուցէ մի օր ինքդ կ'ի-  
մանաս որ ես ամենուին յանցանք չունիմ։ Եթէ կ'հաւասառ ինձ  
ինձ խիստ թանգ աժեց նաև ուղարկելը։ որ ուրիշ միջոցին և  
ուրիշ զիպուածումը ես չեի անիլ։ Մօսս մի կողէկ փող չու-  
նէի։ բայց զորա համար պէտք էր զոնէ 75 կողէկ։ Ես ծախե-  
ցի Գիզօյի պատմութիւնը, որի հետ խօսք էի տուել ամենուին  
չի հեռանալ։ Այժմ սպասում եմ քեզանից քու կարծիքը։ 'Ի սէր  
Աստուծոյ մի մեղաղըի ինձ։ Ես արժանի չեմ քու բարկու-  
թեան։ Ես հազիւ կարողանում եմ զրել խիստ հիւանդ եմ, տենդ  
ունիմ։ Թիմուրեանցից գեռ ես լուր չունիմ։ Օգնութիւն ոչ մի  
կողմից։ Խնդրեմ 1 և 2 Ն-ները Դամառին իմացնես քանի քա-  
նի հատ կան մօտք և քանի՞ այրբենարան։ Փարիզից ուրախալի  
լուր կայ. բայց հիւանդ եմ, զրել չեմ կարող։

Նամակդ ստացայ ամսիս 17, և 18-ին գրում եմ պատաս-  
խանը։

Ռատիսյէլ

# Շ Ի Լ Լ Ե Ր

(Նրա մահուան հարիւրամեակի առիթով)

Մամ Գիեզի

Շիլէրի անունը ներկայ դարի զարդն է: Նա նորից ու գեղութիւն կը ներչնչէ գերմանական ազգին և կը միացնէ նրան, ինչպէս և 1859 թուականին այս խորհրդաւոր մեծ տօսնին: Հարիւր տարի անցել գնացել են Շիլէրի մահուան օրից, բայց այդ երկար ժամանակամիջոցը չի նսեմացրել նրա ամբողջ մեծութիւնը: Նրա պայծառ ճակատը չէ ակոսուել կնճիռներով և ծալքերով, նրա դիմագծերի հպարտ փայլը չէ դալկացել հսութեան քողի տակ: Այսօր էլ «Աւազակները» տիրում են թատրոնական բեմերի վրայ, չնայած որ այդ երկի կրքու պայքարը՝ ուղղած ժամանակի դէմ, կորցրել է իր նախկին նըշշանակութիւնը. բայց և այսպէս նրա դրամատիքական ներքին ոյժը պատկերանում է մեզ այժմ իր իսկական աւելի և հոյակապ մեծութեամբ: Այսօր էլ կարելի է կրկնել Գեօթէի խօսքը «Վալէնշտէյնի» մասին. «Նա այնքան մեծ է, որ իր տեսակի մէջ նմանը չունի»: Եւ, իրաւ, Գերմանիայում քիչ երկեր կը գտնուին՝ դրամատիքական հանձարից ծնուած, որոնք մոռացուած չլինեն Շիլէրի վարպետական դրամաների առաջ. աւելի և քչերն են կարողանում մրցել նրանց հետ թատրոններում: Դրա պատճառը ոչ միայն բանաստեղծի երկերի մէջ յայտնուող անկասկածելի մեծ բանաստեղծական ոյժն է և մասամբ դեռ չգերազանցած նրա դրամատիքական տեխնիկան, այլ այն, որ ոչ ոք այնքան խորը չի թափանցել ժողովրդի սիրտը, այնպէս պարզ և զօրեղ կերպով չի արտայայտել ժողովրդական ոգու ուժեղ ու մեծ շարժումները, ոչ ոք այնպէս ազդու և համոզիչ կերպով չի դարձրել մարդկութեան յաւիտենական իդէալները աշխարհի և գեղարուեստի օրէնք: Այդ պատճառով ապարդին են անցել քննադատութեան բազմաթիւ յարձակումները՝ ուղղուած

Շիլէրի դէմ: Մինչև այժմ զեռ գոյութիւն չէ ունեցել մի տևելի բարձր և իդէալական դրամա, որ քննադատութիւնը կարող ամսար նրան զերագասել Շիլէրի դրամայից և նսեմացնել նրա հանճարը: Այդպիսին գուցէ ծնուի միայն ապագայում: Երացի է ուրիշն, որ Գերմանիան սլիտի պատրաստուի տօնելու այս տարի Շիլէրի վաղաժամ մահուան յիշատակը: Ի հարկէ, ի թիւս այլոց կը լինեն նաև շատ ունայն ճառիր, անմիտ ցուցամոլութիւններ: Շատերը կօգտուին առիթից՝ Շիլէրի շուաքով քիչ փառք վաստակելու, թէպէտ այդպիսիների համար բանաստեղծը լոկ մի անուն է պատմութեան պանթէօնում, մի կուռք՝ փառքի հետուր Վալհալայում: Նրանց կարծիքով լուլորն էլ նրան մեծարում են անհրաժեշտութիւնից զրդուած, որպէսզի առօրեայ հոգեկով ծանրաբենուած՝ հանգիստ խղճով անցնել կարողանան նրա արձանի մօտով: Նախարարները, երեի մի քանի ֆրազներ կը գտնեն նրան փատարանելու, չնայած որ մի մօղեսն Մարկիդ Պօզայի հեղինակի համար նրանք պատրաստ կը պահէին ոչ թէ պատմութեան ամբիօնը, այլ... դատախազինը: Ուսանողները, որոնք՝ մանեկով մի որեէ ակազիմիական ընկերութեան մէջ զգուշութեամբ չափում, ձեռւմ են իրանց ընտրութիւնը, որ պիտի տանի գէպի պետութեան կերպող մսուրը, կը մերկացնեն իրանց սրերը «Փախստականի» նկարի առջև և միայն կոնծարանութեամբ կը պատուեն օրուայ հերոսին: Վախենում հմ որ նաև գիտականներից ոմանք կը սկսեն աստուածացնել իդէալի հոկայ մարտիկին և նրա յեղափոխական անվեհներ ոգին, չնայած որ նրանք իրանց ողորմելի վախսկոտութիւնը ծածկելու համար երեին ի չարն են գործ գնում մասնագիտութեան և հիմնաւոր ուսումնասիրութեան գեղեցիկ անունները: Զգուշաբար խուսափելով իրական կեանքի կենտական պահանջներից, այդ անխոնջ աշխատաւորները դուրս կը բերեն համաշխարհային պատմութեան արխիւների փողու միջից Շիլէրի կեանքին վերաբերեալ մի քանի աննշան և չնշն կտորներ, որոնք իբր աւելի են պարզաբանելու մեզ կարլ Մօօրի սաստիկ և ազնիւ զայրոյթը—թքանձ այս թանաքամոլ աշխարհի վրայ: Թքանձ թուլամորթների այս ուժասպառ դարս վրայ:

Որքան գժբաղդ կը լինէր գերմանական ազգը: Այս միծ տօնին, եթէ նրա զաւակներից քչերը անկեղծօրէն կապէին Շիլէրի անուան հետ իրանց երիտասարդութեան գեղեցիկ օրերի, քաղցր ժամերի յիշողութիւնները, եթէ պարլամենտներում և զրառենեակներում, խմբագրատուններում և առևտրական

ըմբոներում, ժողովրդական գպրցում և զեղարուեստագէտի գործանցում քչերը՝ Շիլլէրին կարդալիս՝ երեակայութեամբ ոլանային իրանց երիտասարդութեան շրջանը, երբ նրանք գտնում էին երիտասարդ Շիլլէրի մէջ իրանց առաջին երազուն իդէալների աւետարերին և թարգմանչին: «Երանի սիրով վառուաներին, նրանք նմանում են աստուածներին»: «Այս ով է այնտեղ՝ անդունդի եղրին հոգարտ քայլում է անյաղթի նման»: «Թոյլ տուր տեսնեմ, միթէ իմ ազնուականութեան հրովարտակը նոյնքան հին է, որքան և այս անվերջ տիեզերքը կամ իմ զինաղրօշը (գերրը) աւելի է նշանակում, քան Լուիզայի աչքերում երկնքի այս բոցը»: «Դնացէք ասացէք նրան, որ պատկասի իր երիտասարդութեան առաջ, երբ կը մեծանայ, որ նա փակի աստուածների պարզւած իր քնքոյշ ծաղիկ սիրով՝ հըուչակուած յաղթող բանականութեան սպանիչ միջատի առաջ,— որ նա, վերջապէս չմոլորուի, երբ տեսնի փոշու նման մանր իւմաստութիւնը բրգելիս ու պղծելիս տիեզերքի անհունութիւնը»: Սրտի այս զեղումների մէջ յայտնուում են արդէն տիեզերքը ընդգրկող մտքերի ասաջին թոփչքները՝ հիւսուած հազարաւոր անմոռանալի յիշողութիւնների հետ մեր կեսնքի խենթու խելառ օրերի և ջերմ սիրոյ առաջին բարախման շրջանից:

Մենք, 'ի հարկէ կը մտարերենք նաև, որ շատերի համար վրայ է համում մի ժամանակ, երբ Շիլլէրը անսիրելի է դառնում, երբ նու կորցնում է իր ամբողջ թովչութիւնը և կասկած է ներշնչում, որ խօսքերի այս փայլուն զարդի տակ ըիչ կեանք է ապրում: Այս պարագայում դամսում ենք Գեօթէին և սկըսում համեմատել նրա և Շիլլէրի արժանաւորութիւնները: Ամեն մի անկանխակալ ու անաշառ մարդ նկատում է իսկոյն, որ Գեօթէն իրրև բանաստեղծ տալիս է աւելի հարուստ ու գեղեցիկ քերթուածներ, որ նա անմիջապէս հաղորդում է իրականութիւնը, հոգու աւելի քնքոյշ ու նուրբ հիւսուածքները, բայց որ ամենագլխաւորն է, աւելի փայլուն կատարելութեան է հասցնում բանաստեղծութեան յատուկ զրամագրութիւնը, տենչազորկ հաճոյքը, կամքի մշակման գործում արտայայտուուող հոյակապ խաղաղութիւնը, քան Շիլլէրը: Բայց Գեօթէին գերագասելու ցանկութիւնը չքանում է ու տեղի տալիս այն ձշմարտութեան, որ Գեօթէն Շիլլէրի նման երբէք չէր կարող ողեռութիւն առաջացնել պատահնեկան և երիտասարդական սրտերում:

Մեր կատածը Շիլլէրի մեծութեան նկատմամբ վերջնականապէս փարասում է, երբ մենք սկսում ենք զգալ որ մարդկութեան հանճարները իրանց էութիւնը արտայայտելու հա-

մար մտաւոր աշխատանքի միակողմանի ուղին չեն բռնում և որ անարդար կը լինէր գնահատել Շիլէրին և Գեօթէին լոկ իրրե բանաստեղծներ: Նրանց բանաստեղծական զրութիւնները, գուցէ, բղխում են հչոց նրանց մեծութիւնից: Այդ հայեցակէտը ինքն ըստ ինքեան բնական է թւում մեզ, երբ ուսումնասիրում ենք նրանց բանաստեղծական երկերը: Ցիմարութիւն կը լինէր «Վառատի» ամբողջ արժէքը չափել գուտ դրամատիկական գեղարուեստի օրէնքներով: Ձառասոը իրրե բանաստեղծութիւն աւելի մեծ է, քան Ձառաստի—դրաման: Եւ Շիլէրը իրրե մարդ աւելի բարձր է, քան Շիլէր բանաստեղծը: Որոշ չափով կարելի է նոյնիսկ պատահական համարել Շիլէրի բանաստեղծ լինելը. նա կարող էր հաւասարաչափ պատճագէտ կամ փիլիսոփիայ լինել: Եւ եթէ մենք ծայրայեղութեան չենք համառում կարլայլի պէս, որ բացասում է համաշխարհային պատմութեան հերոսների մէջ ամեն մի առանձնայատուկ ձիրք և զնահատում է միայն նրանց դէպի իրականութեան խորքերը դարձրած թափանցիկ հայեացքը, այսուամենայնիւ մեր մի պահանջը միշտ արդարացի կը մնայ: Եռանդուն մարդուն դատիք նրա գործերից, տաղանդը նրա արդիւնքից, բայց թոյլ տուր հանճարին մարդկութեանը տալու այն, ինչ որ նա ինքն իրանից ներկայացնում է:

Պարզ է, որ Շիլէրի պէս ընդհանրական մարդկային մի գոյութեան ճշգրիտ նկարագիրը աւելի գժուար է յաջողւում որոշելու, քան թէ նրա բանաստեղծական երկերի արժէքը էսթետիքական գաղափարների նեղ շրջանակի մէջ: Ինձ թւում է, որ նախ և առաջ պէտք է ուշագրութեան առնել այն ուղղութիւնը, որին հետևում է հանճարը, երբ ընդարձակում է իր հոգու խորքերում մարդկութեան գաղափարը: Ամենավսեմ գաղափարները՝ ազատութեան և անհրաժեշտութեան, ընութեան և բանականութեան, կամքի ու մտաւոր կարողութեան, հնաթերկում են նրա քննութեան և լուծում նրա գիտակցութեան մէջ: Մեզ հարկաւոր են հակադրութիւններ, որպէսի կարողանանք պարզ և զօրեղ կերպով պատկերացնել Շիլէրի հանճարի ներքին մտաւոր աշխատանքը, և համեմատութիւնը Գեօթէի հետ աւելի քան անխուսափելի է դառնում: Ծնուած ու մեծացած միևնոյն ժամանակում, ենթարկուելով միևնոյն քաղաքական պայմաններին, իւրացնելով կրթութեան միևնոյն տարրերը, մնուելով միևնոյն ընդհանուր մտաւոր շարժման մէջ, վերջապէս, միանալով միևնոյն մեծ նպատակներով և գործելով գեղարուեստի միևնոյն ձիւղի մէջ, նրանք երկուսն էլ այնքան նմանութիւններ ունեն իրար հետ, որ նրանց տարրեր

էութիւնը իսկոյն և եթ խոտօրէն աչքի է դարնում:

Ինձ թւում է, որ այս է ամիսնից ընդգրկող և ամփոփ հակադրութիւնը: Դեօթէի մեծութեանը նպաստում էր կեանքը, իսկ Շիլլէրը ինքն եղաւ իր մեծութեան ստեղծողը: Դեօթէի մէջ արտայայտում է ընութեան զօրութիւնը, իսկ Շիլլէրի մէջ՝ բանականութեան զօրութիւնը:

Դեօթէն երբէք չէր խարւում իր զգացմունքների մէջ, բայց թոյլ ու երերուն էր իր կամքով. իսկ Շիլլէրը մոլորւում էր իր զգացմունքների մէջ, բայց երկաթեայ կամքի տէր էր: Գեօթէի կեանքը աստուածային անհրաժեշտութիւն էր, իսկ Շիլլէրինը՝ կամայականութիւն և ազատութիւն: Գեօթէն ներկայացնում է մարդուն, իրեն իր «ես»-ի հրջանկութիւնը, Շիլլէրը՝ իրեն «ես»-ի ոյժը: Հէնց այդ յատկութիւններով է փայլում Շիլլէրը միւս հանճարների շարքում: Նա մի իսկական հերոս է, որ իր կեանքում յաղթեց ինքը իրան և հանգամանքների խոչընդուները: Մարդու ինքն ոլխաի լինի իր «ես»-ի ըստեղծողը—ահա Շիլլէրի զիտակցութեան բնարանը:

Սրանով են բացատրում նրա մտրակող, ջերմ ու մորմոքուած տենչանքները և նրա մէջ ապրող իդէալական ձգտութները:

Այժմ անհրաժեշտ է աչքի առնել Շիլլէրի կեանքի գլխաւոր մոմենտները: Երկու անգամ բանաստեղծը արմատական յեղաշրջում մացրեց իր կեանքում. մէկը երբ Շառւտգարտից փախաւ, իսկ միւս՝ երբ ինքն իրան ուրացաւ: Սակայն նրա փախուստը Շտուտգարտից հարկաւոր է այլ կերպով մեկներ քան կալուածատէր Կոխի տանից: Դա միայն մի արկածալից ոստիւն չէր լայն աշխարհի գիրկը, ինչպէս այդ յաճախ լինում է մեծ մարդկանց հետ, երբ վերջիններս սաստիկ պահանջ են զգում թողնելու իրանց նեղ շրջանը: Դանտէի և Պետրարկայի օրից ճակատագիրը ստիպել է զրեթէ ամեն մի մեծ մարդու զիմել այդ քայլին՝ հայրենիքի միապաղաղ պայմաններում չհուտելու համար: Բայց Շիլլէրի այդ փախուստը ոչ միայն շրջմոլութիւն էր, այլ և յանցանք: Նա փախաւ զինուորական ծառայութիւնից, որի պատճառով մի որոշ ժամանակ նրան վտանգ էր սպանում, և դեռ երկար տարիներ յետոյ նա չէր յանդըգնում ուրք կոփել իր հայրենիքի սահմանները: Եւ իրաւ, այդ քայլը արմատական մի յեղաշրջում էր. նաւերը այրուած էին, ինչպէս արեց Կորտէցը, երբ արշաւեց Սւետեաց ոսկէ երկիրը: Բայց երկրորդ փախուստը՝ փախուստը իր սեփական «ես»-ից աւելի և մեծ գործ էր: Իր երիտասարդութեան յաջողութիւններից, «Աւազակների», «Փիէսկօյի», «Սէր եւ Խարդաւանքի»,և «Դոն Կարլոսի» փայլուն ընդունելութիւնից յետոյ բանաս-

տեղծը փախչում է, արհամարհելով իր փառքը, սննդաւական ինքն իրանից, սուբեկտիվիզմի և երևակայութեան շրջանից թեակոխում է փաստերի, իրերի և մտքի աշխարհը։ Այդ քայլն իսկական ինքնուրոյնութիւն էր, որի մէջ երեսում է զարմանաւի արիութիւն՝ յատուկ իր «ես»-ի ոյժը ճանաչող մարդուն։ Այդ հերոսական ճիգերի հետևանքներն եղան մի շարք պատմական աշխատութիւններ կրօնական պատերազմների և յեղափոխութիւնների մասին, որոնց մէջ Շիլլերը ընդարձակեց իր գիտութիւնը։ Նրան գրաւում էին այն ազգերը որոնք իդէալ ները իրանց գոյութեան հիմնաբար էին դարձնում, այն դաւանքը, որի համար նրանք մերկացնում էին իրանց սրերը, ազատութիւնը, որը՝ աշխարհիս զանազան անկիւններում ապաստան էր գտնում։ Հարկաւոր էր տեսնել նաև, թէ ինչպէս տնքում էր Լուիզէ Միլլերի հեղինակը Կանտի և սրա վերացական ահալից գաղափարների վրայ, որոնց մէջ ամբողջ տիեզերքը վերլուծուած է տարրերի և յայտարարուած մարդու ընութեան միութիւնը։ Սա էլ իր տեսակի յեղափոխութիւն էր որի մէջ խորասուղուած էր բանաստեղծը։ Կտրիճ պայքար էր այն, որ մղում էր Կեօնիփարերգի փիլիսոփան և նրա ողին, հերոսութեան այն ողին, որ ըխում է նրա երկերի ամեն մի տողից։ Արի էր ճշմարտութեան նրա մաթեմատիֆական իդէալը, որը նա աշխատում էր գործադրել գիտութեան բոլոր ճիւղերի մէջ։ արի՝ նրա խուսափումը բնազանցական երազներից, որոնք մինչեւ այն՝ մղում էին մարդկութիւնը վիճակնու իր իդէալները գիտնականի առանձնասեհնեակում և ոչ լայն կեանքի զարգացման կուտում։ արի, վերջապէս, բնազանցութեան կապանքներից ազատուած ոգու յարակցութիւնը պարտաճանաչութեան խիստ պատուէրների հետ։ Եւ այս խրթին վերացականութիւնների մէջ խորասուղուած էր «Թոն Կարլոս»-ի հեղինակը։ Եւ ինչ ոյժով էր կլանում նա այդ վըխուրուն փիլիսոփայական նիւթերը, մինչեւ որ կարողացաւ իւրացընել նրանց։ Ոգու ինչ հերոսական լարումով էր կառուցանում նա՝ ոգու ու բնութեան մէջ առաջացած կանտական անդունդի վրայով, իր սկզբունքների կամուրջը։

Եւ երբ նա կրկին գառնում է բանաստեղծութեանը, ինքն իրան սկսում է գաստիարակել ու կրթել, աշխատելով ստեղծել մի այնպիսի անհամակրելի տիպ, ինչպիսին է Վալլէնշտէյնը, և պարապելով այնպիսի նիւթերի վրայ, որոնց մէջ մոդեռն կեանը պրոզան գլորել է բանաստեղծի ճանապարհն անանցանելի դարձնող արգելքներ։

Սակայն սրանով չեն վերջանում հերոսական քայլնը

Շիլլերի կեանքում: Ես չգիտեմ մի երևոյթ, որ այնքան սրտաշարժ լինէր, ինչպէս նրա վերջին տասը տարիները, երբ նայածի «առանձւում էր ցաւով ու միայն վայրկեաններով վայելում կեանքը» և յուզուած, գրգսուած՝ խլում էր իր հիւանդուամբնից իր ամենափայլուն վարդապետական երկերը: Եւ նաայդ տարիներում կրկին անգամ զարմացրեց աշխարհը իր բընոյթի սուեղծազործութեան նոր ոյժով: Ինձ թւում է թէ՛ երբ նա «Մեսաւնայի նորահարսի» մէջ իր գեղեցկագիտական թէօրիաների կապանքները վերջնականապէս փշրեց, նա աղատուեց նրանցից ընդմիշտ: Մինչև Շիլլերը, յունական խմբերգը, լորրանխուսափելի էր համարում զրամատիքական տպաւորութիւն թողնելու համար. զրամատիքական սիւժետի ամենաբարձր կենտրոնացումը իդէան էր, քնարերգական փարթամ ոճը և կատարուող անցքերի անորոշութիւնը, զործողութեան և ժամանակի միութիւնը: Ահա այս զրաման էր տիրում բեմի վրայ, երբ Շիլլերը յանկարծակի նետուեց ժամանակակից այրող խնդիրների ասպարէզը, նորից վերցրեց իր երիտասարդութեան փողը, որի զօրեղ հնչիւնները պնդում էին ժողովուրդների սըրտերը, և ֆրանսիական յեղափոխութեան գաղափարը գուած իր աստուածային արտայայտութիւնը Շտաուֆֆախէրի այս հանդիսաւոր երկատողի մէջ.

Ո՞չ, բոնութիւնը վերջ ունի.

Երբ ճնշուածը իր սուրբ իրաւունքից է զրկւում,

Երբ լուծը բոնակալ զգուելի է դաւնում,—

Դէպ երկինք, դէպ եթեր սլանում է նա հոգով

Եւ հպարտ, ինդապին այնտեղից ցած իջնում

Իր ձեռքում պինդ բռնած իրաւունքն հաւատքով,

Իրաւունք, որ նոյնպէս փայլուն են բարձրում,

Որպէս անյաղթանշէջ ասենդը պսպղուն:

Իսկ զրամատիքական ձեի նեղ շրջանը աւելի ևս լայնանում է նիւթի էպիքական ընդարձակութեան շնորհիւ և, կարծես, ուրիշ օրէնք չի ճանաչում, բացի սիւժետի համամարդկային նշանակութիւնից:

Եւ երանի թէ մենք կարողանայինք աւելին լսել բանաստեղծի այդ հնչիւններից: Բայց հերոսների վախճանը միշտ գլժիւրաղը է եղել: Աքիլլէսը և Զիգֆրիդը մեռան ծաղիկ հասակում: Բարոյական ազատութեան գաղափարը, ինչպէս Գեօթէն է ասում, իջեցրեց նրան գերեզման, որովհետեւ «պահանջում էր նրանից Փիզիքական ոյժերի այնպիսի լարում, որին երկար չէր կարող դիմանալ նրա թոյլ կազմուածքը:» Եւ այսպէս, ճակատագիրը խեց գրիչն Տելի երգչի ձեռքից այն վայրկեանին,

երբ նաև հասած կատարելութեան՝ անվեհեր ձգտում էր դէպի վեր ու վեր...

Միայն դրամատիքական գեղարուեստը—սրանում կանկած չկայ—կարող էր բաւականութիւն տալ այդպէս կազմակերպուած հանճարին, որովհետև նաև միայն կարող է մարդու ցոյց տալ այնպէս, ինչպէս Շիլէրն ինքն էր, իբրև իր «հս»-ի ոյժը, իր կամքի տէրը։ Մարդկային ազատութիւնը որ մաքառում է աշխարհի և ճակատագրի դէմ, միշտ կը կազմի ողբերգութեան իսկական նիւթը։ Կարև Մօօրը, որ փախչում է անտառները, կարև Մօօրը, որ բարձրանում է կառափնատ, էշափոտ, ֆիէսկոն, որ աջսորում է իր բարեկամ Դորեային և դաւաճանում իր բարեկամներ Վերբինաներին, Մարկիզ Պօղան, որ քարոզում է մի բռնակալի առաջ մտքի ազատութիւն, Վալենշտէյնը, որ ձեռք է մեկնում դէպի կայսրների սրբազն թագը, Օրլէանի կոյսը, որ ձգտում է տղամարդու պատերազմական զափնիներին, Տէլլը, որ իր զաւակներին պաշտպանում է իջևներով նրանց վրայ իր արիւնոտ ձեռքը—ըրանք բոլորն էլ միենոյն դէմքերն են, որոնք թողել են կեանքի սովորական շաւիղը, կուռում են աստուածների և կուռքերի դէմ։ Սրանց բոլորի մէջ էլ ապրում է դրամատիքական կեանքի Ջիղը, որ ամենուրեք մտցնում է յեղափոխութեան ոյժը, ազատութեան տեսչը։ Թողինչ ուզում է լինի այն զօրութիւնը, որի դէմ նրանք մաքառում են՝ Գորգոնայի ահարեկ գլուխը, որ ըմբոստանում է ազատութեան դէմ, թէ օրէնքն ու բարոյականութիւնը, Աստծու բռնապետական ողորմութիւնն ու Փանատիկոսութիւնը, թէ դարաւոր սովորութիւնն ու պետական ըէղոնը—նրանք բոլորն էլ այն ոգիներից են, որոնք աշխատում են բանաստեղծի երեակայութեան մէջ կանգնեցնել կեանքի հսկայ հոսանքը ու տիրել նրա վրայ։ Կեանքը դարձրեց Շիլէրին ողբերգու, իսկ նրա զօրեղ բնոյթն ու կամքը՝ զործի բանաստեղծ։ Նրա ընդգրկող հոգին ու փիլիսոփայական խորութիւնը մերկացրին նրա աշըում իսկական ողբերգութեան արմատը՝ իրար դէմ անհաշտ ու անվերջ մաքառող ոյժերի և իրաւունքների հակասութիւնն ու պայքարը, երկրային կեանքի ամենախոր պրոբլեմները։

Պատմութիւնը, ասում է Հեգելը, ազատութեան գիտակցութեան մէջ կատարուող յառաջադիմութիւնն է, իսկ Շիլէրի բոլոր երկերի մէջ, ասում է Գեօթէ, հոսում է ազատութեան գաղափարը։ Այդ պատճառով Շիլէրի դէմքն ու ազգեցութիւնը պատմական մեծ նշանակութիւն ունեն։ Ի հարկէ, դժուար է պնդել, թէ քանի հազարաւոր մարդիկ Շիլէրի քաղաքական և պատմական լայն աշխարհայեցողութեամբ են մնուցել իրանց միտքը ժողովրդի

ներքին կացութեան նկատմամբ, բունկուել քաղաքական ձևագութեան կամ ուստի ուստի գաղաքական նպատակներով: Բայց երբ տեսնում ենք, թէ ինչ հրապուրիչ ազգեցութիւն է թողնում նա երիտասարդութեան վրայ, մենք գալիս ենք այն համոզման, որ նա ընդհանրապէս մեծ դեր է կատարում՝ զարթեցնելով գերմանացիների մէջ քաղաքական ջերմ ձգութիւնիր: Այն օրից ի վեր, երբ ուսանողները Օրլեանի կոյսի ներկայացումից յետոյ հանդիսաւոր կերպով նրան ձեռքերի վրայ բարձրացնելով տուն տարան, նա գարձաւ երիտասարդութեան երկրագուն և հայրենասիրութեան քաջարի աւետարերը:

Բայց նրա գէմը աւելի ևս մեծանում է, երբ մենք դիտում ենք նրան, իրեւ իր հանճարի ստեղծագործողի, իրեւ ազատութիւնը—պետութեան օրէնք գաւանող՝ անվախ քարոզչի: Մեր՝ գերմանական ազատութիւնը նրան է պարտական իր յաղթութիւններով, և խոնարհւում է նրա առաջ: Մեզ հարկաւոր էին ոչ միայն Մոնտեսկիէօյի սատիրան և Վուտերի հեգնութիւնը, այլ և Ռուսոյի արմատական մըտքերի շէնքն ու յեղափոխութեան հսկայական ուրուականը, որպէսզի մենք թողնէինք մեր խաղաղ առանձնասենիակները և յանդինէնք զուրս գալ փողոց ու խանուել քաղաքական ընթացիկ անցքերին: Մեզ հարկաւոր էր մի առաջնորդ, որ վառէր ազատութեան կրակը սուրբ տաճարի վրայ: Եւ այդ առաջնորդը հղաւ Շէլլերը: Նրա Տէլլը ազատութեան հրովարտակն էր: Եւ բնական էր, որ Տէլլի ներկայացումը Բերլինում արգելեցին—մի շքանշան, որ կնքեց մեր բանաստեղծի ճակատը ազատութեան դրոշմով:

Շիլլերը 19. որդ գարու մարդ էր: Այս գարու քաղաքական տեսնենցների, նրա ազգային և ազատարար շարժումների չահը բռնած ունէր իր ձեռքում: Եւ նա միշտ կը մնայ մեր քաղաքական ամենամեծ առաջնորդներից մէկը, պատմական ողու և քաղաքական տրամադրութեան քարոզիչն ու առաջնորդը: Բայց ի հարկէ, այդ բոլորը ստեղծագործող բանաստեղծին երբեմն էլ ֆսասում էր: Կամքի հսկայական ոյժը, որ արտայայտում է նրա ամեն մի տողում, երբեմն մտցնում էր նրա բանաստեղծութեան մէջ հոետորական գծեր: Այդ իսկ պատճառով էլ նա մեր ամենամեծ բանաստեղծը չէ, բայց ամենամեծ գաստիարակն է. նա մեր ժողովրդի յատուկ, դիտող աչքը չէ, բայց նրա ամենասիրելի հեղինակն է. նա Գեօթէի պէս մեծ առաքեալ չէ, բայց ամենից հրապուրիչ հոետորն է—ինչպէս հին իսրայէլի ժամանակ եղել են մեծ մարգարէները:

Գերմ. թարգ. Մ. Ղարաբէկեան

# Օ Բ Ե Ր Լ Ե Ն Ե Ր Ը

Վ է Պ

Օրեն: Ռազմէնի

Իր որդու ներս մտնելը տեսնելով՝ նա երեսը դարձրել էր դէպի այն պատուհանը՝ որ նայում էր պարկի վրայ, խաչաձեռն էր սրունքները, և աջ արմուկով յենուել էր զրասեղանին։ Նա հետաքրքրութեամբ, ժայիտով ընսում էր այն մեծ, սիրուն և նրբամարմին տղամարդը, իր որդին, որ պատրաստում էր նստել իր դիմաց։ Տեսնելով նրան թիկնաթոռի մէջ ընկողմանած և ժայտալիս իր սեփական ժայիրն ծիծաղով, զննելով այս լիքը, երկու թուխ ծնօտամօրուսով շրջանակուած դէմքը, և աջ, դէպի վեր բարձրացած ձեռքի շարժումը, որով բռնում էր գլուխը և խաղում էր ակնոցի կապի հետ, այս բոլորից շատ հեշտ էր հասկանալ, որ պ. Ժողէֆ Օրերլէին դատաւորի տեղ ընդունողները սխալում էին։ Բայց, աչքերը՝ յորդ լոյսի պատճառով մի փոքր քթթած՝ շատ կենդանի և շատ խստահայեաց էին և ցոյց էին տալիս, որ նրանց տէրը գործողութեան մարդ միայն կարող էր լինել։ Նրանք հակապատկեր էին կազմում շրթների մերենական ժայիտի հետ։ Դիտական, աշխարհիկ կամ հայրական ոչ մի հետաքրքրութիւն չէին մատնում։ Նրանք պարզապէս մի ճանապարհ էին որոնում, ինչպէս նաև վարի աչքերը՝ կարողանալ անցնելու համար։ Հազիւ պ. Օրերլէ հարցրել էր. «ի՞նչ ունես ինձ ասելու» որ նա պատասխանէց.

— Այս առաւօտ մօրդ հետ խօսել ես։

— Ո՞չ

— Հիւսիէննի՞ հետ։

— Ո՞չ էլ նրա հետ. սենեակիցս հէնց նոր եմ գուրս գալիս։

— Աւելի լաւ. Պէտք է որ մենք՝ երկուսս միասին մեր-

\*) Տես «Մուլճ» №. 4

ծրագիրը կազմինք, առանց ուրիշների միջամտութեան... Ես թոյլ տուի որ դու վերադառնաս և բնակուես այստեղ, գլխաւորաբար նրա համար, որ մենք կարողանանք քո ապագայի մասին խորհնել: Նախ, հոկտեմբեր ամսում ովէտք է կատարես զինուորական ծառայութիւնս, հաստատապէս վճռել ես, այնպէս չէ.—Նա շեշտեց վերջին բառերի վրայ—և պիտի դառնաս պահեստի սպայ...

Ժան՝ անշարժ, իրանը ուղղաձիգ, հայեացքը շեշտակի, և գրաւիչ լրջութեամբն այն երիտասարդին, որ խօսում է իր ապագայի մասին, և որ իր պատասխանի մէջ դնում է այն ուրոշ ջանքն ու չափաւորութիւնը որ երիտասարդին անսովոր է, ասաց.

—Այն, հայր, այդ է իմ դիտաւորութիւնը:

Ուրեմն առաջին կէտը կարգազրուած է: Իսկ յետոյ: Դու տեսար աշխարհը: Դու ճանաչում ես այն ժողովուրդին, որի մէջ պէտք է ապրես: Դու զիտես, որ գերմանական տուենակալութեան ոէջ յաջող կերպով մուտք գործելուդ յոյսերը մի քանի ժամանակից վեր աւելացել են, որովհետեւ իմ սեփական դիրքս լաւացել է, աչքի խփող աստիճանով բարձրացել, Ալզասում:

—Գիտենմ:

—Դու զիտես նոյնպէս, որ իմ ցանկութիւնը՝ քեզ այդ ասպարէզում մտած տեսնել, երբէք չէ փոխուել, ասպարէզ, որին ես ինքս հետեած կը լինէի, եթէ հանգամանքները աւելի զօրեղ եղած չլինէին, քան իմ կամքը:

Ուստիս թէ այդ բատը նրա մէջ յանկարծ վառած լինէր կամքի ուժը, ոլ Օրերլէի աչքերը յառեցին, հրամայողական, տիրապետող, իր որդու աչքերին, ինչպէս ճանկեր, որոնք էլ չեն բաց թողնի: Նա դադարեց խաղալ իր ակնոցի հետ և արագութեամբ ասաց.

—Յո՛ վերջին նամակները ցոյց էին տալիս սակայն, որ դու վարանում ես: Պատասխանիր ինձ: Դատաւոր ալլուի դառնամս:

Ժան թեթևուէն տժգունուեց և պատասխանեց.

—Ո՛չ:

Հայրը կուացաւ դէպի առաջ, որպէս թէ պատրաստուէր վեր կենալու, և, առանց աչքերը հեռացնելու նրանից, որի բարյական կորովս էր կշռում, դատում այդ բոպէին.

—Կարչական մարդ:

—Ո՛չ էլ վարչութեան մէջ կը ծառայեմ: Պաշտօնական ոչ մի գործ:

—Ապա քո իրաւաբանական ուսմնէնքը:

—Աւելորդ է:

—Որովհնեամ:

—Որովհնեամ, ասաց երիտասարդը ջանալով իր ձայնը խելօքացնել, ես գերմանական ողի չունիմ: Պ. Օբերլէ այդպիսի պատասխանի չէր սպասում: Դա նրա դէմ, մի պարաւէր: Նա յանկարծ վեր ցաւըքց տեղից, և, բնազդաբար նայեց դէպի արհեստանոց՝ վստահ լինելու համար, որ նրանց լսող կամ հեռուից այդ խօսքերի իմաստը գուշակող չկմր: Նա տեսաւ որ բազմաթիւ բանուորների հայեացքը ուղղուած էր դէպի իրանց. Նրանք կարծում էին որ վարպետը նայում է իրանց կողմը հոկելու համար իրանց աշխատանքի վրայ, և շուտով խոնարհեցրին իրանց աշքերը: Պ. Օբերլէ մօտեցաւ իր որդուն: Բուռն զայրոյթով լեցուած էր: Բայց հասկացաւ որ չպէտք էր իր զայրոյթը մատնել: Վախենալով որ ձեռները իր յուզումը չյայտնեն, նա բռնեց իր նստած թիկնաթուի երկու բազուկներից, և քիչ առաջուայ նման կռացած՝ այժմ սկսեց ոտքից մինչև զլուխ, իր դիրքի, իր հազուստի և իր կերպարանքի մէջ ընսել այս երիտասարդին, որ սառնարիւնով այնպիսի մտքեր էր արաւայայտում, որոնք հօր վարձունքի դէմ արձակուած դատապարտութեան վճռի շատ նման էին: Մի բոպէ լոելուց յետոյ, խեղդուկ ձայնով հարցրեց.

—Ո՞վ հանեց քեզ ինձ դէմ: Մայրդ:

—Ինչու համար մայրս, ոչ որ, պատասխանեց աշխուժով Ժան Օբերլէ: Ես ձեզ դէմ ոչինչ չունեմ: Ինչու իմ միտքն այդպէս էր բացատրում: Ես սառւմ եմ գերմանական ողի չեմ կրում իմ մէջ: Դա մի երկար բազդատութեան արդիւնք է, ուրիշ ոչինչ:

Պ. Ժողէֆ Օբերլէ տեսաւ, որ շատ էր բացուել: Նա իր անկեղծութեան սանձը քաշեց, և, այն սառը հեգնութեամբ, որի շնորհիւ նա թագցնում էր իր իսկական զգացումները.

—Թանի որ գու հրաժարում ես այն ասպարէկից, որի համար քեզ պատրաստել էի, ուրեմն դու քեզ համար մի ուրիշը գտնել ես:

—Անկասկած, միայն ձեր հաւանութեամբ:

—Ո՞րը:

—Չեր ասպարէզը: Սխալ չհասկանար ասածու ես ապրեցի առանց կուռի, տասը տարի շարունակ, բացառապէս գերմանական մի միջավայրում: Ես գիտեմ թէ դա որքան թանգ արժեց ինձ համար: Դուք ինձ հարցնում էր իմ փորձառութեան արդիւնքի մասին. լաւ, լսեցէք. ինձ թւում է որ իմ նկարագիրը բաւական ճկուն, եթէ կամենում էք, բաւական բարեհամբոյր չէ, որպէսզի աւելիին յանձնառու լինեմ և մի

գերմանացի պաշտօնեայ դառնամ: Ես վստահ եմ որ ամեն ինչ չպիտի բմբանեմ միշտ և երբեմն անհնապանդ պիտի լինեմ: Իմ զգին անդառնալի է: Խոկ, ընդհակառակը, ես սիրում եմ ձեր ճարտարարուեստը, ինդուստրին:

—Դու երեակայում ես որ մի զործարանատէր անկախ է:

—Ո՛չ, բայց աւելի քան ուրիշները: Ես իրաւարանութեան հետևեցայ, որպէսզի առանց խորհրդածութեան, առանց ըննութեան չմերժեմ այն ճանապարհը, որ դուք ինձ ցոյց էիք տալիս: Բայց ես օգտուեցի այն ճանապարհորդութիւններից, որ, ամեն աարի, դուք ինձ... առաջարկում էիք...

—Կարող ես ասել, որ ստիպում էի քեզ կատարել այդ ճանապարհորդութիւնները: Ճշմարտութիւնն այդ է: և ես քեզ կը բացատրեմ թէ ինչո՞ւ:

—Ես նրանցից օգտուեցի ուսումնասիրելու համար անտառային ինդուստրին այն բոլոր վայրերում, ուր ես այդ կարողացաց, Դերմանխայում, Աւստրիայում, Կովկասում: Մի կարծէք որ այդ հարցում բոլորովին անփորձ եմ: Եւ ես ցանկանում եմ ապրել Ալշեյմում: Թոյլ կը տա՞ք:

Հայրը նախ չպատասխանեց: Նա աշխատում էր իր որդու վրայ զործ զնել այն փորձասութիւնը, որին յօժարակամ ենթարկում էր այն մարդկանց, որոնք գալիս էին իր մօտ մի կարեռ գործի մասին խօսելու: Նա լուսում էր այն բոլէին, երբ իրանից պահանջում էին վճռական խօսքեր: Եթէ խօսակիցը՝ շփոթուած՝ երեսը շուր տար խուսափելու համար այն հայեացքից, որով նա կարծես ուզում էր ճնշել, կամ եթէ նորից մտնէր բացատրութիւնների մէջ, պ. Ժողէֆ Օբերլէ նրան դասում էր աըկարակամ մարդկանց շարքը, իրանից ստոր կանգնած մարդկանց շարքը: Ժան իր հօր հայեացքից խոյս չտուեց, և բերանն անգամ բաց չարեց: Պ. Օբերլէ այդ բանի համար գաղտնապէս ուրախացաւ, իրան շոյուած զգաց: Հասկացաւ, որ գտնւում է մի կատարելապէս կազմուած մարդու գիմաց, մի վճռական և հաւանականաբար անյողդողի կամքի առաջ: Նա այդ կարգի մարդկանց ճանաչում էր իր շուրջը: Գաղտնապէս գնահատում էր նրանց ոգու անկախութիւնը և երկնչում էր նրանցից: Կոմքինացիայի և կաղմակերպութեան իր բնական արագութեամբ, նա իր մտքի առաջ պատկերացրեց շատ յստակ կերպով Ալշեյմի ինդուստրին, որը վարում էր ժաննը, և ժանի հայրը, Ժողէֆ Օբերլէ, բազմել էր Շայխստագում, ընդունուած՝ փինանսիստների, վարչական անձերի և գերմանական աշխարհի հղօրների շարքում: Նա այն մարդկանցից էր, որոնք գիտեն մինչև անգամ իրանց յուսախարութիւններից օգտուել, ինչպէս օգտում

Են զործարանի թափթիռուքներից։ Այդ նոր պատկերը նրան խանդաղատեցրեց։ Փոխանակ զայրանալու, թողեց որ իր հեգնական դէմքը իր նախկին հանդարտութիւնն ստանայ։ Զեռի մի շարժումով ցոյց տուեց անսահման զործարանը, —ուր, անդադար, այնպիսի խուլ զղբութով, որ թեթեօրէն ցնցում էր կրկնակի ապակիները, պաղաստէ հատու զործիքները մըտնում էին վոժերի հինաւուրց ծառերի ոիրաւ, —և սիրակիր կըշտամբանքի շեշտառվ ասայ,

—Թոնդ այզպէմ լինի, զաւակս։ Դա պիտի ուրախացնէ իմ հօրը, քո մօրն ու Ռւլրիվին։ Ես ընդունում եմ որ գու ինձ մեղաւոր գտնես, հանդէս նրանց՝ մի կէտում, բայց միայն մի կէտում։ Մի քանի տարի առաջ, ես քեզ թոյլ չէի տայ որ գու հրաժարուես այն ասպարիզից, որը ինձ թւում էր լաւագոյնը քեզ համար, և որը մեզ պաշտպանելու էր այն գժուարութիւնների դէմ, որոնց չափն ու աստիճանը անկարող ես որոշելու։ Այդ ժամանակ գու չէիր կարող ինքդ դատել։ Եւ, բայցի այդ, ես իմ ճարտարարուեսաւը, իմ գիրը շատ խախուտ և շատ վտանգաւոր էի համարում, որպէսզի նրանց քեզ փոխանցէի։ Այժմ ամեն ինչ փոխուած է։ Իմ զործերը ընդարձակուել են։ Կեանը ինձ համար տանելի է, ինչպէս և ձեզ բոլորիդ համար, շնորհիւ այնպիսի ջան քերի և գուցէ զոհողութիւնների, որոնց համար, ինձ շրջապատողները՝ բաւականաչափ երաթուապարտ չեն զգում իրանց։ Այսօր, ընդունում եմ, որ այս արհեստը ունի ապագայ։ Ռւզում ես իմ յաջորդը լինել։ Լաւ, իսկոյն և եթ քո առաջ բաց կանեմ գուռը։ Մինչեւ զինուորագրութիւնի դեռ հօթ ամիս կայ, դու կաշխատես այդ ժամանակամիջոցում եփուել զործի մէջ, փողձառութիւն ստանալ։ Այն, համաձայն եմ, բայց. մի պայմանով։

—Ի՞նչ պայմանով։

—Թաղաքականութեամբ չպիտի զբաղուես։

—Արգէն ես այդ բանի համար ախորժակ էլ չունեմ։

—Ա՛, ներողութիւն, շարունակեց պ. Օրերլէ տաքանալով. պէտք է որ մենք միմեանց լաւ հասկանանք, այնպէս չէ։ Ես չեմ կարծում որ չունենաս դու քո քաղաքական որոշ ձգտումը. գուցէ դեռ տարիքդ չէ ներում, կամ խառնուածքդ։ Ես այդ բանը քեզ չեմ արգելում... Ես արդելում եմ քեզ ալզասական թթու ազգասիրութիւնը, շովինիզմը. Ես չեմ ուզում որ դու անդադար ամեն դէմքում կրկնես, ինչպէս ուրիշներ. «Ֆրանսիամն, ֆրանսիամն», կրես քո բաճկոնակի տակ մի եռագոյն գօտի, նմանուես Ստրազբուրգի ալզասցի ուսանողներին, որ, միմեանց ճանաչելու և միմեանց գաշնակցելու համար, շուացնում են, ոստիկանութեան ականջի առաջ Մարտէյեէզի ե-

դանակը. «Կազմեցէք ձեր գնդերը:» Սիրելիս, ես չեմ ուզում գործողութեան այդ փոքրիկ ձևերը, այդ փոքրիկ ընդվզումները և նրանց մեծ վտանդները: Դրանք այնպիսի ցոյցեր են, որ մեզ արգելուած են, մեզ՝ գերմանական երկրում ինդուստրիով պարապողներիս: Նրանք հակասում են մեր աշխատանքին, մեր շահերին, որովհետեւ ֆրանսիացիները չեն մեր յաճախորդները: Ֆրանսիան շատ հեռու է, սիրելիս, աւելի քան 200 մղոնով հեռու մեղանից, դոնէ մարդ այդպէս է կարծում, զատելով այն քիչ աղմուկից, քիչ շարժումից ու փողից, որ մանում են այստեղ: Մի մոռանայ այս: Դու, քո կամքովկ, գերմանացի գործարանատէր ես դառնում, եթէ գերմանացիներից շուռ տաս երեսդ, դու կորած ես: Մտածիր ինչ որ ուզում ես քո երկրի պատմութեան, անցեալի և ներկայի մասին: Դրանց մասին քո կարծիքներն ինձ չեն հետաքրքրում: Ես չեմ ուզում նոյնիսկ փորձել՝ զուշակելու, թէ նրանք ի՞նչ ձեւ, ի՞նչ դոյն կարող են ունենալ այնպիսի մի յետամնաց միջավայրում, որպիսին է մեր Ալշէմը. բայց ի՞նչ որ էլ խորհես, իմացիր պատրաստել, կամ պատրաստիր քո ապագան այլուր: Ժանի ոլորուած բեների տակ մի ժպիտ ուրուազծուեց, մինչդեռ նրա դէմքի վերին մասը մնում էր լուրջ և անյոզդողդ: Նա տաց:

—Վասահ եմ, հետաքրքիր էք իմանալու, թէ ի՞նչ եմ խորհում ֆրանսիայի մասին:

—Լաւ, ասա:

—Ես նրան սիրում եմ:

—Դու նրան չես ճանաչում:

—Ես ուշազրութեամբ կարգացի նրա պատմութիւնն ու գրականութիւնը, և համեմատեցի գերմանակամար հետ. ահա բոլորը Այդ արդէն բաւական է, երբ մանաւանդ մարդ նոյն ցեղին է պատկանում, որ մնացեալը գուշակելով իմանայ: Ուրիշ կերպ նրան չեմ ճանաչում, ճիշտ է. դուք հարկաւոր նախազգութիւնները ձեռք առել էիք...

—Դու ուղիղ ես ասում, թէպէտե քո խօսքերի մէջ թագնուած լինին գուցէ մի վիրաւորիչ դիտում...

—Երբէք:

—Այս, ես հարկաւոր նախազգուշութիւնները ձեռք առի, որպէսզի դուք, դու և քոյրդ, ազագրուէիք աղիտարեր ընդպիմազրութեան այն ոգուց, որ ձեր կեանքը պէտք է ցամաքեցնէր առաջին օրերից իսկ, որ ձեզ պիտի դարձնէր դժգոհներ, անկարողներ, խեղճեր, այն կարգի մարդիկ, որոնք շատ բազմաթիւ են Ալղասում և որոնք ոչ մի ծառայութիւն չեն մատուցանում ոչ Ֆրանսիայի, ոչ Ալղասի, ոչ իրանց՝ Գերմանիա-

յին մատակարարելով քէնի, բարկութեան շարունակական պատճուներ: Ես գոհ եմ, որ դու ինձ ստիպեցիր բացատրութիւն տալ գաստիարակութեան այն սիստէմի մասին, որը միմիւ այն են ցանկացայ քեզ համար: Ես ուղեցի քեզ ինայել այն դառն փորձը, որ ես՝ ինքս ճանաչեցի, և որի մասին թիչ առաջ խօսեցայ. չհասնել իր նպատակին: Կար և մի ուրիշ պատճառ: Ա՛հ, գիտեմ որ այս հարցի վերաբերմամբ դէպի ինձ բոլորովին արդար չպիտի լինեն: Եւ այդ պատճառով էլ ստիպուած եմ ես ինձ գովել եմ սեփական ընտանիքում: Զաւակս, անկարելի է ֆրանսիայում մեծացած լինել, իր ծագումով, իր բոլոր կապերով ֆրանսիային պատկանել և չսիրել ֆրանսիական կուլտուրան...

Մի ըսպէ խօսքն ընդհատեց, տեսնելու համար թէ թնչ տպաւորութիւն թողել էր այդ նախադասութիւնը. ոչինչ չընշմարեց, ոչ իսկ մի սարսու իր որդու անտարբեր դէմքի վըրայ. Ժանը, անկասկած, շատ ուժեղ խառնուածքի, բնաւորութեան տէր մարդ էր: Իրան արդարացնելու անողոք պէտք հարկապրեց պ. Օրերէին դարձեալ շարունակել խօսքը.

—Դու գիտես, որ այսուեղ ֆրանսիական լեզուին խէթ աչքով են նայում, իմ սիրելի ժամանակակից դուստացար գրական, պատմական այնպիսի գաստիարակութիւնն, որը չպիտի ստանայիր Ստրավորութում: Ես կարող եղայ պատուիրել, առանց քեզ քո ուսուցիչների աշքին կասկածելի դարձնելու, որ քեզ ֆրանսուերէնի յաւելուածական դասեր աւանդեն: Ալզասում, դու կամ ես դրա համար պիտի տուժէինք: Ահա, այն պատճառները, որով զեկավարուել եմ: Փորձը ցոյց կը տայ թէ սխալնել եմ արդեօք: Յամենայն դէպս, ինչ որ արի, արի բարեմտութեամբ և քո օգտի համար:

—Միրելի հայր, ասաց ժամն, ես իրաւունք չունիմ ձեր արածը գատելու: Ինչ որ կարող եմ ասել, այն է, որ չնորհիւ իմ ստացած գաստիարակութեան, եթէ ես չեմ ախորժում կամ անպայման չեմ հիանում գերմանական քաղաքակըրթութեամբ, գոնէ վարժուեցի գերմանացիների հետ ապրել: Եւ ես համոզուած եմ, որ կարող կը լինեմ նրանց հետ ապրել Ալզասում:

Հայրը յօնքերը ցնցեց, կարծես ասելու համար. «Ի՞ է ի՞ մանում»:

—Իմ գաղափարները, մինչև այժմ, ոչ մի թշնամի չեն յարուցիլ ինձ դէմ Գերմանիայում. և ինձ թւում է, որ կարելի է վարել մի սղոցարան, գրաւուած երկըում, այն աշխարհայեցքներով, որոնք ձեզ պարզեցի:

— Յոյս ունիմ, չոր պատասխանեց պ. Օբերլէ:

— Ռւրեմն դուք ինձ ընդունո՞ւմ էք, Զեր գործի մէջ մտած կարո՞ղ եմ համարուել:

Իբրև միակ պատասխան, պ. Օբերլէ մատը դրեց մի էլքրտրական կոճակի վրայ:

Մի մարդ բարձրացաւ այն աստիճաններից, որոնք առաջնորդում էին մեքենաների սրահից պ. Օբերլէի գտնուած դիտարանը, բաց արեց հաշուն դուռը, և, կիսարաց գոնից երեցաւ մի մարդ՝ խարսხաց, քառակուսի մօրուքով, երկար մազերով և երկու ակի նման կապոյտ աչքերով:

— Դիյեօմ, ասաց վարպետը գերմաններէն, որդուս պիտի ծանօթացնէք սղոցարանի գործի հետ և նրան պիտի բացատրէք վեց ամսից ի վեր մեր կատարած բոլոր գնումները: Վաղուածնից սկսած նա ձեզ կընկերակցի այն այցելութիւնների ժամանակ, որ դուք պիտի տաք մեր հաշուին կտրուող անտառները:

Դուռը վերստին փակուեց: Երիտասարդ, խանդավառ, նրբահասակ ժամ Օբերլէն վեր էր կացել տեղից: Զեռքը մեկնեց նրան և հրճուանքից դժգունած՝ ասաց:

— Ես նորից ալզասիցի դարձայ, Ո՞րքան շնորհակալ եմ:

Հայրը որդու ձեռքը սեղմեց մի քիչ կեղծ սրտազիղումով: Մտածում էր. «Սա, ճիշտ որ մօր պատկերն է: Ես սրա մէջ գտնում եմ Մոնիկի ոգին, խօսքերը, խանդավառութիւնը» Բարձրածայն ասաց:

— Տեսնո՞ւմ ես, զաւակս, որ ես միայն մի նպատակ ունիմ—բաղաւորացնել ձեզ: Միշտ ունիցել եմ այդ նպատակը: Ես համաձայն եմ որ դու մտնես մի այլ ասպարէզ, քան այն՝ որ երազել էի քեզ համար: Զանա, այժմ, ըմբռնել մեր դրութիւնը, ինչպէս ըմբռնում է քո քոյրը...»

Ժամ դուրս եկաւ, և նրա հայրը, մի քանի րոպէից յետոյ, նոյնպէս: Բայց մինչդեռ պ. Ֆողէֆ Օբերլէ քայլերն ուղղում էր դէպի տուն, շտապելով տեսնել իր աղջկան, իր միակ խորհրդակցին, և նրան սլատմելու ժամի հետ ունեցած խօսակցութիւնը, այս վերջինը շինուածնիւթերի սլահեստարանի մէջ լից անցնելով՝ խոտորուեց գէպի աջ, անցկացաւ գոների առաջող և անստառի ճանապարհը ձեռք առաւ: Բայց, որովհետեւ ճաշի ժամը մօտ էր, շատ հեռու չգնաց: Զառիվեր ճանապարհով բարձրացաւ և հասաւ Ալզէյմի այգեստանները, որ ձգւում էին հմուլաստաններից \*) (houblonnière) վերև, որոնք դեռ ևս մերկ դաշտեր էին, որոնց վրայ, այս ու այն կողմ:

\*) Բոյս՝ որով գարեջուր են պատրաստում:

ցցւում էին միացած, խուրձեր կազմող ձողեր: Նրա հոգին տօնի մէջ էր: Հասաւ մի այգու մուտքի առաջ, որը ճանաչում էր երեխայութեան հասակից, և ուր այգեգութ էր արել հեռու անցեալում. բարձրացաւ մի բլրակի լանջին, որը տիրապետում էր ճանապարհի, և վերից վար կարգով շարուած որթերի վրայ: Հակառակ տիսուր լոյսին, հակառակ ամպերին և հողմին, գեղեցիկ, զմայլիօրէն գեղեցիկ դուռ իր Ալզասը, որ փոքրիկ զառիվայրերով իջնում և քիչ յետոյ միապալաղ դաշտի նման տարածում էր իր առաջ, խոտի լայն շերտերով և հերկի գօտիներով, որոնց միջից գիւղերը, գէս ու գէն, բարձրացնում էին իրանց կղմինտբեայ տանիքներն ու զանգակատան կատարները: Կլոր, առանձնացած, ձմեռուայ պատճառով սպիտակած ծառեր՝ չոր ելքանների (chardon) էին նմանում: Մի քանի ագռաններ՝ հիւսիսի քամուց նպաստաւորուած՝ ճախրում էին և որոնում էին նոր սերմանուող գաշտեր: Ժան բարձրացրեց ձեռքերն ու երկարեց, որպէս թէ գրկելու համար այն տարածութիւնը, որ ձգւում էր Օբերնէից սկսած, որը նըշմարում էր ձախակողմում, հովտի վերջին ելեկջներում, մինչև Բարը, աջակողմում, կիսով թաղուած՝ լեռնից իջնող եղենների կոյտի տակ:

—Միրում եմ քեզ, Ալզաս, և դարձեալ գալիս եմ դէպի քեզ, բացազանչեց:

Նայեց Ալզէյմ գիւղին, կարմիր քարից շինուած այն անին, որ իր գլխից էլ մի քիչ վեր էր բարձրանում, և որը իրանն էր. յետոյ աչքերը յառեց գործաւորների և գիւղացիների բնակարանների կոյտի միւս ծայրին, թաւուտների մի տեսակ հըրւանդասի վրայ, որը երկարում էր լիրկ դաշտի մէջ: Դա մի ծառուղի էր, որ վերջանում էր տերևաթափ, մոխրագոյն ծառերի մի խոշոր պուրակով, որոնց մէջտեղից նշմարում էին մի տանիքի կողերը: Ժան աչքերը երկար ժամանակ սեեսեց այդ կիսով չափ թագնուած բնակարանի վրայ և առաց.

«Բարե, ալզասունի: Ո՞վ գիտէ, գուցէ կարողանամ քեզ սիրել: Ո՞րքան երջանկութիւն, ապրել քեզ հետ այստեղ:»

Զանգակը հնչեց, Օբերլէներին ճաշի հրաւիրելու համար: Նրա զօղանջը խուլ էր ու խեղղուկ՝ և ցոյց էր տալիս աղատ տարածութեան անհունութիւնը, ուր նոււաղում էր ամեն աղմուկը և հողմի ուժքնութիւնը՝ որ նրան թացնում էր Ալզասի հողերի վրայից հետու, շատ հեռու:

Ժան շտապեց վերադառնալ:

(Կը շաբունակուի)

## ՔՆՆԸԳԱՏԱՐԱԿԻՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՍՑՈՒԹԻՒՆ

Հայոց եկեղեցական իրաւունք, ա. գիրք, ներածութիւն և աղբիւրներ.  
աշխատասիրութիւն Ն. Վ. Մելիք Թանգեանի:

Հայ եկեղեցու կանոնական իրաւունքի գիտութիւնը ցարդ  
անմշակ և չուսումնասիրուած մի անյայտութիւն է ու կարօտ  
հիմաւոր և լուրջ հետազօտութիւնների: Ներկայիս մի շարք  
ինդիրներ՝ հոգևոր վարչական կազմակերպութեան յարակից,  
իրանց պատմական և իրաւական լուսարանութիւնը վաղուց  
արդէն պիտի գտած լինէին, բայց, ոչ այնքան հետաքրքրու-  
թեան, որքան հետազօտների բացակայութեան պատճառով՝  
մնում էին և մնում էն չուսումնասիրուած: Ուստի և, իրաքան-  
չիր աշխատութիւն, որ հայ եկեղ. իրաւունքի գիտութեա-  
նը նուիրուած կը լինի, պէտք է ողջունել ուրախութեամբ:

Նախ քան թէ մէկը կը սկսէր այդ իրաւունքի ուսումնա-  
սիրութիւնը, նա նախ պիտի ձեռքի տակ ունենար այն բոլոր  
նիւթը, որ տուել է ուսումնասիրելի եկեղեցու պատմական  
կեանքը: Առանց այդ նիւթերի, որևէ ուսումնասիրութիւն ան-  
հնար է: Սա մի անհրաժեշտ պահանջէ, որով և զեկավարուել  
է Ն. Վ. Մելիք Թանգեանը՝ իր աշխատութեան ա. գրքում զե-  
տեղելով մեր եկեղեցու իրաւունքի աղբիւրները: Ն. Վ. Մելիք  
Թանգեան խոստանում է երկրորդ հատարում տալ Հ. Եկ. ի-  
րաւունքի տեսութիւնը, իսկ երրորդում՝ գործադրուող կանոն-  
ները:

Մեր եկեղեցու իրաւունքի ուսումնասիրութեան մէջ ա-  
ռաջնակարգ նշանակութիւն ունին նրա «իրաւունքի աղբիւր-  
ները»: Արդ, որոնք են այն հիմնարկութիւնները, որ կանոնա-  
գիր ֆունկցիա ունին հայ եկեղեցու համար: Այս էական  
հարցին պատասխանելիս «Հայոց եկեղ, իր.» զրքի հեղինակը  
թուելով մի շարք աղբիւրներ՝ գալիս հաւանում է «Ազգային  
աղբիւրների» բաժնում նաև ս. էջմիածնի Սիսոդի կարգադրու-  
թիւններին և կաթողիկոսներին: Ն. Վ. Մելիք-Թանգեանի հաս-  
կացողութեամբ՝ հայ եկեղեցու (Խուսաստանի) համար էջմիած-

նի Սինօդը կանոնադիր իրաւունք ունի: Աւելնորդ է նոյնինկ ասել, որ Սինօդը ոռւս պետական հիմնարկութիւն է, և լինելով մի այդպիսի հիմնարկութիւններին, որ օրէնսդիր իրաւունքից զուրկ էն. արդ, եթէ Սինօդը օրէնսդիր ֆունկցիա չունի, հապա ինչպէս կարող է օրէնքներ սահմանել և իրաւունքի աղբիւրներ լինել: Իսկ յատկապէս զարով հայոց եկեղեցուն, կ'ասենք, որ նրա իրաւունքի տեսակէտից, այդ հիմնարկութիւնը մի օսար, խորթ ատեան է: Երբ մի հեղինակ այդպիսի ծանր սխալի մէջ է ընկնում, դա ցոյց է տալիս, որ դա նախ բաւական չափով իրաւաբանական պատրաստութիւն և հանկացողութիւն չունի, և երկրորդ՝ նրա միտքը ամեններն կանգ չէ ասել առաջ բերած այդ խնդրի վրայ, հակառակ դէպքում նա էջմիածնի Սինօդին «Ազգային աղբիւրների» շարժում ոչ միայն չէր դասի այլև առհասարակ «իրաւունքի աղբիւր» չէր ձանաչի: Հայ եկեղեցու համար իրաւունքի աղբիւր չեն կարող լինել նաև Ամենայն Հայոց Հայրապետները, որովհետեւ նրանց գերն ու իրաւունքը ազգային եկեղեցու կանոնների և օրէնքների նկատմամբ՝ բարձրագոյն հսկողի, պահպանողի, բացատրողմիկողի և գործադրել տուողի գերն ու իրաւունքն է: Հայ եկեղեցու համար իրաւունքի աղբիւր չի կարող լինել ոչ միայն պոլուծենիան, այլև ազգային Սահմանադրութիւնը, նախ, որ նրանք գործադրուող օրէնքներ են, երկրորդ առհասարակ իրաւունքի աղբիւր կարող է լինել այն հիմնարկութիւնը որ հրատարակել է այդ օրէնքները այս գէպքերում Ռուսաց պետական խորհուրդը և Պօլսի Հայոց Ազգային ժողովը:

Հարկաւո՞ր է ասել, որ Հայ եկեղեցու համար իրաւունքի աղբիւր կարող է լինել միայն հայ եկեղեցին: Գալով Ազգային ժողովին, կարող ենք ասել, որ նա եթէ իրաւատէր է եկեղեցու համար պարտադիր կանոններ սահմանելու գործում, այդ կանոնները պարտադիր կարող են լինել միայն նրա—այդ ժողովի իրաւասութեան շրջանում, և ոչ թէ ամբողջ հայ եկեղեցու համար: Ասել է, նա, այսպէս ասած, թեմական նշանակութիւն կարող է ունենալ և ունի, իրը մի թեմի կամ մի քանի թեմերի համար և նրանց կողմից սահմանուած: Սրանք էլ զալիս են կրկին կերպով ապացուցանելու, որ հեղինակի պատրաստութիւնը «իրաւունքի աղբիւր» գիտական տերմինի լմբընումի համար շնոր թոյլ է:

Մեր եկեղեցու իրաւունքի բաղմաթիւ խնդիրներ նախ պիտի պատմարանօրէն ուսումնասուրտիւն և լուծուին՝ համար

Նիւթերը ենթարկելով բանասիրական լուրջ ըննութեան։ Հէսց օրէնսդիր ժողովների խնդիրը, մի երկու հատուկտոր, երբեմն նոյնիուկ թէական կասկածելի փաստերի հիման վրայ կանգնել և իր մի գիտական թէզիս յայտարարել, որ հայ աղդի բոլոր ներկայացուցիչների ժողովն է միայն օրէնսդիր իրաւունք ու նեղիլ եկեղեցու համար, կը լինէր եթէ ոչ սիալ գոնէ անհիմն ու կը ձգէր այնպիսի հակասութիւնների մէջ, ինչպէս այդ եղել է Մելիք-Թանգեանի զրոյում։ Նրա 311 երեսում կարդում ենք «եթէ տիեզերական երեք ժողովները իր ժամանակին չեն ընդունուել աղգային ժողով, միմիայն ընդունուել են կաթուդիկոսների ու թագաւորների որոշմամբ, արդեօք այդքանը պիտի բաւարար համարուի, թէ անհրաժեշտ է որ աղգային ժողովի սանկցիայով վաւերացնուի այդ ընդունելութիւնը։—Մեր եկեղեցիական իրաւունքի յետակայ պատմութիւնը ապացուցանում է, որ առանց աղգային ժողովի համաձայնութեան ոչ մի ժողովի կարգադրութիւն կամոնական և պարտաւորական չէ, մինչեւ անգամ երբ կաթուդիկոսը, թագաւորը և նախարարների մի մասը ընդունել և հրատարակել են կարգադրութիւններ, ամբողջ աղգը մերժել է և չի ընդունել (կաթուդիկաց միութեան ժամանակ) զրանց հրամանը», բայց աւելի մաղալուն շարունակութիւնն է, «և ընդհակառակ պատահել է որ միմիայն կաթուդիկոսը ընդունել է մի ժողովի կամոն, կամ ինը մի կարգադրութիւն է արել աղգը միաձայն առանց տրատոնջի ընդունել է. օր. Լուսաւորչի, և Սահակի, Շնորհալու և այլոց կանոնները։ Աւբեմն խնդիրը յանդում է այն կէտին, թէ որոշ կարգադրութեան ժողովով լինի թէ կաթուդիկոսների կոնդակներով, յենուում է արդեօք Հայոց աղդի աւանդական սրբագրութուած սովորութիւնների վրայ, բղլանման է ժողովրդական դարաւոր հայեացքներից և ներկայ զրութեան անհրաժեշտ կարիքներից՝ թէ ոչ։ Եթէ աղգը կաթուդիկոսների կոնդակը համարում է աղգային եկեղեցու ոգու համաձայն կարգադրութիւն, ընդունում է լուռ ու մունջ, և այդ ընդունելութեամբ վաւերացնում է կաթուդիկոսի կարգադրութիւնը իրը աղգային ժողովի լուելայն վճիռ։»

Մենք զիտամամը այսպիսի երկար հատուած ըերինք, որ պարզ կերպով ցոյց տանք հեղինակի մտքի երերուն, անհաստատ վիճակի մասին. մի վիճակ, որ պարզ կերպով ցոյց է տալիս թէ նա այդ լուրջ խնդրի վրայ առնուազն ամենախն կանդ չէ առել, եթէ աւելի խիստն առելու չինինք։ Հեղինակի այդ լուսարանութիւնից երեսում է, որ հայ եկեղեցին որոշ պարզ, յայտնի ճանաչուած մի անյողդողդ սկզբունք չէ ունեցել օրէնսդրական իրաւասութեան խնդրի համար, և որ հայ

Ժողովուրդը «իբրև ազգային ժողովի լոելեայն վճիռ» էր ըստունում ամեն մի կաթողիկոսի կամ սուրբ հօր վճիռ, կարգադրութիւն և այն, եթէ գտնում էր, որ ասածները հաւանիլի և «ժողովրդական եկեղեցու ոգու համաձայն» են:

Ն. Վ. Մելիք Թանգեանը մի կողմ թաղնելով ուսումնասիրութիւնները, կարող էր տալ միայն հում նիւթը. որոշ մշակման ենթարկելով: Այժմ տեսնենք առաջին գրքի մէջ ամփոփած նիւթերը որևէ մշակման ենթարկութել են, թէ ոչ: Այդպիսի մի աշխատանք՝ նիւթերի այդ հրատարակութեան մէջ չենք տեսնում ամենաին, հակառակ հեղինակի 40 կանոնագիրք (23 երես) ի նկատի ունենալու ասութեան, և նոյնիսկ այդ կանոնագրքերի ԱՅՆ-ը առաջ բերելուն (67 երես): Եթէ ասած կանոնագրքերն ի նկատի է առնուած, այդ բանը պիտի երևար առաջ բերուած կանոնների ընթերցուածներից: Բայց կարող ենք վստահ կերպով ասել, որ իր առաջ բերած ԱՅՆ 52. 53. 245. 267. 451. 455—462 թուով մօտ 13 կանոնագրքեր հեղինակին համարեած թէ ամենաին պէտք չպիտի եկած լինէին, մինչդեռ յիշած Ն 750. 751. 831. 974. 1647. ձեռագրերը, որուն մէջ 751 ձեռագիրը մատենադարանի բոլոր կանոնագրքերի մէջ ամենաինն է (1368 թուին գրուած) ու ամենաընտիր ընթերցուածներ ունի, անհրաժեշտաբար պիտի յիշէր և օգտուէր: 67 երեսում իր յիշած կանոնագրքերից մի քանիսը բիւղանդական կայսրների օրէնքների ժողովածուներ են. ուստի և հեղինակի համար ամենաին պէտք չեն եկել և չեն էլ կարող դալ՝ կանոնների ստոյգ և ընտիր ընթերցուածները վերականգուելու համար, քանի որ նրանց նիւթերը տարբեր են: Այս հանգամանքը պարզ կերպով ցոյց է տալիս, որ հեղինակի համաց էջմիածնի մատենադարանի ձեռագրերը թուոցիկ կերպով են ծանօթ: Նոյն ապացուցանող փաստերի մէջ յիշենք և այն, որ ինչպէս ինքն է պնդում, թէ ձեռագրերի «ձեծամասնութեան» մէջ (67 երես) կայ կաթուղիկոսների յաջորդական ցանկը՝ որևէ լի է հիմնաւորապէս: Ձեռագրերի ստուար մեծամասնութեանը գուրկ է այդ ցանկից. և որ այդ ցանկը յատուկ մէ մի յայտնի խումբ ձեռագրերի, որոնց թիւը սակայն շատ քիչ է: Բայց ասածիս ամենալաւ ապացուցը ձեռագրերի երկու խմբի բաժանելու մէջն է: Իր խօսքելով ասած «գալով նրան, թէ 40-ից աւելի կանոնագրքերից ո՞րն եմ ի նկատի ունեցել այդ մասին ասցի, որ 3 ձեռագրերը նախատիպ եմ համարել բոլորի համար, այդ երեքից էլ մաքուր և պարզ գրուած է 761 համարը, Սինողի մէջ եղածը, 740-ը՝ թէն թերի է և 736-ը:»

Մենք, որ իրար հետ համեմատել ենք էջմիածնում (32),

Ալէքսանդրապոլի հոգ. կառավարութեան (1 հատ) և Թիֆլիսի կոռուփատորիայի (1 հատ) ձեռագիր կանոնագրքերը ազգային տեղական երկու կանոնագրութեան բնագիրը հրատարակուելու և Շահապիվանի ժողովի նախագրութեան և 13-րդ կանոնի մի կէտը ստուգութեան ենթարկելու համար, այդ բոլոր ձեռագը-րերը բաժանում ենք հինգ խմբի (Ալէքս. և Թիֆլիսի կանոնա-գրքերը առանձին խումբ չեն կազմում, այլ էջմիածնի ձեռա-գրերի որոշ խմբի են յարում): Նոյնակէս հինգ խմբի է բաժա-նում և Ս. Տիգրանիանը: Վերև առաջ բերուած ձեռագրերից Սինօդի օրինակը և 740-ը մի խմբի են. № 736-ը մի խմբի և № 761 միայնակ առանձին: Հիմնովին սխալ է հայ Մելիք-Թան-գեան, որ կարծում է նաև թէ № 761-ը մի խումբ ձեռագրից մէկն է, մինչդեռ բոլոր ձեռագրերի մէջ № 761-ը բանում է մի առանձին տեղ և որոշ կէտերում մօտենում է այն խմբին, ո-րին պատկանում է № 740 ձեռագիրը: Եթէ «Հ: Եկեղ. իրա-ւունքը զրքի հեղինակը իր առաջ բերած (67 երես) ձեռագրե-րի հետ մօտ ծանօթութիւն ունենար և նոյնիսկ աչքի անցնէր, կը տեսնէր, որ իր յիշած №№ 87, 739, 741, 742, 743 բոլո-րորին մի ինքնուրոյն խումբ են կազմում» իրանց բնորոշ կող-մերով և թիրի կանոնախմբերով: Դրա վրայ աւելացնեմ, որ Սինօդի օրինակը XVIII դարի մի տգէտ գրչի ձեռքով գրած, բազմաթիւ սխալ ընթերցուածներով մի ձեռագիր է: Բայց զուր ենք այդպիսի մանրամասնութիւնների մէջ ընկնում և լուրջ վերաբերմունք պահանջում հեղինակից, քանի որ ինքը ձեռագրերի ընտրութիւնը արել է արտաքին մի նշանով—նա ընտրել է այնպիսի ձեռագրեր, որ «մաքուր և պարզ գրուած» լինին:

Տիեզերական երեք և տեղական վեց ժողովների կանոն-ները, որոնց հայ թարգմանութիւնը կայ մեր ձեռագրերում, եթէ հարկաւոր էր համեմատութեան ենթարկել, գա պիտի յու-նարէնի հետ լինէր, և ոչ թէ սլաւոներէնի հետ, որ ինքն էլ մի թարգմանութիւն է, որ հ. Մելիք-Թագեան սխալմամբ թէ թիւրիմացութեամբ բնագիրը է հաշւում (23 երես. յունա-սլաւո-նական բնագիր), և եթէ հայ թարգմանութիւնը թիւրութիւն-ներ ունի, այդ թիւրութիւնները պէտք է լրացնել բնագրից և ոչ թէ մի ուրիշ թարգմանութիւնից: Արտաքին այդ ժողովնե-րի կանոնների թէ աշխարհաբանն է տալիս և թէ գլաբարը, որ գարձեալ բնագիր է հաշւում (254—306 երես.): Նոյն ձևով —աշխարհաբար և զրաբար—տալիս է և Առաքելոց կանոնները:

Բայց դուք կը մտածէք, որ աշխարհաբար դրուած կա-նոնները յունա-սլաւոնական (ըստ իր) բնագրի հետ համեմա-

տելուց յեաոյ «Ճիշտը համելով» են զրուած. այդպիսի բան զուր մի որոնէք, որովհետև աշխարհաբար զրուած կանոնները խեղճ համառօտութիւններ են զրաբարից, որ անփոփի՝ ձեռագրերի կոպիտ սիսալներով է հրատարակուած այդ զրբի մէջ: Իրաւաբանի յաւակնութիւններ ունեցող հ. Մելիք-Թանգեանը աշխատել է այդ կանոնները «սիրունացնել» յաւելումներ, կըրճատումներ անել ըստ իր հայեցողութեան: Իբր նմուշ բերենք մի պատահական կանոն. զիցուք առաքելուց ժ.Գ. կանոնը (128 երես): Գրաբարն ունի.—

«Եպիսկոպոսի ոչ է արժան թողուլ զիւր իշխանութիւն, և այլ վագել, թէպէտ 'ի բազմաց հարկեսցի, բայց եթէ իցն պատճառք ինչ իրաւացիք, որ զայս բռնաբարեն զնա առնել, որպէս առաւել շահել կարացեալ զնոսա որ բանդին, երկիւզածութեան բանիւ աւգտեցուցանել, և զայս ոչ ինքնէ, այլ աղաչանաւք մեծաւ»: Սլաւոներէնն ունի «Не позволитель но епископу оставлять свою епархию и въ иную переходить, если бы и отъ многихъ убѣждаемъ былъ, развѣ когда будетъ нѣкоторая вина (причина) благословная, это творить его по-нуждающая, якобы могущаго большую пользу обитающимъ тамъ принести словомъ благочестия. И сie не по своему произволу, но по суду многихъ епископовъ и по силнѣйшему убѣжденію». (Правила святыхъ Апостоль. (34—5 երեսին): Մելիք-Թանգիանի սիրունացրածն ունի. — «թոյլատրելի չ, որ եպիսկոպոսը թողնի իւր թեմը և ուրիշ թեմ զնայ. Եթէ շատ յարգելի պատճառ սախպի նրան ուրիշ թեմ զնալ, այդ կարող է լինել միայն այն ժամանակ, երբ շատ եպիսկոպոսների համաձայնութեամբ և վճռով լինի»:

Նա այսպիսի կամայական կրծատումների է ենթարկում կանոնները՝ համարեա միշտ, երբ թէ հայերէն գրաբարը և թէ յունարէնն ու սլաւոներէնը ընդարձակ շարադրութիւն ունին. ուստի և աւելորդ է այլ օրինակներ բերել: Եւ այդ բանը Հ. Եկ. իր. զրբի հեղինակը հաշուում է «Ճիշտ» հանել:

Երբ մի անգամ մտաղըուել է այդ հեղինակը կանոնների } զրաբարի հետ տալ նաև աշխարհաբարը, այն ժամանակ նոյն } բանը պիտ պահած լինի և ամբողջ զրբում: Սակայն այդպէս չէ. մի տեղ նա դնում է միայն համառօտած աշխարհաբարը, առանց զրաբարի (Բարսեղ Մեծի կանոններ 236 երես). նրանից յետոյ մի այլ տնդ դնում է և զրաբարը և աշխարհաբարը (Շահապիվանի ժողով (319—356 երես): Այնուհետև 370—471 երեսներում Հայոց աեղական ժողովների կանոնների միայն զրաբարն է տալիս: 477—9 երեսում տալով Թագէսս առաքեա-

լի 486—7 երեսներում Մակար Երուսաղէմի հայրապետի կա-  
ստանների աշխարհաբար համառօտութիւնը, այնուհետև 490—7  
և 497—503 երեսներում դնում է նրանց գրաբար Ընդարձակը:  
Դրիբար Լուսաւորչի կանոնների աշխարհաբարն ու գրաբարը  
տալուց յետոյ, տալիս է ա. Սահակի կանոնների խիստ կրծատ  
բովանդակութիւնը աշխարհաբար, և նրան կից Ընդարձակ  
գրաբարը: Եւ այսպէս վայր՝ի վերջոյ մինչև վերջը: Դրաբարը  
աշխարհաբարի վերածելիս երբ կրծատումներ է անում գեռ  
մի կերպ թերես ներելի լինի, բայց երբ փոխում է նաև  
միտքը՝ զա ներելի չէ ոչ մի կերպ: Լուսաւորչի 22-րդ կանոնի  
մէջ կարդում ենք «եթէ որ՝ի քահանացից՝ զծածուկ խոստովանու-  
թիւն ուրուք յայտնեաց՝ անկցի յաստիճաննէն, և՝ի կարգէ  
պաշտօնէից մերժեացի, և մեղք զիստովանողացն՝ անկցի՝ի  
վերայ նորա»: (513 երես.) սրա թարգմանութիւնը դրել է այս-  
պէս «ծածուկ խոստովանութիւնը մէկին ասող քահանան, առ-  
տիճանից ընկնի, պաշտօնեանների շարքից մերժուի և չխոստո-  
վանողների մեղքը ընկնի նրա վրայ»:

Թէ իր հաշուած ընափր օրինակը նրան ի՞նչ ծիծաղելի սխալի մէջ է ձգում, և թէ ինքը որքան լաւ է իմանում ոլաւ տններէն, դա ցոյց է տալիս 128 երեսի մէր առաջ բերած ժդի կանոնը, որի վերջին կտորի մէջ կարգում ենք «որպէս առաւել շահել կարացեալ զնոսա, որ բանդեն, երկիւղածութեան բանիւ աւգակցուցանել...»։ Մարդ եթէ ոչ մի կանոնագիրը էլ ձեռքի տակ չունենայ, ուր կարողանար ճիշտ ընթերցուածը զանել ինքն՝ այդ կանոնի միտքը ցոյց կուտար, որ պէտք էր կարդալ ոչ թէ քանդեն ինչպէս հ. Մելիք-Թանգեանն է արեւ այլ «որք անդ են»։ Եթէ այդ էլ չմնէր, սլաւօներենով ճիշտ բնագիրը վերականգնովը «յակոբ մոցացաց Յակոբ մոցաց անդ անդ են»։ Եթէ այդ էլ չմնէր, սլաւօներենով ճիշտ բնագիրը վերականգնովը «յակոբ մոցաց Յակոբ մոցաց անդ անդ են»։

Մեր կանոնագրքերի մէջ Աղջային-տեղական ժողովներից Նահապիվանի, Դունի դ ժողովի և Պարտաւի ժողովների կանոնների սկզբը կան նախադրութիւններ, որ հայ եկեղեցու պատմութեան, բայց նաևանաւանդ իրաւունքի համար խիստ հետաքրքիր և արժէքաւոր վաւերաթղթեր են: Հ. Մելիք-Թանգեան նրանցից ոչ մէկն էլ տուած չի բերում: Իսկ երբ Պարտաւի ժողովի կանոնների նախադրութեան մասին է խօսում,

տալիս է հնարովի, անձիշտ տեղեկութիւն, որի հիմամբ իր թէ նախագրութիւնն սկսում է «ես, Սիռս, ողորմութեամբ Աստուծոյ...» ևայն խօսքերով։ Մինչդեռ թէ էջմիածնի մատենադարանի, թէ Վաղարշապատում ու Ճեմարանում եղած ըոլոր ձեռագրերը, որոնք ունին Պարտաւի կամոններն ու նախագրութիւնն և թէ Աէքսանդրապովի ու Թիֆլիսի կոնսիստորիայի ձեռագրները՝ թուով 29 հատ, սկսում են այսպէս. «Որպ պատմող աստուածային աւրինադրութեանն եղեն աշակերտ...» ևայն մօտ 15 տող նախարան. որից յետոյ նոր զալիս է «վասըն որոյ ես Սիրֆս, որ ոչ ըստ արժանեաց, այլ ըստ ողորմութեան Աստուծոյ...»։ Մելիք-Թանգեանը չի կարող նոյնիսկ մի օրինակ ևս ցոյց տար, որ իր ասածի ձեռվ սկսուէր Պարտաւի ժողովի այդ նշանաւոր նախադրութիւնը։

Հայոց եկ. իրաւունքի հեղինակը մի զուր պարտաւորութիւն է յանձն առել իր ուժերի ներածին չափ բացատրել և կեղեցական կանոնների միտքը։

Միջին դարերում, երբ եկեղեցական կանոնների միտքը բացատրելու կարիքն առաջ եկաւ, ժամանակի նշանաւոր իրաւուգետներից Զոնորա, Արիստին և Վալսամոն գրեցին Առաքելական, Տիեզերական, Տեղական ժողովների, եկեղեցական հայրերի կանոնների մեկնութիւն—բացատրութիւնները։ Հ. Մելիք-Թանգեան ասում է որ իր բացատրութիւնների համար օգտուել է նրանց մեկնութիւններից, որ այդ կանոնների յունականական հրատարակութեան մէջ կան։ Այդ մեկնութիւնները յատկապէս հետաքրքրական են ու արժէքաւոր՝ իրը Արիստինի, Վալսամոնի և Զոնորայի թողած գործ, ուստի և, եթէ հարկէ տալ նրանց բացատրութիւնները, այն ժամանակ այդ բանը պիտի անել բարեխղճութեամբ, իւրաքանչիւրի բացատրութիւնը առանձին տալով, և ոչ թէ երեքի ասածները ի մի շփոթիլ և երբեմն նա մասաւանդ այնպիսի վիճելի խնդրի համար, որի նկատմամբ նրանց տեղեկութիւնները տարբերում են։ Բերենք մի օրինակ։

Նիկիական ժողովի 19-րդ կանոնի մեկնութեան ժամանակ Զոնորան՝ Պողոս Սամոսատցու մասին ոչինչ չի յիշում։ Արիստինն ասում է, որ Պաւլիկեաններն իրանք, իւրանց ծագումը Պողոս Սամոսատցուց են առնում։ Իսկ Վալսամոն գրում է «Պաւլիկեանների մասին հարց կար, թէ ովքե՞ր են նրանք։ Եւ զանազան մարդիկ զանազան են ասում։ Իսկ ես զանազան դրքերի մէջ գտայ, որ Պաւլիկեանները յիտոյ կոչուել են Մանիքեաններ, ոմն Պողոս Սամոսատցուց... Այս Պողոս Սամոսատցուն զահազուրի արին Անտիօքում սուրբ Գրիգոր Սքան-

չելագործը և ուրիշները»: Տեսնում էք. երեք իրաւագէտներից մէկը ոչինչ չի ասում. մնացած երկուսն էլ կասկածով են վերաբերում: Դրանց անունով տալով իր բացատրութիւնը Մելիք-Թանգեան ասում է. «Պաւլիկեանների հիմնադիրն էր Միջազէտքի Սամոսատ քաղաքից Պօղոս անունով մէկը... Պօղոսին կարգալոյծ արին Անտիօքում Գրիգոր Աստուածարանը»: Հեղինակը բաւական չէ որ իր բացատրութիւնները կապում է յիշուած նշանաւոր անձանց վկին, նաև Գրիգոր Սքանչելագործին շփոթում է Գրիգոր Աստուածաբանի հետ, որ առաջինից մի դար յիշոյ էր ապրում: Մի տեղ էլ (251 երես) Գրիգոր Սքանչելագործին անուանում է Հրաշագործ, մինչդեռ մեր ամբողջ հին գրականութեան մէջ, տօնացոյցների մէջ և նոյնիսկ ամենայն տարի օրացոյցների մէջ նա Սքանչելագործ է անուանւում:

Այսպէս ուրեմն. այդ գիրքն իրը գիտական երկ՝ իր ուսումնատիրութեանց բաժնով՝ անարժէք է. տուած նիւթը անմըշակ և կասկածելի և տես-տեղ նոյնիսկ մեղանչում է ճշմարտութեան դէմ:

Գրքի միակ արժանիքը այդ նիւթերի առաջին անդամ համախմբուած հրատարակութիւն է, ու կարող է ծառայել իրը տեղեկատու և ուրիշ ոչինչ:

Արս. վ. Ղլունեանց

Մ. Ա. Պարսամեան. «ԱԵՐՁԱԲԻ» Կ. Պոլիս, Նշան-Պապիկեան գրատան հըրատարակութիւն, 1804 թ., գինն է 5 դրշ.՝

Թրքահայ ներկայ գրականութեան լաւագոյն շրջաններից մէկն եղաւ 1890—95-ի կարճատի ժամանակամիջոցը,

Սակայն, ուժգին թափով սկսուած այդ շարժումը՝ իր հոյակապ թոփչքի մէջ խորտակուեց գժբախտաբար, որովհետեւ վըրայ հասան արիւնի և սուզի օրերը, յաւէտ անմոռանալի: Կարմիր սարսափը՝ Վուպիորի ափերից մինչև Տիգրիսի եղերքները՝ անշարժութեան, մահուան դատապարտեց կեանքի ամեն գործունէութիւն, և վերահաս վտանգի սպառնալիքի տակ, գրական և հասարակական գործիչների մեծ մասը ապաստան վնտուց օտար, հիւրընկալ հողերի վրայ: Ու այնքան յուզումով ու այնքան խանդագատանքով շինուած գրական բոյները քար ու քանդ եղան: Սակաւաթիւ մնացողները՝ իրանց ընկերներից որբացած մահաւանդ աւելի անողոք—առանց այն էլ արդէն չափաբանց խեղգող—պայմանների մէջ գրուած՝ ստիպուեցինք պահել իրանց գրչի դէմ: Քիշ-քիչ սարսափը սկսեց իր

յարձակողական գոյնը կորցնել, իրերն ու կեանքը սկսեցին առերևոյթ, յարաբերական մի խաղաղութիւն ստանալ ու շատ հեռացողներից քչերը միայն վերադարձան իրանց բոյնը:

Տիրող այն ռէժիմը, որ զտան իրանց վերադարձին, մարդկայնօրէն անհնար է բացատրել: Պէտք է ապրած լինել գաղափար կազմելու համար այդ անլուր բարբարոսութեան մասին: Մարդկային, բանական կենդանու կաշուի տակ ապրելուց հաղար անգամ նախապատիւ պիտի լինէր, ապրել, շնչել ու զգալ որևէ կենդանու մորթի տակ:

Ուրեմն, ի՞նչ ասել կուղէ, որ զրաիանութիւնը, հրապարակախօսութիւնը, այդ պայմաններում, մի տեսակ հերոսական, ցաւագին ճիգ պիտի լինէր, որովհետեւ գիտակից, կենդանացող խօսքը հալածուած՝ մարդիկ պէտք է իրանց բերանը բանային, ոչ թէ մաքեր, գաղափարներ արտայայտելու, ազգային, հասարակական հարցեր յուղելու, կեանքի ու գործունէութեան հոսանքներ ստեղծելու համար, այլ շաղակրատելու, որպէսզի գոնէ իր արմատից մահացու կերպով վիրաւորուած մտաւոր ու զրական ծասի շուրջը աղաղուն ու նիհար թփիկների կանանչը գնեն և արինի փոթորիկի տակ կրացած ժողովրդական հոգու մահանոտ վհատութեան վրայ յոյսի դժոյն ծաղիկներ թափեն...

Թրքահայը՝ լաւ չմարսուած ֆրանսիական դրականութեան ազգեցութեան տակ ընականից արգէն մի քիչ ճոռոմ, մի անկարեկի գրաբննութեան պինձէ ձեւքում դարձաւ շատախօս, ջըրիկ, թեթեամիտ: Կրօնք և Սէր, ահա այն երկու բժացնող մեղկացնող թէմաները, որոնց վրայ թրքահայ գրողը կարող էր անվերջ ասեղնագործել:

Տիրացու և Սիրահար—եղի՛ր, որքան ուզում ես: Բայց կեանքը, լաւ կամ վատ, կամդ չէ առնում: Ու Պոլսի գպրոցները՝ բացի երկու երեր միջնակարգից բոլորը տարրական, հետքհետէ կեանիքի լայն ճամբու վրայ էին թափում իրանց շըրջանաւարտների յարգող շարքերը: Ի՞նչ պիտի սնէին այդ ինդերը. ի՞նչ կարող էին անել: Գործունէութեան ասպարէզները փակ էին: Նրանց մեծագոյն մասը՝ նիւթական անցուկ միջոցների տէր ծնողների զաւակ, անկարող էին ոչ թէ բարձրապոյն ուսումի հետապնդելու, այլ նոյնիսոկ միջնակարգ կրթութեան հետամուտ լինելու:

Իբրև դպրոցաւարտ՝ իբրև մի շարք «ութիւն»-ների վրայ զլուխ յոդնեցըրած, միտք մաշեցըրած պատանիներ, ընականաբար, մնամէջ հաղարտութեամբ ուսած էին լինում, մի արհետաւորի մօտ մանելով, կամ արհեսալործութեան մի ճիւղի ա-

շակերտելով ապրուստի մի հաստատ աղբիւրի տիրանալու համար։ Հաշուապահ, գրագիր, վաճառականի գործակատար, ահա այն պաշտօնները, որոնց կը ձգտէին։ Իսկ այն սակաւաթիւ բաղդաւորները, որոնք գոլոցական գրասեղանների վրայ մի քանի յաջող շարագրութիւններ արտադրած՝ քիչ ու շատ ծանօթէին իրենց լեզուի համաձայնութեան ու շարադրասութեան գաղտնիքներին, գրականութեամբ զրադրուելու տարտամ երազներով հարբում էին։ Իսկ գրականութիւնը, ի հարկէ, նրանց համար լրագրութիւնն էր։

Իսկ լրագրութիւնը։ Անկարող, ինչպէս բացատրեցինք, կեանք ու շարժում ստեղծելու, պիտի աշխատէր իր ընդարձակ էջերի սպիտակը սևացնելու, պիտի բաւականանալը անհոգի, ու յաճախ անմիտ խօսքի կեղծ գոհարները ցուցադրելով։ Լը բագրապետների մտահոգութիւնը աշխատակիցների որակը չէր, այլ քանակը։ Մեծածաւալ օրաթերթերը լեցնելու նիւթ հարկաւոր էր. ու նրանք գրկարաց պիտի ընդունէին լեզուի դըլ-խաւոր կանոններին չմեղանչող բոլոր փութկոտ, սրտատրափ ու ձրի աշխատակիցները։

Ու այդ նորաւարտ, անփորձ, մորի ու սրտի խղճուկ պաշարով պատասխներին մնում էր ինքնօգնութեամբ շարունակիլ մի քիչ զպրոցի գործը մտնելու լրագրական այնքան ըղձալի էջերից ներս։ Անպատրաստ՝ լուրջ աշխատութիւններ մարտելու, նրանք նետում էին զուտ զրական գործերի վրայ։ Մտերմութիւն հաստատել ֆրանսիական ժամանակակից, ծանօթ անուն ունեցող վիպասանների և բանաստեղծների արտադրութեան հետ—այդ էր նրանց իդէալը։ Եւ, շնորհիւ իրանց անյողգողի կամքին՝ շատերին յաջողում էր, եթէ ոչ հասնել, գոնէ մօտենալ զիւրին իդէալին։ Եւ այդ րոպէից արդէն նրանք անցագիր ունէին լրագրութեան ամայի քառուղիներն անարգել արշաւելու։ Այսուհետեւ իրանցից էր կախուած՝ գրական քիչ ու շատ շեշտուած մի գիտակցութիւն իւրացնելով։ Իրանց համար մի անուն շինել և իրանց աշխատակցութեան բարոյական վայելքին միացնել նիւթական վարձատրութեան վայելքը։

Համաշխարհային զրականութեան մէջ, ձևի տեսակէտով ամենից շքեղ, ամենից ներգաշնակ ու կատարեալ արուեստագէտների, ֆրանսիացի հնդինակների ընթերցումը, առհասարակ արևմտահայ գրական սերունդների մէջ ծնկցնում է ամենից առաջ ձևի մտահոգութիւնը։ Խօսքի մեծ վարպետների հետ շըփումը սրում, նրացնում է նրանց զգայնութիւնը (sensibilité), ճաշակը, Դրա համար էլ այժմեան գրական նորագոյն երիտասարդութեան գլխաւոր արժանիքը թւում է լինել խորունկ մտքեր,

բարդ մտածողութիւններ արտայայտելուց աւելի—ասացինք որ դրա ոչ ազատութիւնը և ոչ կարողութիւնը ունէին—գեղեցիկ, գրաւիչ, փայլուն ձևի տակ ներկայացնել իրանց ասելիքը: Ու սրա համար է, որ թրքահայ համարեա իւրաքանչիւր գրողի մօտ կը գտնէք մի բաւական ճոխ, կոկիկ լեզու, պարբերութիւններ, նախադասութիւններ, որոնք հազիւ թէ ապօրէն լինին եթէ թրքահայ մամուլը՝ իր ընթերցողներին մտքի առողջ ու առատ մնունդ մատակարարելու կոչման մէջ թերանում է, գոնէ արդար լինինք խոսափանուելով՝ որ նա իր յղկուած, կոկուած, կանոնաւոր լեզուով մեծապէս օժանդակում է հայերէնի ուսուցման և տարածման: Դպրոց և լրագրութիւն՝ ձեռք ձեռքի տուածմեր արևմտեան եղբայրների մէջ, մայրենի լեզուի ուսուցիչներն են հանդիսանում:

Եթէ ասեմ, որ պ. Մ. Ա. Պարսամեան՝ Պոլսի գրական նորագոյն սերնդին է պատկանում, նրա դէմքը մանրամասնօրէն բնորոշելու կարիք չի լինի, կարծում եմ: Բայց պէտք է աւելացնեմ, որ Անրջանը-ի հեղինակը այդ սերնդի լաւագոյն ներկայացուցիչներից մէկն է: Երևում է, որ նա շատ է կարդացել քրանսիացի բանաստեղծները, որոնցից զլիսաւորը, «բանաստեղծների իշխան»-ը՝ Պոլ Վէոլէն, նրա վրայ ազգել է զգալի կերպով: Բայց, որովհետև Վէոլէն՝ իր տաղանդի մեծութեան չափ տարօրինակ կեանքով ապրած մարդ է, որովհետև նա ճանաչել է կեանքի բոլոր երեսները, շատ տառապել, շատ վայելել, շատ երդել է, կեանքի մէջ նոր թեակոխող հայ բանաստեղծը չէր կարող իւրացնել նրա զգայնութեան զլիսի պտոյտ տուող, ցաւագին սրութիւնը, նրա խսովող, յուզող ու մոգական ֆոնը, այլ նրա վոռմը: Պոլ Վէոլէն՝ ամենից առաջ երաժշտութիւն էր փընտում բանաստեղծութեան մէջ.

De la musique avant toute chose...

Փնտուել ուրիշ ազգեցութիւններ պ. Պարսամեանի ներշնչման վրայ, մեզ շատ հեռուները կը տանէր: Իբրև սկսնակ բանաստեղծ, բնական է որ «Անրջանը»-ի հեղինակը գտնուի իր ընթերցումների անմիջական ազգեցութեան տակ: Դիմաւորն այն է, թէ նոր երգիչը, իր նախավորձերի մէջ ցոլացնում է արուեստագիտական խառնուածք, ունի հոգու ինքնաբուզի ձիչեր, որոնք մեզ յուսագրեն նրա ապագայի մասին:

Պ. Պարսամեան երգում է Սէրը:

Թոթովող մարդկութիւնից սկսած՝ մինչև մեր յողնած, աւելուր օրերը, սէրը նիւթ է մատակարարել երգիչին: Սիրուհուն երգել են ամեն ձեւրով, ամեն գոյներով: Դա մի լար է, որից նոր խաղեր, նոր ներկայաշնակութիւններ հանելը՝ չափազանց

գժուար է, եթէ հչ անկարելի: Հաճարի բերաններով սիրոյ երգը լսելուց յետոյ, քիչ ու շատ կարդացած մարգկանց խստապահանջ զգայնութեան նոր սարսուներ, նոր ցնցումներ հաղորդելու համար, գոնէ շատ զօրեղ խառնուածքի տէր լինելու է, իւրացրած լինելու է զգալու և արտայայտելու սովորական եղանակներից տարբեր ու բարձր եղանակներ:

Պ. Պարսամեանի տէրը մզկտացող, տամնջուող չէ: Նրա սէրը, առնասարակ, աւելի ուղեղից է բզիսած քան սրտից: Նա ցանկանում է իր սիրականի հետ միայն երազել, երազել ինչ-պէս մի զոյտ տատրակներ, քաղաքի ժխորից հեռու, դաշտերի և լեռների լուսու ամայութեան մէջ: Ու խորհուրդ է տալիս իր երազի ընկերին փախչել դէպի սարերը, «ուր ոչ կնոջ, ոչ այրեցու հանդիպին» և

Ուր առանձին, անտառներու շուքին տակ

Ծոյլ, աննախանձ, երազուն,

Գլուխս ուսիդ վրայ հակած՝ մինչդեռ դուն,

Պիտի երգես վայրահակ:

Ու գինովցած, ծաղիկներուն ու մարմնիդ

Զար, անասակ բոյրերէն,

Յալենը, երգինը, իրար դիտենք տարփօրէն,

Նայուածքներով անթիթ:

Եւ խելայեղ, յափշտակուած, մութէն մեղկ

Ծառերուն տակ հովանի,

Երկու սիրող թռչունի պէս քովքովի

Մինչեւ առտու երազենք:

Երեմն սակայն, պ, Պարսամեանի հոգու վրայից անցնում է սիրոյ տաք, վրդովող մի շունչ:

Փայփայանքներդ երազած հմ օրերով,

Ծառերու տակ, ճամբուս վրայ ցաւադին.

Ակսարկներդ յիշել ուզած հմ՝ խոռվ,

Զիս օրօրող տրտմութեանց մէջ առանձին:

Երբ ես անփորձ ու պատանի, միծի պէս,

Աղուորութեանդ կը նայէի անքըթիթ,

Ինչու, հոգիս, չարչարեցիր զիս այսպէս,

Հեշտութիւնով եթերային մարմինիդ:

Եւ նա զգալով որ իր հոգու անդորրութիւնը կորցրեց,

Կարօտով վնասում է իր նախկին թե՛ւի սէրը:

Մինչև հիմա չապրած սէրս էր որ այսպէս,  
Թուղթերու մէջ կերպէի ևս անդադրում,  
Սէրը գիւթող եթերային կոյսերուն,  
Երազներու մէջ փայփայուած ամպի պէս:

Ու հիմա ալ որ կը սիրեմ քեզ անդուք  
Նոր ու ահեղ պաշտանքներու հրայրով,  
Կուլամ յաճախ խարուղ կնոջ մը պէս թոյլ:  
Առջի մաքուր ու սուրբ սէրս յիշելով:  
Բայց նվ է այդ «աղուորը», որ մթնացնում է այդ երե-  
խայական, երազնքի միայն կարկառող հոգու աղաղակները:  
Մի հարցընէք թէ ուր ճանչցայ. — չեմ յիշեր.  
Ան որ սրտիս, գգուանքներուս, — գիրգ եղեմ, —  
Ան որ աղու ըղձանիներուս անգիշեր,  
Պարիկն եղաւ՝ միայն սիրելս դիտեմ:

Ու կարծեցի սիրուած ըլլալ հեռուէս,  
Եւ այս յոյսով՝ երջանկացած, խելայեղ,  
Գիղօններով երգեմ ըսի, դէմքն իրեն,  
Շնորհները երգեմ ըսի, ամէն հեղ:

Դաշնակութիւնն առի հեծող նուազին,  
Բուրումները առի՝ բոլոր վարդերուն,  
Յասմիկներուն, սմբուլներուն, հիրիկին,  
Անոր շունչը երազելով, թըրթըսուն:

Արշայոյին գոյներն առի անուրջի,  
Ու սըլացքը աղաւնիին օդակայ,  
Որ կը սուրայ, կը հեռանայ, կը թռչի,  
Երբ պատահմամբ մէկը իրեն մօտենայ:

Բայց չի կրցայ գրի առնել անհատնում,  
Անոր մարմնին շնորհները նախընծայ,  
Ու փորձիս մէջ, հիասթափած, օրօրուն,  
Դեղեցկութեան արբշութենէն գինովցայ:

Զի աչքին մէջ հմայրը կայ անհունին,  
Եւ մարմնին շուրջ պաշտումն է որ կը հակի,  
Ծաղիկները անոր շնունջն է որ ունին,  
Թուչունները՝ անոր ձայնը դաշնակի:  
Հիմա նա խորան ունի կանգնած իր սրտում, ուր նա մի

մատոնա է, խոկ ինքը՝ իրրե բուրվառ վառւում ու ծխում է  
նրա ոռքերի առաջ:

Դուն մատօնն ես սէր-մատուսին մէջ մինակ  
Ես բուրվառն եմ յոյս—քուրմին ձեռք սիրալիր.  
Հուրով լեցուն, խոնկով արբշիս ու կարմիր՝  
Կը վառիմ միշտ, կը ծխիմ միշտ ոռքիդ տակ:

Բայց զոհ եմ ես: Այսպէս ապրինք առանձին...  
Դուն գեղոյդ մէջ վէս, անմատոյց ու ծաւի,  
Ես օրօրուող բուրվառը միշտ մնայի,  
Պաշտումի խոլ ծիածանին տակ նրբին:

Ու միր սիրոյ մատուսին մէջ սուրբ, լոխն,  
Ոչ ուխտաւոր, ոչ աղօթող մ'այցելէր.  
Որպէսզի գնւն մինակ տեսնես, տարուրեր,  
Մերթ բլուզնկող կրակն արծաթ բուրվառին:

Բայց ամեն ինչ, աշխարհում, ունի մի վերջ. ծաղիկները  
մեռնում են, երկնքի կրծքին փաթաթուող երփներանդ ծիա-  
ծանները հալւում են, ու սէրերը՝ վարդի թերթիկների նման՝  
աշնան խոնաւ ու զալկացնող քամիների շունչի տակ, մէկիկ  
մէկիկ թափւում են:

Երգում ըրի, որ ալ ըզքեղ չյիշեմ.  
Հըրապուրանք, գեղեցկութիւն, վերջնապէս,  
Բոլոր ասոնք միշտ մոռնալու ըղձանքէս,  
Երգում ըրի, որ ալ ըզքեղ չյիշեմ:

Ես չեմ ուզեր ըրած խօսքերս սիրային,  
Յեղի ըլլան բոլոր բառերը մեղքի,  
Զորս յամրաբար ականջէդ վար հոսեցի,  
Չէ, չեմ ուզեր ըրած խօսքերս սիրային:

Դէմքիդ համար չէր որ ըզքեղ սիրեցի,  
Այլ երազի, հաճոյքներու սիրաթով,  
Ընկերակից մ'ուննենալու տենջանքով.  
Դէմքիդ համար չէր որ ըզքեղ սիրեցի...

Մեր առաջ բերած կտորները բաւական են գաղափար  
տպու համար բանաստեղծութիւնների այս հատորիկի մասին:  
Դժբաղդ պայմաններում ապրող, մատառը թեթև պաշարի տէր  
մի սկսնակ երդչից աւելին պահանջել՝ առնուազն անարդա-  
րութիւն կը լինէր: Ճիշտ է, ալ. Պարասամեան ստեղծագործ մի  
խոշոր ուժ, մի արտակարդ տաղանդ չէ, բայց նա օժ-  
առուած է բանաստեղծական յատկութիւններով: Նա ծանօթ է  
Մայիս, 1905.

տաղաչափութեան համարեա բոլոր զաղանիքներին, մի ձիք,  
որ պէտք է լապտերով վնասուել մեր կովկասահայ՝ հչ թէ  
ոկմանակ, այլ նոյնիսկ վործուած բանաստեղծներից մեծ մասի  
մօտ: Եւ ինչպէս, առհասարակ, ամեն թրբահայ գրող, նա ոճի  
ճոխ բառամթերք, այսինքն գեղարուեատական այլազան պատ-  
կերներ յօրինելու համար բազմաթիւ զայներ, երանգներ, որոնք,  
երբեմն, առենք, չարաշար է գործ ածում, տաղաչափական պա-  
հանջներից ստիպուած:

Տ. ԶԱՄԿՆ

ՄԵԼՔԻՆ ԵՍԱՅԻԿԱՆ, «ԴՐԱԳ» (պատկեր Բալախանու կեանքից), 1905, թիվ-  
լիս, 3 կոպէկ:

Պ. ԵՍԱՅԻԿԱՆ մեկ տալիս է Բալախանու կեանքից մի  
պատկեր: Նաւթաքաղաքը ում, որ գասակարդի մարդկանց ա-  
սես չի քաշում: Այդ ձգողութիւնը մասնաւորապէս ուժիղ է  
թւում գիւղերում, որոնք իրանց թարմ բազուկներն ուղարկում  
են գործարանայինն քաղաքը՝ այնտեղից մի քիչ հարստութիւն,  
ու, եթէ ուզում էք, մի քիչ էլ անուն բերելու համար: Այս կամ  
այն շինական ընտանիքը օրինակ է վերցնում իր զրայնից և  
իր ասփորձ, միամիտ զաւակին ուղարկում երազների երկիրը:  
Շիրինենք այդ կարգի ընտանիքներից մէկն են, մայրն իր որ-  
դուն ճանապարհ է գցում դէպի Բագու գեղջկուհու մի շարք  
միամիտ-խորամանկ խրատներով. նա, ի միջի այլոց, ասում է.

—... Մի օր սոված մնալով՝ մարդ չի մնոնիլ. «որ յետ  
գառնաս տուն, քեզ չեն հարցնելու թէ ի՞նչ ես կերել. ասերու  
են՝ ի՞նչ ես բերել. զրայնող են պուելու: Գրպանումդ որ եղաւ,  
խօսքը քոնն է... Մի խօսքով այնպէս արմ, որ Շիրինենց Ա-  
ղաջանին զիւղամիջում պարզ երես հանես...

Խեղճ Սաքօն գնում է, լծում՝ գործառորի քայրայող աշ-  
խատանքին: Նա վարժ չէ այդ կեանքին, բայց ի՞նչ արած,  
պէտք է Շիրենենց Աղաջանի երեսը պարզ հանել: Մի ձմեռ  
գիշեր, վեղեօրչչիկի պաշտօն է կատարում, նաւթահան ճախա-  
րակի մօտ հսկում է, բայց խոնջնքից և անքնութիւնից  
քունը տանում է: Յաճախ անժամանգի միակ հարստութիւնը  
երազն է լինում: Նա երազում է, երազում է, որ փող է աշ-  
խատել, հարստացել և վերագարձել արդէն գիւղ. հայր ու մայր,  
աղջական ու բարեկամ հաւաքուել՝ ուրախանում են... Թը՝ իսկ  
մէկ էլ Սաքօն սարսափած բաց է անում աչքերը. «Ժալօնկան»—  
նաւթահան գլանակը—տեղից զուրս էր թուել և ամբողջ բուր-  
զը գորգացնում էր: Հազիւ աչքերը բացած՝ մի փառաւոր տպ-

տակ իջնում է երեսին: Գործակատարն է: Առաջակը դեռ ոչ-ինչ, մի բուրլի տուգանք էլ ունի տալու...»

Զ.

Մելքոն Եսայեան, «Մի բուրլի...», (պատկեր Բալախանու կեանքից), 1905, Թիֆլիս, 3 կողէկ:

Միւնոյն հեղինակի արտադրութիւնն է և այս պատկերը: «Մի բուրլի...»-ի մէջ ևս երեսում են զիտողութեան, անկեղծ ներշնչումի նոյն յատկութիւնները: Նիւթը զարձեալ դործաւուրական կեանքից է: Հարիւրներով, հազարներով «քնեցնող» ինժեներները, կառավարիչները, չեն հանդուրժում բնաւ, որ իշրանց չափ և իրանցից աւելի տանջուող բանուորը մի բուրլի աւելի վարձ ստանայ—մանաւանդ խոստացուած վարձ:

—Խոստացէլ եմ. որ խոստացել եմ, կարծես թէ դադաւոր եմ կապել: Հիմա չեմ աւելացնում, մի ամսից յետոյ եմ աւելացնում... Կարծես թէ նրանք որ չլինէին, «Վիշապի» դործերը աստանովիկա էին դառնալու...

Եւ բայի այդ, «ըաբոչին» 17 բուրլի է ստանում. «Ժողովը ուաէ, 10-ը պահէ. հօ ամբողջ Բալախանին իրան չէին տալու...»

Ու այդ սակաւապէտ—ուրիշների կաշուի վրայ—կառավարիչը դայրացած՝ գուրս է անում և գործակատարին, որ բանուորների կողմն էր բոնիլ, և այն խեղճ պարիաներին, որոնց խոստացել էին մի բուրլի, միայն մի բուրլի աւելի սոճիկ վըճարել: Նրան այդպէս «մեծ-մեծ խօսողներ հարկաւոր չեն», այլ «համեստ տղերք»...

Զ.

Բարթուղիմէոս եղ, Գէորգեան «Ասդարշապատք եւ Ս. Էջմիածինը իրանց սկզբնական եղումն են:

Այս գրուածքի սուսերէն թարգմանութիւնը տպած է հայերէն բնագրի հետ միասին: Հեղինակը մի շարք ապացոյցներ է բերում ցրելու Խաչիկ վ. Դատեանի «տարածած դայթակղութիւնը ժողովրդի ամեն խաւերի մէջ.» Խաչիկ վարդապետը տարածում էր թէ սկզբնական էջմիածինը Զուարթնոց կոչուած հինգեցու տեղումն էր:

Բարգուղիմէոս եղ, ապացուցում է որ նախ քան մեր

ազգովին քրիստոնէութիւն ընդունելլը՝ Վաղարշապատի տրեեւեան առապարում 3—4 վերստի վրայ գտնուող Զուարթնոց կոչուած եկեղեցու աւերածի տեղում Ապողոնի-Հերմէսի Երազացոյց մեհեամն է եղել; Բացի այդ, հեղինակը աշխատում է ապացուցանել թէ Վաղարշապատը սուաջ կոչուած է եղել Արտաշատ և բնաւ չի կարող հին և նոր Վաղարշապատների մասին խօսք լինել:

\*

### ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Ա. Թուսովա, «Զուգէպալո Գարիբալդի», կենսագրական, 1904, Բագու, 10 կ.:
- 2) Գ. Ե. «Ուրուանկարներ», հրատ. Ս. Թարգիրյեանի, 1904, Բագու, 25 կ.:
- 3) «Վաղարշապատը և էջմիածինը իրենց սկզբնական տեղումն են». գրեց Բարդ. եպ. Գէորգեան (Ճուղուրեանց), 1905, Մուկուա, 20 կ.:
- 4) Օ. Տумանյան, Ախտար, народ. легенда, съ арм. перев. К. Бальмонтъ, 1905, Баку ц. 25 к.
- 5) Կանան-Դոյլ, «Դեղին դիմակաւորը», թարգմ. Ն. Ք. Նիկոլոսեան, 1905, Ալէքսանդրոպոլ, 7 կ.:
- 6) Զոն Միլիեր, «Նորահաս օրիորդներին բարեկամական խորհուրդ», թարգմ. Ն. Ք. Նիկոլոսեան, 1905, Ալէքսանդրոպոլ, 10 կ.:
- 7) «Կանոնք Դունայ Սուլբ Փողովոյն» ձեռագրի համեմատութեամբ լոյս ընծայեցին Միկթար վարդապետ և Միրական Տիգրանեան, (արտատ. Արարատ ամսագրից), 1905, Վաղարշապատ, գին. ?
- 8) «Թոստամ Զալ», ժողովրդական վէպ, (մոկաց բարբառով), զրի առաւ Գ. Գ. Յովսէփիան, արտատպուած «Աղբագրական Հանդիսից», Թիֆլիս, 1905, գ. 50 կոս.:
- 9) Ատրպետ, Երկերի ժողովածու, հատոր երրորդ, «Ալմաստ», վէպ Բարձր Հայոց կեանքից, թաւրիու, 1905, գ. 1 լու.

## ՎՐԱՅ ԿԵՆՆՔԻՑ ԵՒ ԳՐԸԿԵՆՈՒԹԻՒՆԻՑ

Վրաց մամուլի ողեռութիւնը:—Ներանորոգուած «Իվերիան»:—Նոր Խըմ-բազրի գիրքը հայերի վերաբերեալ:—Մեր պետիշիան և վրացիք:

Ներջին երեք ամսուայ ընթացքում, վրաց կեանքի ու մամուլի մէջ աիրում է մի անսուելի, գուցէ դարերից ի վեր մեր հարևանների աշխարհում նմանը չունեցող, ոգևորութիւն: Ռուսաստանի ներկայ ազատասիրական շարժումը ուժգին արձագանք գտաւ Վրաստանում և այդ ներկրի սահմաններից մի քիչ հեռու գանուող հայերի համար ուղղակի անհաւատալի կը լինի այն ահազին փոփոխութիւնը, որ այդպէս արագ տեղի ունեցաւ վրացի մարդու մտքերի ու զգացմունքների մէջ: Այսօր վրաց մամուլն ու ժողովուրդը զարմանալի կերպով շաղկապուած են իրար հետ և այդ՝ այն աստիճան, որ դժուարանում ես որոշել, թէ ով է ումնից ոգևորութիւն ստանում—ժողովուրդը մամուլից, թէ մամուլը ժողովրդից... Նրաց մամուլի այդ ներդաշնակ, հիացում պատճառող ուղղութեան շատ նպաստեց և այն հանգամանքը, որ ներկայ թուի փետրուար ամսից «Իվերիա» լրագրի խմբագրութեան կազմը արմատական փոփոխութեան ննթարկուեց և նրա ղեկավարութիւնը ստանձնեց գերմանական համալսարանի գոկտոր երիտասարդ քաղաքատնտեսպ. Փ. Գոգիչայիշվիլին:

Պ. Գոգիչայիշվիլու հանդէս գալովը «Իվերիան» միաժամանակ նոր կերպարանը առաւ թէ ներքուստ և թէ արտաքուստ. նրա ծաւալը մեծացաւ (զարձաւ մեր «Մշակ»-ից երկու անգամ մեծ), շաբաթը 6 անգամի փոխարէն սկսեց հրատարակուել 7 անգամ \*), ստացաւ իշխանացիաներ տպելու իրաւունք, ունեցաւ «Իվերիայի գրադարան» անունով ամսական յաւելուած՝ գիտական ու ըելլետրիստիքական բովանդակու-

\* ) Ներկայ ապրիլ ամսից սկսած թիֆլիսում լոյս է տեսնում երկուշաբթի օրերը միայն «Կավազ»-ը, որովհետեւ միւս լրագիրների գրաշաբթի ները հրաժարւում են կիրակի օրերը բանելուց:

թեամբ, բացից լրագրական նոր էջեր և ձեռք բերեց նոր աշխատակիցների ու թղթակիցների մի ստուար խումբ։ Մեզ, հայերիս, համար աւելի հետաքրքիր է, ի հարկէ, այդ վերանորոգուած լրագրի ներքինը, հետաքրքիր ևս տուաւել այն կողմից, որ զա, ըստ երեսոյթին, աւելի շատ է զբաղուելու հայերով ու մեր՝ վրաց հետ ունեցած յարաբերութիւնների հարցով և երկրորդ՝ դա ներկայանում է մեզ մտաւոր անհամեմտա աւելի բարձր ուժով ու պաշարով, քան «Խվերիայի» նախօրդ բոլոր խմբագրական կազմերը։

Պ. Գոգիչայիշվիլին այժմ չափականց շատ է խօսում հայերի մտավին։ Նրա շատ մտքերի հետ կարելի է չհամաձայնուել, նրա գատողութիւնների մէջ կարելի է դանել ծայրայեղութիւններ, բայց նրա եռամսնայ գործունէութիւնը ոչ մի հիմք չէ տալիս ընթերցողին կարծելու, թէ այդ մարդու սրտու կայ ատելութեան նման մի բան դէպի հայերը։ Նախկին «Խվերիայի» անհամբոյր, չար, թունալից լեզուն, նրա՞ յատկապէս հայերի մասին խօսելու համար մշակած մի տեսուկ մասնաւոր, վերին աստիճանի անախորժ ժարգոնը (բարբառը) անցել է արդէն աւանդութիւնների կարգը։ Նոր խմբագրիրը պահանջում է, որ հայ ու վրացի ինտելիգենտները ուղիղ հասկանան միմևանց, չծածկեն իրանց մտքերն ու զգացմունքները, անկեղծաբար լուսաբանեն չպարզուած յարաբերութիւնները։ Ապագայի համար, խօսք չկայ, մենք ոչինչ երաշխաւորել չենք կարող, բայց պ. Գոգիչայիշվիլին իր եռամսնայ գործունէութեամբ մեզ իրաւունք չէ տալիս զանգապատելու նրա անշիտակութեան մասին։

Ծանօթացնենք այժմ մեր ընթերցողներին փոքր ինչ աւելի մօտիկ այդ նոր խմբագրի հետ, բերելով մի քանի հատուածներ նրա յատկապէս հայերի մասին զրած յօդուածներից։

Դեռ ևս իր անդրանիկ առաջնորդողում («Խվերիա» № 1), պ. Գոգիչայիշվիլին պաշտպան հանդիսանալով վրաց մէջ աղղայնութեան զաղափարը զարգացնելու մտքին, շտապում էր աւելացնել որ իր այդ «նացիոնալիզմը» չպէտք է հասկանալ իրեն մի քարոզ թշնամութեան ու ատելութեան դէպի ուրիշ աղքերը։ Մարտ ամսի սկզբին, ինչպէս յայտնի է Թիֆլիսի դումայի ձայնաւորների մի խումբ անուանել էր՝ մի մասնաւոր խորհրդակցութեան մէջ՝ պատգամաւորների երեք թեկնածու, որ ոչտք է գնացին Պետերբուրգ պալապայ համաստական աղգային ժողովի զործերի մասին խորհրդակցելու։ Ճիշտ նոյն ժամանակները, «Մշակի» խմբագրի պ. Ա. Քալանթարը մի գեկուցում կարդաց Թիֆլիսի գիւղաբանական ընկերութեան մէջ։

որով առաջտրկում էր միջնորդել Կովկասի բարձր կառավարութեան առաջ, որ Սուխումի շրջակայքում ծխախոսի մշակութեամբ պարապող մօտ 30,000 թիւբքահայ գաղթականներին իրաւունք տրուի գարճեալ մի տո ժամանակ այդ կողմերում մնալու: Այն հանգամանքը, որ վերցիշեալ ձայնաւորների ընտրած թիկնածուներից ոչ մէկը վրացի չէր, մի անպատմելի խոռութիւն տոաջ բերեց թիվլիսի վրաց հասարակութեան մէջ. «Հայ ձայնաւորները արհամարհեցին վրացիներին, նրանք մեր բարեկամը չեն»,—լուս էր մարդ այս ու այն կողմը...»

Պ. Գոգիչայիշվիլին շտապից արձագանք տալու այդ թունդ գժգոհութեան և աղեց իր երկու տաւաջնորդողները (№ 17 և 18) «Եղբայրութիւն հրատարակելուց յիշոյց» մհծաղղորդ վերնապրով: Հեղինակն այդտեղ խորին ցաւով յայտնում էր, թէ ինչպէս հայերը, Բագուի աղետալի դէպքերից յետոյ, վրացիների հետ «եղբայրանալով», մոռացան այդքան շուտով իրանց խոստումը... «Խվերիայի» նոր խմբագիրը վճռականապէս պընդում էր, որ Վրաստանում (վրացիք Ավիսաղիան էլ միշտ Վրաստանի մի մասն հն համարում) և առհասարակ ամբողջ Կովկասում օտարահանգատակներին և ուրիշ աշխարհներից եկողներին պէտք է հող չտրուի, քանի որ այդ երկիրը հազիւ հազ բաւական է ըուն տեղացիների համար և որ, նոյն պատճառով՝ ցանկալի է որ մեր կողմերում չիմնուին նաև ուսու գիւղացիների գաղութներ:

Առաջին դէպքի առիթով պ. Գոգիչայիշվիլին այնքան է տաքանում, որ մինչև իսկ թոյլ է տալիս իրան այսպիսի մի սպառնալիք կարգալու հայերի գլխին. «Զգլանենք լոնչով երն ղեկավարում,—բացազանչում է նա—մեր քաղաքի «հայրերը» այդպիսի մի քաղաքական ճարողիկութիւն ապացուցանող ընտրութիւն կատարելիս: Զլինի թէ զրանով նրանք ուղեցան մեղ ծագրել: Սակայն թոյլ նրանք իմանան, որ վրաց ազգը գեռ ևս այնքան ուժից չէ ընկել, որ մէկին իրան ծաղրելու թոյլտւութիւնը տայ և լուէ, երբ ուրիշները չուղենան իր իրաւունքները ճանաչեք: Գալով ծխախոս մշակող հայ գաղթականների հարցին, լրագիրը աւելի ամփոփ կարծիք է յայտնում այդ մասին իր մի ուրիշ առաջնորդողում (№ 40), որ նա ումրողչապէս նուիրեց պ. Ա. Քալանթարի իրան ուղղած մի ընդարձակ բացատրութեան: «Մենք,—ասում է այլուղ պ. Գոգիչիայիշվիլին—մեր անցեալ յօդուածումն էլ զրում էինք, որ բուն տեղացի հայերին վրացիներից չենք ջոկում և մեզ թւում է բոլորովին բնական, և իրաւական կողմից կանոնաւոր, եթէ թիվլիսի ու Գորու գաւառում (Քարթլում) կամ Կախեթում ապրող հայ գիւղացին

տեղափոխութի, օրինակ, Իմէրէթ (Քութայիսի նահանգը) և այս-  
տեղ հողաբաժին (հաճքն) ստանայ կամ առանց «նադէլի»  
այստեղ իր համար տուն հիմնէ: Կանոնաւոր է թւում մեզ այն  
հիման վրայ, մեր գաւանած այն սկզբունքի ուժով, որ Վրաս-  
տանի սահմաններում պատմականապէս միասին ապրած հայե-  
րին ու վրացիներին պէտք է համահաւասար արտօնութիւններ  
շնորհուին: Բայց բոլորովին այլ է, երբ այդ տարածութեան  
վրայ իր ոտն է դնում նաև դրսի տէրութիւնից յանկարծ ներս  
խուժած մի բազմութիւն ու մի սեղմուած բնակութիւն հաստա-  
տում այնտեղ: Այսունզ արդէն, կարծում ենք, մենք իրաւունք  
ունինք չճանաչելու վրանց համար էլ այն արտօնութիւնը, որ  
ընդունում ենք բուն տեղացի հայերի օգտին: Այդ «ժամանա-  
կաւորապէս» եկած ժողովուրդը՝ մի քանի տարուց յետոյ սե-  
փական տանտէր է գաւանում ու այգալիսով տեղացի բնակիչնե-  
րի գետինը փորբացնում: Մի օր էլ, ովք գիտէ, կը յայտնուին  
մարդիկ, որ կը քարոզեն մեր տէրիտորիան այլ և այլ ազգայ-  
նական բաժինների վերածել՝ նրա վրայ ապրող ազգերի հա-  
մեմատ:

Ո՞ւմ յայտնի չէ, որ վրացիք շարունակ տրտնջում են, որ  
թիֆլիսի գումայի կազմի մեծամասնութիւնը միշտ հայերից է  
լինում բազկացած: Այդ երեսյթին վերջ տալու համար պ. Գոդի-  
չայիշվիլին առաջարկում է հայերին մի նոր միջոց: «Միութեան  
հիմքը» վերնագրով առաջնորդում (№ 29) նա ասում է, թէ ին-  
քը հաւատում է որ հայ ինտելիգենցիայի մեծամասնութիւնը ան-  
կեղծ կերպով ցանկանում է բարեկամական յարաքերութիւններ  
հաստատել վրաց հետո: «Արաց ինտելիգենցիան ու մամուլը,—  
շարունակում է պարոնը—համակարութեամբ ու ջերմ պատրաս-  
տակամութեամբ վերաբերուեց հայ մամուլի ու ինտելիգեն-  
ցիայի համակրելի ու օգտակար ցանկութեանը՝ մեր հարեանա-  
կան յարաբերութիւնները աւելի լաւացնելու մասին: Միայն  
այդ «տեսական» ցանկութիւնը՝ գեռ ևս, համարեա թէ, իր տե-  
սակամութեամբ վերաբերուեց հայ մամուլի ու ինտելիգեն-  
ցիայի համակրելի ու օգտակար ցանկութեանը՝ մեր հարեանա-  
կան առաջարին քայլերից մէկը պէտք է լինի վրաց համար էլ  
գումայի գոները փոքր ինչ աւելի լայն կերպով բաց անելու:  
Դրա համար, յօգուածագրի կարծիքով, պէտք է այժմեան գու-  
մայի ձայնաւորները օրինական ճանապարհով միջնորդութիւն  
յարուցանեն, որ ևկող ընտրութիւնների համար կալուածական  
ցենզի պահանջելը վերացուի և ընտրութիւններին մասնակցե-  
լու իրաւունք ունենայ ամեն մի քաղաքացի՝ որոշ հասակին  
հասնելուց յետոյ:

Վրաստանում ինքնավարութիւն (աւտոնոմիա) մտցնելու հարցի ասիթով պ. Գոգիչայիշվիլին ի թիւս ուրիշ յօդուածների, գրեց նաև մի առաջնորդող (№ 38) «Կովկասի ազգերի քաղաքական կեանքի խնդիրը» վերնադրով։ Վրաստան բառը այդ գէպքում, ինչպէս պարզուեց վրաց ազնուականների կայսրին մատուցած ուղիւճից, պարունակում է իր մէջ ամբողջ Թիֆլիսի ու Քութայիսի հահանգները և Սուխումի (Ափսաղիայի) ու Զաքարիալի շրջանները։ Յիշեալ առաջնորդողում յօդուածագիրը, կարծես չուղենալով որ հայերը սրտապական մնան, միիթարում է նրանց այսպէս. «Կովկասում կայ մի անկիւն, որ պատմականապէս հայերի հայրենիքն է կազմում և որոնել նրանց հետ ոչ ոք այդ մասին վէճ չէ յարուցանում։ Այդ հայերը կատարեալ իրաւունք ունին պահանջելու իրանց համար էլ ազգային ինքնավարութիւն։ Այդ գէպքում նրանք կարող են համակրութիւն ու օգնութիւն գտնել միւս բոլոր հարևան ազգերի կողմից։» Բայց ծրագրուած ինքնավար Վրաստանումն էլ հայ ժողովուրդը իրան ճնշուած չի համարի, որովհետև «ազգային ինքնավարութիւն ասելով չպէտք է հասկանանք այնպիսի մի զրութիւն, որ իրը թէ այդ արտօնութիւնը ձեռք բերած աշխարհում (Ազրաստանում) ապրող միւս ազգերի ներկայացուցիչները կիսութարկուեն նեղութիւնների ու սորիկական վիճակի։ Դեմոկրատիական հիմքի վրայ հաստատուած ինքնավարութիւնը տալիս է անխտրապէս քաղաքական համահաւասար իրաւունքներ բոլոր բնակիչներին՝ ուշագրութիւն չդարձնելով նրանց ազգայնութեան...»

Այդպիսի լաւ բաներ է խոստանում «Իվերիայի» նոր խրագիրը մեր համեստ, սակաւապէտ ազգին...

Վերջապէս, Պոգիչայիշվիլին ամբողջ էրեր առաջնորդող նույից (№№ 60, 61, և 64) անգրկովկասեան հայերի ներկայացուցիչների Թիֆլիսում նորերս կազմած այն պլետիցիային, որ պէտք է ներկայացուի Կովկասի փոխարքային ու մինհստրների կոմիտետին։ Բայց որովհետև այդ գէպքում «Խվերիային» կանխից վրաց միւս ամենօրեայ թերթը «Ճնորիս-Փուրցելին» (№ 2803) և, որ վլխաւորն է առաջինը, համարեա թէ ամբողջապէս կըրկնեց այդ վերջինի ասածները, ուստի և մենք առաջ կը բերենք նախ և առաջ այդ երկուսի բնդհանուր նկատողութիւնները միասին։ Երկու վրաց լրագիրներն էլ գտնում են, որ յիշեալ պետիցեայի կազմողները վարուել են չափազանց զգոյշ ու վախեկոտ, որ նրանք զեկավարուել են անոպայման բուրժուազիական ոգով և որ նրանք, հաւանականորէն, չեն ներկայանում մեզ որպէս բուն հայ ժողովրդի մեծամասնութեան ցանկութիւն-

ների ու պահանջների արտայայտիչները: «Մէնք կարծում ենք, աւելացնում է «Յնորիս-Փուրցելին», որ հայ ազգի աշխատաւոր մասը, այսինքն նրա ահազին մեծամասնութիւնը, բոլորովին ուրիշ ճանապարհի վրայ է կանգնած, ուրիշ ուղղութիւն ունի, քան թէ այդ ցոյց է տուած «պետիցիայում» և հէնց այդ ուղղութիւնն է, որ մեզ յոյս է տալիս, թէ կարող պէտք է լինենք ձեռք ձեռքի տուած գործելու հայերի այդ մեծամասնութեան հետ:

Ենունեան վրացի լրագիրները առանձին ուշադրութիւն են դարձնում պետիցիայի այն կէտերի վրայ, որոնց իրականացնելը կարող է ընդհարում առաջ բերել վրաց կամ մի այլ տեղական ժողովրդի շահերի հետ: Պետիցիայի 17-րդ յօդուածի դէմ, որով խնդրում է «նաղեներ» բաշխել պետական ազատ գետիների վրայ՝ սակաւահող հայ գիւղացիներին, նրանք առարկում են, թէ անհրաժեշտ էր որոշել այդպիսի ազատ հողերի տեղը, քանի որ ոչ վրացիների և ոչ թուրքերի համար ցանկալի չի լինի, որ հայաշատ տեղերից գիւղացիներ զան և բնակութիւն հաստատեն նրանց մէջ, նրանց քթերի տակ: Բայց վրայ մամուլն շատ տեղի մտահոգութիւն է պատճառում պետիցիայի 18-րդ յօդուածը, որով դարձեալ «նաղեներ» են խնդրում պետական հողերի վրայ՝ ոռու հպատակութիւն ընդունած թիւրքահայերի համար: «Եթէ այդ առաջարկութիւնը օրէնքի զօրութիւն ստանայ, —ասում է «Յնորիս-Փուրցելին»— հէնց վաղը Թիւրքիայից մեր կողմը գաղթողների թիւը կը տասնապատկուի (?) և ի՞նչ պէտք է լինի այն ժումանակ այստեղի բնիկ ժողովուրդների վիճակը»: Միւս լրագիրը, «Իվերիան», մի քիչ էլ դրանից առաջ է դնում ու աւելացնում, որ եթէ «հայերի այդ լոգիկային հետեւնք, պէտք է հողարտիններ տանք նոյնպէս, օրինակի համար, այն զերմանացիներին ու չինացիներին, որոնց խելքին կը քչի վեր կենալ մի օր, գալ մեր աշխարհը ու ոռուահպատակութիւն ընդունել այստեղ»... Պետիցիայի այս կէտը, որ «անպայման անարդար» են անուանում վարաց երկու լրագիրներն էլ, այն աստիճան է զայրացրել «Իվերիային», որ յատկապէս դրան նուիրած մի առաջնորդող յօդուածին (№ 60) տուել է «Ախորժակն էլ տհա այսպէս պէտք է լինի» ելողիծական վերնազիրը:

Առաջ բերելով այս բոլորը, մեր ընթերցողների համար, կարծում ենք, բաւական պարզ է երկու թիւրթերի շուրջը համախմբուած վրաց ինտելիգենցիայի ահազին մեծամասնութեան աղգայնական դաւանանքը:

Տ. Փիրումնեան

## ԹԱՌԻՐՔ ՄԱՄՈՒԼԸ

Շահթախթինսկի և Աղայել զատի մէջ:—Աղայել բէդի ողբերը:—Հնդկաստանի մահմեդականների մէջ կրօնական վերանորոգչական մի շարժում:—Կովկասի խոլանների վերաբերմունքը զէպի այդ շարժումը:—Մահմեդական մամուլի օրգանները այլ և այլ երկրներում:

Անցեալ անգամ մենք խօսեցինք Մէհմէդ տղա Շահթախթինսկի և Աղայելի ընկերակցութեան մասին՝ «Շարքի-Մուսլիմ» վարիկու գործում, և այն նոր ծրագրի վերաբերմանը, ուրին պիտի հետևէր թուրք թերթը Բաղու փոխադրուելով: Ահա մի քանի ամիս է որ «Շարքի-Մուսլիմ» Բաղու է տեղափոխուած և նա գեռ ևս չկարողացաւ լոյս տեսնել: Եւ եթէ այս ընթացքով զնայ, լոյս տեսնելիք էլ չունի: Որովհեան, ինչպէս երեւում է, Մէհմէդ աղայի և Ահմէդ բէզի համաձայնութիւնը շատ խախուտ է եղել և նրանց մէջ ծագել են արգէն լուրջ տարածայնութիւններ: Այդ վէճի պատճառն այն է, որ Մէհմէդ աղան, ըստ երևոյթին, չի ուղում նրան գերիշխող գեր տալ: Եւ որովհեան Աղայելի Շահթախթինսկին վճարել է արգէն մի որոշ գործար, նա յենուելով այդ կանխաղմարի տուած իրաւունքի վրայ, պահանջում թերթի ղեկավարութիւնը: Իսկ Մէհմէդ աղա չի զիջում: Սրանից ծնունդ է առել կոիւը, և գործը պէտք է ենչ նոյնիսկ զատարանի առաջ:

Թենք հաւատարիմ մեր կոչումին, շարունակենք խօսեածական մտքի բնորոշման մեր գործը, սպասելով զատավարութեան ելքին:

Եւ որովհեան Աղայելի՝ Շահթախթինսկու հետ հաշտութիւնից յետոյ, «Շարքի-Մուսլիմ» տոն տուղը Աղայելի էր, այս վերջինի յօդուածներն էին, որ թուրք լրագրին և մահմէդական հասարակութեան ուղղութիւն էին մատնանշում, խօսենք այդ յօդուածների մասին:

«Շարքի-Մուսլիմ» 219-րդ համարում, Աղայել ղետեղել է կրկար, 5 սիւնակից բաղկացած մի յօդուած, որը չէ վերջացած և կրում է «Հարունակելի» պոչը:

Այդ յօդուածի ընդհանուր վերնադիրն է «Խոլամական խորհրդածութիւններ» և տիտղոսը՝ «Դուրանից ընթերցումներ»:

Աղայել իր ուսումը Պարիկում ստացած մարդ է: Հետա-

քրրիր էր իմանալ, թէ Եւրոպայում ժողովուրդը դէպի լուսաւորութիւն, դէպի քաղաքակալիթութիւն առաջնորդելու համար արգեօք հրապարակախօսները նստում նրան Աւետարամնը կամ Ս. Գիրքն են մեկնում, մեկնարանում...: Բայց դեռ տեսնենք, թէ թուրք ժողովրդի դեկավարը ի՞նչ է ասում: Նախ մի կտրյուղուածի սկզբնաւորութիւնից:

«Ղուրանը կարգավիս հրճուանքս ու վայելքս աւելանում են. մահմեդական և օտար լեզուների ըիչ ու շատ ծանօթ եմ, ընթերցումի սէր ունիմ. թէն զանազան զբքեր և զրուաներ կարդում եմ, բայց ոչ մէկը դրանցից այն հաճոյքն ու հրճուանքը չի պատճառում ինձ, որքան զուրանը...: Ղուրանից համեղ, զուրանից բերկրասիթ զիրք չկայ: Թէ բանաստեղծութիւն է, թէ պատմութիւն, թէ փելխոսփայութիւն է, թէ քարոզութիւն, թէ պատուէր, թէ օրինակ, այն կարգալով՝ մարդու սրտի ու մտքի կեանքը երանութեամբ յորդում է. մէկ այաթ-ը, մէկ սուրէ-ն հրքան կարդաս ձանձրոյթ և տաղոտուկ չես զզում, ընդհակառակը, հետզհետէ նրա իմաստին աւելի թափանցելով աւելի լցում ես վայելքով: Ափսոս, հազար ափսոս, որ այս տեսակ մի ազիր, համեղ զիրք, մեղանում վարկից ընկնելով պէտք եղած յարգն ու պատիւը չի վայելում:»

Եյս քնարելքական տողերից յիտոյ, որոնք գրուած լիսին կարծես երկնքի գաղափարովը չարչարուող, միտտիքական ցընորքներով ալեկոծուող միջնադարեան մի ճզնաւորի, ասկետի կողմից, Աղայեկ աւելացնում է, թէ, իր «սիրտը» որ աստիճան «ճմլում է», երբ մտածում է զուրանի այդ վարկարեկութեան մասին:

«Մեղանում ի՞նչ կայ, բացագանչում է նա, գիտութիւն չկայ, արուեստ չկայ, միայն տղիսութիւնն է տիրապետում. ար կողմ նայես, նայիր, ամեն տեղ սիրո մրմացնող, խելքը ապուշ կրթող, ահաւոր, սարսափելի, խուար ամպեր պաշարել են խոլամական աշխարհը, ոչ մի տեղից լոյսի նշոյլ չի երեւում: Ամեն կողմից տգիտութիւնն ու խուարը բարձր պարսպի նման մեզ շրջապատել է: Ի՞նչ եղաւ Աստուծոյ որ գործերը այս զրութեան հասան: Եյս սրտաճմլիկ, հոգեխորով ներկայից աչքերս գարձը նում եմ դէպի անցեալը: Խոլամի անցեալ օրերն եմ յիշում...»

Ու Աղայեկ գարձեալ լիրիկական խանդակասութեամբ վերակոչում է արաբական անցեալը:

«... Բաղդատի լուսավառ փողոցները, բարձր շինութիւնները, բիւրաւոր ճուխ, բաղդաւոր ճուխ, բաղդաւոր բնակիչները մտքիս առաջ պատկերանում են: Տեսակ տեսակ գրադարաններ, համալսա-

բաններ, բարձրագոյն մելլէսէներ, երևակայութեանս մէջ վերակենդանութեանում են»:

Ու նկարագրութիւնները նկարագրութիւններին են յաջորդում ցոյց տալու համար արաբ քաղաքակրթութիւնը իր ամրող փայլին ու փառահեղութեան մէջ: Եւ իսկապէս, մենք էլ գիտելով այդ շքեղ պատկերը՝ հիացումով և յուզումով լեցում ենք: Մի հարց, անխուսափելի, բոնաւոր, չարչարող, ներկայացնում է մեր մտքին —միթէ սրանք են այդ լուսաւոր, պանծալի նախնիքների յաջորդները: Արարմերը քաղաքակրթութեան, կուլտուրական կեանքի զինուորներ էն: Իսկ նրանց զաւակները, այժմեան մահմերականները: «Ամեն կողմից տգիտութիւնն ու խաւարը բարձր պարիսպի նման շրջապատում է մեզ» տիրութեամբ նըկատում է ինքը՝ Աղայեվ:

Եւ ինչո՞ւ է այդ աչք ծակող զանազանութիւնը: Ի հարկէ ընթերցնել, գուք էլ ինձ պէս պիտի հետաքրքրուէք, թէ նրանկ է պահուած առաջինների փառքի, և երկրորդների անդիասունակութեան, անկումի գաղտնիքը. ի հարկէ գուք էլ պիտի սպասէք, որ Աղայեվը մեզ տայ այդ գաղտնիքի բանալին: Բայց իզնուր: Աղայեվ այդ յուզիչ, սիրտ մը մուացնող տարրերութեան պատճառներով չէ հետաքրքրում, նա այդ վրդովեցուցիչ հարկապատկերներից չէ հանում տրամարանական, կրթիչ դասը: Նա եռանդուն կոչ է անում մահմերականներին կարգալ զուրանը: Անկասկած մահմերականները՝ իբրև կրօնական ժողովուրդ՝ պէտք է դիմեն իրանց Ս. Գրքին, պէտք է կարգան զուրանը: Բայց մը թէ զուրանով միայն պիտի վերածնուի արաբական քաղաքակրթութիւնը իր աճիւնից: Դուրանը մի կրօնակիրք է, և ինչպէս ամեն կրօնագիրք, նա կոչուած է բաւականութիւն տալու հոգու պահանջներին, խոճի յարուցած հարցերին: Իսկ քաղաքակրթութիւնը, առաջադիմութիւնը հիմնուած է բանականութեան վրայ, և մտքին, բանականութեան սընդունդ է տալիս զիտութիւնը—այս բառը առնելով իր հին, ընդուրձակ իմաստով—այսինքն այն ամենը, որ մտնում են մարդկային ծանօթութիւնների շրջանակում:

Աղայեվը, ի հարկէ, մեղանից աւելի լաւ պիտի իմանայթէ ի՞նչն էր կազմում արաբական մեծութեան հիմքը: Ի՞նչն էր կազմում Ավերբուէնների, Ալ-Ռաշիդների փառքը:

—Որովհեաւ նրանք իրանց ժամանակի դիտութեան ջանակիրներն էին, որովհեաւ նրանք աշխատում էին ընդարձակել և խորացնել մարդկային մտածողութեանը, որովհեաւ նըրանք հանճարեղ աշակերտներն էին հելլենական և մատնաւորապէս արիստոտէլեան փիլիսոփայութեան, որը նրանք մեկ-

նում, մեկնաբանում և տարածում էին իրանց շուրջը: Երբ Վերածնուղի զործաւորները դեռ չէին հանել յոյն քաղաքակրթութեան յիշաստակարանները փոշիների տակից, արարներն էին, որ իրանց իմաստափրական աշխատութիւնների միջից ցոլացնում էին յունական միտքը: Պ. Աղայել, ձեր արդարացի հիացումով յիշաստակած «տեսակ տեսակ զրադարանները, համալսարանները, բարձր գպրոցները» պարծանքի առարկաներ էին ոչ թէ նրա համար որ այնտեղ դուրանն էր տիրապետում, այլ այն ժամանակուայ գիտութիւնը:

Հայրերը դիտութիւն, լոյս էին ազադակում, իսկ որդիները կրօնք, հաւատք են գոչում:

Ահա հրտեղ է հսկայ հայրերի և գաճաճ որդիների զանազանութիւնը...

Բայց շարունակենք, որովհետեւ պ. Աղայելը մեղ ուրիշ անակնկաներ ունի պահած: Նա հարց է տալիս, թէ ինչու է այդ տարրերութիւնը: Եւ պատասխանումէ.

—Որովհետեւ Աստուծոյ փորձանքն անցաւ մեր գլխի վըրայից, որովհետեւ մեղ ուղարկուած սուրբ գիրքը մոռացանք, հրաժարուեցինք նրա առաքինութեամբ օժտուելուց: Դուրսնի փոխարէն անիմաստ երազների, անմիտ ցնորըների ետեից ընկանք: Մեր աչքերը կապուեցին, մեր սրտերը ժանգուեցին, մեր խելքերը մոլորուեցին ու մեր ճամբան կորցրինք: Գայլի ընաւորութիւն ունեցողները զառնումկի մնրթի մէջ մննելով էլ աւելի շվիթութեան մատնուեցին: Ամենքը մեղ իրանց կողմը քաշ տալով՝ իրանց սեպհական նպատակներին ծառայեցրին: Մեր հոգին, մեր խելքը, մեր աշխարհն ու մեր հանդերձեալ կեանքը մեր ձեռքից խլեցին: Դարձեալ կրկնում եմ, այս բոլոր գժբախտութիւնների պատճառն այն է, որ մենք զուրանը մոռացանք, Աստուծոյ փորձանքը մեր գլխին իջաւ...»

Ահա այսպէս է տրամաբանում պ. Աղայել փիլիսոփայ հայրերի պարզամիտ զաւակը կարծում է, աւանդ, որ մահմեկանները արտքական գեղեցիկ բաղաքակրթութեան յարութիւն տալու համար պէտք է սրեն ոչ թէ իրանց միտքը, իրանց ուղեղը, այլ իրանց ատամները, իրանց ժանիքները. նրանք պէտք է դառնան «գայլեր», մանեն «գայլի ընաւորութեան», «գայլի մորթի» մէջ...

Բայց այսրանն արդէն բաւական է, այս անդամուայ համար: Մենք կը շարունակենք յաջորդ անգամ այս շատ հետաքրքիր ու տարօրինակ զասը, որ տալիս պ. Աղայել մեղ՝ իր յօդուածների ընթերցողներիս՝ թէ ի՞նչ միջնակով կարելի է

հասնել բողաքակիրթ կեանքի բարձրութեան։ Այժմ լսենք ու  
րիշ ձայներ։

\* \*

Մինչդեռ պ. Աղայեվ մահմեղականներին հրաւիրում էր  
կրօնը վերածնուել, Նրիմում հրատարակուող «Թէրջիման»  
լրագրի պատութեան համեմատ, մի խումբ կալկաթայարնակ  
մահմեղականներ իրանց հաւատակիցների փրկութեան միջոցը  
որոնում կրօնքի վերանորոգութեան ուղիներում։ Նրանք մը-  
տածում են, որ խլամական այն հաւատալիքները, որով զեկա-  
վարում են իրանց կրօնակիցները, հնացել են, չեն կարողա-  
նում զոհացնել իսլամի զաւակների քաղաքակրթական պահանջ-  
ները։ Այս կերպ խօսողների պարագլուխը՝ Սէյիդ Հայդար,  
Հնդկաստանի մահմեղական մի բարձրագոյն գպրոցի շրջանա-  
ւարա՞յիշեալ հարցի մասին մի միծ յօդուած է հրատարակել  
որը Հնդկաստանի բոլոր լրագրները անմիջապէս թարգմանել և  
տպել են, Այդ յօդուածով Սէյիդ Հայդար կոչ է անում բոլոր  
համախոններին, որ ժողովուին և իրանց զաւանաքը մի գըր-  
քում պարփակելով հիմքը դնեն իրանց կրօնքին։ Ահա թէ որոնք  
են այդ նորադանդների հաւատի հանգանակի գլխաւոր գծերը։

1) Զընդունել բարձրակիցնութիւնը, խլամական կրօնքը մի կնոջ  
հետ ամուսնանալը թոյլ է տալիս, և բազմակիցնութիւնը վե-  
րացնելուն համամիտ է։

2) Խոլամական կրօնը՝ կանանց բաց մաս գալը չէ արգելում  
և չի հրամայում անողատճառ ծածկուած լինել։

3) Խոլամական շարիաթը տոկոսը արտօնում է, այսինքն  
փողը փողով վարձու տալու մէջ անպատճութիւն չի գըտ-  
նում։ (?)

4) Ապահարզանը խիստ ձնով գրուելը հրամայում է.

5) Սուրբ զուրանը պէտք է մեկնել ժամանակակից ուս-  
ման և գիտութեան բարձրագոյն աստիճանի համաձայն։

6) Սուրբ զուրանը ուրիշ լեզուներով էլ թարգմանելով՝  
ուրիշ ցեղերի և ժողովուրդների (հելեի խոլամադաւան) էլ հաս-  
կանալի դարձնել, որպէսզի նրանք իրանց աղօթքները իրանց  
լեզուով կատարեն, ինչ որ խլամական օրէնքը թոյլ է տալիս։

Յօդուածադիր Սէյիդ Հայդարի համեմատ՝ մահմեղակա-  
նութեան ապագան, խլամիների բախտաւորութիւնը կախուած  
է այդ վեց պատուիրանների հաւատարիմ զործադրութիւնից։

«Թէրջիման» լրագիրը, որ տալիս է այս տեղեկութիւն-  
ները, որոնք, պէտք է ասել, բաւական շփոթ են—աւելացնում  
է իր կողմից։

«Առակն տուում է, ամենքի նորատակը նոյն է, ուղիսելն են ապրեր. ժամանակակից մահմետականների տմեն տեսակէտով յետամնացութիւնը հաստատում են ներկայ դարի զիտութեան և առաջադիմութեան ծանօթ մահմետական զիտականներն (կրօնաւոր) խկ. և հաւատակից եղբայրների բարերախտութեամ միջոցների մասին մտածելուն համար որ՝ այլ և այլ երկների խրամական քաղաքներում այս կարգի հաստակական վիճարանութիւններ տեղի են ունենում...»

Մենք ակնարկեցինք, որ Սէյիդ Հայդարի զեկավարութեամբ Հնդկաստանում ծնունդ առած վերանորոգչական շարժման մասին «Թէրջիման»-ի հաղորդած տեղեկութիւնները բաւական յատակ չեն: Արդարի հետաքրքիր էր իմանալ, թէ այդ շարժումը, որ՝ գարձեալ նոյն «Թէրջիման»-ի ասելով Հնդկաստանի մահմետականների միջև մեծ պառակտումների առիթ է զարձել, ի՞նչ նըկարագիր ունի. արդեօք մահմետական կրօնի էութիւնը անխախտ պահելով՝ ձգտում են նրա ձևերի և ձեւական կողմերի մէջ փոփոխութիւն մտցնել, թէ Սէյիդ Հայդար և իր կուսակիցները փորձում եմ հիմնել մի բոլորվին տարրեր կրօնք, ինչպէս օրինակ բարիականութիւնը, Պարսկաստանում:

Ցամենայն դէպս այդ շարժումը՝ Կովկասի մահմեդականներին, և, հաւանականաբար, այլ երկրներում ապրող խրամներին դուր զալու երևոյթը չունի: Գոնէ այդպէս է ցոյց տալիս Ռէշիդ էֆէսովի իրահիմոփի, «Մէրաթ» թուրք լրագրի խմբագրի մի ցատկոտ յօդուածը, որ տպուած է «Շարքի-Ռուսի» № 224-ում: Իրահիմոփ «Տահթակթիսսկիի աղբեցիկ աշխատակիցներից մէկը՝ «Թաղտքակրթութիւն, թէ տպիտութիւն» վերնագրուած իր յօդուածում բուռն կերպով յարձակուում է նախ «Թէրջիմանի» վրայ, որ «Հնդկաստանի անհաւատներից մէկի բերանով իսլամական մի նոր կրօնը է հիմնում» Յետոյ մի առ մի քննում և քննադատում է վերև առաջ բերուած վեց կէտերը: Իրահիմոփի յօդուածը շատ երկար է. կարելի է նրա ոգու մասին գաղափար կաղմել հետեւալ հատուածից.

«Այդ նորահաստատ կրօնի առաջին կէտի համաձայն՝ ամէն մահմետական մի կինով պէտք է բաւականանա, երկրորդը՝ —ամօթխածութիւնը վաճուում է, երրորդը՝ վճռապէս հարամ և զած բոնը հալալ է յայտարարում, չորրորդը՝ որքան կարելի է պոռնիկների բազմունալուն առիթ է հայթայթում, հինգերորդը՝ սուրբ զուրանը՝ աւետարամների և աստուածաշունչների կարգը զասելով՝ նրա մէջ պարունակուող պատուէրների գործադրութիւն է քարոզում:»

Թուրք տրամադրանութիւնը խսկապէս զարմանալի տրամա-

բանութիւն է: Խէշիտ էֆէնդի իրահիմովը սարսափում է այն մտքից, որ մի գուցէ զուրանը տարրեր ցեղի մահմետականների լեզուով թարգմանուի և մեկնաբանուի: Բայց ի՞նչ արծէք կարող է ունենալ այն կրօնագիրը, երբ նրա հետևողների համար նա կատարելապէս մեռած տառ է: Ի՞նչպէս այլացեղ մահմետականները իսլամի հետևողներ կարող են համարուել, լինել, երբ նրանք չգիտեն թէ ի՞նչ է պատուիրում իրանց կրօնքը:

\* \* \*

«Շարքի-Ռուսի» № 14-ի մէջ նոյն Արդ-իւլ-Ռէշիկ իրրահիմովը «Մահմետականների վարժապետանոցը» վերնազիրը կը- րող մի յօդուածով տեղեկութիւններ է տալիս այժմ գոյութիւն ունեցող թուրք վարժապետանոցի մասին:

Յօդուածագիրը պատմում է թէ Օրէնբուրգում մահմեդա- կաններն ունէին մի վարժապետանոց, որի նպատակն էր ուսու- ցիչներ պատրաստել խալամ զպրոցների համար: Այդ հաստատու- թեան ծրագիրը համահաւասար էր գիմնազիանների ծրագրին: Վարժապետանոցի տնօրէնը՝ կարող, ընդունակ, սուսերէն և թուրքերէն լեզուն լաւ ծանօթ մի մահմեդական էր. ուսուցիչ- ները նոյնպէս զարգացած մահմեդականներ էին: Դպրոցի դաս- աւանդութեան լեզուն թուրքերէնն էր. սովորեցնում էին և ո- րոշ չափով արաբերէն: Վարժապետանոցը հասցրեց բաւական թուրք ուսուցիչներ: Բայց այդ օգտակար հիմնարկութիւնը, յայտնի չէ ի՞նչ պատճառներով՝ Օրէնբուրգից փոխադրուեց Կա- զան: Կազանի մահմեդականների խնդրանքով՝ ուսուցչանոցի տնօրէն նշանակուեց մի մահմեդական և այն էլ ճշմարիտ մահմեդական: Եւ արդէն, դիտել է տալիս յօդուածագիրը, դպրոցի հիմնարկութեան ժամանակ՝ տեսուչի մահմեդական լի- ները անհրաժեշտ պայման էր: Բայց, Կազանում, նախ ուսու- ցիչները փոխուեցին, և քիչ ժամանակ յետոյ՝ տնօրէնը, որի տեղ զրին մի ոռուի: Այդ ոռուը անուսնացաւ մի խմամ կնոջ հետ... մահմեդական ծէսերի համեմատ: «Պուրբան» կտրեց, «Պուրբան» կարդալ տուեց և սամունութեան գիշերները իմամ- ներին փող ընծայեց: Ահա մինչև այս աստիճան՝ սուս- տնօրէնը՝ մահմեդականութիւն ընդունեց: Կազանի մահմեդա- կանները՝ մեր Եէնիկին տնօրէնը մահմեդական դարձաւ ա- սելով՝ հրճուեցին: Բայց նրանց ուրախութիւնը երկար չտևեց. բանից գուրս եկաւ, որ նրանք խաբուած են, այդ «ոռու»-ը ոչ այլ ինչ է, բայց եթէ մի հրէայ: Առա թէ ոչ, նկատում է իր- բահիմով, ի՞նչպէս մի ոռու կարող է մահմեդականութիւն ըն-

դունել, քանի որ այդ՝ օրէնքով արդելուած է Ռուսաստանում:

Մինչ այս, մինչ այն, դպրոցի նկարագիրը փոխվում է. աշակերտները կրթում, դաստիարակում են բոլորովին այլ ոգով: Նրանք սկսում են ծաղրել իսլամութիւնը: Այս վերջին տարիներս անհպատակայարմար կրթութիւնը այն տատիճան առաջ է գնում, որ մահմեդական աշակերտները զգում են դպրոցից և վարժապետանոցը չի ծառայում իր իսկական նպատակին:

«Կառավարութիւնը այդ ուսումնարանը բաց անել առեց այն նպատակով, վերջացնում է խօսքը յօգուածագիրը, որ ծառայէ զուտ մահմեդական շահերին: Սակայն վատ, յոսի վարչութիւնը դպրոցը այդ վրութեան հասցըրեց: Ի հարկէ այսուհետև ամէն մարդ պիտի խռուսափի իր գոււակը այդ ուսումնարանը ուղարկելուց: Մահմեդականները ոչ մի ժամանակ ուսումնից չեն խոյս տալիս. ուսումնը ամէնքի համար ցանկալի է, սակայն իթէ մահմեդականները մի փափառ ունին, այդ էլ կրօնքի և ուսումնաքի հաւասարապէս ծառայեն է: Մեր հայրերի և պապերի կրօնքը թողնելով ուսումն հետապնդել, ուսումն սուսնալ չէ. դա բարքերի տպականութիւն է պարզուպէս:»

\* \* \*

«Շարքի-Ռուսի» կարող աշխատակիցներից Դրիչ, որի մի քանի յօդուածները ժամանակին ծանօթացրել ենք արդէն մեր ընթերցողներին, նոյն լրագրի № 241-ում, «Մահմեդական լրագրները» վերնագրով մի յօդուածում ամփոփ տեղեկութիւններ է տալիս իսլամ պարբերական հրատարակութիւնների մասին, որոնց վերաբերմամբ մեր և օտար ընթերցողները համարեա կատարեալ խաւարի մէջ են:

«Այս աշխարհում, զրում է «Ղալէմ», ամեն մարդ մի բանի խենթ է. հանգուցեալ Զիա փաշան ասել է. «աշխարհում որպէս քան դլուխ, այնքան խենթ կայ:» Մէկը ձիուն է սիրում, միւսը շանը, միւսը կնոջը, միւսը գինի, մի ուրիշը նամակապրօշների, բաց նամակների ժողովածու ևայն. ևս էլ լրագրի խենթ էի. մի ժամանակ ինձ ծանօթ լիզուներով, թուրքերէն, արաբերէն, ֆրանսերէն, հրտեղ, ի՞նչ լրագրի հրատարակուիլը որ լսէի, անպատճառ նրանցից գոնէ մէկ քանի համար բերել պիտի տայի, իմանալու՝ թէ ի՞նչ ուղղութեան են հետեւում, ի՞նչ մտքեր են արծարծում: Մի լաւ զիրք, մի գեղեցիկ յօդուած կարդալով՝ մեծ զուարձութիւն էի զգում, մուանում էի իմ բոլոր վշտերը, բը նուրութիւնս մեղմանում էր, դէպի ամենը և ամենը բարու-

թեամբ, ոիրով լցւում էր...» Բայց, պատմում է յօդուաշագիրը՝ զաճառականութեան հոգսերի մէջ ընկղմուած լինելով՝ այժմ չեմ կարողանում այդ «խննիթութեան» լիովին բաւականութիւն տալ, մանաւանդ որ արտասահմանի լրագիրները իրանց համն ու հոտը կորցրած են մտնում Ռուսաստան, չնորհիւ զրաքննութեան։ Եւ որովհետև իր ծանօթներից շատերը դիմում են իրան՝ արտասահման հրատարակուող լրագրների մասին անդիկութիւն խնդրելու, նաև այս յօդուածը գրում է գրանց հետաքրքրութիւնը գոհացնելու համար։

«Արտասահմանում իւլամ լեզուավ լոյս տեսնող լրագրների ընթերցումից հրաժարուելուս դատճառները մէկից աւելի են։ Սյդ պատճառներից ամենալյաստորն այն է, որ կարգին անկողմնակալ, հիմնաւոր, ընդարձակ բովանդակութեամբ իւլամ լրագիր չկայ։ Խակ մեզ համար այդ տեսակ մի թերթ անհրաժեշտ է։ Թուրքերէն ամենամեծ լրագիրներն ու հանդէսները, բնականարար, Կ. Պոլսում են լոյս տեսնում։ Թիւրքերի մէջ շատ կան կարող, զարգացած անձեր, զբական և քաղաքական խիստ գեղեցիկ և հիմնաւոր յօդուածներ արտօնագրելու ընդունակ զրոյներ, զբականադէտներ և մինչև անդամ բանաստեղծներ։ Սակայն, Թիւրքիայում, զբարձնութիւնը չափազանց խիստ լինելով, առ հասարակ ոչ մի զրոյ իր զիտցածն ու մտածածը չէ կարողանում արտայայտել, կառուվարական ուղղութեան ինչ կերպ որ ձեռնառ է, այն կերպ զրում են, կամայ ակամայ։ Այս պատճառով էլ, այժմ շատ դժուար է Պոլսի լրագրներից մի բան օգտուել։

«Պոլսում հրատարակուում են հետեւեալ օրաթերթերը. «Իկուամ», «Թէրջիմանը-Հակիկիթ», «Սարահ»։ Պոլսի պատկերազարդ հանդէսներից լաւագոյնն է «Մէրվէթը Ֆինում»-ը։ «Մալիմաթը» ունի մի քանի հրատարակութիւն, քաղաքական օրաթերթ, շաբաթաթերթ, և նոյնիսկ ֆրանսերէն և արարերէն առանձին առագրութիւն։ Բայց նրա խմբագրի՝ էսուեյդ Մէհմէդ թահիրը \*) ըէզի հրապարակից քաշուելու պատճառով՝ այս խեղճ հրատարակութիւնները անհետացան։

«Բայց Պոլսի լրագրներից, եւրոպայում, Եգիպտոսում, Բուլգարիայում ևս մի շարք հրատարակութիւններ լոյս տեսան, որոնց մի քանիսը զեռ ևս շարունակում են հրատարակուել։ Սրանց մէջ, Բուլգարիայում լոյս տեսնողները, միշտ աչքի են ընկել իրանց դիւլահասկանալի լեզուով, ազատամտու-

\*) Թահիր բէզի, նրա շահատակութիւնների մասին կարգալ «Մուլթի» 1904 թ. № 4, «Պատուանշաներու առուտուրը» վերնագրով յօդուածը։

թեամբ և համարձակ խօսքով։ Բուլգարիայում հրատարակուող իմ ճանաչած լրադրներն են հետևեալները. «Դթթիֆագ», «Էմ-նէյէթ», «Ղայրէթ», «Մովազէնէ»։ «Մովազէնէ»-ից զուրո՞ միւն-ների հրատարակուիլն ու չհրատարակուիլը ինձ անծանօթ է այժմ։ «Մովազէնէ»-ն հրատարակուում է Թիլիպէում և բաժա-նորդագինն արժէ մօտաւորապէս 7 լուրլի։

«Եւրոպայում և Եգիպտոսում լոյս տեսնող լրադրների մեծ մասը, և զուցէ բոլորը՝ հրատարակուում էին Պոլսից հեռացած Երիտասորդ-Թիւրքերի ձեռքով։ Այդ հրատարակութիւնների իսկական նպատակը, ուղղութիւնն էր՝ բոլոքել թիւրք կառա-վարութեան վարչական գործունէութեան դէմ, առաջնորդել դէպի կրթութիւնն ու գիտութիւնը, առաջադիմութիւնն ու լոյսը։ Սրանցից ոմանք, թէկ որոշ չափով խիստ լիզու գործ էին ածում, բայց մահմեղականներին չէին զրգում ապստամբութեան, խառնակութեան և կամ ուրիշ ազգերի հետ թշնամութեան, հա-կառակութեան. նրանց միակ ցանկութիւնն էր կազմում ընդ-հանրապէս մահմեղականներին և մասնաւորապէս թիւրքերին մտցնել եւրոպական քաղաքակրթութեան մէջ և իրանց իրա-ւունքները պաշտպանելով իրրե մարդ ապրելու հրաւիրելու. Եւ-րոպայում և Եգիպտոսում ապրող Երիտասարդ-Թիւրքերի մէջ կան շատ ընդունակ, զարգացած գրադէտներ, կարող հրատա-րակախօններ, գիտուն բժիշկներ, և ուրիշ կարգի ինստելիգինա անձեր, որոնք զրչով և խօսքով ծառայում էին իրանց ժողո-վուրդին և իրանց լրագիրներով բաց էին անում մահմեղական-ների մտքերը, շարժում էին նրանց գութը, և մի խօսքով շատ օգտակար գործ կատարում։ Սրանցից շատերը, թէ քչէրը լոյս են տեսնում. չգիտեմ. ինձ ծանօթ լրագիրներն էին հետևեալնե-րը. Լոնդոնում՝ «Հուրրիյէթ», Պարիզում՝ «Ինջիլի Զավուշ», «Մէշվէրէթ», «Շուրայը Իւմմէթ», Ժընէվում՝ «Օմանլը», «Հա-կիկաթ», «Միզան», «Ինթիրահ», «Ինթիկամ», Եգիպտոսում՝ «Կանունը Էսասի», «Սանջակ», «Ֆէրետու»։ Մի ժամանակ Բոսնա-Հէրցէկում՝ «Ղաթան», և Կիպրոս կղզում՝ «Զէման» անունով մի լրագիր էին հրատարակուում։ Սրանց հրատա-րակիչները Երիտասարդ-Թիւրքերի կուսակցութեան չափակա-նելով՝ իրանց լրագիրները անկողմնակալ էին։ Այժմ չգիտեմ թէ ի՞նչ դրութեան մէջ են։ Ներկայում շատ են զովում Եգիպտո-սում հրատարակուող «Թիւրք» լրագիրը։ Եւ եթէ գատենք՝ «Թէրջիմանի» և «Շարքի-Մուսի» մէջ այդ լրագրից քաղուածօ-րէն առաջ բերուած յօդուածներից, երևում է որ նա անկողմ-նակալ, կարծիքը արձակ յայտնող, պարզալեզու լրագիր է։ Նրա-տարեկան բաժնեգինն է 5—6 լուրլիի չափ։ Եգիպտոսում ա-

լարերէն շատ կարգին լրագիրներ և ժողովածուներ հրատարակում են թէկ, բայց դժբաղդարար նրանցից օգտուելու կարող, արարերէնի լաւ ծանօթ անձեր մեզանում հազուալիւս են բայց և այնպէս մէջրէսէներում ուսանող մեր աշակերտները քսան տարի պարապւում են արարերէնով, իրանց հասակն առնում են շարունակ արարերէն սովորելով և սովորեցնելով! Դրա պատճառն այն է, որ մեր ուսումնարաններում կարդ, կանոն, մանկավարժական մէթոդ չկայ. օրինաւոր գասազրեր չկան:

«Արտասահմանի լրագրների ընթերցումից հրաժարուելուս պատճառներից մէկն էլ այն է, որ նրանք երբէք կանոնաւորապէս չէին սուայւում: Հաւաքը էին գրաքննական գրասենաեակներում. և մէկ էլ տեսար՝ 5—10 համար միասին եկան, և կամ ամիսներով ոչ մի համար չի հասնում: Եւ կամ առաջի համարները յետոյ, վերջի համարները առաջ են գալիս...

«Խուսաստանում ընդամենը չորս լրագիրը են հրատարակւում, որոնցից երկուսը համարեա ձեսկան, այս վերջինների բարբառներն անգամ տարբեր են. մէկը «զրդպերէն», իսկ միւսը «սարթերէն»: Սրանց թէ ըովանոպակութիւնը և թէ շրջանը շատ նեղ է. մեր թաթարները նրանց գոյութեան մասին անգամ անտեղեակ են: Մնացեալ երկուսը ծանօթ են արդէն. «Թէրջիման» և «Շարքի-Խուս», որոնք իրանց ջանքը չեն խնայում ծառայելու համար մեղ՝ թաթարներիս, և այս պատճառով էլ բոլոր թաթարները անհրաժեշտ պարտականութիւն ունին նրանց կարգալու և քաջալերելու:»

Ընթերցողները կարգալով այդքան խուսամական հրատարակութիւնների անունները, ընականաբար պիտի հետաքրքրութիւն իմանալու, թէ ի՞նչ զործ են կատարում դրանք: Դատելով մահմեղական աշխարհի ներկայ վիճակից, կարելի է հաստատապէս ասել—ոչինչ: Նրանցից մի մասը՝ երբեմն-երբեմն խիստ յօգուածներ հրատարակելով թիւրք կառավարութեան դէմ, ձգտում է շանտածի—կորպել փող, պատիւ ու պաշտօն: Իսկ մի այլ մասը վայելում է արդէն նորին վեհափառութեան «կարմիր Սուլթանի» բարձր շնորհը՝ հնչուն քաջալերութիւններով...

Տիգրան

## ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՐՀԻՑ

I, ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Զուարթնոց եկեղեցին

Ինչպէս ներկայ ժամանակիս, նոյնպէս ալ անցեալ հեռաւոր գալիքու մէջ, ազգի մը քաղաքակրթութեան և զարդացման ինչ աստիճանի վրայ գտնուիլը կապացուցանեն այդ պարին նոյն ժամանակի գիտութիւններն ու արուեստները: Այդ ապացոյցները՝ մինչև մեր օրերը հասած են մասամբ, աւելի կամ նուազ կանգուն մնացած յիշատակարաններու միջոցով և մասամբ ալ պեղումներու շնորհիւ:

Ո՞չ մէկ զրիչ և պատմութիւն այնչափ պերճախօս չեն կարող վկայել հնագարիան մարդկութեան նկարագրի մատին, որ չափ այն այլանդակուած, ժանդուած, հողաթաթախ առարկաները, որոնք գուրս կուգան բազմագարեան վրաստակներու տակէն, և իրենց մէջ կը ցոլացնեն նախնեաց ոգիին և արժանաւորութեանց ճշգրտագոյն պատուկերները:

Քաքաքակրթուած ազգերը միշտ ամենաարժանաւոր տեղը տուած են, շատ զարեր առաջ, իրենց զոյութեան կենդանի վկայ, և իրենց նախնիքներու հանճարին թարգման ամենաանպէտ կարծուած բոկորներուն իսկ: Միլիոններ ծախսած են զանոնք ինամքով պահպանելու համար, և հպարտ պարծանքով մը ցոյց կուտան աշխարհին: Մենք հայերս միայն անստարբեր զանուեր ենք այս մասին, մեր անցեալ քաղաքակրթութեան ապացոյցները ոչ միայն օտարներուն, այլ նոյնիսկ մեր հարազատ զաւկըներուն ցոյց տալու մէջ աններելի կերպով անփոյթ գտնուեր ենք:

Խօսքս մասնաւորապէս հայկական հին գեղարուեստի մասին է: Կ. Պոլսի Գեղարուեստից ձեմարանի ուսանողութեանս շրջանէն սկսած, մեծ հետաքրքրութեամբ կը թղթատի հատորներ, տեսնելու և ուսումնասիրելու համար հին և նոր ճար-

ապրապետական ոճերը: Դժբախտաբար, ոչ մէկ տեղ չի պատահեցայ «հայկական ճարսարարակետութիւն» խորագրի տակ բացուած քաթինի մը, ոճերու պատմութեան և ուսումնասիրութեանց շարքին մէջ: Հետևաբար, հայ ոճի մը գոյութիւնը չէի երեակայեր իսկ: Թէ մասնաւոր հատորներու մէջ պատահած եմ հայոց հին յիշատակարաններու և ճարտարապետական հասուլկուորներու, սակայն անոնք ալ բաւական չէին լիովին համոզելու՝ հայկական ինքնուրոյն ոճի մը գոյութեան: Այս տեսակէտով խիստ դատապարտելի են Կովկասի մէջ վաղուց ի վեր գոյութիւն ունեցող արուեստագէտները, որովհետեւ ամբողջ Կովկասը լցուն է հայ ճարտարապետութեան թանկագին գոհարներով և . ոչ ոք չէ մասածեր այդ գեղակերու նմոյշներէն օգտուիր, և կամ դոնէ հայ սիփականաւորներու շինքերը դարպարել հայ ճարտարապետութեան սուանձնայատուկ մանրամանութիւններով:

Ալէքսանդրապոլի հայ ժողովուրդը միայն, առաջինը և վերջինը՝ աղնիւ նախանձախնդրութիւնն ունեցեր է, հայ ճարտարապետութեամբ և մասնաւորապէս Անիի կաթողիկէ մայր եկեղեցին ճիշտ համանման եկեղեցի մը շինելու: Սակայն, ինչ պէս կ'երեմի, շատ մը աեցերու ժողովով պէս, շվոյթելով ճարտարապետի մը և հասարակ քարտաշ վարպետի մը արժանաւորութեանց աստիճանը, առաւելագոյն բուէն տուեր է հասարակ քարտակոփներու: Եւ այդ պատճառով ալ իրենց եկեղեցին, հայկական ոճէ և Անիի մայր եկեղեցիին նրբութիւններէն ու վայելչութիւններէն զուրկ ըլլալէն զատ, արաբական անհամ քանզակներով ծանրաբեննուած զանգուած մը եղեր է:


Եւրոպացիներ մեզմէ շատ աւելի են հատաքրքրուեր մեր հին ալուեստներով: Վերջին 60—70 տարուան մէջ, շատ մը եւրոպացի գիտնական ճանապարհորդներ հետաքրքրութեամբ շրջեր են հայոց հին աւերակները, քիչ թէ շատ աշխատեր են չափազիւ, զծագրել: Հայր Ալիշան ահա այդ աշխատութիւններէն օգտուեր է: Այդ ճանապարհորդներու աշխատութեանց մէջ զիմանց տեղ կը բռնեն Բրոսսէի և Տէքսիէի գործերը, բայց դժբաղդաբար, անոնք ալ, կը համարձակիւմ ըսելու որ գրեթէ անոլէտք են: Վասնզի նկարագրական մասերը միշտ շփոթ, մէկը միւսին տեղ առնուած, իսկ արուեստական մասերը բոլորովին սիսալ և այլանդակուած են: Զափերու, ձեերու խոշոր սխալներէ զատ՝ նկարուած են այնպիսի կառորներ, որոնք բնաւ գոյութիւն չեն ունեցեր տեղին վրայ. և ասոր հակառակ՝ անտես ըրած են այնպիսի հրաշակերտներ, որոնք իրաւամք հիացում պիտի պատճառէին ներկայ գիտական ու գեղարտեստական աշխարհին: Այս խեղաթիւրուած մասերը մի տու մի կը ներկայացնեմ յետոյ:


Ես այս ամենը տեսայ, երբ երկու տարի առաջ այցելեցի Անին: Զարմանրով կը դիտէի չորս կողմո, և չէի ուզեր հաւատալ տեսածներուս իրականութիւնն: Օր օրի հետաքրքրութիւնս կ'աւելանար, և ամենէն աննշան քարակոյտերն իսկ բանի ուշադրութիւնո կը հրաւիրէին իրենց վրայ: Ամեն կիսափուլ շնչք, ամեն բլրացած հողակոյտ իր ծոցին մէջ առատօրէն պահած էր գեղաքանգակ սիւներ, խոյակներ, պատկներ, և խաչքարեր, որոնց առջև մեր բարեպաշտ քրիստոնեայ մամիկները՝ ժամերով ծնկաչոք՝ կուրծքերնին ծեծեր էին:

Ամեն բան թէկ հին, բայց նոր էր ինձի համար, նոր թէ ձևով և թէ ոճով. առաջին անգամն էր որ կը տեսնէի այդ բուրը: Իրարու յաջորդող զանազան զգացումներու՝ յուզումի տիրութիւնն և ուրախութիւնն մէջ երկար տարուքերուելէ յետոյ, սիրով փարեցայ մեր պատկերէն մեղ միակ ժառանգութիւն մնացած այդ տխուր և սրբազան յիշատակներուն: Ուխտեցի մնալ այնտեղ, աշխատիլ, տքնիլ, մէկ կողմէ աշխատութեանըս արդիւնքը հայ ժողովուրդին ներկայացնելու անխառն ուրախութիւնը վայելել, իսկ միւս կողմէ, մեր ցեղի հանճարի չնաշխարհիկ լեկորները՝ փլատակներու և գերեզմանական տիսոք հողակոյտերու տակէն ազատելով՝ ցոյց տալ նաև ամբողջ գիտեկան աշխարհին: Կը յուսած այսպէսով մասամբ թեթևացուցած ըլլալ անսարբերութեան մասին մեր վրայ բարգուած դառն մեղադրանքը, և հաստատել թէ՝ հին գարերու մէջ, մենք ալ ունեցեր հնք մեր ինքնուրոյն քաղաքակլրթութիւնը, արուեստները, և գիտցեր ենք ապրիլ ոչ թէ իրեւ գնչուներ, վրանարնակ թափարիկ ցեղեր, ինչպէս կարծեցին քանի մը ցամաք պատմաբաններ, այլ իրեւ մարդ, իրեւ կուլտուրական ժողովուրդ, որ իր անթիւ տառապանքներուն և գերազութիւններուն մէջ չէ մոռցեր ստեղծել գեղեցիկն ու վսիմը:

Որչափ որ նպատակս էր Անիի կանգուն, կիսականգուն շնչքերը չափագրել, փլատակները հնար եղածին չափ վերակազմել, բոլոր՝ գետինները թափած ճարտարապետական բեկորները, ոչ մէկը անկարեւոր չի համարելով՝ խզճմտօրէն լնդորինակել, միւս կողմէ ալ գաղափար յղացայ, Անիի սկզբնական շրջանէն այնչափ զարգացած և ճոխացած ճարտարապետական արուեստին սկիզբը կամ ծագումը գտնել:

Պատմագիրներու նայելով Անին ծաղկիլ սկսեր է 9-րդ դարու վերջերը: Նոյն ժամանակէն գոյութիւն ունեցող շնչքերն անհերքելի կերպով կապացուցանեն թէ միւնոյն դարուն՝ Անիի մէջ ճարտարապետութեան արուեստը բարձրագոյն աստիճանի մը հասած էր. և այդ ժամանակի շնչքերն են որ յստակ կերպով





quarto. 6.




Diagram 1




Diagram 2



ցոյց կուտան հայ ճարտարապետութեան ինքնուրոյն տիպը, որը ժամանակի ընթացքի մէջ հետզհետէ այլափոխուեր է մասսամբ, օտար ճարտարապետութիւններու աղդեցութեան տակ, ընդունելով և ձուլելով իր մէջ օտար ոճերու մասունքներ։ Այդ մասին յետոյ պիտի գրեմ, ցոյց տալու համար բոլոր օտարածուտ մանրամասնութիւնները և հատուկոտորները։

Հայ ճարտարապետութեան ինքնուրոյն ոճին ուրուագիծը կամ ծագումը դաշնելու համար պէտք էր դիմել հսագոյն յիշատակարաններու։ Առիթը ներկայացաւ ինծի, երբ այցելեցի էջմիածինէն չորս վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Առապարի և Թրիգոր կամ Զուարթնոց եկեղեցիի աւերակները, ուրոնք նշխարներն էին 7-րդ դարուն շինուած հոյակապ գործի մը։

Այստեղ հիացումս ալ աւելի մեծ եղաւ, որովհետեւ, թէնքանի մը դար աւելի հին քան Անին, բայց արուեստի տեսակէտով աւելի վսեմ հրաշալիքներ կը պարունակէր. կային այնպիսի նորութիւններ, որոնց դիտական, ճարտարապետական խիզախութիւնը ժամանակակից արուեստագէտներէ ուժանց պատրանք թուեցաւ։

Զուարթնոց և կեղեցիի մասին, էջմիածնի միաբան Մեսրոպ վ. Տէր-Մովսէսեան՝ քննական, նկարագրական և պատմական մանրամասն տեղեկութիւններ պարունակող ընդգրծակ գործ մը պատրաստած ունի, որը շուտով լայ կը տեսնէ. ընթերցողներուն կը յանձնարարեմ այդ բաղմաշխատ և հետարքիր գործը. իմ նպատակէտ դուրս է այդ եկեղեցիին փառքն ու շուքը նկարագրել. ես պիտի ջանամ իր խոշոր ոճերուն մէջ ցոյց տալ այն ուսումնասիրութիւնները, որ ես կատարեցի այս եկեղեցիի կազմութեան, ոճի և արուեստագիտական դմայլելի նըբութեանց, տարողութեանց (résistance) հաշիւններու և ներկայիս անհաւատալի կերպով յանդուզն վատահութեամբ կառուցուած մասերուն վրայ, որոնց քննութեան նուիրուեցայ մօտ երեք ամիս շարունակ։

Առաջ, մտազիր էի միայն բնկորները չափագրելով բաւականանալ, սակայն, երբ սկսեցի լրջօրէն քննելու և բեկորները չափելով տեղին վրայ համեմատելու, այն ատեն համոզուեցայ, որ գտնուած բնկորները բաւական պիտի ըլլային ամբողջ շէնքը փերակազմելու (restituer), եթէ սակայն մասամբ ևս շարունակուէին պեղումները։

Տեղին պահապան Խաչիկ վ. Դատեան, մեծ փութաջանութեամբ վերսկսեց ընդհատուած պեղումները, փափաքելով պըսակուած տեսնել իր նախընթաց չորս տարիներու տաժանակիր ջանքերն ու աշխատութիւնները։

Անձամբ հսկեցի պեղումներուն, և մի տու մի չափազրեցի, բաղդատեցի, համեմատեցի իւրաքանչիւր քարի, բեկորի ինչած աելն ու զիրքը: Ապարդիւն չանցու այս վերջին աշխատութիւնու նպատակիս հասած էի գրեթէ:

Այս վիթխարի աւելակին մէջ ինձ հաճովապատ արուեատագիտական հսկայ մեծագործութիւնները և գիշարուեատական նրբութիւնները աւելի պարզ ցոյց տալու համար, հարկ համարեցի ընդհանուր յատակագծի մը հետ տալ նաև անոր կաղմական կարեռը մասերու քանի մը ուրուագծերը:

Եինութեան ոճին վրայ գրելէ առաջ, պարզեմ անոր ընդհանուր կազմութիւնը հաստատուն փաստերու վրայ հիմնուած, որոնք մինչև այժմ գոյութիւն ունին այնտեղ, և զորս ամեն ձեռնհաս անձ կարող է ստուգել: Իսկ ինչ որ իմ կողմէ ենթադրութիւններ են, անոնք ալ կը յանձնեմ արուեստագիտներու բուրջ ուշագրութեան:

Տեղին վրայ մտամբ անաղարտ մնացած է միմիայն յատակագիծը, որուն զրոյի կողմէն, տեղ տեղ, կը նշմարուին աստիճաններու մնացորդները. իսկ ներսի կողմէն գրեթէ անմաս է: Ինչպէս կերևի յատակագծէն (<Պատկ. Ա.>) շնչքին ամերող ջութիւնը մեծ բոլորակ մըն է, որուն տրամագիծը ՅՅ, ՅՅ մետր: Արտաքին պատը զրոյն անկիւնաւոր է, իսկ ներաէն բոլորովին կլոր. այդ կլորութեան վրայ շարուած են 64 կիսամիւներ 24 սանտ. տրամագիծով: Մէկոմէկէ ունիցած հեռաւորութիւնները երկու հաւասար չափերու բաժնուած են. գոներ և պատուհաններ գանուած սիւնամիջոցներուն (entrecolonnement) լայնութիւնն է 1,68 մետր, իսկ անմիջապէս անոնց կից եղողներունը 1,18: Այսպէս մէկ լայն, մէկ նեղ սիւնամիջոցներ յաջորդաբար շարունակուած են ամբողջ բոլորակին վրայ:

Եկեղեցիի կեղրոնէն հաւասար հեռաւորութեան վրայ զետեղուած են չորս մեծ, լայնանիստ և հաստահեղոյս մայր սիւները, (<Պատկ. Բ. 1>) և այդ սիւներուն միացած են չորս կիսաբոլորակները (<Պատկ. Բ. 2, 3, 4, 5>), որոնց մէկը գոց պատ մընէ և կը կազմէ սեղանը, իսկ միւս երեքը սիւնագարդեր են. այսպէսով եկեղեցիին ներքին մասը՝ ստացած է կիսաբոլորակներէ կազմուած խաչածն մը՝ կեղրոնը ունենալով մէկտութեան նախկին աւագանը (<Պատկ. Ա. 1>), որը մէկ կողմանէ հայոց սկիզբէն ի վեր աւանդաբար ընդունած խաչածն, խորհրդաւոր յատակագիծը կը ձեացնէր, միւս կողմէն ալ, ատաճարը՝ աղօթող ժողովուրդի մասէն կը բաժնէր (<Պատկ. Ա. 2>):

Ահա այս տեղէն կըսկսի երենալ ճարտարապետին բար-

մակողմանի հմտութիւնը։ Գեղարուեստական ճաշակի մտավն կը լվայէն նուռը ու գեղեցիկ քանդակները և անոնց վայելուչ պատշաճութիւնով զասաւորութիւնը։ ասոնցմէ զատ զարմանալու աւելի մեծ պատճառներ ունենք. այդ շնչքի կը մախքին կազմութիւնն է, որուն խիզախ յդացումները անսպասելի էին 7-դ դարու Աքելքի ճարտարապետութիւնն։

Առաջին առթիւ մարդ պահ մը կը շուարի յատակագծին վրայ շտո մը անօրինակ ձեւրու առջե, տեղ տեղ կը տեսնուին կարծես անհապատակ դրուած սիւներ, խորշեր, տարօրինակ ձեւրով խոյակներ, ոսկայն երկար հետազօտութենէ յետոյ տառնը այնպիսի վայելուչ կերպով իրենց տեղերը կը բռնէն, որ այլև ճարտարապետի հանճարին և հնարամտութեան՝ վլայ զարմանալէ զատ մեզի ոչինչ չի մնար ընել։

Ինձի պէս շատեր երկար ժամանեցին, թէ ի՞նչ ովատճառով դեռևուած էին գմբէթակիր մայր սիւներու ետեղ չորս մեծ, անջատ, կլոր սիւները (Պատկ. Բ. 6, 7, 8, 9), որոնք բացի այն որ սիւնազարդի սիւներէն աւելի հասու էին, ունէին բոլորովին արաստովոր ձեռվ, անհաւասար կողմելով տարանկիւն խոյակներ, որոնց ճակտին վլայ քանդակուած էին գեղակերտ, թետապած մեծ արծիւներ։

Ինձի հնագիտետ պարզուեցան այդ բոլորին ովատճառները։ Այդ արտասովոր խոյակներով սիւները այդ տեղերը դրուած էին, ոչ թէ զարդի և վայելչութեան համար, այլ իրենց յատուկ խիստ կարեւոր պաշտօններով, որոնց մէկն ալ, կարծես, ի միջի այլոց, մեղ հրաւիրել էր 14 դար յետոյ ժամանակի մեծ վարպետի հանճարին առաջ յարգանքով ու ակնածանքով խոնարհիր։

Ներսի խաչածե մասը ծածկուած է եղեր գմբէթով, իսկ զրսի ազօթող ժողովուրդին բաժինը շուրջանակի կամարով։ Բայց ի՞նչպէս կարելի էր դրսի բոլորակ պատէն կամար մը դարձնել դէպի ներս, ամբողջ բոլորակի շրջանակին վրայ, բանի որ ընական օրէնքով պէտք էր որ գտնուէր ներսը, դրսի պատին զուզահեռական յենակէտ մը կամ պատուանդան մը, որպէսպի դրուէն մեկնող կամարը կանոնաւոր կերպով գտը և հանգչը ներսի պատուանդանին վրայ։

Ներսի կիսարողակներէ կազմուած խաչածե մասը ոչ միայն զուզահեռական չէր զրսի պատին, այլ և զանազան անկանոն ուղղութիւններով ներս մատած, զուրս ելուծ էր։ Ուստի ճարտարապետական նոյն զարու նորահաւատ քրիստոնեաներու նույիրական խաչածե պահելու համար՝ գիմեր է այդ չորս մեծ արծուեխոյակ կըող սիւներու օգնութեան, որպէսզի անոնց միջու

ցով կազմէ գրսի պատին զուգահեռական բոլորակ խարիսս  
մը, ծածկելու համար աղօթող ժողովրդի բաժինը: Արդ, ճար-  
տարապետը այնպիսի տեղ մը զետեղեր է այդ չորս մեծ սիւ-  
ները, որ լիովին տուեր են պահանջուած գրսի պատին զուգա-  
հեռական գիծը: Կեղրոնքն հաստար հեռաւորութեան վրայ  
կը գտնուին թէ արծուեխոյակ կրող սիւները և թէ խաչաձեկի  
կիսարոլորակներու մէջտեղի սիւները. այնպէս որ, եթէ կիսա-  
րոլորակներու մէջտեղի սիւներուն կեդրոնէն (Պատկ. Բ. 10)  
սկսած գրսի պատէն զուգահեռական բոլորակ մը (Պատկ. Բ. 12)  
գծենք, գիծը կ'անցնի ուղիղ արծուեխոյակ կրող սիւներուն ալ  
ճիշտ կեղրոնքն (Պատկ. Բ. 11):

Գծին ուղղութիւնը գանելը բաւական չէր. պէտք էր այդ  
ուղղութիւնով հաստատուն պատուանդան մը շինել. այսուել յը-  
զացեր է հանճարեղ ճարտարապետը յանդուզն զաղափար մը.  
ունենալ բոլորակ պատուանդան \* մը, կախուած միծ մասամբ  
օղին մէջ: Նախապէս չորս արծուեխոյակաւոր սիւները գմբէ-  
թարդ կամարներով միացուցեր է ևտեի մայր սիւներուն, յևոյ  
այդ չորս սիւներու խոյակներուն վրայէն սկսելով գրսի պա-  
տին զուգահեռական կորութեամբ գէպի աջ ու ձախ կողմերը  
աղեղներ ձգեր է, որոնք կնացեր հանգչեր են սիւնսաղարդերու  
մէջտեղի սիւները իրարու միացնող կամարներուն վրայ (Պատկ.  
Բ. 10): Այսպէս յաջորդաբար ձկուած ութ գորեղ աղեղներն  
(Պատկ. Բ. կ, կ, կ, կ, կ) իրենց մէկ ծայրին յենակէտ  
ունենալով արծուեխոյակները, միւս ծայրին սիւնսաղարդի միջին  
սիւները կապող կամարները, տուեր են բոլորովին հաստատուն  
բոլորակ պատուանդան մը դրսի պատէն մեկնող կամարին և  
միանդամայն զուգահեռական գրսի պատին:

Կիսարոլորակներու մեծ սիւներու եւս միացած տեղերը  
որ վրայի բոլորակ պատուանդանը կազմելէ յետոյ եռանկիւնի  
ձեռվ բաց կը մնային (Պատկ. Բ. 13) լիցուած և ապահովուած  
են քանզակազարդ, գմբէթարդ կամարներով, որոնք \* սկսելով  
սիւնսաղարդի աղեղներու անմիջապէս վերևէն կը համարէն մին-  
չև ութ մեծ աղեղներու ստորին շրթունքներուն:

Կը մնար մեզ մտածել թէ արդեօք կարելլ՝ էր առնուազն  
տասը մետք երկայնութիւնով, այզպէս մէկ կէտէն գէպի  
միւսը կոր գծով ձգուող աղեղներու հաստատութեան և ապա-  
հովութեան վստահիլ, բանի որ այդ աղեղները սահմանուած  
էին իրենց վրայ կրելու կարգ մը պատերու, կամարներու, տա-  
նիքներու եայն ահեղ ծանրութիւնները: Անշուշտ ճարտա-  
րապետը հաստատ համոզուած էր որ, գրսի պատէն մեկնող

կամարին ներսի կողմի կողերը բաւական գօրտոր յենարանի պաշտօն պիտի կատարէին:

Արտարին պատին միայն երեք աստիճաններն են բոլորակ, աստիճաններէն վեր բոլորակը բաժանուած է 32 անկիւններու կամ կողմներու, հաշուելով նաև ետեսի քառակուսի մասնին բոլորսկին վրայ զրաւած տեղը: Խրաքանչիւր կողմերը միացնող անկիւններուն կպած են զոյդ որմասիւներ քանդակագարդ խոյակներով, այս սինէրն ալ իրարու միացած են խաղող, նուռ և ուրիշ գեղեցիկ տուլուր-ներ քանդակուած կամարներով:

Այս ամեն կամարներու տակ, բացի հինգ դռներէն (Պատկ. Ա. 14...), վերև կիսարոլորակներով վերջացող երկայն պատուհաններ շինուած են 1,20 մետր լայնութիւնով: Այդ զոյդ որմասիւններու իրաքանչիւր խոյակէն վեր, աղեղներու միացած մասին վրայ քանդակուած են եկեղեցիի շինութեան ժամանակակից աշխատաւոր եկեղեցական և աշխարհական անձերու բարձրաքանդակ պատկերները, բանալի, բահ, բրիչ կամ այլ գործիքներ բունած ձեռքերնին: Մասնաւորապէս ուշագրաւ է պատկեր մը, որուն գլխի վեղարը ցոյց կուտայ թէ եկեղեցական մըն է, որը մէկ ձեռքով բահ և միւս ձեռքով բրիչ բռնած է, և որու գլխուն շուրջը գրուած է «Յօհաննա» անունը:

Շուրջանակի այս կամարները ձգուելէն յետոյ նուան և խաղողի քանդակներով զարգարուած գօտի մը կը շրջապատէր շէնքը: Այդ գօտին կամարներէն բարձր էր, 30 սանտ., հորիզոնական գծով: Խոկ վարի կողմերը՝ եռանկիւնի ձեռվ ամփոփուելով իրարու մօտեցող կամարներու մէջ, իջած էին մինչև բարձրաքանդակ պատկերներու գլխին վերև:

Այս քանդակագարդ գօտիէն վեր, մէկ մետր տեղ որրատաշ քարերով պարապ ձգուելէն յետոյ զետեղուած են զանազան տեսակ շրջանակներով քանդակազարդուած բոլորակ պատուհաններ, որոնք իրենց շրջանակներով միասին 2 մետր տրամագիծ ունին: Այս պատուհաններն ալ վարի մեծ պատուհաններուն ճիշտ վերև մէկ ուղղահայեց գծի վրայ կը գտնուէին: Այս երկրորդ շարքի պատուհաններէն վեր ալ գարձեալ մէկ մետր ուրբատաշ բարերով պարզ պատ հիւսուելէն յետոյ, դրուած է պսակը և պսակէն յետոյ արտաքին մասը ծածկող տանիքը:

Խաղող և նուռ քանդակուած գօտիէն վեր մինչև պսակը, շնչքին շրջանամուկը փոխանակ 32-ի բաժնուած է 64 անկիւններու: Այս հնարամիտ գործողութիւնով այնքան բթացեր են անկիւնները, որ շրջանակը անկիւնաւորէ աւելի բոլորակի եւ բեոյթը ստացեր է, և այսպէսով հնարաւոր եղեր է խուսափիլ

վրան զըռւած բոլորովին կլոր պսակին տակը զոյանալիք սուր անկիւններու անախորժ երևոյթէն և միւս կողմէ դիւրացուցեր է նաև կլոր ծածկոյթ մը շինելու գործողութիւնը:

Նախ բան զմբէթին կաղմուկիլը, ինչպէս ցոյց կու տան բեկորները, զրսէն եկող կամարը, ութ աղեղներէ ձեացած բոլորակ պատուանդանին վրայ հանդչելէ յիտոյ, ուրիշ պատմը շարունակուած է բարձրաման նոյն բոլորակ պատուանդանին վրայ:

Այս վերջին պատճին զուգահեռական կուրութեամբ հաւասարապէս բարձրացած էր երկրորդ պատ մը, որը իրք պատուանդան ունեցեր է մեծ մայր սիւները իրարու միացնող աղեղներու միջոցով կազմուած օղակը (Պատկ. Բ. 15) և հաւասարանարար, այս պատը ոչ թէ զոյց, այլ սիւնաղարդ մը եղած լլալու է: Այս սիւնաղարդի և իր գիրմացը գոնուող՝ իրեն զուգահեռական պատի մէջտեղ մնացած պարտապութիւնը դրացած էր ասնուազն չորս մետր չայնութիւնով galerie մը առաջին ծածքին տակ, որը շատ հաւասականարար ծառայեր է իրը վերնատուն, որուն վրայ կը բացուէին մայր սիւներու վերին մասերուն մէջ շինուած պահարաններու մուտքի դռները: Բեկորներու մէջ այս պահարանները խիստ որոշ կերպով կերպին, (Պատկ. Գ. 1.) որոնք երկու բաժանում ունեն և իրարու համ կը հազարկակցէին կամարական գոնով մը (Պատկ. Գ. 3): Իսկ թէ այդ պահարաններու մուտքի դռները մը կողմի վրայ բացուած էին, յայտնի չէ:

Փակագծի մէջ ըսենք որ, պեղման ժամանակ, հարաւարեւեան սիւնին վրայի պահարանի փլատակներէն իմ ներկայութեան դուրս եկան, ծալ ծալ' իրարու վրայ շարուած՝ զոյնըզգոյն զղեստեղիններ՝ բոլորովին մոխրացած, բազմաթիւ կանթեղներու կտորներ և կանթեղներ, ջահեր կախելու յատուկ պղնձէ կեսեր են:

Այս երկրորդ պատերու մասերն ալ որոշ չափով բարձրանալէ յետոյ, ծածկուած է գմբէթը, (գմբէթին բարձրութեան ճիշտ չափը յայտնի չէ) հաւասականարար զնդանեւ, որովհետեւ աւերակներուն մէջէն դանուած են կղմինարներ, որոնք դէպի երկանքը թեթև կորութիւն մը ունին, ատկէ կարելի է հետեցներ թէ գմբէթը զնդանեւ եղած լլալու է, թէպէտ և նոյն ժամանակին շինուած հայ եկեղեցիներու գմբէթները միշտ կոնածեն են:

Ինծի յայտնի չէ արևմտեան կողմի քառակուսի մասին ինչ ըլլալը (Պատկ. Ա. 4), միայն այսչափ կրցայ հասկանալ որ անիկայ երկյարկանի էր, տակի յարկը, մէջտեղի քառակուսի մեծ սիւնին օգնութեամբ երկու կամարներով ծածկուած էր

հիեղեցիի յատակէն առ առաւելն մէկ և կէս մետք բարձր. և  
յետոյ կը կին բառակուսիին վրայ շաղունակուած էր դրսի պա-  
տը, որը ապահովարար այնչափ բարձր չէր, որչափ եկեղեցիի  
առաջին յարկը:

Ես կէնթագրեմ որ այս մասին մէջ կը գտնուեր վերնայարկ  
զալոցին մուտքը, ապա թէ ոչ ներսէն ոչ մէկ տեղ սանդուխի  
հետք չի կայ, դէտի գալլողի կոմ վերնայարկ պահարանները  
բարձրահալու համար:

Անապատշաճ է կարծել որ շարժական փայտէ սանդուխնե-  
րու միջոցով գործածութեան մէջ դրուած ըլլան այդ վերնա-  
յարկ պահարանները:

Նաև որ այդ բարձրութեան չտիով ամենաթեթև փայտէ  
շինուած սանդուխն անգամ, նոյնիսկ երեք մարզու համար գիւ-  
րատար բան չէր ըլլար. և երկրորդ, չի մոռնանք մահա-  
ւանդ նկատել, թէ այդ տեսակ հսկայ շինքի մը ճարտարապե-  
տը, որ հանձարի թափչքներ ունեցերէ, որ դիտցեր է տմին բան  
անհման վայելչութեամբ, հիմնալի պատշաճութեամբ և հաղուա-  
զիւս նըրամութեամբ յդանալ, դասաւորել և զարդարել, միթէ  
կարող էր շարժական սանդուխով մը բարձրանալու հասարակ  
ու գոեհիլ միջոցին դիմել: Այս ենթաղրութիւնը պարզապէս  
նախատական կը գանեմ այդ մէծ արուեստագէտի հանձարին  
համար:

Զուարթնոց եկեղեցին ընդհանրապէս հոռվմէական, բիւ-  
զանդական, յունական և հայկական ոճերու խառնուրդ մը կը  
ներկայացնէ: Իր ընդհանուր ձևով մինչև հիմայ գոյութիւն ու-  
նեցող թէ հին և թէ նոր ոչ մէկ եկեղեցիլ նման չէ. գոնէ ես  
առաջին անգամն է որ կը հանդիպիմ եկեղեցքի մը, որուն  
մէջտեղը դրուած ըլլան սեղանը և տաճարը, և անոնց շուրջը՝  
ամբողջ ուղանին հտեի մասն ալ միասին առնելով, յատկա-  
ցուած ըլլայ ազօթող ժողովուրդին:

Այս ձեզ ինձի կը յիշեցնէ Սողոմոնի տաճարը, որուն կեդ-  
րնը դրուած էին սրբութիւն-որբոցը և տապանակ ուխտին,  
որոնց ասջն կ'աղօթէին քահանայապետները, տապանակ ուխ-  
տին և քահանայապետներու յատկացած մասը բաժնուած էր  
քառակուսի սիւնազարդով, որուն եակը շուրջանակի կը կենար  
ապաշխարող ժողովուրդը: Թերես քը իստոնէութեան նորադաձ  
հայերը՝ Ենովայի մէծ մարգարէին, Խսրայէլի իմաստուն թագա-  
ւորին հոչակտոր տաճարէն աղջուած ըլլան իրենց եկեղեցին  
շննելու ժամանակ. և իրրե քրիստոնեայ՝ փոխանակ սրբու-  
թիւն-որբոցի և քահանայապետներու բաժնի նման քառակուսի

ձեւ տալու, քրիստոնէութեան խորհրդանշանին ձեզ տուած են, խաչաձև շինած են:

Մեծ սիւներու խարիսխները բիւզանդական են, իսկ խոյակները բոլորովին ինքնատիպ, բացի վրաները յարմարցուած յունական խոյողներէն (volute): Կողովներու մանուածոյ քանդակները զուտ հայկական են: Բոլորովին ինքնատիպ է նաև արծուեքանդակ կրող խոյակներու ձեզ, որը միմիայն Զուարթնոց եկեղեցիին մէջ գործածուած է. պէտքն է որ ստեղծեր է այդ ձեզ և արտասովոր մէծութիւնը, և ոչ թէ ճաշակը. այդ խոյակներուն վրայ է որ նստեր են աջ ու ձախ կողմերէն՝ ութ մէծ աղեղներու իւրաքանչիւր ծայրերը, ետեւ կողմէն վիրհնք մայր սիւներուն միացնող գմբէթներու ոտքը, և առջևէն, դրսի պատէն մեկնող կամարին մասը: Այդ ձեռվ և այդ մէծութեամբ խոյակ մը միայն կրնար հանգիստ տալ չորս զանազան կողմերէ անհաւասար չափերով և անկանոն ուղղութեամբ եկող կամարներու ծայրերուն:

Ներսի բոլորակ պատին կպած փոքր որմասիւներու խոյակները զուտ, հոռվմէական են, լերկ կմախը կորնթական զարդախոյակներու, այս ձեզ շատ յաճախ գործածուած է հոռվմէական հին շէնքերու մէջ: Նոյնպէս արտաքին երեսի զոյդ սիւները միացնող կամարներու խաղող քանդակուած մասերը հոռվմէական են, միակ տարրերութիւնը այն է, որ Զուարթնոցի կամարներուն վրայ քանդակուած խաղողին տեղ՝ հոռվմէացիներ քանդակած են իրենց ոճին յատուկ ծաղիկներ և տերեներ՝ նոյնպէս ոլորուն ցօղունի մը վրայ: Իսկ տուլրեներուն մէջ բիւզանդականին խառն հայկական գծեր կը նշարուին, թէև իրենց ամբողջութեամբ հպատակած են հայկական ճարտարապետութեան ընդհանուր օրէնքին. այսինքն յունական կամ բիւզանդական ոճերու նման տուլրեները փոխանակ հետպհետէ դէպի խորը զնալու, քանդակուած են հաւասար բարձրութեան վրայ, բան մը որ յատուկ է միայն հայ ոճին:

Շէնքին պսակը զուտ հայկական է, թէ ձեռվ և թէ քանդակով:

Ամփոփելով մեր խօսքը, լուենք, որ զետեղել հասարակ հրարդիսային քարէ չորս սիւներու և չորս փոքր կամարներու վրայ, դրսի պատին զուգահեռական կորութեամբ ութ աղեղներ, և այդ աղեղներու կողերը լոյնելով զարդին հաւասարեցել, կազմելու համար հորիզոնական պատուանդան մը, 85 մետր երկայնութեամբ, աղեղներ, որոնք իրենց վրայ կը կրեն առնուազն 6—7 մետր բարձրութեամբ շուրջանակի հսկայ պատի

մը ծանրութիւնը, և դրսի պատէն մեկնող կամարի զանգուածին կէսէն աւելի ծանրութիւնը ու նորինքս տանիքին ծանրութիւնը—հանճարի այնպիսի յանդուգն ու հոյակապ սրացք մընէ, որ պատիւ կը բերէ հայ անունին:

Այստեղ ոչ վայրենի ուժն է մեզ զարմացնողը, ինչպէս եղիպառի պիրամիաներու և այլ շէնքերու մէջ, ուր կը տեսնենք 20 խորանարդ ծանրութեամբ միապաղաղ քարը մինչև 30—40 մետր բարձրութեան հանուած, և ոչ ալ ճարտարապետական քանդակներու և զարդանկարներու կատարելութեան հասած նրբութիւնը, ինչպէս յունական և հոռվմէական յիշատակարաններու մէջ. այլ ասոնցմէ տարբեր և գուցէ ասոնցմէ շատ վեր, ճարտարապետական այն խիզախ յդացումը, որով հայ մարդը՝ 80 սանտիմետր տրամագիծ ունեցող քարէ չորս սիւներու, և 60 սանտիմետր տրամագծով երկու սիւներ իրար միացնող չորս աղեղներու վրայ կախիր է հաղարներով տոնն ծանրութիւն, տարբութեանց նրին հաշիւներու մասին իր ունեցած կատարեալ հմտութեանը վրայ վստահ:

Թորոս Ժ. Թորամանեան

---

## II ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

Հ. Կոմիտաս վարդապետի արուեստը

Մեծ Պասի վերջընթեր շաբաթում, Էջմիածնի միաբան կոմիտաս վարդապետ, իր պատրաստած երկեցիկ խմբով՝ որ բաղկանում էր ծեմարանի 60 սաներից, Արտիստական թատրոնում տուեց երկու համերդ, ուրբաթ, առլուկ 1-ի երեկոյեան և կիրակի, 3-ի ցերեկին:

Համերգները կազմուած էին կրկին մասերից, եկեղեցական և ժողովրդական երգերից: Երաժիշտ վարդապետը՝ առաջին անդամ, գուրս էր գալիս իր երկարամեայ լուռ ու յամառ աշխատանքի արդիւնքը ներկայացնելու հայ հասարակութեան, և ինչ որ ներկայացնում էր, չէր նմանւում ընաւ, մեր նախորդ երաժիշտների գործին: Դրա համար էլ Արտիստական թատրոնի հասարակութիւնը այնքան չոգեորուեց Հայր Կոմիտասի համերգներով: Այդ սահն աղաւորութիւնը, մեր կարծիքով Մայիս, 1905.

շատ հասկանալի էր և ունէր իր խորը պատճառները նախ երգեցիկ խումբը՝ մեծ մասամբ բաղկացած անչափահաս աշակերտներից, կամայ ակամայ ազդուեց իր համար բոլորովին անընտել մի միջավայրից, և ան կարող եղաւ հաւատարիմ թարգմանը լինել իր վարպետի արուեստին: Երկրորդ՝ մեր հասարակութեան լսելիքը, ընդհանրապէս, անսովոր էր բազմաձայն երգեցորութեան եւ դրա առաջոց—ունկնդիրները իրանց ոգեսրութեան ամենից աւելի ազատ ընթացք էին տալիս միայն այն ժամանակ, երբ սոյօ կամ լրուէտ էր երգուում, օրինակ, «Թէ իմ ալեւոր հերքս սկսային»-ի և «Հաբրբան»-ի ժամանակ: Բացի այդ՝ ամբողջ թատրոնը մեծ բան չհասկանալով այդ երաժշտութիւնից, համարեա միարերան սոյօ էր պահանջում: Երրորդ և վըճռական պատճառն այն էր, որ Կոմիտաս վարդապետ մտցնում էր մեր մէջ երաժշտական մի այնպիսի բարդ արուեստ, ինչպիսին է Վագներինը, մի արուեստ, որը իր անդրանիկ քայլերում ընդդիմութեան հանդիպեց շատ աւելի նուրբ ու կրթուած ձաշակով ժողովուրդների կողմից: Առաջին անգամ, երբ Վագներին ներկայացրին Պարիզում, նրա հանճարը ողջունուեց շուսոցներով և անարգանքով: Նա գուաւ նոյն վերաբերմունքը գրեթէ ամեն տեղ, Աւստրիայում, Խոտալիայում և մինչև անգամ իր հայրենի երկրում: Հետևաբար շատ բնական էր, որ Արտիստականի հասարակութիւնը չգնահատէր տաղանդաւոր վարդապետի գործը, այնպէս՝ ինչպէս որ պէտք է: Նա գալիս էր մեզ մօտ մի նոր արուեստով, մի նոր դպրոցով, որը զիտակցօրէն դատելու համար, անհրաժեշտ էր նրա հետ մօտից ծանօթանալ—փնտուել, գտնել ճշտել նրա հիմքերն ու զեկավարող օրէնքները:

Ահա ինչ որ մենք պիտի փորձենք ներկայ յօդուածում:

Բայց նախ՝ մի քանի ծանօթութիւն զիտնական վարդապետի կենսագրութեան և ստացած դաստիարակութեան մասին: Որովհետեւ լոյսի մէջ դնելով նրա կեանքի և մտածումի կաղմութեան շրջանները, աւելի հեշտութեամբ պիտի ըմբռնենք նրա արուեստը:

Կոմիտաս վարդապետ ծնուել է Կուտինայում (Քէօթահիա, Փոքր-Ասիա), 1869, սեպտ, 28-ին: Վեցից մինչև 9 տարեկան՝ սովորել է թաղի ազգ: ուսումնարանում և ազա Կուտինայից մեկնել է Բրուսա՝ միջնակարդ դպրոց մտնելու համար: Բրուսայում 1<sup>½</sup> տարի մնալուց յետոյ, հօրը անակնկալ մահուան պատճառով վերադարձել է հայրենիք: Հայր Կոմի-

տաս՝ մօրը կորցրած լինելով շատ աւելի վաղ, երկու ամսական հասակում, դարձել է բոլորովին որբ:

Բայց շուտով անտէր երեխայի համար բացուել են յոյսի ու յաջողութեան գուները: Կուտինայի համայնքը՝ իր փոխառաջնորդի՝ Գէորգ վարդապետ Դերձակեանի եպիսկոպոսացման համար ինպիրը ներկայացրած լինելով՝ այս վերջինը՝ պատրաստուել է գնալ էջմիածին: Նոյն ժամանակուայ կաթողիկոս՝ Գէորգ Դ., նախ քան վարդապետի ճանապարհ ընկնելը՝ հրահանդ է տուել, որ քաղաքից մի որբ սան բերէ Ճեմարանի համար, մի այնպիսի որբ, որը անպատճառ լաւ ձայն ունենայ:

Ըստրում են անհրաժեշտ պայմանը լրացնող 40 որբ: Վիճակ են զցում: Բախտը որոշում է ապագայ երաժիշտ վարդապետին:

Եպիսկոպոսացու վարդապետը որբի հետ մեկնում է Կուտինայից, և Բրուսա—Մուղանիա ուղեգծով հասնում է Կ. Պոլիս: Երբ մայրաքաղաքից ճանապարհ են ընկնում դէպի էջմիածին, ուղևորները լինում են չորս: Պոլսից նրանց ընկերակցում են Սահակ վարդապետ Խապայեան—Կիլիկիայի այժման կաթողիկոսը—և Մամբրէ վարդը, որոնք գնում են Կովկաս, իբրև Երուսաղէմի նուրիբակ: Համնելով Թիֆլիս, հիւրընկալւում են առաջնորդ Գրիգոր եպ. Աղափիրեանից և անմիջապէս դարձեալ ճանապարհ են ընկնում դէպի էջմիածին, ուր ժամանում են ութ օրից յետոյ միայն, Փուրգունով:

Դերձակեան վարդապետ՝ ներկայացնում է որբին Գէորգ կաթողիկոսի, որը սկսում է նրան հարց ու փորձի հնթարկել: Այսեղ պատահում է մի ծիծաղելի դէպք: Այդ ժամանակներում, Բրուսայի կուսակալութեան մէջ ապրող հայերը թրքախօս էին. Նոյնիսկ ուսումնարաններում տիրապետող լեզուն օսմաներէնն էր: Ամեն ինչ, ազգային պատմութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն և այլն, աւանդւում էր տիրող ցեղի լեզուով: Հայ աշակերտները, հայ զալոցում իրանց մայրենի բարբառը սովորում էին, իբրև մի օտար լեզու: Իմանում էին կարդար, գրել, բայց ոչ խօսում էին և ոչ էլ խօսուածը հասկանում:

Երդ, երբ կաթողիկոսը սկսում է հարցուփորձել կուտինացի որբին, այս վերջինը շփոթուած՝ իբրև պատասխան՝ թափէ տալիս գլուխը: Անմիջապէս օգնութեան է հասնում Գէորգ վարդապետ, բացատրում է իրողութիւնը Վեհափառին, որ սրտնեղութեան յայտնի նշաններով՝ հարցապնդում է.

— Դու զնւը ես եկել այստեղ, որովհետեւ մեր դպրոցում ամեն առարկայ հայերէնով է աւանդւում. իսկ դու քո լեզուն չգիտես:

—Վեհափառ Տէր, պատասխանում է ամօթահար երեխան՝ իրանց առաջնորդի միջոցով, ես էլ եկել եմ այստեղ, հէնց հայ երէն սովորելու:

—Լաւ, ձայն ունես, երգել իմանում ես:

—Այն, հաստատում է որբը գլխի խոնարհումով:

—Ի՞նչ եղանակ զիտիս. «Լոյս զուարթ» կարող ես երգել, կեզուի փոխարէն դարձեալ գլուխն է լինում պատասխանողը:

—Երգիր տեսնեմ:

Այն երեխան, որ իր մայրենի լեզուն չէր լիմանում, շարականը երգում է այնպիսի յուզուած շեշտով, որ ծերունի կաթողիկոսի այտերից վար արտասուքի շիթերը կլոր կլոր թափում են:

Դեռատի երգչի ձայնից ախորժած՝ Գէորգ Դ; երգել է տալիս մի հայերէն երգ, Պէշիկթաշլեանի «Ի բիւր ձայնից»-ը և մի թիւրքերէն երգ: Այդ կարճ քննութիւնից յետոյ, ուղղելով խօսքը դիւանապետ և գաւազանակիր Վահրամ եպ. Մանկունուն:

—Տարէք սրան ծեմարան, ասում է:

Այսպէս գաւնում է Կոմիտաս վարդապետ՝ ճեմարանական եւ այդ օրից թևակոխում է յուզումի և գեղեցկութեան այն ասապարէզը, ուր այնքան խոշոր քայլեր պիտի առնէր: Նա մեծ եռանդով հետեւում է երդեցողութեան և ձայնագրութեան դասերին և շուտով աչքի է ընկնում իր մասնաւոր ընդունակութեամբ և առաջադիմութիւնով:

Կաթողիկոսը՝ ամեն շաբաթ երեկոյ, ժամերգութեան ներկայ գտնուելիս, հրամայում է որ իր հայրապետական աթոռի մօտ կանգնեն Կոմիտաս վարդապետը, ինչպէս և նրա մի ուրիշ գեղեցկածայն ընկերը, Տիգրան Ռէթէոսեան՝ երգելու համտր առանձնապէս «Լոյս զուարթը»: Մի հաճոյք, որին ալեղարդ հովուապետը միշտ զգայուն է լինում, և չէ մոռանում փոխարէն վարձատրութիւնը. ամեն կիրակի պատարագից յետոյ, նայած եղանակին՝ մատուցարանով միրչ կամ պառուղ է ուղարկում ծեմարան:

Կոմիտաս վարդապետ՝ երկրորդ գասարանի աշակերտ է լինում, երբ նրա դասընկերներից մէկը՝ քեօրփալուցի (իջմիածնի մօտ) մի ճեմարանական, Բարեկենդանին նրան հիւր է տանում: Նա, այդ վիւզում, շինականի գոմում, առաջին անգամ լսում է ժողովրդական երգը, որը նրա համար մի յայտնութիւն է լինում: Նա մինչեւ այն ժամանակ անդիտանում էր թէ ի՞նչ է ժողովրդական երգը, այն՝ ի՞նչ որ ապագայում նրա

արուեստի հիմնաքարը պիտի լինէր: Անմիջապէս ձայնագրում է լսած երգը, խնդրում է ուրիշները երգել և դարձեալ ձայնագրում է: Այնուհետեւ ժողով ուն երգերի ձայնագրումն և ուսումնասիրութիւնը դառնու նրա մէջ համարեա մի կիրք:

Ճեմարանում երաժշտական գաստիարակութիւնը կատարում էր եկեղեցական ութնայն եղանակներով: Սովորեցնում էին շարականի, պատարազի, ժամագրքի եղանակների երգեցողութիւնը, որը գրի էր առել թիւրքահայ յայտնի ձայնագրագէտ թաշճեան: Երբ կոմիտաս վարդապետ սկսում է արդէն բաւական ըմբռնել իւրաքանչիւր ձայնի յատկանիշն ու գոյնը, նա իսկոյն, իր լսած ամեն մի նոր եղանակը համեմատում է ութնաձայն եղանակների հետ և դասակարգում:

Համեմատական այդ աշխատանքին ենթարկում է թիւրքական շատ մեղեղինել, որոնց ծանօթ է լինում գեռ ևս մասնուկ հասակից: Եւ զարմանքով նկատում է, որ թիւրք եղանակների և հայ եկեղեցական երգեցողութեան մէջ բաղդատութեան շատ եղբեր կան: Բայց նաև այդ երևոյթը՝ տակաւին անկարող է լինում պարզաբանելու:

Արդ, Քեօրփալուի դիւտից յետոյ, երբ նուիրւում է ժողովրդական երգերի ուսումնասիրութեան, համեմատական նոյն մէթուը գործ է ածում և այստեղ: Եւ նոյնչափ և աւելի զարմանքով տեսնում է, որ մեր ժողովրդական և եկեղեցական եղանակների մէջ կան մեծ կապեր, առնչութիւններ:

Այժմ նա կանգնում է մի մեծ հարցի առաջ:

—Ի՞նչ ծագում ունին մեր եկեղեցական եղանակները:

Մեր ժողովրդական երգերը, իրեն ժողովրդի հոգոց բլիսած՝ անպայման հարազատ էին: Այդ մասին կասկած անդամ չէր կարող լինել: Իսկ հոգևոր երգերը՝ Միթէ նրանք էլ նոյնքան հարազատ էին, միթէ նրանց էլ աղբիւը նոյնն էր—ցեղի սուլ՝ ազործ ուժը, ժողովրդի հանճարը: Բայց եթէ նրանք՝ ժողովրդական երգերի հետ իրանց կապով՝ մի կողմից արդարացնում էին այդ ենթագրութիւնը, միւս կողմից ջրում էին իրանց առնչութեամբ՝ թիւրք եղանակների հետ:

Ահա այս հետաքրքիր հարցն է որ պէտք էր պարզել:

Ու հայր կոմիտաս սկսում է պըպտել այլ և այլ հին ձեռագիրներ, յիշատակարաններ, երգարաններ, խաղգրքեր ևայլն, հսութեան փոշու տակից քաշել հանելու համար պատասխանը:<sup>8</sup>

Բայց այդ ըոլորը լուս են մնում, կամ շատ ըիչ բան են ասում անխոնջ աշխատողին: Նա իր ուսումնասիրութիւնների

արդիւնքը հրատարակում է՝ ժամանակին՝ «Արարատ» ամսագրում:

Կոմիտաս վարդապետը չէ յուսահատւում սակայս: Իդէալի աստղը հեռուից նշմարող մարդու խանդավառ հաւատքով նա գնում է առաջ: Եթէ ներկան անկարող եղաւ պատասխանելու այն հարցին, որի լուսաբանութիւնը մեր ազգային երաժշտութեան համար յդի էր խոշոր հետևանքներով—կար ապագան՝ դայեակը մեծ յոյսերի և մեզ երազների:

Ու Կոմիտաս վարդապետ ճեմարանական շրջանն աւարտելուց յետոյ, Մանթաշեանի օժանդակութեամբ, 1896-ին ճանապարհ է ընկնում դէպի Գերմանիա, երաժշտութեան վսեմ հայրենիքը:

Խօսքը տանք այժմ նրան:

\*

Որ և է երաժշտութիւն ներկայանում է մեզ, առ հասարակ երկու նկարագրով: Կայ երաժշտութիւն, որ բնագրի, խօսքերի հետ սերտ, ներքին կապ չունի, դա պարզապէս տեղական է, մի որոշ եղանակ՝ յարմարեցրած բառերի: Կարելի է այդ եղանակին ուրիշ բնագրի տալ, կամ բնագրին ուրիշ եղանակ դնել, առանց անպատճենութեան: Այս տեսակ երաժշտութեան օրինակներ շատ կան, թէ մեզանում և թէ օտարների մօտ:

Մեր «ազգային» կոչուած երգերից շատերը ոչ թէ մի, այլ երբեմն աւելի եղանակներ ունեն: Աւելի շօշափելի ձևով խօսելու համար, յիշենք օրինակներ: «Մեր քաջ հայոց զօրութիւնը»-ը յարմարեցրած է Qaudéamus igitur գերմանական ուսանողական լատիներէն երգի եղանակին, կամ «Իցէ ինչ այլ երգոցն ի ճահ»-ը՝ Deutschland, Deutschland über Alles-ին, կամ «Ոլքա, մայր իմ, հայոց Սիօն»-ը՝ թիւրքերէն մի երգի եղանակին, Սուլթան Ազիզի մահուան առիթով շինուած «Քոլուդդա և ևն...» երգի եղանակին, կամ «Պաղ աղքիւրի մօտին» երգը՝ «Սովուք դա սու բաշնդա»-ին ևայլն:

Բայց կայ և այնպիսի երաժշտութիւն, ուր բնագիրն ու եղանակը բացարձակապէս իրար են զուգորդուած: Անկարելի է մինը բաժանել միւսից, որովհետև librettiste-ի և compositeur-ի ստեղծագործ մտածումի մէջ կատարեալ նոյնութիւն, միութիւն կայ: Այդպէս են, օրինակ, մեր ըոլոր «Ժողովրդական» երգերը, որի թէ խօսքերը և թէ եղանակը միաժամանակ ստեղծել է ինքը ժողովուրդը:

Առաջին տեսակի երաժշտութիւնը զգացումների հետ գործ ունի, երկրորդը՝ մոսածումների, գաղափարների: Այս պատճառով էլ առաջինը հասկանալու համար երաժշտական

շատ մեծ դաստիարակութիւն հարկաւոր չէ, իսկ երկրորդի համար՝ ընդհակառակը: Առաջինի հայրը իտալականն է, երկրորդինը գերմանականը:

Արդ Գերմանիայում, երբ սկսեցի ուսումնասիրել ամբողջ աշխարհի երաժշտութեան փառքերը, ամենից շատ ողերեց ինձ Տանհայուզէրի անմահ հեղինակը: Սկզբներում, ի հարկէ, ևս ձգւում էի գետի այն երաժշտութիւնը, որ յուռ էր մարդու սիրաը, գետի իտալականը. բայց, երբ կամաց-կամաց իմ լոելիքը դաստիարակուեց, երբ ես վարժուեցի երաժշտութեան մէջ վիճակուել ոչ թէ զգացումը, այլ միաքը, գաղափարը, այն ժամանակուանից սկսած ևս ինձ կապուած զգացի գերմանական երաժշտութեան, իմ մէջ ծնուեց բուռն ցանկութիւն լուրջ կերպով ուսումնասիրել Վագների գործերը, որոնց բոլորի միշտով պայծառ, կարմիր թելի նման անցնում էր զուտ գերմանական ազգային երաժշտութեան ոգին: Վագների ստեղծագործութիւնները միշտ հոկայ կոթոլներ էին, ուր պատկերանում էին գերմանական հոգին, նրա տոկունութիւնը, աշխատասիրութիւնը, խորութիւնը բնորոշ, թանձր, խոշոր գծերով: Մեծ խանդակառութեամբ ընդգրկեցի նրա ազնիւ ու վսեմ սկզբունքը — տալ ամեն ժողովրդի երաժշտութեան նրա ցեղային հոգեբանութեան համապատասխան դրոշմ: Նրա մէթողը — եղանակը հանել խօսքերից և ոչ թէ խօսքին եղանակ դնել:

Սկզբունք և մէթոս, որոնք բացի այն որ պահանջում էին անզուլ, անձնուրաց ու տաժանելի աշխատութիւն — ունէին և մի այլ սարսափելի նկարագիր, յեղաշրջել հինը, զայրոյթի և նախատինքի ամբարիշտ թափով ոտքի հանել բուլոր նորատիացներին, հին զպրոցի բոլոր երկրպագուներին:

Բայց Վագներ հերոսարար դիմագրաւեց և մէկը և միւսը: Նա ժողովրդական հոգուց բղխած Նիբելունզըն ի վրայ բարձրացրեց գերմանական երաժշտութեան ազգային շէնքը և ապագան՝ արդարագործ ապաղան՝ զբա համար, անարգուած, չհասկացուած հանճարի ոտքերի տալ սփուց իր հիացումի և երախագիտութեան անկեղծ ծաղիկները: Ես երկար դեղեւ լու պէտք չունէի: Մեծ Վարպետի ուղին ձգւում էր իմ առաջ, լուսաւոր ու բեղուն:

Ի՞նչո՞ւ, ի՞նչ նպատակով էի զնացել Գերմանիա. — մեր ազգային երաժշտութեան շէնքի համեստ գործաւորը դառնալու, իմ կարողութեան չափով:

Ի՞՞նչ պիտի անէի, — ուսումնասիրել մեր եկեղեցական և ժողովրդական եղանակները, որոշել նրանց հարազատութեան

աստիճանը և հիմնել մեր երաժշտական պալատը զուտ ազգային, ցեղական տարրերի վրայ:

Ու նախկին հարցումը այս անդամ ցցուեց իմ դէմ աւելի հրամայող, աւելի բռնաւոր:

Պէտք էր լուծել այդ հանելուկը: Ու սկսեցի դարձեալ աշխատել: Գերմանիայում ստացած երաժշտական դաստիարակութիւնս ինձ համար թանկարին օժանդակ հանդիսացաւ:

Ես հիմք բոնցի ժողովրդական երգերը, որովհետև նըրանց ինքնուրոյնութիւնը անժխտելի էր: Եկեղեցական եղանակները՝ դատելով նրանց արտաքին կազմութիւնից, որը ոչ միայն բարդ, այլ զանազան տեղերի համեմատ զանազան գոյն ու ձևափոխութիւն ունէր, թւում էին օտարամուտ: Նրանք մօտ էին թիւրք եղանակներին: Միևնույն ժամանակ նրանք սկսաւութիւն ունէին մեր ժողովրդական երգերի հետ: Ուրեմն մեր հոգենոր երաժշտութեան աղբիւր պիտի լինէին կամ առաջինները կամ երկրորդները: Եւ որովհետև պարզ տրամաբանութիւնն իսկ ասում էր, որ մեր եկեղեցական եղանակները պէտք է աւելի մեր ժողովրդի ստեղծագործութեան մօտ լինէին, ուստի ամբողջ ջանքս լարեցի դէպի այդ ուղղութիւնը:

Շփոթեցնող կէտն այն էր, որ մեր ժողովրդական եղանակները պարզ կազմ ունէին, նուազ զարդարուած էին, քան եկեղեցական եղանակները: Արդ, հանելուկի բանալին պիտի տային ինձ այն եկեղեցական եղանակները, որոնք աւելի պարզ ամբողջ ջանքս լարեցի դէպի այդ ուղղութիւնը:

Եւ երկար որոնումներից յետոյ վերջապէս գտայ այնպիսի եղանակներ, որոնք երկու տեսակ են երգւում: Ժանր ու թեթև: Այդ եղանակները կոչւում են «տօնական»: Ծանրը նըման էր իր գեղգեղանքներով թրբականին, իսկ թեթևը՝ իր պարզութեամբ՝ ժողովրդականին: Արդ, մերկացնելով ծանրների կեղծ զարդարանքները, աւելորդ գեղգեղանքները, նկատեցի որ նրանք իրանց խորքով նման են թեթևներին: Ուրեմն ուրանից յստակ երևում էր, որ այդ պարզ եղանակները զարդարուել էին թրբական ոճով՝ նրանց հանդիսաւորութիւնն և շուշ տալու գիտաւորութնամբ, երբ մենք դեռ ևս չունէինք բազմաձայն երգեցողութիւն:

Ոհա որտեղից ծագում էր առել մեր եկեղեցական եղանակների նմանութիւնը թրբականների հետ: Իսկ այդ այլափոխութեան անդիստակից հեղինակներն էին եղել կ. Պոլսի տիշրացուները, որոնք ամիրայական խնջոյքներում, հանդիսաւորաններին գուր գալու, նրանց հաճոյք պատճառելու համար պարզ եղանակը զարդարել, բեռնաւորել էին:

Այս կարեոր լուսաբանութիւնից յետոյ, սկսեցի մանրաւման ուսումնասիրել մեր թէ հկեղեցական և թէ ժողովրդական եղանակները՝ ուշ և մեր հարեան հին և նոր ազգերի բոլոր երաժշտութիւնը, որոնք այսպէս կամ այնպէս կարող էին ազգած լինել մերինի վրայ:

Այս գժուալը ուսումնասիրութեան արդինքն այն եղաւ, որ ես յաջողեցայ երեան բերել մեր երաժշտական տաղաչափութիւնը, մեր սեպհական եղանակների և երգերի ձեերը: Ժողովրդից սովորելով ձայների առողանութիւնը, ձեսնարկեցի մեր եկեղեցական և ժողովրդական մի քանի պարզ եղանակները բազմաձայնի վերածել, իւրաքանչիւր ձայնի համար գործ ածելով միմյայն ազգային ոճ, ազգային ձե, ազգային տաղաչափութիւն: Եւ երբ այդ կերպով իմ դաշնակած երգերը ներկայացրի իմ ուսուցչապետին, նա ասաց.

—Դուք լաւ ուղիի վրայ էք, շարունակեցէք զարգացնել ձեր ազգային ոճը՝ առաջնորդուելով արդի գեղարուեստական երաժշտութեան օրէնքներով: Այս կէտը լաւ ըմբռնելուց յետոյ, մի մոռանաք և այն, որ ճշմարիտ արուեստագէտը օրէնքների ստրուկը չսիտի լինի. օրէնքը կարող է միայն ծառայել իբրև ուղղեցոյց, սաեղծագործութիւններն օրէնքից չեն բղխում, օրէնքն է բղխում նրանցից...

Իմ ուսուցչի անմոռանալի խօսքերը ինձ կառաջնորդեմ, որքան կեանք ունիմ...

\*  
\*\*

Ուրեմն, արժմ, մեզ համար պարզէ, թէ իսչի է ձգուում կոմիտաս վարդապետը—մեր երաժշտական սեփական ու հարազատ տարրերի վրայ բարձրացնել մեր ապագայ ազգային երաժշտութեան բարդ ու բազմակողմանի շէնքը: Մի նպատակ, որի իրագործումը մեզ պիտի լիցնէ երախտագէտ հրճուսնքով:

Հայէ ոմիտասի արուեստը իր ընդհանուր գծերում ներկայացնելուց յետոյ, հետաքրքիր էք իմանալ, թէ ի՞նչ ձե, ի՞նչ բնաւորութիւն ունին մեր երաժշտութեան հիմնաքարերը—ժողովրդական երգերը:

Կոմիտաս վարդապետ՝ բացի երկու համերգներից, կարդաց երկու նշանաւոր դասախոսութիւն, մէկը՝ Յովսանեան ուսումնաբանի սրահում, իսկ միւսը՝ Թիֆլիսի երաժշտական Գլուցի դահլիճում, նոյն նիւթի մասին: Դասախոսութիւնների ժամանակ Կոմիտաս վարդապետ տեսականին միացնում էք գործնականը, օրինակները լուսաբանում էր անձամբ երգելով կամ խմբի օժանդակութեամբ: Մենք այդ դասախոսութիւնների բովանդակութիւնից էլ կ'օգտուենք ցոյց տալու համար

թէ ի՞նչ է ներկայացնում մեր ժողովրդական երաժշտութիւնը:

Ի՞նչ է երաժշտութիւնը. մի տեսակ շարժողութիւն, ինչպէս լոյսը, ջերմութիւնը, էլէկտրականութիւնը. և այդ շարժողութիւնը համապատասխանում է ներքին աշխարհի, այսինքն զգացումների, յոյզերի, մտքերի շարժողութեան: Եւ որովհետեւ մարդու ներքին աշխարհի շարժումները արդիւնք են արտաքին աշխարհի շարժումներին, ուրեմն մի ժողովրդի երաժշտութիւնը պայմանաւորում է այն միջավայրով և կեանքի հանգամանքներով, որոնց մէջապրում է նաև այդ ժողովուրդը: Օրինակ՝ լեռնային տեղերում գուք պիտի հանդիպէք, առ հասարակ, բիրտ, բուռն, ըմբոստ, մի խօսքով մարտական նկարագիր ունեցող երգերի, որովհետեւ ինքը՝ բնութիւնը՝ բարձր դիրքերում անընդհատ կոռւի մէջ է, միշտ փոթորիկ, որոտ, կայծակ, հեղեղ հայլն իւկ, ընդհակառակը, գաշտային ժողովուրդների մօտ պիտի գտնէք խաղաղ, քնքուշ, թեթև եղանակներ, որոնք արդինք են համապատասխան բնութեան: Այսպէս «Հով արէք» ժողովրդական երգը Արաքսի մօտ, Բլուր գիւղում, աւելի մեղմ, աւելի քնքուշ է, քան Արագածի վրայ, Մաստարայում, ուր երգում է աւելի ուժզին, աւելի բուռն թափով: Նոյն երեսյթն է ներկայացնում և «Հարբբանը» իզլիբում և Ախալքալաքում:

Ուրեմն, ընդհանուր օրէնք է, որ երբ մի գաշտային երանակ՝ փոխազրում է լեռնոտ տեղեր, եղանակը պահերով իր ներքին կազմը, փոփոխում է իր աստիճանը, աւելի է բարձրանում: Եւ փոխազրարարար:

Ինչպէս բնութիւնը, նոյնպէս ժողովրդի կեանքի պայմանները հզօրապէս ազգում են երաժշտութեան վրայ: Այսպէս, քրդերը, իբրև լեռնաբնակ ժողովուրդ, ունեն մի երաժշտութիւն, որ կրում է մարտական, ըմբոստ բնութեան նկարագիրը, և իբրև թափառաշրջիկ, խաշնարած նաև, այդ երաժշտութիւնը անհաստատ է, և պտըւում է ոչխարների, այծերի շուրջը: Օրինակ, Հուր դա լուր երգը:

Այս ընդհանուր նկատողութիւններից յետոյ, աւելացնենք, որ ինչպէս գեղարուեստի ամեն ճիւղ, ինչպէս մարդկային հոգու և մաքի ամեն արտայայտութիւն, երաժշտութիւնը անդապար բնաշրջումի, էվոլիւցիայի մէջ է: Նա ունի իր մանկութեան, հասունութեան և լրիւ զարգացման շրջանները:

Առաջին շրջանի երաժշտութիւնը պարզ է, կարճ, և կը ըստում է բացագանչական ձև: Նա բաղկացած է հազիւ մի քանի ձայններից և երբեմն կիսաձայններից: Այդ կարգի եղանակների մինչև այժմ էլ հանդիպում ենք Մշու դաշտերում: Դրանք կազ-

մուած են մի քանի կիսաձայներից միայն և անուանուում են ճօշլար:

Երկրորդ և երրորդ շրջանի երաժշտութեան ձեզ քանի գնուում բարդանուում է, ընդարձակւում, խորանում:

Մեր երաժշտութիւնը բաժանուում է երկու բնորոշ խումբի:

1) Եկեղեցական:

2) Աշխարհական կամ ժողովրդական:

Այս երկու խմբի եղանակները այն յատկանշական երեսոյն են ներկայացնում, որ և ծայնը, և խօսքը, կամ ուրիշ բառերով՝ և երաժշտութիւնը և բանաստեղծութիւնը, միաժամանակ, միևնույն անձի ստեղծագործութիւնն են:

Մեր եկեղեցական եղանակները ունեն այլ և այլ տեսակ ու այլ և այլ կազմութիւն:

1) Մանկական երգեր, որոնք ունին ամենապարզ կազմը:

2) Պարերգեր, որոնք կոչւում են և եայլի, ու, մի աստիճան աւելի զարգացած են քան առաջինները: Այս երգերը ծագումն են առնում պարի ժամանակ աղջկայ և տղայի միջն առաջացած զգացմունքներից: Եղանակները համապատասխանում են քայլերին ու թոփշքներին, և, առ հասարակ, կարծ են, պարողներին չյոդնեցնելու համար: Ինչպէս պարերը, նրանք սկսում են ծանր, հանդիսաւոր և ապա կամաց-կամաց տաքանում և արագանում: Պարագլուխը երգում է առաջին նախադասութիւնը մինչև վերջին բառը. խումբը երգն առնում է վերջին բառից և կրկնում է նոյն նախադասութիւնը, որի վերջին բառից վերսկսում է պարագլուխը և ասում երկրորդ նախադասութիւնը, որի վերջին խօսքից գարձեալ խումբն երգում է երկրորդ նախադասութիւնը, և այսպէս շարունակաբար:

3) Դիւցազներգեր, որոնք նուիրուած են լինում որ և է բաջագործութեան, որէ և հերոսի գովքին: Այս երգերի հիմք են ծառայում, գլխաւորաբար, պատմական աւանդութիւնները, որոնց թւում ամենառչականուն է Մոկաց Միրզայինը: Մոկաց Միրզան մի փաշայի կողմից հրաւիրւում է խնջոյքի. Կեր ու խումբից յետոյ, նենքաւոր թիւրքը խարեբայութեամբ թունաւորում է քաջն: Երգն սկսում է նախ զէպքի նկարագրութեամբ և վերջանում է սրտայոյգ աւանդանքներով:

4) Մահերգեր, որոնք նուիրուած են աղէտքների և դիաբուածների զոհ գնացողների յիշատակին: Պատահարների հետ կապուած լինելով՝ այս երգերը ունին պատահական և մղկտացող եղանակ: Սկսում են կամ ափսոսանքներով, աւանդներով, որ յետոյ կրկնակ, յանկերգ է դաւնում, կամ կենսագրական նկարագրութիւններով, որոնց ուժեղացնում են բնութեան տը-

խուր տեսարանների այլաբանական պատկերներով։ Այս հրդերի մէջ մտնում են և ողբերգները, մեռելներ սգալու եղանակները։

5) Հարսանելիան երգեր, որոնք երգւում են հարսանեկան զանազան արարողութիւնների ժամանակ, պսակից յետոյ, Սրանք բազմաթիւ, բազմատեսակ և բազմախորհուրդ են։ Մինչև այժմ նրանց թիւը համառման է 78-ի։ Մասնաւորապէս հետաքրքիր են, այս շարքում, այն երգերը, որոնք կրում են ծաղկոց անունը և որոնք 16 հատ են։ Այս եղանակները երգում են հարսնացուի մօտ ընկերուհիները, պսակի նախընթաց ամբողջ գիշերը մինչև լոյս, հարսին զուգելու և զարդարելու ժամանակ։ Հարսնացուի գովքն են անում, նրա կեանքը նմանեցնում են ծառի, ծաղկի, լուսնի և այլն. իսկ միւս երգերը վերաբերում են փեսային, հարս ու փեսի մօրը, փեսայի ամուրի ընկերներին, հարսնացուներին և այլն։ Մի քանիմն էլ հանելուկներ և զուարձական երգեր են։

6) Բնութեան երգեր, որոնք ամենահետաքրքիրներն ու ամենազունագեղներն են։ Ինչպէս, գութանի, վար ու ցանքի, սայլի, չութի, կալի, հունձքի, քաղճանի երգերը։ Սրանք իրանց նիւթն ստանում են շինականի աշխատանքի այլեայլ ձևերից։ Եւ նայելով այդ աշխատանքի բերմնաւորութեան աստիճանին, երգը կրում է զուարթ կամ տիսուր ընաւորութիւն։ Ապարանի գիւղերում, ուր հունձքը յաճախ ենթարկւում է ընութեան պատուհամներին, գութաներգը տիսուր է ու մելամաղձիկ։ Իսկ, ընդհակառակը, կոռու զութաներգը զուարթ է և կայտառ։ Ասացինք, որ բնութեան երգերը ամենաբարդերն ու ամենազունագեղներն են։ Արդարեւ զութաներգի մէջ մոնում են շատ տարբեր։ Ինչպէս, զութանի անիւի ճռուցը, շղթաների շրիսկոցը, եղների կամ գոմէշների փանչոցը, մաճկալի այլեայլ բացագանչութիւնները, օրինակ, անուշաղիր հօտաղին ուղղած կշտամբանքը, լծկամներին շուայլած խանգաղատագին խրախոյսը, մէրը և այլն։ Սա մի ամբողջ սիմֆոնիա է, գեղջկական պարզ, միամիտ սիմֆոնիա, որը բղիսել է ժողովրդի հոգու խորքերից բնաղդաբար, անդիտակցօրէն։

Մեր ժողովրդական և եկեղեցական երգերը համահաւասար չափով չեն զարգացած։ Մինչդեռ առաջինները՝ արտաքին, քաղաքական պայմանների աղղեցութեան տակ ճնշուել, սեղմուել, ամփոփուել են, առանց կորցնելու իրանց խորութիւնն ու արտայայտիչ ուժը, երկրորդները աճել, զարգացել են եկեղեցու անձեռնմխելի հովանու տակ։

Առ հասարակ, այն կարծիքն է տիրում, թէ արևելեան

եղանակները միօրինակ են: Կոմիտաս վարդապետ հոյակապ-  
օքն ապացուցեց, և իր մի շաբթ աշխատութիւններով պատ-  
րասում է հոչակել, որ մենք ունենք ազգային՝ հարուստ,  
երփներանգ, խորունկ մի երաժշտութեան բոլոր տարրերը: Կա-  
րող ենք դարձեալ հպարտանալ, որ մեր դժբաղդ, բազմաչար-  
չար ցեղը, իր յաւիտենական մարտիրոսութեան մէջ, ժամանակ  
ու արիութիւն է գտել ստեղծելու մեծութիւն, դեղեցկութիւն և  
յուզում...

Տ. Զալէն

## III ՀԱՅՈՅ ԹԱՏՐՈՆ

«Ժայռ», դրամա, 4 դոլ., հեղինակութիւն Վ. Փափազեանի:

Հայոց Դրամատիկական խումբը ապրիլի 7-ին ներկայացրեց  
մի նոր, ինքնուրոյն բեմական դրուածք, պ. Վ. Փափազեանի  
«Ժայռ» դրաման:

Այդ դրուածքի ամենագլխաւոր հետաքրքրութիւնը կայա-  
նում է նրանում, որ առաջին անգամ մեր ընմի վրայ դուրս է  
բերում հայ զիւղական կեանները իրական գծերով: Մինչև այժմ  
հայ դրամատուրգները նկարագրում էին մեր քաղաքային միջ-  
նավայրն իր տիպերով, իսկ պ. Փափազեանի «Ժայռ» մէջ  
հանդէս են գալիս հայ տրեխաւորները իրանց բնորոշ տարա-  
ռվ, խօսակցութիւններով և աշխարհայեցողութեամբ: Դիւղար-  
կան կեանքի ցաւերից մէկն էլ վաշխառուն է, որի գոյութեան և  
զբարգաւաճման նպաստում են իրականութեան ընդհանու-  
ւուի պայմանները: Եւ երբ, այդ իրականութեան մէջ երե-  
յան է գալիս մի իդէալիստ անհատ, «Ժայռի» մէջ յանձին նոր-  
աւարտ փաստաբանի, որ մասնակի դէսքերի գէմ է լարում իր  
ամրող ոյժը, նա, ի հարկէ, վերջ ի վերջոյ, յաղթահարւում է  
դոյցութեան պայմաններին յարմարուած ճարպիկ «գործիչնե-  
րից». վաշխառուն շրջապատող պայմաններում գտնում է իր  
ճարպիկ մաքառման համար հաստատ հող. օրէնքի բացատրող-  
ների և կիրարկողների մեծագոյն մասը նման չեն անփորձ ի-  
դէալիստ Ալէքսանդր Մանուկեանին, այլ այն հաշտարար դա-  
տաւորին (Մատվէյ Եգորիչ), որին այնքան լաւ բնորոշեց իր  
խաղով պ. Պետրոսեանը: Ընդհանուր պայմանների շնորհիւ

գիւղերում անխիղճ «աբլակատ»-ները աւելի են գործ տեսնում, բան համալսարանական աղվակատները: Անձար գիւղացւն գեղեցիկ խօսքերը հաց չեն տալիս, վարկ չեն բաց անում և նա վերջ ի վերջոյ էլի պէտք է ձեռք կարկառի վաշխառուին, նրանից պարտք վերցնի: Կրթութիւնը գեռ չի խորտակել մեր ընտանեկան և այլ բազմաթիւ նախապաշարումները, և ահա վաշխառուի աղջիկը անկարող է լինում ազատուել «հասարակական կարծիքի» ճնշումից: Եւ քանի կենդանի են այդ բոլոր ընդհանուր պայմանները, վաշխառու Գրիգոր աղան և իր նմանները միշտ կարողանալու են ճարպիկութեամբ օգտուել իրանց գրութիւնից:

«Փայուը», իբրև պ. Վ. Փափաղեանի առաջին բեմական գրուածքը, ընդհանուր առմամբ ապացուցեց որ հեղինակը կարող է աջողութիւն ունենալ բելետրիստիկայի և՝ այդ ճիւղի մէջ. պէտք է աշխատի սակայն խոյս տալ տեղատեղ տեսարանների ձգձգուածութիւններից և մենախօսութիւնների հսացած ձևերից:

Դերասանական խումբը իր խաղով նպաստեց այդ գրամայի աջողութեան. շատ տիպիկ էին պ. Յարութիւննեան վաշխառուի գերում և պ. Աւետեանը գիւղական արևակատի, (քաշալ-Մարտիրոս) գերում. գիւղացիների բէալ տիպեր ստեղծեցին և պ. պ. Տէր-Դաւթեանը և Արէկեանը: Մտածուած և տեղատեղ նոյնիսկ տպաւորիչ էր տ. Մայսուրեանի խաղը վաշխառուի աղջկայ դերում:

S.

## ՀԱՅ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

Նամակ Եղիազորից

Տարին կը լրանայ որ ձեռնարկուած էր Եգիպտոսի հրաժարեալ կամ կազմալուծեալ Երեսփոխանական ժողովոյ տեղը նորն ընտրելու: Տեղական և արտասահմանի հայ թերթերը մեծաւ մասամբ զբաղեցան ընտրական եղանակներու ինդրով. վերջապէս Պոլսոյ պլատրիարքարանի հրահանգին համաձայն, երկու անդամ քուէարկութիւն կատարուելով՝ ընտրուեցան 14 աշխարհական և երկու եկեղեցական երեսփոխաններ: Տակավին երկրորդ քուէարկութիւնը չկատարուած՝ վախճանեցաւ Եւրոպիոյ մէջ, նախկին ժողովոյ ատենապետ և վերստին Երեսփոխան ընտրուած Տիգրան փաշա Ապրօեան, որ քսան երկար տարիներէ ի վեր Եգիպտոսի ազգ. երեսփոխանութեան ատենապետի պաշտօնը վարած էր և 2000 անգլ. լիրէ Գահիրէի առաջնորդարանին գումար մը թողած էր ինքնազիր կտակով մը, պայմանաւ. որ այդ գումարով հասութարեր հողեր գնուեին. նորընտիր ժողովն ալ պաշտօն յանձնեց մասնագէտ Մկրտիչ էֆ. Անդրանիկեանի (ժողովոյ անդամ) որ ազգ. կալուածներու մօտերը յարմարագոյն գետին մը գտնէ գնելու, համաձայն կտակի հանգուց ելոյն:

Եգիպտոսի Երեսփոխանութեան՝ օրէնքով սահմանուած թիւը լրանալէ վերջ, առաջ. փոխանորդը յատուկ հրաւիրագրերով երեսփոխանութեան անդամները ժողովի հրաւիրեց և առաջին գումարումով ժողովը իր ինքնութիւնը հաստատելէ վերջ, դիւանի ընտրութիւնը կատարեց, որոշելով միանգամայն, որ ի նշան սգոյ՝ մի տարւոյ չափ հանգուցեալ. Տիգրան փաշայի փոխարէն ոչ որ չընտրուի: Երեսփոխանաց մի քանիներու գիտողութեան վրայ, ձեռնամբարձ հաւանութեամբ վսեմ. Պօղոս փաշա Եռուպար Ա. ատենապետ, և գաղտնի քուէարկութեամբ՝ Բ. ատենապետ և ատենապիր ընտրուեցան Աղա. Երուանդպէյ Աղաթոն (որդին մեծանուն Գրիգոր Աղաթոնի, որ սահ-

մանադրութեան հիմնադիրներէն մինն էր) և Նշան Մալիւմեանտ Սոյն օրինական ձևակերպութիւնները կատարուելէ վերջ՝ տեղեկագրուեցաւ ի Պատրիարքարան և խնդրուեցաւ առաջնորդական ընտրութեան եռանուն ցանկը, որովհետև Այլապիան Յովսէփ Եպիսկոպոսի վախճանմամբ՝ Եղիպատոսի առաջնորդական գահը թափուր մնացած էր: Պատրիարքարանը—Կեղրոնական վարչութիւնը—ընտրութեան օրինաւորութիւնը և Երեսփոխանութիւնը հաստատող կոնզակը փուլթացուց հանդերձ, առաջնորդական ընտրելիներու ցանկով: Տակաւին Բ. ժողովը չկայացած, Եղիպատոս ժամանեց Պարսկա-Հնդկաստանի առաջնորդը՝ Գեր. Տէր-Սահակ արքեպիսկոպոս Այլապիանց: Երեսփոխանութիւնը հաստատող կոնզակը փուլթացուց հանդերձ, առաջնորդական ընտրելիներու ցանկով: Տակաւին Բ. ժողովը չկայացած, Եղիպատոս ժամանեց Պարսկա-Հնդկաստանի առաջնորդ՝ Գեր. Տէր-Սահակ արքեպիսկոպոս Այլապիանց: Երեսփոխանութիւնը ոչ ոքի չէին ճանաչեր և ցանկէ դուրս գտնուած Թուրքիոյ մէջ եղող արժանաւոր եկեղեցականաց ալ թոյլ պիտի չտար սուլթանական կառավարութիւնը, որ նոքա առաջնորդ ընտրուելէ վերջ Եղիպատոս գային, ինչպէս քանի մանդամ յանձին Իզմիրեան սրբազնի կատարուած էր այս փորձը: Հետեւաբար ընտրուող առաջնորդուները պիտի լինեին Սուլթանընտիր քան թէ ազգընտիր: Ժողովականներէն ումանք դիտողութիւն յայտնեցին թէ՝ «Ինչպէս կարելի է Թուրքիոյ թեմերէն դուրս եղող եկեղեցականի առաջնորդ ընտրել, քանի որ Եղիպատոսը կ. Պոլսոյ պատրիարքութեան թիմն է»: Մի քանի թեր ու դէմ խօսակցութիւններէ վերջ, խօսք առաւ Աւետիս քան. Շաղօյեան, եկեղեցական երեսփոխաններէն մինը, և հետևեալ կտրուկ բացատրութեամբ վերջ տուալ վիճարանութեանց: «Ուր որ ալ գտնուին Հայոց թեմեր, թէ ի Թիւրքիա և թէ արտասահման, ամենքն Ամենայն Հայոց կաթողիկոսութեան կը պատկանին, նոյն իսկ Պոլսոյ պատրիարքն ալ Նորին Վեհապառութեան փոխանորդն է»: Այս բացատրութեան վրայ Այլապիան Սրբազնը Եղիպատոսի Առաջնորդ հռչակուեցաւ ժողովականաց միաձայն հաւանութեամբ: Սակայն ինչիր է՝ թէ Սուլթանը պիտի վաւերացնէ նորին սրբազնութեան ընտրութիւնը, և թէ առանց սուլթանական Փէլումանի՝ Եղիպատոսական կառավարութիւնը պիտի ճանչնմայ իրբե պաշտօնական առաջնորդ, որպիսի բանակցութեանց ինսդիրներու լուծումն ու վերջ տալը՝ յանձն առաւ ատենապետ փաշան գործադրել տալու. միայն թէ ընտրութեան արդիւնքն դիւանի կողմանէ տեղեկագրուեցաւ Վեհապառ Հայրապետին և արտօնութիւն իւղն-

զրուեցաւ Պարսկա-Հնդկաստանի թէմէն արձակելու Այլատեան սբքագանը:

Երեսիոխանութիւնն՝ առաջնորդական ընտրութիւնը կատարելէ վերջ՝ ղբաղեցաւ Դամիրէի ազգ. Դալատեան վարժարանի շինութեան խնդրով, որոյ անմիջական կարևորութիւնը ժամանակներէ ի վեր ժողովրդեան և ուսանողաց ծնողներու ուշադրութեան առարկայ եղած էր: Ժողովականներէն երեք ձեռնհաս և մասնագէտ անձերու պաշտօն տրուեցաւ որ եկեղեցւոյ կից զոնուող յարմարագոյն կալուածներու, ինչպէս նաև օտարներու պատկանող գնուելիք վայրերու յատակագիծը պատրաստէին և յաջորդ ժողովին ներկայացնէին, տեղի ունենալիք ծախքերով միասին: Այսպիսով փակուեցաւ ժողովը և որոշուեցաւ 15 օրէն վերջ Գ. կումարումը:

Երեսիոխանական Գ. ժողովը տեղի ունեցաւ ճիշտ որոշեալ օրը—ամսուս 17, երեկոյեան ժամ 3-ին: Նախորդ առենագրութիւնը կարդացուելէ ու վաւերանալէ վերջ, կարդացուեցաւ հրաժարեալ Քաղաքական Ժողովոյ ընդարձակ տեղեկագիրը, որ մանրաժամանարար նկատողութեան առնուեցաւ: Վերջինին անդամներէն երկուքը, որոնք Երեսիոխանութեան անդամ չէին, բայց օրէնքով ներկայ գտնուելու իրաւունքն ունէին, առանց ծայն և զուէ ունենալու, շնորհակալութեան քուէի արժանի լինելի վերջ՝ մեկնեցան ժողովասրահէն խորին գոհունակութեամբ: Ժողովն անուհետեւ լուրջ ուշադրութեամբ սկսաւ իր նշանակութեան արժանի և բեղմնաւոր գործառնութեամնց:

Հրաժարեալ Քաղ. ժողովոյ յաջորդելու համար՝ գաղտնի գուէարկութեամբ նորեր ընտրուեցան. Տեարք՝ Ասոմմ Ասրմնեան, Գաբրիէլ Միքայէլեան (Նախկին Քաղ. ժողովոյ առենապետը) Դրիգոր Եղիաեան, Հապիպ Եուսուֆ, Մկրտիչ Պալըճեան, Ցակովը Պոյաճեան և Տոքթոր Քէչէճեան. ամբողջ ազէս եօթն հոգի: Նախորդները հինգ էին, բայց շատ անգամ մեծամասնութիւն չունենալուն պատճառաւ՝ ժաղով չէր լիներ: Երեսիոխանները նկատողութեան առնելով այս կարևոր խնդիրը, որոշեցին 5-էն Զ-ի բարձրացնել Քաղ. ժողովոյ անդամներու թիւը և տեղական երեք քահանաներն ալ իրրեւ կրօնական ժողովոյ անդամներ ճանաչել. առաջներն ալ այսպէս եղած է Կրօնական ժողովոյ ընտրութիւնը:

Ընտրական գործողութիւններէն վերջ, Տեարք՝ Մարկոսով պէյ և Վասարապուհ Գալիքաքճեան ներկայացուցին իրենց լանձնուած նոր շինուելիք վարժարանի յատակագիծն և յայտագրել, որոնք անյարմար դատուեցան գործադրուելու, որով Մայիս, 1905.

հետեւ շատ նեղ կ'ուզար եկեղեցւոյ կից ձեռք բերուելիք միջավայրը. հետևաբար 15,000 անգլ, ոսկւոյ պիտոճէով արտօնութեցաւ միևնույն մասնաժողովին՝ Գահիրէի յարմարագոյն թողերէն միոյն մէջ ընդարձակ կալոււած մը դանել և 600 երկուու ուսանողներ պարունակող շնչք մը կասուցանել: Ժողովոյ ատենապետը՝ վսեմ. Պօղոս փաշա Նուստացաւ վահնեցի անմահ Կարապետ Գալուստեանի թողուցած հողային կալուածներու հասոյթներէն \*) գոյացնել որոշեալ զումարը, վեց տարի ժամանակաւ, և ծախուելիք զումարը դանել պահպաներէն քիչ տոկոսով, որպէսզի շինութեան գործը չըկտաձղուի: Ասենապետը՝ Պօղոս փաշա Նուստացաւ նաև իրեն բարեկար՝ իր անձնական քսակէն վահնակալնական կամ արմեստանոց վարժարան մը հաստատել միայն հայոց համար, այնպէս որ ազգային վարժարանն աւարտողներն անմիջապէս հոն մտնան, որմէ յետոյ՝ յարմարագոյններն Եւրոպա ուզարկուին: Ինչպէս կը լուսի, այս շինութեան վրայ 40 հազար անզինական լիրէի գումար մը յատկացուցած է վսեմ. Պօղոս փաշա: Եղիպատական բոլոր լրազրութիւնը հրատարակեց այս լուրը իր թիրթերուն մէջ:

Այս բարեգործութեամբ վսեմ. Պօղոս փաշա Նուստաց ազյին բարերարաց շարքին մէջ պիտի անցնի և անմահացնէ իր անունը: Այս հսկայ հաստատութեամբ՝ Պօղոս փաշայ մոռցնել պիտի տայ իր հանգուցեալ հօր գէմ գրուած քննադատականները: Վերջապէս՝ գործով ցոյց պիտի տայ իր Մեծ մարդու—Նուպարի հարազատ որդիութիւնը, որմէ ազգը շատ մեծ բաներ կը յուսար:

Պօղոս փաշայ Նուստար լաւ հայերէն գիտէ խօսել, մինչդեռ իր նախորդը հանգ. Տիգրան փաշան, որ քեռայրն էր նորին վսկեմութեան, երբէք չէր կընար հայերէն լեզուաւ խօսել: Ժողովականներն առաջնոյն օրով արտքերէն, ֆրանսիերէն և թուրքերէն լեզուներով կը խօսէլին. ինչպէս նաև Քաղ. Ժողովոյ խօսակցութիւնը չորս լեզուեան բարբառներով: Սակայն նորընտիր Երևափախանութեան և Քաղ. Ժողովոյ անդամները քիչ բացառութեամբ օտար լեզուներով կը խօսին, որոնց հակառակ է նորընտիր տաենապետը, վասնովի քանիցս ոլահանչից որ զուտ մայրենի լեզուաւ խօսին:

\*) Գահիրէի ազգային կալուածոց տեսուչը յայտարարած է յատենի ժողովոյ թէ յաջորդ տարքն կըկին վարձը պիտի բերեն ազգին վերաբերող կալուածները և քանի տարիներ անցնելէ վերջ՝ գուցէ քառապատկին եկամուտները, նեղոսի օրհնեալ ջրամբարներու շնորշիւ:

զը մոռանանք նաև ծամօթայնելու «Մուրճ»-ի ընթերցողներուն, թէ Գահիրէի և Աղեքսանոգրիոյ բաղաքներու ընիկ հայերը երբէք չէին կրնար խօսիլ հայերէն \*), բայց վերջին գաղթականութիւնը օրհնութիւն մը եղաւ հիներուն համար. վասն զի շատերու հետ խնամիական յարաբերութեան մէջ մոռելով և գաւակնին ազգային վարժարանը (մասնաւորապէս ի մասն կապարտէզ) դրկելով, մաքուր հայերէն խօսիլ սորվեցան: Մինչդեռ վերջին գաղթականութիւնէն առաջ օտար վարժարաններ կ'ուղարկէին գաւակնին: Տակաւին կը գտնուին ծնողներ ալ որոնք հակառակ են ազգային վարժարանի շնութեան, որովհետեւ այնտեղ ուսուանողներ ապագային հաց ու յառաջազիւթիւն չեն կարող գտնել:

Անցեալսերը պատահմամբ Առաջարդարանի գիւանատուն հանդիպեցայ, ուր երկրորդ գիւանազպիրը բազմաթիւ ստորագրութիւններով լիցուած մի հին վկայագիր կ'արտազրէր տօմարի մը մէջ. հետաքրքրուելով հարցուցի. տեսածս վկայագիրը յանձնեց ինձ կարդալու. նկատեցի որ հարիւր տարի առաջ՝ Ապրօեան գերդաստանի Բագրատունիաց տոհմի սերունդը լինելու վկայագրի թարգմանուած պատճէնն էր, որու վրայ կաթողիկոսներ, պատրիարքներ և առաջնորդներ յաջորդաւար ստորագրած էին, մինչև եկած հասած էր Ներսէս Պարժաւակեանի ստորագրութիւնը, այնուհետև զագրած էր յաջորդներու ստորագրութիւնը: Դիւանապետ՝ Տեար Աղպարճ յայտնից թէ. «Հնութեան վերաբերող և Ապրօեան տոհմին իրեն յիշատակ նուիրուած մի գեղեցկանկար աւետարան տեսած է հանգ, փաշայի տանը, աւետարան, որ քանի տարի առաջ խոստացած է եղեր Նուիրել եջմիածնի կամ Վենետիկի վանքին, բայց մահը վրայ հասնելով այնպէս մնացած է»:

Հանգ. Տիգրան փաշան թողուցած է իրեն ժառանգ մի արու և մի աղջիկ գաւակ, որոնք իրենց Նախսի հաստատուող, «Իշխան Ապահ» հօրեղբայրնուն խնամոց յանձնուած՝ կ'ուսանին Եւրոպա: Հանգուցեալ Տիգրան փաշայի գումար օր. Մարզպարիտը, որ գեւ 17 տարեկան է, եփիպտական կառավարութիւն իրեն յատկացուցած 16 մնգլ. լիրէի ամսաթոշակը, որ սահմանուած էր հօր մահուան թուականէն սկսեալ, նուիրած է Գահիրէի ըիչ գրամագլխով հաց ճարողներուն. մինչդեռ հան-

\*) Քանի տարի առաջ մենող Տէր Կաբապետը՝ տեղացի քահանան՝ լրբէք չէր կարող հայերէն խօսիլ: Հանգուցեալը՝ «Անամալի» մականունն ընդունած էր, որ կը թարգմանուի «ինձի թուշ», որովհետեւ ամեն խօսակցութեան մէջ «Անամալի» կըսէ եղեր:

գուցեալ հայրը չէր կրցեր օգտուիլ իրեն—իրրե հըմաժարեալ նախարարի—յատկացեալ 200 եղիպ. ոսկի ամսաթոշակէն, ուղղակի կառավարութեան թողնելով զայն. սակայն փորձէն օդտուեցաւ իր արժանաւոր գուտարը, որուն տրուել սահմանուածէ 16 եղիպ. լիրէ գումարը, մինչև որ ամուսնանայ: Իսկ հանգուցեալ Տիգրան փաշայի մանչ զաւակը, որովհետև չափահանէ և միանգամայն հարուստ, թոշակ չէ որոշուած իրեն:

Օր. Մարգարիտի գեղեցիկ օրինակին հետեւցաւ նաև տիկին Պօղոս փաշա, որ գաստիարակի դեր կատարած է առաջինին վրայ, Գահիրէի Աղքատախնամ ընկերութեան, ամսական 1000 դրշ եղիպ, ողջ զրամ յատկացնելով: Իսկ Պօղոս փաշա Նուպար՝ ի յիշատակ իր վաղամեռիկ ուսանող որդուն, զանազան հաստատութիւններու բաւական լեցուն գումարներ նուիրելէ վերջ, 300 եղիպ. ոսկի (եղիպ. ոսկին աւելի կ'արժէ  $2^{1/2}$  դրշ. քան մոնղլ.) նուիրեց Աղքատախնամին, պայմանաւ որ իրրե զրամապլուխ տրուի վկայեալ արհեստաւորներու, որոնք փոքրիկ գումարով ալ կարող կը լինին իրենց և ընտանեաց ապրունուը ճարել:

Եղիպարհնակ հայ զաղթականութիւնը շատ պիտի յառաջադիմէ և ազգին պատիւ բերող քայլեր պիտի առնէ. ինչպէս պատմութիւնն ալ մեզ ցոյց կ'ուտայ, անցելոյն մէջ հայ հատնել մեծամեծ գերեր կատարած են Եղիպտոսի մէջ, ըսիլ է թէ հայ ժողովուրդն ընդունակ է այս երկրի մէջ յառաջադիմութիւն ձեռք բերելու: Սպասենք և յուսանք:

Ա. կ. Շ.

1905 մարտ 28.

ի Գահիրէ

## ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կովկասիների հանրագրեր; — Տերրիտորիալ եւ կրօնական անշրաբեներ; — Բարձր, մոկազ կրօն, համբեռդուքթեան մասին; — Ազգայնական եւ կրօնական շաղկապ, — ուու ազգութիւնների կազմակերպում; — Հայկական հանրագիր; — Կովկասի փախարանի մուտքը Թիֆլիս; — Հայ, լուս, հոգ, վարչական կարգով պատիժների վերացումը; — Թիւրքիայից եպրովառուսանդու համար էջմիածին եկող վարդապետների հարցը; — Արեւմտեան Զ նահանգների մասին Բարձր ուկազ:

Մեր երկրի երեք ստուարաթիւ ազգութիւնները, հայ, վրացի և թուրք, արտայայտեցին իրանց բաղձանքները և հասարական-քաղաքական ծրագրները: Այդ ծրագրների մէջ շատ ընդհանուր կէտեր կան և պէտք է խոստավանել որ համակովկասեան պահանջները աւելի լուրջ են մշակուած հայկական հանրագրում, որ, եթէ ուղենալու լինենք բնորոշել որոշ քաղաքական տերմինով, չենք կարող նացիօնալ-գեմոկրատիական չանուանել: Այլ գոյն են ստանում վրացական ծրագրները իրանց տերրիտորիալ պահանջներով և թուրքականը՝ իր կրօնական շաղախով:

Պարգենք մեր ասածը:

Հարաւային Կովկասում ամենահին բնիկներն են, բացի լեռնական ցեղերից, հայերն և վրացիները, որոնք այժմ էլ բննում են իրանց հին ծննդավայրերը: Թէև վրացիները սիրում են հայերին համեմատել հայրենազուրկ հրէաների հետ, սակայն բաւական է որ նրանք մի քիչ ծանօթ լինէին ֆակտերին որպէս զի գաղարէին այդ ուղղութեամբ հսթագրութիւններ անելուց: Թող ընթերցողը ուշադրութեամբ քննի այս համարի 113 էջում ըերած թուերը և, հաւատացած ենք, որ նա մեզ հետ կը համոզուի թէ հայ տարրը այժմ էլ, չնայած գարերի ընթացքում տեղի ունեցած մասսային կոտորածներին, գերի տարուելուն և գաղթերին, նշանաւոր թիւ է կազւում հին հայկական Այրարատի, Արցախի և Սիւնիքի գաւառներում:

Համեմատաբար նորեկ է թուրք-թաթարական տարրը, որ 700 տարի առաջ հրով և սրով հաստատեց իր բնակութիւ-

նը մեր երկրում: Թուրք-թաթարական ցեղը այժմ էլ աւելի ստուար է իր հին ծննդավայրին մօտ նահանգներում, այսինքն թուրք-թաթարական տարրը գերիշխում է Հարաւալին Կովկասի արևելեան մասում, որ բաժանուած է Միջին Ասիայից, Կասպից ծովով:

Իրանց հին ծննդավայրերում են ապրում և Կովկասեան լեռնականները, արխազները, չերքէզները և լեզգները, որոնք բաժան-բաժան են եղած բազմաթիւ ցեղերի և բարբառների:

Այդպիսով տերիտորիալ որոշ տարածում ունի իւրաքանչիւր ավագութիւն, սակայն գրանից գետ չէ հետեւում որ ներկայ սոցիալ-անտեսական պայմաններում կարելի է վերացական հիմունքներով տաճմանագծեր, անջրապետներ դնել ազգարնակութեան զանազան ցեղերի մէջ: Երկրի ընդհանուր, հաւասար, ազատ օրինակարգը չի խանդարիլ որ իւրաքանչիւր ցեղ անարգել զարգացնի իր ազգային-կուլտուրական առանձնայատկութիւնները, շարունակի ապրել իր ծննդավայրում, պահպաններով համերաշխութիւնն հնագարեան հարեւանների հետ. սակայն անհատների տեղափոխութիւնը, զբաղմունք գանելը չի կարելի սահմանափակել ինչ-որ կամածելի հին գոկումնաներով... Մենք զիտենք որ հողի սակաւութեան հարց են յարուցանում վրացի ինաւելիգենաները, երբ խօսք է վնում Թիւրքիայից զաղթածների անորմալ զբութիւնը կանոնաւորելու փորձի մասին՝ Սև ծովի այն ավելում, որ պատմականօրէն Արխազիա է կոչւում... Այդ ուղղութեամբ մտածելով շատ հեռուները կը գնան մեր գարենոր բարեկամները: Հողը պէտք է պատկանի նրան մշակողին, և զիւզացիական հողատիրութեան մասին երեք ազգութիւնների կողմից ևս ընդունուած կէտերը մի կողմից կը վերացնեն լատիֆունդիաները, միւս կողմից վերջ կը գնն հողի սակաւութեան: Զպէտք է մոռանալ որ մեր երկիրը իր տարածութեամբ համարեա ծագոնիայի չափ է, և, ուրեմն, կարող է ունենալ ոչ թէ 6 մլիոն ազգաբնակութիւն, այլ տան անգամ աւելի. զրա համար տերիտորիալ հարցեր չպէտք է յարուցանել, այլ սոցիալ-անտեսական ընդուրմների վրայ չանք գործ գնել...

Գանք թուրքերի ծրագրի առանձնայատկութեան: Եթէ ուշադրութիւն դարձնէք թուրք ծրագրի հոգու վրայ դուք, կարծում եմ, կը համոզուէք որ մեր այդ հարեւանները զես ևս գուրս չեն եկել զարդացման այն աստիճանից, որի վրայ կանգնածների համար կը օնը և ազգութիւնը հոմանիշ են: Աւելի ևս զարմանալի է այն՝ որ նաև ոչ-մուսուլմանները՝ մա-

մուլի մէջ, վրացուն ու հոյին հակազրում են մահմեղականը, կարծես լուելայն ընդունելով՝ թէ մահմեղականութիւնը և ազգութիւնը նոյն չ.., եւ այդ սխալ հասկացողութիւններից օշտպում է տւելի ստուար թուրք-թաթարական տարրը և «համիլամական» ու «թուրք-թաթարական» պահանջները նոյնանիշը յայտաբարում: Ոչ մի տեղ նրանք չեն յիշում որ «մայրենի լեզու» ունին և ոչ թուրք մահմեղականները, իրանց հանրապետի մէջ, ընդհանուր մահմեղականութեան բաղձանքների մասին խօսելով, նրանք ընզգծում են միայն թուրք լեզուի արտօնութիւնները: Ծուսաստանի 14 միլիոն մահմեղականների մէջ թուրք-թաթարները կազմում մօտ 3,800 հազար: Թողնենք ամբողջ Ռուսաստանը և վերցնենք Հարաւային Կովկասը, այդուեղ ևս, թուրք-թաթարական տարրից բացի, մահմեղական են, լեղուները, արխաղների մի մասը, չերքէզները, թաթերը, թալիչները, պարսիկները, ըրգերը, լողերը, եւ չենք ստում մահմեղականացած այլ վրացիների և հայերի մասին, որոնք, կորցնելով լեզուն, ծունութեամբ իրանց կրօնափոխ արած առըրի հետ... Սրդ, այդ բոլոր մահմեղական ցեղերը չ<sup>է</sup> որ ըստ ազգութեան ոչինչ կազ չունին թուրք-թաթարական՝ ցեզի հետ և նրա հետ շաղկապուած են լոկ կրօնական շաղախով: Մինք ընդունում ենք որ այդ ազգերի ներկայ կուլտուրական ստոր վիճակի մէջ լուլամը կատարում է այն արուեստական ցեմենտի գերը, որ միացնում է լեզուն, չերքէզին, լաղին, քրդին, պարսիկին՝ թուրքի հետ և մի խայտարգիտ կոնցլոմերատ կազմում: Ընդունում ենք որ հին բեժիմի կրօնական սահմանափակումները աւելի սերտ են զարձրել մահմեղականների ընդհանուր շահերը, սակայն նոյն այդ ստորանակումների մասին հարց յարուցանել և միայն «մայրենի թուրք լեզուի» տպատղագոյնան մասին յիշատակել—նշանակում է զիտմամբ շփուկել կրօնի և ազգութեան հարցը...»

Ապրիլի 17-ին կառ. Ահեատին Բարձրագոյն տուած ու կազմվ նշանաւոր քայլ է արուած դէսի խոճի աղատութեան մնձ ըեփորմը: Եւ բոլորս ցանկանում ենք որ մահմեղականները, ինչպէս և ճրէաները, քաղաքական, քաղաքացիական և կրօնական իրաւունքների մէջ հաւասարուեն միւս քաղաքացիների հետ և աստանարակ մեր կրօնը դասնայ անհատի մասնաւոր դորձ, պետական տեսակետից չէղոք մի հասկացողութիւնն Խզճի կատարեալ աղատութիւնը և եկեղեցու անջատումը պետութիւնից կը վերացնի այն ներհակութիւնը որ նկատում է նոյն ազգի տարբեր զաւանանքի պատկանող մասերի մէջ, և պղպային զաղափարը աւելի ևս զտուած կը սկսի զարդանալ

համամարդկային-կուլտուրական ուղղութեամբ, կրօնը որոշ քաղաքական գործօնի դիր է ստանուամ միմիայն երբ նա հաւածուած է, և կու և ում է իր նշանակութիւնը, երբ ազգային-կուլտուրական ու զարդարական պարագաներից հաստատ հող է գտնուամ իր ոտի տակ: Այդ առակե՛տից թէ ընդհանուր պետական և թէ համամարդկային առաջադիմութեան շահերը պահանջուամ են կրօնական առանձնաշնորհների կատարեալ չչղորացում: Դաւանանքը՝ իրբե գրուց ներժուծուած, տուովի երևոյթ՝ կարող է փոփոխուել, վերանալ նոյն աղջի մէջ, մինչդեռ լեզուն՝ իրեւ ընական, օրգանական մի երևոյթ՝ ունի շատ խոր պատմական արժատներ ազգի անցեալի մէջ և իրբե այգավիսին՝ ցեղական է և մշտափթիթ ու կենսունակ: Ուստի կրօնական ու ազգային գաղափարների տարբերութիւնը պէտք է անուես չանեն և մեր մահմեղականները եթէ նրանք ուղուամ են քայլել առաջադիմութեան շաւղով: Տարաբաղդաբար այդ չի նկատուամ մեր մահմեղական ինտելիգենցիայի մէջ, որ դեռ ևս երազում է ինչ որ համբաւամական ցնորդների մասին, խիելով իր աչքերը արարական շարժման ազգայնականութեան առաջ...

Ինչպէս որ իրար կարող են հասկանալ և յարգել միմիայն հաւասարապէս ազատ և ինքնագիտակցութիւն ունեցող անհատները, այնպէս և իրար հետ կարող են համերաշխ լինել հաւասարաիրաւունք և զարգանալու ազատութիւն ունեցող հաւաքական անհատականութիւնները կամ ազգութիւնները: Դեկավարուելով այդ մկանագով, մենք կը ցանկայինք որ խախտուէր կրօնական շաղկապը մահմեղական ազգութիւնների մէջ ևս, և չերքեղը, աբիսազը, լեզուն, բուրդը և այլն, և այլն զարգայնէին իրանց մէջ ազգայնական ձգուամը: Համարեա մեր աչքի առջև կատարուեց վրացական տարբեր ցեղերի միացուամը մի բարբառի գրական ազգեցութեան շնորհիւ, այսօր իսկեւ, մինչընելը, գոււշ այլն, փշաւը, բարձուել ցեղի հետ միասին մի ազգ են կազմուամ: Ինչու նոյն ճանապարհով չի կարող արխաղչերքէղեան ցեղերի մի ազգութիւն առաջանալ և լեզիական ցեղերը չեն կարող նոյն կերպ միանալ: Բաւական է դրա համար որ այդ ցեղերի մէջ ինտելիգենտ ոչքերի մի կորիդ կազմակերպուի, սկսուի հրատարակուել թերթ, հիմնուեն զպրոցներ, ուր մայրենի լեզուի գերը կատարի ամենատարածուած բարբառը... Ահա ստեղծագործական մի հրաշալի աւպարէզ, որի վրայ պէտք է ուշ գարձնէին մեր լեռնականները: Նոյն ուղղութեամբ կարող են գործել օս, բիւրդ, պարսիկ տարբերը: Այն ժամանակ թուրք-թաթարական տարբեր կը սովորէր տարբերել ազգային և կրօնական տեսակէտները...

Չպէտք է վախենալ կեանքի բազմագանութիւնից: Երբ վերանան կեանքի ազատ զարգացման արգելք եղող հնացած կարգերն ու հասկացողութիւնները—շատ մեռեներ յարութիւն կ'առնեն, շատ համբներ կը սկսեն խօսել: Եւ մի՞թէ անապատը լաւ է բուրաստանից, գերեզմանային լուսութիւնը կեանքի ժխորից... Տղիտութեան և Փանատիզմի շերտերի տակ մեր ասպետ լեռնական հայրենակիցները ունին թագրած, նիրհող, սաղմային դրութեան մէջ հոգու և մաքի սքանչելի յատկութիւններ, որոնց երեան հանելը և զարգացումը առանձին փայլ կը տայ ոչ միայն պիտութեան, այլ և հաճայն մարդկութեան: Միայն պէտք է փշրել դարերի ընթացքում զրանց հասկացողութիւնների վրայ նստած կեղելը, տարրալուծել այն կրօնական շադաբը, որ կպցրել է նրանց թուրք-թաթարական տարրի հետ և անշարժութեան մատնել այլ ծագում ունեցող այդ ցեղերը: Միայն պէտք է վերացնել այն կարգերը, որոնք անարդար լինելով ատելութիւն և վրիժառութիւն են սնուցանում լեռների այդ խրոխտ զաւակների մէջ և մեկուսացնում, կզկացնում նրանց՝ մեր կուլտուրական կեանքից:

Եւ այն նոր կեանքը, որ յայտարարում է ազատ զարգացման երաշխաւորութիւն բոլորի համար, առանց կրօնի, ազգի և սեփի խարսութեան, վերածնութեան սկիզբ կը դնի մեր բազմատանջ երկրի համար: Ուրեմն, մի կողմ թողնենք տերրիտորեալ և կրօնական անջրապեսները, որոնք արուեստական խոչընդոտներ են դնում օրէցօր բարդուող կեանքում և իրանց մէջ պարունակում են կադ ու կոռու սերմեր ապագայում...

Լ. Ա.

Մայթուի 1-ին.

### Հայկական նակաազիլը

1) Հրաւիրել համառուսական ներկայացուցչական ժողով ընդհանուր, հաւասար, ուղղակի և զաղտնի ձայնատւութեան սկզբունքներով, տալով հայ ժողովրդին իրաւունք մասնակցելու այդ ժողովին Ռուսաստանի ներքին նահանգների հետ համահաւասուր հիմունքներով:

2) Մայնել Անվըրկովկասում տեղական անդաստակարգ ինքնավարութիւն լայն հիմունքներով, հիմնելով ա.) ինքնավար մանր գեմսովային միութիւն, բ.) զաւառական (առանց նահանգականի) զեմստվօ, առանձնացնելով բազաքային ինքնավարութիւնը իրեն առանձին միութիւններ և գ.) մէկ Համա-

անդրկովկասեան զեմստվային ժողով, որը իրաւունք պիտի ունինայ օրէնքներ առաջարկելու և նախօրօք քննելու Անդրկովկասին վերաբերեալ բոլոր օրէնսդրութիւնները:

3) Մտցնել հրդուեաների գատարան ընդհանուր գատառութեան (общей подсудимости) բոլոր գործերի համար, նոյն թւում նաև քաղաքական, կրօնական, պաշտօնավարական և մամուլի գործերի համար, մտցնել նոյնուկս ընուրեալ հաշտարար գատաւորների հաստատութիւնը: Թոյլ տալ գատարարութիւնը՝ հաշտարար դատաստանական հիմնարկութիւնների մէջ, տեղական լեզուներով: Պարտադիր անել, որ հայաշատ տեղերում գատաւորները և գատաստանական քննիչները գիտենան հայեցնելու լեզուն:

4) Ոչնչացնել դասակարգային առանձնաշորհներ: Հաւասարեցնել կանանց և տղամարդկանց իրաւունքները:

5) Ազատութիւն խօսքի, ժողովների, համախմբումների, համագործադպուների (стачка) և ընկերուակցութիւնների: Կարգադրել, որմարդասիրական, քաղաքակրթական, հրատարակչական և ուրիշ կրթական հաստատութիւնները, որպէս և պարբերական հրատարակութիւնները հիմնուեն և բացուեն յայտարարական (յաօշայ) ճանապարհով: Ազատել տեղական լեզուներով հրատարակուող ամեն տեսակ աշխատութիւնները գրաքննութիւնից և պատասխանատու անել մամուլը բացառապէս դատաստանի առաջ:

6) Լեզուի ազատութիւն ժողովներում: Գործարութիւն զիւղական հաստատութիւնների մէջ, նաև զիւղական հասարակութիւնների փոխադարձ յարաբերութիւնների մէջ տեղական լեզուով:

7) Անձնաւորութեան և լրակարանի անձնանմխելիութիւն Ոչնչացնել անցաթղթերի սխտեմը կոյսրութեան սահմանների մէջ: Վերացնել վարչական պատիմներն ու տուգանքները և ոչնչացընել ուժեղացըրած հսկողութիւնը: Վերացնել 1898 թ. հրատարակուած ոստիկանական զեմստվային պահապանների օրէնքը, հիմնել նոր զեմստվային ոստիկանութիւն և ենթարկել այս ոստիկանութիւնը զեմստվօններին, իոկ քաղաքային ոստիկանութիւնը՝ քաղաքներին:

8) Ընդհանուր, պարտապիր, ձերի, տարրական ուսում: Լիւակատար ազատութիւն տալ մասնաւոր նախանձենութեանը՝ բանալու յայտարարական ճանապարհով ամեն տեսակի և ամեն կարգի ուսումնաբաններ և դպրոցական հաստատութիւններ: Մասնակց անել հասարակական ոյժերը պետական միջնակարգ և ստորին դպրոցների կառավարութեան դործին: Բա-

հալ համալսարան թիվլիում եղիու սեռի անձանց համար կովկասադիտութեան և տեղական լեզուների ամբիոններով՝ նաև բանալ բարձրագոյն մասնագիտական գպրոցներ Անդրկովկասում:

9) Պարտագիր անել որ տարրական գպրոցներում դաշտանութիւնը հայ ծագում ունեցող մասնուկների համար լինի հայերէն, աւանդելով և սուսերէնը, որպէս գլխաւոր տուարկաներից մէկը: Էռորջ հիմունքների վրայ զնել հայոց կրօնի, հայոց լեզուի, զրականութեան և պատմութեան ուսուցումը պետական գպրոցներում, ուրիշ դիմաոր առարկաների հետ հաւասար սկզբունքներով:

10) Խղճի աղասութիւն: Վերացնել բոլոր դաւանական և կրօնական սահմանափակումները: Աղասութիւն տալ երգուելու մայրենի լեզուով բոլոր պետական և հասարակական հաստատութիւնների մէջ:

11) Վերականութիւն ինքնավար հայկական եկեղեցու իրաւունքները, վերացնելով բոլոր սահմանափակումներն ու խոչընդուները, մանաւանդ ա) հայոց եկեղեցու կալուածքները, կուլտուրական-կրթական և բարեգործական հաստատութիւնները կառավարելու գործում, բ) ս. էջմիածնի սինոդի անդամների, թեմական տուաջնորդների, յաջորդների և ուրիշ հոգևոր վարչական պաշտօնների համայնական ընտրութեան գործերում, և գ.) թէ ոռոսահայկական թեմերի և թէ ամենայն հայոց հոգևոր-աղքային ժողովները պարբերաբար գումարելու գործում:

12) Վերագրածնել Հայկական եկեղեցուն նրա ծխական գպրոցները և կալուածքները, վերացնելով 1884-ից մինչև 1903 թ. թ. բոլոր օրէնքներն ու կարգադրութիւնները, որոնք վերաբերում են թէ ծխական գպրոցներին և թէ այդ գպրոցների և հայոց վանքերի, եկեղեցիների և հոգևոր գպրոցների կալուածքներին:

13) Հիմնել Կովկասում հայ-կաթոլիկական թեմ թեմական տուաջնորդով, հայազգի և հայ-կաթոլիկ ընտրուած եպիսկոպոսով:

14) Մայցնել պրովինսիւ ելամտային հարկամատութիւն, ոչնչացնելով առաջնորդարդ անհրաժեշտ իրերից առնուող անողդակի հարկերը:

15) Բարուորել բանուորական աշխատանքի պայմանները, կանոնաւորելով օրէնսդրական ճանապարհով բանուորական օրբաժամը, վերացնելով բանուորական միութիւնների ու ընկե-

ըակցութիւնների կազմակերպութեանը խանդարող սահմանափակումները:

16) Պարտադիր անել, որ միւլքադարական և ժամանակառութապարտաւորուած (վրը Յօ—օբյաններ) գիւղացիների հողարաժինները (հաճէլո) յատ գնուեն ամբողջ համայնքների կողմից գանձարանի աջակցութեամբ, Ռուսաստանի ներքին նահանգների հետ համահաւասար հիմունքներով: Աջակցել որ գիւղական հասարակութիւնները կարողանան յետ զնել իշխանց հողարաժիններից դուքս գոնուող այն մասնաւոր կալուսածիրական հողերը, որոնցից նրանք շարունակ օգտում են, և պարտաւորացնել, որ գիւղացիական բանկը տայ նրանց այդ նպատակի համար փոխառութիւններ:

Թոյլ տալ մասնաւոր վարկային (կրեդիտային) հաստատութիւններին գործողութիւններ անել գիւղացիական հողերի յետքնան վերաբերեալ:

17) Նախադաս (преимущественное) իրաւունք տալ աեղական սակաւահող և անհող գիւղացիներին բնակուելու ազատ արքունի հողերի վրայ Անդրկովկասի սահմաններում: Դիւրութիւններ տալ գիւղական ազգարնակութեանը օգտուելու անտառներից, գաշտակներից (թալաններից) և արօտատեղիններից:

18) Վերացնել սուսաց հպատակութիւնը ընդունած թիւրքահայ գաղթականներին վերաբերեալ սահմանափակիչ և բացառիկ օրէնսդրութիւններն ու կառավարչական կարգադրութիւնները և տալ նրանց ուրիշ հպատակների հետ հաւասար իրաւունք հողարաժիններ ստանալու Անդրկովկասի սահմաններում:

20) Հայ գինուորներն ծառայելը խաղաղ ժամանակ կովկասի սահմաններում:

21) Վերադարձնել վարչական իշխանութեամբ աքսորուած հայերին, ներում շնորհել քաղաքական և կրօնական գործերի համար տուժող բոլոր անձերին:

—Մայիսի 5-ին հանդիսաւոր մուտք գործեց թիֆլս նորին Կայսերական Մեծութեան կովկասի Փոխարքայ գիներալ աղիւտանս կոմս Վորոնցով-Դաշկով և ստանձնեց երկրիս կառավարութիւնը:

—Ներքին գործերի մինիստրութիւնը հազորդել է Ամենայն Հայոց Կաթողիկոսին որ «Թագաւոր Կայսրը, համաձայն 1904 թուի գեկտեմբերի 12-ին Բարձրագոյն ուկազում եղած Նորին Մեծութեան նախացուցումների և մինիստրի ամենահըպատակ գեկուցագրի, արուած 1905 թուի աոլրիլի 2-ին, Բար-

ձրագոյն բարեհաճեց ոչնչացնել 1891 թուի մարտի 16-ի Բարձրագոյն հաստատուած կանոնները, որոնք վերաբերում էին հայ-լուսաւորչական հոգևորականութիւնն վարչական կարգով պատիժների և թարկելուն»:

—Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը խնդիր է ներկայացրել ներքին գործերի միախառութեան, որ վերացուի հանդուցեալ Պէլէլէի օրով զրուած այն արգելքը, որ զոյսութիւն ունի վերջին տարիներս Թիւրքիայից եպիսկոպոսանալու համար եջմանածին եկող վարդապետների վրայ:

—Մայիսի 1-ին Կառ. Սենատին Բարձրագոյն տրուած ուկաղով արևմտեան Ռուսաստանի Զ նահանգներում վերացը-րուած են Եեհական ազգարնակութեան նկատմամբ գործադրուող մի քանի սահմանափակումները: Եեհական ծագում ունեցող անձանց թոյլ է տրուում այսուհետեւ կապալով վերցնել հողեր և բոլոր օրինական միջոցներով հողային սեփականութիւններ ձեռք բերել: Թոյլատրում է կազմել ազնուականների ժողով, ընտրել ազնուականների պարագլուխներ: Այդ նահանգների սկզբնական, երկդասեան, քաղաքային և միջնակարգ ուսումնարաններում թոյլատրում է դաստանդել լիտովեան և լեհական լեզուները:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Զեզուարեան խախտումը քառահայի կողմից, — քանի ու թիւնը գարծեր, Տամբուրինի դաշտուրիւնը, եկեղեցին պետութիւնից անջտելու օրինազժի բնուրինը, Խմոնի գործովուրը, — Մինիստրական տեսութիւնը Անգլիայում, անշատման կատակցուրեան պահանջները: — Օտտոնեան պետութեան բույացման ազդեցութիւնը: — Մինիստրական փոփոխուրեան հաւանականութիւնը  
Անգլիայում:

Եթէ ֆրանսիայի ցոյց տուած աջակցութիւնը չկհնէր, առում են ճապոնական և անգլիական թերթերը, ծովակալ Բոժեաստվենսկին ոչ կը հասնէր Զինայ ծովը, ոչ էլ կը միանային սուսաց երբորդ և երկրորդ նաւատարմաները: Սկսած Շերբուրգից և Զիրուատից՝ ֆրանսիան խախտում էր չէղորդութիւնը: Ռոժեստվենսկու նաւատարմիզը երկու ամիս մնաց Մադականկարի մօմ, Նոսիրէում, ոչ միայն ածուխի և ուտեսափ պաշար առնելու, սազմամթերբը լրացնելու, այլ և սազմանաւերը մաքրելու և հրաձգութեան մէջ վարժութիւններ առնելու նպատակով: Եւ ամեն անգամ երբ ճապոնիան բողոքում էր, Դելկասսէի կառավարութիւնը ցոյց էր տալիս թէ իրան, իրին թէ, ոչինչ յայտնի չէ, քննութիւն կը սարքի և կը ճշտի եղելութիւնը: Նոյնը կատարուեց և Հնդկա-Զինի ֆրանսիական ջրերում: Ծովակալ Ռոժեստվենսկին մի քանի օր մնաց Կամբանի ծոցում և, երբ խիստ բողոքեց ճապոնիան, Դելկասսէն յայտնեց թէ ֆրանսիական կառավարութիւնը անկարող էր նախօրօք միջոցներ ձեռք առնել որ սուսաց նաւերը կանգ չառնէին ֆրանսիական ջրերում, և թօն factum ֆրանսիական կառավարութիւնը կարդադրութիւն արաւոր Ռոժեստվենսկին հեռանայ և առիթ չտայ չէղորդութիւնը խախտելու: Բացի այդ, Դելկասսէն արդարանում էր նրանով որ չէղորդութեան մասին ֆրանսիայի մշակած կանոնները տարբեր կերպով են հասկանում չէղորդութեան խախտումները: Բայց այնուամենայնիւ այդ չէղորդութեան խախտումը, ինչպէս և մի քիչ առաջ Մարոկկօի հարցում Գերմանիան անտես առնելը, բաւական անախորժ օրեր պատճառեցին բուրժուական ֆրանսիայի

արտաքին քաղաքականութեան զեկավար Դելկասսէին, որի հրաժարականը մազից էր կախուած որ ընդունուի: Եթէ ի նկատի ունենանք ոչ միայն սուս-ֆրանսիական դաշնը, այլ և այն որ կապիտալիստական ֆրանսիան միլլիարդներ ունի զբած թուսիայում—հասկանալի կը լինի Դելկասսէի բռնած գիրքը սուս-ճապոնական կուռում: Հինգ նոյն այդ տատերազմի հետեւանքների մէջ պէտք է վիճուկ և Գերմանիայի կողմից ցոյց տուած վճռականութիւնը Մարոկկօի հարցում, որի մասին խօսեցինք մեր անցեալ տեսութեան մէջ:

Ֆրանսիայի ներքին կեանքում շարունակում է ազատազրութեան այն սրբոցեսսը, որ չսայած որ մեծ լողափոխութիւնից աւելի քանի մի քար է անց, գեռ ևս չի հասել այնքան խանդաղատութեամբ ի լուր մարդկութեան յայտաբարած՝ «հաւառարութեան, հզրայրութեան և ազատութեան» գաղափարներին: Այսօր ևս փորձեր են լինում հանրապետական ֆրանսիայում վերականդնել միապետական քեժիմը, թէև քանի գնում աւելի քիչ աջողութիւն են ունենում զանազան Տամբուրինիների և վոլովիրների սարքած դաւադրութիւնները... Դեռ նոր է սկսում իրականանալ ֆրանսիայում եկեղեցու բաժնումը պետութիւնից՝ «խղճի աղաւառութիւնը» հանրապետական ֆրանսիայում, մինչև այժմ՝ կաթոլիկ կղերի արտօնութեալ զիրքի շնորհիւ, թղթի վրայ զրուած մնամէջ մի սկզբունք էր: Կոճրի մինիստրութիւնն էր որ աղջու միջոցներ ձեռք տուաւ ֆրանսիայում կաթոլիկ եկեղեցու և նրա կղերի ահազդին ազգեցութիւնը չէրացնելու: Այժմ Բուլիէի մինիստրութեան օրօք պայտատը արգեն վերջացրեց՝ եկեղեցին պետութիւնից անջատելու օրինագծի ընդհանուր ընթերցումը և սկսել է կիտ առ կէտ քննուելնրա յօդուածները: Այդ նշանաւոր օրինացդի առաջի երկու կէտերը անցան ձայների խոշոր մեծամասնութեամբ և համարես անփոփոխ: Այդ յօդուածներով վերացւում է կոնկորդատը և յայտաբարուում պետութեան կատարեալ չէղոքութիւնը կրօնական հարցերում: Առաջին յօդուածում առուած է: 1) Հանրապետութիւնը ապահովում է խղճի աղաւառութիւնը: Նա երաշխաւորում է պաշտամունքների աղաւ կատարումը, միայն այն ուահմանափակումներով, որ ցոյց կը տրուին ներքիւում: 2) Հանրապետութիւնը չի ընդունում, չի վարձատրում և չի օժանդակում ոչ մի պաշտամունք (կուլտ): Այդ պատճառով, այս օրէնքը յայտաբարուելուց յաջորդ յունուարի 1-ից սկսած, պետութեան, գեպարտամենուների և կոմմունաների եկամտը մէջ չեն մտնում պաշտամունքների (կուլտ) վերաբերեալ ծախքի: Երբորդ յօդուածում առաջարկուած է մանրամասն ցուցակադրել եկեղեցական անշարժ և շարժական կայքերը, որոնք

այժմ գտնուում են թեմական խորհուրդների կարգադրութեան տակ:

Մեծ տարածայնութիւններ առաջ բերաւ օրինագծի չորրորդ յօդուածը, որ վերաբերում է այն հարցին թէ ում յանձնել այդ կայքերը: Կղերականները, ի հարկէ, առաջարկում էին յանձնել կաթոլիկ հոգևորականութեան: Երբ այդ չաջողուեց, նրանք զիջում արին և առաջարկեցին—կայքերը յանձնել միայն այնպիսի աստղիացիօններին կամ ծխական ընկերակցութիւններին, որոնք կը կազմուակիրպուեն միայն տեղական եպիսկոպոսի համաձայնութեամբ և թոյլուութեամբ. տարածայնութիւնների գետքում քաղաքացիական զատարանները իրանց ուրոշումների մէջ, կրօնական ընկերակցութիւնների նկատմամբ, պէտք է ղեկավարուեն կանոնական իրաւունքով և տեղական եպիսկոպոսի իշխանութեամբ: Իսկ եպիսկոպոսին նշանակում է պապը...

Այդպիսի լիազօրութիւններ տալ «ազատ» կաթոլիկ եկեղեցու կղերին նշանակում էր հաստատել ծխականների կախումը կղերից: Արմատականները նիմանսոի և նախսկին ծովային մինիստր Պելըտանի բերանով հակառակ էին որևէ զիջում անելու կղերականներին և օպագորտիւնստներին, այդ հարցում: Դըրազգաբար այդ խնդրում ձախակողմեանների մէջ պառակտում առաջացաւ, և սոցիալիստները, ժոռէսի և Բրիանսի գրդամբ, այնպիսի փոփոխութիւն մտցրին 4-րդ յօդուածի մէջ, որ նա ուրախութեամբ ընդունուեց կղերականների կողմից. սոցիալիստները համաձայնուեցին այնպիսի սրբազնութիւն մըտցընել օրինագծի այդ կլտի մէջ, որի հիման վրայ եկեղեցական կայքերը պէտք է յանձնուեն միայն այնպիսի կրօնական ընկերակցութիւնների ձեւքը, որոնք կ'ենթարկուին եպիսկոպոսների հեղինակութեան: Սոցիալիստները այդպիսի զիջում արել էին, երեի, այն գիտաւորութեամբ որ չձգձգուի ամբողջ օրինագծի ընդունուիլը, թէն միենոյն ժամանակ Ռուվիէի մինիստրութեան այդ զիջողութիւնը պատականութեան առաջ՝ բաւական սաւցրեց կառավարութիւնից արմատական տարբերը: Դնելով «ազատ» կրօնական ընկերակցութիւնների սեփականնու իրաւունքը եպիսկոպոսների և կանոնական իրաւունքների բարեհայեցողութեան տակ՝ պետութիւնը զրանով որոշ չափով պաշտպանում էր այն սկզբունքը, որի գէմ էր ամբողջ օրինագիծը... Ֆրանսիայում գոյութիւն ունեցող եկեղեցական կազմակերպութիւնը հաստատուած է եպիսկոպոսների հեղինակութեան վրայ: Արդ, ընդունելով 4-րորդ յօդուածը այնպէս, ինչպէս ձեւակերպել էին ժոռէս և Բրիան, որոնց կարծիքով «եկեղեցա-

կան կայքերը յտնձնուելու են ընկերակցութիւններին (ասսոցիացիօն), որոնք համակերպում են ընդհանուր կազմակերպութեան կանոններին այն պաշտամունքի (կուլտ), որի կատարումը նրանք պէտք է ապահովին»—սոցիալիստները բաւական խոշոր կոմպրոմիսոի էին դնում: «Մենք ոչինչ չենք ուզում փոխել գոյութիւն ունեցող եկեղեցական կազմակերպութեան մէջ, ասաց Բրիան, և կաթոլիկ զաւանարանական ընկերակցութիւնները, անկասկած, կը մնան եպիսկոպոսների իշխանութեան տակ: Մենք ուղում ենք այդ կողմից նրանց տալ կատարեալ ազատութիւն:»

Արտմատականները այնքան վրգովուած էին այդ գիշումով որ Կեմանոսոն իր «'Ասորե»-ում և Պելտանը Dérêche de Toulouse թերթում արշաւանք սկսեցին ժոռեսի և նրա համախոնների պէմ...»

Միւս ներքին խոշոր հարցը, որի մասին մենք անցեալ-ներում յիշել ենք, բանուորների ապահովագրութիւնն է: Եւ պէտք է խոստովանել որ հանրապետական ֆրանսիան իր այդ օրինադր մշակելու օրինակ է վերցրել միապետական Գերմանիայից, ուր սոցիալական այդ միծ հարցը բաւական առաջադիմութիւն է արել, մինչդեռ ֆրանսիայում դեռ նորո՞նոր պէտք է քննուի: Ֆակտը ցոյց տուեց որ ֆրանսիայում դեռևս կարող են տեղի ունենալ գործադուլ անող բանուորների գէմ զինուած ոյժի այն-պիսի գործադրութիւն, որ տեղի ունեցաւ Լիմոժումը... Ի՞նչպէս տեսնում էր հին ըեծիմի հետքերը այնքան էլ արագ չեն անհետանում նոյնիսկ վերանորոգուած կեամքում...»

«Լեռանորոգուած» հին ըեծիմի մնացորդներից ամենից շատ տառապում է Աւստրօ-Ռւսկարիան: Արհեստական կապերով իրար հետ միացած այդ երկու պետութիւնների հակառակութիւնը քառասուն տարի է որ շարունակում է. Ռւսարիան ուզում է ձեռք բերել կատարեալ անկախութիւն Աւստրիայից, որի հետ ընդհանուրը միայն այն պէտք է լինի որ աւստրիական կայսրը միաժամանակ նաև Ռւսկարիայի թագաւորն է:

Եւ անկախութեան կուսակցութիւնը այժմ այնքան զօրեղայել է Բուլղարեցափառ պարլամենտում, որ ունդարական լիրերալ կուսակցութիւնը իր պարագլուխ մինխատը-նախագահ Ծիսացյով ստիպուած էր երկրի կառավարութեան ղեկը յանձնել անջատման կուսակցութեան: Սակայն ֆրանց-Յովուէփ կայսրը չը ուզում պարլամենտական այդ սովորութիւնը յարգել մինչեւ որ Ռւսկարիայի անկախութեան կուսակցութիւնը որոշ գիշումներ չանի իր ծրագրի մէջ: Մենք առիթ ենք ունեցել խօսելու Մայիս, 1905.

այդ կուսակցութեան պահանջների մասին, նորից յիշեցնենք ընթերցողին. Ունգարիայի ազատութեան կուսակցութիւնը, որի պարագլուխը այժմ համարւում է հոչակաւոր Կոշտոտի որդին, պահանջում է որ ունգարական զօրքում հրամանաւութիւնը լինի ունգար և ոչ գերման լեզուով, պահանջում է ընտրողական իրաւունքի ընդարձակում, Ունգարիայի տնտեսական մաքսային ինքնուրայնութիւն և ունգարական ազգային բանկ: Այդ ազգային-զինուրական պահանջներով դեկավարուող կուսակցութիւնից չի ուզում ֆրանց-Յովսէփ կայսրը ունգարական նոր մինիստրութիւն կազմել և ամիսներով շարունակում է պարլամենտական կրթիսր: Վիէննայի բէյխսրատն էլ, տեսնելով որ կառավարութիւնը Ունգարիայի հետ միանալու գործում միանգամայն անտես է անում աւստրիական մասի ժողովուրդի ներկայացուցիչների կարծիքը և ամեն բան որոշում է բիւրովատիական-միապետական բարեհայեցողութեամբ, սկսել է բողոքել՝ և բացարութիւններ պահանջել մինիստր-Նախագահ Գառլչից: Գերման ժողովրդական կուսակցութեան պարագլուխ դոկտոր Դերժատատան առաջարկում է ընտրել 48 հոգուց մի պարլամենտական յանձնաժողով, վերաբննելու Ունգարիայի և Աւստրիայի յարարերութիւնները: «Եթէ կառավարութիւնը կարծում է, թէ նա կարող է ընդունել Ունգարիայի պահանջը — ունգարական զօրքը աւատրիականից բաժաննելու մասին — այդ զէպքում մենք պէտք է այժմ և եթէ յայտնենք որ մենք, աւատրիական պարլամենտը, այլև չենք ուզում վճարել ընդհանուր ծախքերի  $\frac{2}{3}$ -ը այդպիսի աւատրօ-ունգարական զօրքի վրայ, ինչպէս մենք անում էինք մինչև այժմ: Եթէ թագը հընարաւոր կը համարի՝ ընդհանուր զօրք պահպաննելու նպատակով՝ Ունգարիայի համաձայնութիւնը գնել, տալով նրան մաքսային սահմաններ կառուցանելու իրաւունք պետութեան երկու կէսերի մէջ, մենք էլ պէտք է պատասխանենք, որ այլիս չենք ցանկանում համապետական ծախքերի  $66\%$  մեղ վրայ վերցնել, չենք ուզում գլխաւորապէս աւատրիական դրամագլխով ընդհանուր պետական բանկ պահպաննել»...

Եւ այդպիսով ոչ միայն իրա Աւստրիայի և Ունգարիայի մէջ ապրող տարրեր ազգութիւններն են ձգտում ինքնավար Զեխիա, Լեհաստան, Խորվատիա ևայլն ստեղծելու, կամ ամրող Աւստրօ-Ունգարիան մի ֆեդերատիւ միապետութեան վերածելու, այլ և միաժամանակ նկատում է և Ունգարիան Աւստրիայից անջատելու տեսնդենց...

Այդ պրոցեսսի մէջ, չի կարելի չհամաձայնել շատերի հետ, ազգեցութիւն ունի և, Թիւրքիայի թուլանալը Բալկան-

եան թերակղզու վրայ: Քանի որ վտանգ էր սպառնում հզօր Օսմանեան պետութիւնից՝ Աւստրիայի և Ռւսարիայի ազգութիւնները, ինքնապաշտպանութեան բնազդից, միանում էին հարսբուրգեան գահի տակ. այժմ, երբ քայլացում է Թիւրքիան և վիրանում վտանգը, ազգերի կապը Աւստրօ-Ռւսարիայում կորցնում է իր պատումական անհրաժեշտութիւնը և բնականաբար մանր ազգութիւնները իրանց գոյութիւնը պաշտպանելու համար փարում են ֆեղերացիայի գաղափարին:

Իսկ թէ արդարեւ Թիւրքիան կամաց-կամաց կաղմալուծում է դա, բացի համիսլամականներից, ոչ ոք չի ժխտում: Անջատուած Ռումանիան, Բուլղարիան, Մերքիան, Չեռնոգորիան, Յունաստանը օրէցօր աճում են: Անջատուելու վրայ են Կրետէն, Եմնը, իսկ Ալբանիայի և Մակեդոնիայի բաժանումը մօտիկ ազգայի հարց է...

Անցեալ անդամ մենք յիշատակեցինք արարական ապստամբութիւնը Եմնը ում: Դրանից յետոյ յայտնի եղաւ որ Թիւրք բանակը կատարեալ պարտութիւն է կրել և ստիպուած է եղել յանձնել ապստամբների ձեռքը Սանա քաղաքը, բազմաթիւ ռազմամթերքներով և թնդանօթներով: Ոչ ոք չի կասկածում որ Անգլիան օգնում է եղել ապստամբներին և, ինչպէս փետրուար-մարտի մեր տեսութեան մէջ աշխատել էինք պարզաբանել, Թիւրքիայի գործերում Անգլիան ակսել է ներգործական դեր խաղալ: Մակայն այժմեան մինիստրական դրութիւնը Անգլիայում բաւական խախուտ է համարւում և մօտ ապագայում սպասում են նոր ընդհանուր ընտրութիւններ, որոնց ժամանակ, երեխ, հասարակական կարծիքը իր քուէն կը տայ ազատական կուսակցութեան: Այն էլ պէտք է ասել որ Անգլիայում, ուր աղատութիւնը արել է համարեա այն ամենը ինչ քաղաքականապէս իդէալ է համարւում, լիրերալ կուսակցութիւնը այլևս աջողութիւն չի կարող ունենալ, եթէ սոցիալական ընֆորմներ չունենայ իր ծրագրի մէջ: Բանուորական կուսակցութիւնը երկրի մէջ այնքան արդէն ուժեղացել է որ ապագայ պարլամենտում կարող է բաւական ստուար Թիւրազմել, և, իբրև օպպոզիցիա, մեծ գիւմացանք պատճառել լիրերալներին, եթէ գրանք բաւականան կիսատ-պուատ միջոցներով և լուրջ ուշադրութիւն չդարձնեն հասունացած սոցիալական վերանորոգութիւնների վրայ: Յամենայն դէպս մինստրութեան փոփոխութեան դէպքում էլ Անգլիայի արտաքին քաղաքականութիւնը հազիւ թէ շեղուի այն աւանդական ուղղութիւնից, որ աւելի պայմանաւորւում է նրա համաշխար-

հային դիրքով՝ առետրական և արդիւնագործական կողոսսալ շահերով, քան այս կամ այն բիւրոկրատի փոփոխական կապրիզով, ինչպէս ուրիշ բրկներում...

I. Ս.

Մայիսի 5-ին

## ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

I.

Յայտնի է որ Տրանսվալի պատերազմի ժամանակ Ռուսաստանը մնձ աջողութիւններ ունեցաւ Պարսկաստանում: Աթարէզը Աղամը հաւատարիմ բարեկամ էր ոռու կառավարութեան և ոռուսաէր կուսակցութեան զեկավարն էր. նա ունէր մհծ ազգեցութիւն թէ Շահի և թէ առ հասարակ բոլոր պալատականների վրայ: Խնըը Մուզաֆֆէր-Էզզին Շահն էլ առանձին բարեկամական տրամադրութիւններ ունէր զէտի Ռուսաստանը, որովհետեւ իր անգրանիկ, ժագաժառանգ եղբայրը Զիլի-Մալթանչն անզիլիասէր էր անզիլիական պաշտպանութիւնը վայելում էր: Ռուսասէր կուսակցութեան անդամները օրից օր շատանում էին. եղաւ մի ժամանակ, որ նոյնիսկ հարաւային Պարսկաստանում, Սպահանում ու Ղումում բարիները ամենայն վստահութեամբ ոռու կառավարութեան պաշտպանութեան վրայ յոյս ունէին, որը արտայայտեցին իրանց դէմ կատարուող կոտորածի ժամանակ, առաջին քաղաքի ընակիչները ոռուսական փոխհիւսպատոսի տունը ապաստան փնտուելով, երկրորդ քաղաքի բնակիչներն էլ թէ նոյն հիւսպատոսից և թէ Թէհրանի դիսպանից օգնութիւն աղերսող հեռագրական դիմումներով: Ի հարկէ եթէ այգալէս էր հարաւային Պարսկաստանում՝ հիւսիսային Պարսկաստանը արդէն բոլորուն ոռու տէրութեան ենթարկուած պիտի համարել: Խաշտում, Թաւրիզում, Բալֆրուշում, Աստրարադում, Նոյնիսկ սուրբ քաղաք Մէշէզում ոռուսական ազգեցութիւնը կատարեալ տիրապետող էր և ոռուսաց լեզուն պարսիկ առեւտրականների համար արդէն պահանջ էր զարձել. նոյնիսկ բացառապէս ոռուսերէն լեզուն սովորեցնելու համար Ռաշտում բացուեց «Վաթան» գպրոցը: Բացի քաղաքական ազգեցութիւնից, տնտեսապէս էլ Ռուսաստանը տէր էր դարձել հիւսիսային Պարսկաստանին. հարաւում էլ նրա կատարած փորձերը յաջող էին գնում՝ այսօր Բալֆրուշի, Խորասանի և Մազանդարանի բուրդը ամբողջութեամբ լոձի Փաբրիկաների համար են գնուում,

Մարսել քիչ է արտահանւում. իսկ Շիրազում, Ղումում, Սպահանում, Քիրմանում «Պրոխորով և Ընկ.» «Սաւվի Մորոզովի որդիներ», և այլ երկրորդական ու առաջնակարգ ոռու ֆիրմաներ իրանց ներկայացուցիչներն ունեն, որոնք կարողանում են ծախել սուսական մանուֆակտուրային այլ և այլ ապրանքներ։ Շաքար ամբողջ Պարսկաստանին գրեթէ նուսաստանն է տալիս։ Միայն Բուշիր ուղարկուած ոռուսական ապրանքները անշաջողութեան մատնուեցին, այն էլ չնորհիւ անդիմական խոսրամանկութեան, որ շոգենաւերից ցամաք ապրանք փոխադրող բոլոր նաւակները և Բուշիրից դուրս եկաղ գրաստները վարձել էր սուսական ապրանքը փոխադրութեան միջոցներից զրկելու համար։

Անգլիական ազգեցութեան անկման մեծ դարկ տուեց և՝ 1902 մաքսային նոր տուրքը, որ արտասահմանեան ապրանքների մուտքը Պարսկաստան գյուարացնում էր թանգ սակագնով՝ մինչդեռ սուսական շատ ապրանքներ գրեթէ չնշին գնով էին անցնելու մաքսերից։ (օրինակ, շաքար, զալանտրի և այլն)։ Այդ տարիիցը կազմելու համար շատ օգնեց սուսական միստիային և Պարսկաստանի մաքսերի բեղդիմական վարչութիւնը յանձին պ. Նորի՝ մաքսերի և պետական գանձի մինիստրի։ Մինչև անդամ այնքան զօրեղացաւ ոռուսական ազգեցութիւնը Պարսկաստանում, որ «Թայմզ»-ը չափաւորութեան խըրատներ սկսեց տալ նուսաստանին։ «Երկիրը մեծ է, հիւսիսը ձեզ, հարաւը մեղ»։

Բայց անգլիական կառավարութիւնը երկար լուս ականատես լինել չէր կարող։ Տրանսվաալի պատերազմից յետոյ ուշադրութիւն սկսեց դարձնել իր արտաքին քաղաքականութեան, հետևաբար և Պարսկաստանի վրայ։ Նա ամենից առաջ ուժեղացնելու փորձեր արաւ անգլիասէր կուսակցութիւնը, ուրի շէֆն էր Հաքիմ-իւլ-Միւլքը, տարողատականցի մի իշխան, որ մօտ յարաբերութիւններ ուներ Շահի հետ, չնորհիւ այն բանին, որ Թաւրիզում տարիներ շարունակ միասին էին անցկացրել, երբ վերջինս դեռ թագաժառանգ էր և Առողատականի ընդհանակապին։ Պէտք էր Աթաբէզզը Ազամին ձգել և նրա տեղ սաղբազամ նշանակել տալ Հաքիմ-իւլ-Միւլքին։ Եւ ահա Լոնդոնից բարձրաստիճան մի լորդ էղուարդ թագւորի կողմից իր եղբայր Մուղաֆֆէրէդդին Շահին իրրե ընծայ տարաւ զանկապանի այն շքանշանը, որ Նասրէդդին Շահի մահից յետոյ վերագարձրուած էր անգլիակամ կառավարութեան, և որի իսկական թեկնածուներ համարւում էին ճապոնական Միկատօն և թիւրքական Սուլթանը։ Այսպիսի յանկար-

ծակի կերպով երևեցաւ Թէհրանում՝ լորդ սլատգամաւորը, և շնորհիւ Հաթիմ-իւլ-Միւլը աջակցութեան այնպիսի անսպասելի կերպով իր հրաժեշտի ժամանակ Շահի հետ նոր համաձայնութեան եկաւ, որ թէ սադրազամ Աթաբէկը Աղամը և թէ ոռւսական դիպլոմատիական ներկայացուցիչը անկարող եղան մի բան անհետու։ Տարիի մէջ պէտք է փոփոխութիւններ մըտցըրուէին, Հարաւային Պարսկաստանում անգլիական ձեռնարկուների համար պէտք է հանքային և այլ արդիւնաբերական առանձնաշնորհումներ տային։ Շահը խոստացաւ, լորդը Թէհրանից ճանապարհուեց գէպի Լոնդոն։ Երկու օր յետոյ անգլիական դեսպանը պահանջեց Շահից իր խոստումները կատարել, բայց Աթաբէզն ու ոռւսաց դեսպանը արգելք եղան, որից յետոյ անգլիական գորբերը անգլիական Բելուջիստանից մտան պարսկական Բելուջիստան, Բոմբէյից էլ մի քանի զրահաւորներ ուղեւորուեցին գէպի Պարսից ծոց։ Շահը պատրաստ էր զիջումներ անելու, բայց ոռւսական գաշնադրութիւնը նրան անզօր էր կացուցանում, ուստի նա հրամայեց սպարապետին զօրքով գնալ Բելուջիստան, մի բան որ կատարելու համար 1,000,000 թուման ուղեց սպարապետը, և որովհետև 1,000,000 թուման Շահի գանձի համար մի աներեւակայելի գումար էր, պարսկական Էկսպետիցիան գլուխ չեկաւ։ Անգլիական մի ընկերութիւն գրանից յետոյ իրաւունք ստացաւ շահագործելու Քիրմանշահի մօտ, Գարուն գետից քիչ հիւսիս-արևելք գտնուող նաւթային հանքերը. մի ուրիշ ընկերութիւն էլ իրաւունք ստացաւ Քիրման և Ֆարսիստան նահանգներու այլ և այլ հանքերը շահագործելու։

Աթաբէզը վախեցաւ. նրա գրութիւնը խախտւում էր արդէն անգլիասէր տրամադրութիւններ էր ցոյց տալիս Շահը. նա յանդիմանութիւն ստացաւ. Հաթիմ-իւլ-Միւլքի թիկնածութիւնը արդէն զլուխ էր գալու շուտով։ Ի՞նչ անել, պէտք էր ի հարկէ հեռացնել Թէհրանից այս վերջինին, որպէս զի ինքը սադրազամ մնայ, մանաւանդ նոր զէպքեր էլ իր գրութիւնը աւելի խախուտացնում էին։ 1903 թ.-ի գարնանը Ղումում և Եղում, բարիների կոտորած առաջ եկաւ. օրը ցերեկով մուսուլման ֆանատիկ ամրոխը յարձակուեց իր ազգակից նորագաւանների վրայ և սկսեց անխնայ կոտորել առանց խտրութիւն դնելու սեռի կամ տարիքի մէջ։ Շամփուրներով ծակել կանանց փորոտիքը, շիկացած թասերով այրել աղամարդկանց զլուխները, պատերի մէջ ողջ-ողջ թաղել մանուկներին, բռնաբարել 8—10 ամեայ աղջկանց ևայլն, ևայլն, ամեն բան արին՝ բարեպաշտ մոլլանների առաջնորդութեամբ, ու մարգարէի սե-

րունդի ներկայացուցիչներ եղող սէյիդների քաջալիրութեամբ, մուսուլմանները. նոյնիսկ կանայք էլ մասնակցեցին այդ կոտրածին, որ ամբողջ մի շաբաթ տևեց երկու քաղաքներումն էլ: ի զուր Աթարէզից օգնութիւն էին խնդրում Փանատիկոսութեան անմեղ զոհերը. նա ոչինչ չկարողացաւ անել, նա վախճանում էր մի բան անել, որովհետեւ Թէհրանի հոգնորականութիւնը և անզլիասէր կուսակցութեան անդամները ուշադրութեամբ հոկում էին նրա կարգադրութիւնների վրայ, նրան երկար ժամանակէ և վեր մեղադրում էին բարիականութեան մէջ. պաշտպանելով ուրիշն բարիներին՝ նա այդ մեղադրանքը պիտի հաստատէր և ի հարկէ զոհ պիտի գնար Թէհրանի հոգուրականների Փանատիկոսութեան: նա չուզեց այդ անել նրան խորհուրդ չտուին և՛ իր պաշտպանները: Եւ նա թոյլ տուեց, որ կոտորածը շարունակուի Դումում և Եզդում, ապա ծաւալուի Սպահանի և Շուտուէրի կողմերում: Թշուառ բարիները դիմեցին և՛ ուսւ կառավարութեան ներկայացուցիչներին, որնք նոյնպէս անպաշտպան թողեցին նրանց: Վերջապէս անդլիական դիսլումատները նրանց պաշտպանեցին: Այդ արդէն մի փիասկօ էր Աթարէզի համար, հետեւ և՛ երկրորդ ֆիակօն:

Թաւրիզի թուրք ամբոխը սէյիդների ու մոլլաների առաջնորդութեամբ յարձակուեց մաքսատան կառավարիչ Պրիմ-մի և ինսպէկտոր Երեմեանի վրայ, որոնք հազիւ կարողացան փախչել քաղաքից և մի դիւղում ապաստան գտնել մի քանի օր. նոյն ամբոխը յարձակուեց ապա և՛ օղելաճաւների իւանութների ու եւրոպական ձեխ դպրոցների վրայ: Մաքսային տարիքը փոփոխել էին պահանջում ցոյց անողները. նրանք պահանջում էին և՛ բելգիացիներին դուրս անել Պարսկաստանից: Այդ ժամանակ, երբ իմ բարեկամներից մի ամերիկական քաղաքացի դիմեց Գիլանի անզլիական փոխհիւպատոսին իր շահերը պաշտպանելու համար, ալ, հիւպատոսը մերժեց նրան, ասելով՝ որ շուտով կարող են խովութիւններ պատահել և Գիլանում. բայց շնորհիւ նահանգապետ Մարդարան-Մուազզամի մի հչ մի վատ բան տեղի չունեցաւ, թէև փորձեր եղան բարիների վրայ յարձակուելու և հարկէ Գիլանի վրկութիւնը կախում ունեցաւ և՛ այն բանից, որ իր նահանգապետը անդլիասէրների կուսակցութեան էր պատկանում: Նոյն Մարդարան-Մուազզամն էր, որ ոռուսական ոլայմանագրութիւնը ոչնչացնելու համար իր կողմից բարձր կառավարութեան առաջարկեց մի ծրագիր, որ կամաւոր նուիրատութիւնների միջոցով կարելի լինի վճարել Ռուսաստանի պարտքը և իր կողմից մի

մեծ գումար նույիրեց այդ նպատակով։ Թէև նա անզլիասէր էր, բայց բարիներին պաշտպանած լինելու համար թէհրանի հոգևորականութեան կողմից տմբաստանուեց իրեւ Աթարէկի մարդը։

Սաղբազամը աւելի նեղն ընկաւ և այդ նեղութիւններից ազատուելու համար Սարդար-Մոււազզամին հնացրեց Գիլանից՝ հրաւիրելով նրան թէհրան, և նրա տեղ կարողացաւ նահանգապետ նշանակել և Գիլան դրկել տալ իր ամենամեծ հակառակորդին, Հաքիմ-իւլ Միւլքին։

Բայց այդ էլ գեռ բաւական չէր։ Թէհրանից հեռու թէն, բայց Հաքիմ-իւլ-Միւլքի սադրազամ դամնալու շահնսիրը չէին պակասել։ Մի-օր էլ նա հրաման ստացաւ ինքնասպանն ինել, այլապէս ամենախայտառակ մահով պիտի մենակը։ Այդ ինքնասպանութիւնը կատարուեց օգոստոս ամսի կէսիրին մի փառաւոր, հանդիսաւոր ճաշկերոյթից յետոյ, որին մասնակցում էին և թէհրանից Ն. Կ. Մեծութեան կողմից եկած պատվամաւորները։ Պարսկաստանի անզլիասէր քաղաքական կուսակցութեան շէֆը մեռաւ, մի բուգէ այնպէս թուաց՝ թէ Աթարէկը աւելի ամուր հասաւատուեց իր սլաշտօնում։ Նոյնիսկ գերմանական «Zeit» լուրագի թէհրանի թղթակիցը, որ գիտլումատիական շրջանում աչքի ընկնող գիրք ունի՝ յայտնում էր իլուր աշխարհի, թէ Հաքիմ-իւլ-Միւլքի մահուամբ անզլիական քաղաքականութիւնը նոր սլաշտութիւն կրեց Պարսկաստանում։

Իրանց շէֆի հետ անզլիասէրներից ուրիշ շատեր էլ հեռացրուած էին թէհրանից, գաւառներում այլիայլ պաշտօններ ստանձնելով։ միքանիսը դրանցից նոյնիսկ իրանց շէֆի գըժքաղութիւնը կրեցին, բայց և այնպէս բոլոր երկիրը խռովուած գրութեան մէջ էր. աւելի խռովութեան էին ենթարկուած պալատականները։ Եւ ահա մի օր էլ Աթարէկը ստիպուած հղաւ հրաժարուել և սուսական դիսպանատան սլաշտպանութեան տակ հեռանալ թէհրանից, որից յետոյ թէհրանի մեծ մուշէիդը Փէթվա տուեց, թէ նախկին սադրազամի հարըստութիւնը հալալ է, ով որ կամենում է, թնդ յափշտակի։ Աթարէկը գնաց նախ Պիտերը լուրզ, անցաւ տպա եւրոպա, իսկ յետոյ ձապոնիա։

Մինչև 1904 փետրուարի կւսերը, թէհրանում, անզլիական և ոռւսական ազգեցութիւնները գեռ հաւասար չափով մըբցում էին իրար հետ, մասնաւանդ որ ոռւսակը սադրազամի հրաժարուելուց յետոյ նշանակուած էր Շահի ազգականներից մէկը, էինը Դովլէն սադրազամի պաշտօնում։ սա սիրում էր իրկու կողմի հետ էլ խաղաղ բարեկամական յարաքերութիւններ պա-

հել: Իրան շրջապատեց նա իր նման հանգարտ ու խաղասէր մարդկանցով, Թէհրանից այլ և այլ պաշտօններով հեռացը եց տաք գլուխ մտածողների մեծ մասը և սկսեց ծրագրել պարսկական նոր բէֆորմները, որոնց համար հրատիրեց բոլոր նահանգապետներին Թէհրան: Նրա նոր ծրագրի էռթիւնն էր գըլխաւորապէս պետական բանակ ունենալ (Պարսկաստանում իւրաքանչիւր աղնուական իր ուսիսական զօրքը ունի՝ ինչպէս էր հին Հայաստանում և արևմտահան աւատական երկիրներում): Իսկ բանակ ունենալու համար հարկաւոր էր գրամական միջոցներ: Բելզիացիները խոստանում էին այդ միջոցները տալ, Պարսկաստանի այդ նոր բէֆորմատորները, որ մաքսային եկամուտները շատ ցոյց տալով՝ աշխատում են աւելի չաղ ոռձիկներ ստանալու, որ չեն խնայում ոչ մի միջոց խեղճ ժողովրդին հարստանարելու, նոր օրէնքներ մտցնելով հարկատութեան սիստէմի մէջ, յոյս ունէին պետական բանակի ծախսերը հոգալ: Պարսիկ քաղաքագէտների համար էլ շատ հեշտ էր թւում մողական զաւագանի մի հարուածով տակնու վրայ անել պետական հին կազմը և նորը տալ: Նահանգապետները միաձայն վճռեցին հարկատութեան բելզիական սիստեմ մտցնել և յանձնել այդ գործի կառավարութիւնն էլ պ. Նոսին, պոստերի, մաքսերի մինիստրին: Դատավարութեան նոր սիստեմ մտցնելու ծրագիր կաղմելն էլ յանձնուեց նոյնին: Արդէն թղթերը բոլորը պատրաստ էին, այս տարուայ նովուուզի մէկից (մարտ 9) այդ հարկատութեան սիստեմը պիտի իրագործուէր: Կամաց-կամաց Թէհրանի կառավարչական բարձր շրջաններն էլ ընդունում էին Սարդար-Մուաղղամի քաղաքական ծրագիրը, որ է օտար պետութիւններին պարտք չունենալ: Նոյնիսկ երբեմն քաղաքական-տնտեսական հարցերին շատ մօտ երեացող «Հարլ-ուլ-Մէտէյն»-ը իր լեզուն փոխեց և դտաւ, որ կարելի է ներքին մի քանի բէֆորմներով օտարներից փոխառութիւն անելու անհրաժեշտութիւնից ազատուել: Սկսուեց ամբողջ Պարսկաստանի վրայով անցնել ազգասիրական չէլորացման գաղափարի հոսանքը: Նոյնիսկ բացի երկրի կառավարիչներից և այլ և այլ պետական պաշտօնեաններից՝ գաւառական աղնուականներն էլ, նոյնիսկ վաճառականներն էլ սկսեցին մտածել նոր բէֆորմների մասին: Ռուս-ճապոնական պատերազմն էլ «Հարլ-ուլ-Մէտէյն»-ին, նոյնիսկ Թէհրանի պաշտօնական «Իրան»-ին լեզու տուեց աւելի համարձակ քաղղիւու պարսկական կղզիացման գաղափարները:

Ինչպէս Տրանսվալի պատերազմի ժամանակ անզիական աղղեցութիւնն էր սկսել նուազիլ, նոյնպէս եղաւ և ոռւ-

սական աղդեցութիւնը այս մի տարուայ ընթացքում, ելք  
Մանջուրիայում ոռւս բանակը հետզհետէ աւելի ու աւելի մեծ  
անյաջողութիւնների հանդիպեց: Անգլիական դիպլոմատ-  
իան իր իմպերիալիստ գաղափարները Ասիայի վերաբերմամբ  
իրազործելու ժամանակ գտաւ...

Գ. Ե.

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

## I

Թոյլ տուէք երկու տողով պատասխանել Եղիշէ ծ. վ. Մուրադեանի  
«Մուրճ»-ի № 2—3-ում գրած պատասխանի այն մասերին միայն, որոնք  
ուղակի ինձ են պատկանում:

1) Իր գրութեան մէջ այնպէս է ցոյց տալիս, որ Թաւրիզի Լիլաւայ  
թաղի գպրոցների հոգաբարձութիւնը կազմուած լինէր միմիայն վեց հո-  
գուց սա արդէն զիտաւորեալ և անփիզն խեղաթիւրում է. մոռանալ հոգա-  
բարձութեան եօրներորդ անդամին՝ Պ. Անգրէ Յարութիւնեանցին՝ որպէսզի  
յետոյ կարողանայ ասել թէ հոգաբարձութեան երեք անդամները հրաժա-  
րուելով փոքրամանութիւնը պաշտօնի վրայ էր մնացել:

Եթէ այդպէս լինէր, ըստ օրինի լուծուած չպէտք էր համարել հո-  
գաբարձութիւնը. Ի՞նչու այդ կազմալուծեալ հոգաբարձութիւնը պահում  
էր պաշտօնի վրայ և իրեկ առաջնորդ՝ պաշտօնական յարաբերութիւն էր  
պահպանում նրա հետ:

Ուրեմն, ընթերցողները տեսնում են, որ եօրը հոգուց բազկցած  
հոգաբարձութեան երեք անդամների հրաժարուելովը հոգաբարձութիւնը  
ըստ օրինի չէր կազմալուծուած, և հետեւաք մեծամասնութիւն կազմող չըս  
անդամները իրանց պաշտօնը շարունակեցին Ճիշտ է, որ պ. Անգրէ Յա-  
րութիւնեան միենոյն ժամանակ եկեղեցու երեցիուխան էր, սակայն ըստ  
օրինի դարձեալ մնում էր հոգաբարձութեան անդամ, այս այսպէս է եղիլ  
միշտ թաւրիզում:

2) Եղիշէ վարդապետը ասում է, որ «1901 թուի վերջերին՝ պաշտօ-  
նակարութեան հէնց առաջին ամիսներին, երեք հոգի հրաժարական ներկա-  
յացրին, որովհետև առանց երանց գիտութեան ժողովներ էին կայացրի և  
վճիռներ ու որշումներ տուել մնացած երեք անդամները»: Այս խօսքերը  
այն ժամանակ էլ ասում էր հայր սուրբը, սակայն երբ որ հոգաբարձու-  
թեան արձանագրութեան տոմարը և անդամների կողմից ստորագրուած  
ժողովի հրաւիրագրերը ներկայացրի առաջնորդ Եղիշէ վարդապետին, այն  
ժամանակ այդ փաստերի առաջ խոնարհուց և այդ առարկութեան անտե-  
ղի լինելը յայտարարեց: Ի՞նչպէս շուտով մոռացաւ իր իսկ ձեռքով կատա-  
րած քննութեան այս արդիւնքը, Պատճառը անշուշտ սակաւարինութիւնն  
է :

Շատ ծիծաղելի էր հրաժարուած անդամների այդ առարկութիւնը.  
հոգաբարձութեան նախագահի կողմից ժողովի տեղը, օրն ու ժամը որոշող  
հրաւիրագրեր են ընդունում, ստորագրում և ժողովին ներկայ չեն գոցն-

ւում յետոյ էլ առարկում են, որ առանց իրանց գիտութեան մնացեալ անդամները ժողովներ են կայացնում, զճիմներ և որոշումներ են տալիս: Հայոց ի՞նչ անէին մնացեալ չորս անդամները: Այսպիսի դէսպերում ուրիշ տեղոր ի՞նչպէս են վարում: Մնացած մեծամասնութիւնը իր գործն է շարունակում, մեծամասնութիւնը ձայնով իրաւունք է ունենում որոշումներ և գճիռներ կայացնելու:

Ինչու համար ծածկել իսկական պատճառը: Նրանք հրաժարուեցին միմյան աշակերտուհիների եւրոպական յարդէ գլխարկ կը ելու առաջարկին հետեւնքով, որը դրել էր սեղանի վրայ զպրոցների տեսուչը՝ պ. Տիգրան Ռաշմանեան, և որին համակարծիք գտնուեցինք հոգարածութեան մնացեալ անդամներս: Ընթերցողը անշուշտ շատ ծիծաղելի կը գտնէ այս պատճառը, գլխարկի պատճութիւնը, բայց իրողութիւնը այդ է, մենք ի՞նչով մեղաւոր ենք: Աշակերտուհիները բայց տեղական սովորութեան ամառուայ շող օրերին իրանց զլուխը փաթաթում էին չալմաների մէջ և ի հարկէ չափաղանց նեղուում: Այս հակառողջապահական դրութեան վերջ տալու համար, զպրոցի վարչութիւնը աշակերտուհիներին առաջարկեց—ոչ պարտաւորիչ, այլ կամոււոր— Ռուսաստանից բերուած յարդէ գլխարկներով ծածկելի իրանց զլուխները: Ահա այս բանի դէմ կեցան հոգարածութեան հրաժարուած անդամները, յամառելով իրանց ունակասլաշտութեան վրայ և երբ որ տեսան մեծամասնութեան յաղթանակը, քէն պահեցին և հրաժարուեցին:

3) Պատասխանի վերջիրումը եղիշէ վարդապետը սոււմէ, որ պ. Մկըւտիշ կազարեանցին համոզել եմ, որ Թաւրիդ չզնայ, որովհետեւ կարող է սպանութիւն տեղի ունենալ... Պ. Ղազարեանցը նշանակուել էր տեսուչ, երբ որ ևս էջմիածնութիւն էի: Իրու Թաւրիդի ծանօթ, ինձ զիմեց պ. Ղազարեանը և տեղեկութիւններ ուզեց տիրող վիճակի մասին: Եւ էլ զրութիւնը իսկութեամբ պարզեցի նրա առաջ: հասկանալով Թաւրիդի զրութիւնը, խելացի համարեց հրաժարուել:

Իսկ սպանութիւն տեղի կարող է ունենալ խօսքը չեմ ուրանում, ասել եմ հէնց իրան՝ Եղիշէ վարդապետին, որովհետեւ իր պատճառով, իր տնտեսիք վարդումների հետեւանքով առաջ էր եկել մի այնպիսի խռովայոց և տաղնապալի վիճակ, որ իր Թաւրիդ վերադարձը իսկապէս կարող էր ըսպանութեանց տեղի տալ... և արդէն իմ այդ խօսքը սահելուց առաջ Թաւրիդում մի օնունալի քահանայ նոյն այդ զպրոցական խնդրի առթիւ ծխականներից մէկի վրայ ապրճանակ էր արձակիւ...:

4) Եթէ զպրոցների բիւգչէն բարձրացաւ և դրամազլխից պակսեց, այդ բանում հոգարալութիւնը բնաւ մեղաւ որ չէր: Արդէն որոշուել էր աղջկանց Պ. և տղաների Զ. գասարաններ բաց անել: Հոգարածութիւնը ամեն ճիկ ու չանը թափեց հասոյիթի նոր աղրիւններ գտնելու և մասամբ էլ յաջողուեց, սակայն հոգարածութեան պաշտօնի զլուխ անցած օքերում պատհեցին Թաւրիդի միմեանց յաջորդող մասնկութիւնները, և այդ գըամական կը իզիւը խորապէս աղդեց դոլրոցի եկամուտի վրայ: Գողերի տոկոսները չզանձուեցին, կողմնակի նորիցատութիւնները գագարեցին, թոշակագրամները պակասեցին և նոյնիսկ թոշակաւորները ձրիներ դարձան... Ինչու համար նկատի չառնել այս խօսքը գլխեցը և մեղքը բառնալ հոգարածութեան վղին...: Միթէ սա բարեխզնութիւն է...: Հոգարածութիւնը հրաժարուեց այն պատճառով, որ իմ Թաւրիդից հեռանալով մնացած ան-

դամները փոքրամասնութիւն էին կազմում և հետեւաբար, ըստ օրինի, արդէն ինքնին կաղմալուծուած էր:

Միւս խեղաթիւրումների մասին խօսելը ուրիշներին եմ թողնում:

Դոկտ. Դ. Փաշայեան

Ալեքսանդրիա 2/15 ապրիլ, 1905 թ.

## II

Առբագատականի նախակին առաջնորդ, գերապատիւ Տ. Եղիշէ ծ. վ. Մուրտքեանը իր յանցանքը ծածկելու համար երեան է գալիս «Մուրճ»-ի 2—3 համարում, և «Ո՞վ փակեց Թաւրիդի Լիլաւա-Թաղի զպրոյները 1903—1904 ուսումնական տարուայ ընթացքում» վերնագրի տակ խմբագրութեանդ ուղղուած մի ընդարձակ նամակով, աշխատում է ըստ իրեն «Փաստեր» և «Դոկումենտներ» առաջ թիրելով դպրոցների փակ մնալու մեղքը իր վրայից պցել, բայց ընդհակառակը, ունքը շինհելու տեղ, աչքն էլ է հանում:

Ես իրեկ ականատես ամբողջ եղելութեան, և իրը տեղացի՝ զործին մասնակցութիւնը մէկը, առաջ եմ գալիս միայն մի քանի փաստերով պատմելու բուն իրողութիւնը:

Ա. Հոգաբարձական ա. ընտրութիւնը, որի մասին ինչպէս տում է առաջնորդը, ստիպուած է եղել լուծել ինչ որ «կեղծ ու անկանոն» խընդիրով՝ կատարուել հետեւալ կերպով:

Հականակ ժողովրդի ցանկութեան և հնաւանդ սովորութեան Եղիշէ ծ. վ. Մուրագեանը, իրան յայտնի պատճառներով հոգաբարձական ժողով է նշանակում Դալա-իմադի դպրոցի սրանում, փոխանակ Լիլաւայում նշանակելու, քանի որ հոգաբարձական կազմը Լիլաւայի համար պիտի ինչեր ժողովի կանչեում են ծխականները զատ-զատ հրաւերներով, առանց որի ոչ-ոք իրաւունք չունելը մտնելու ժողովասրանը:

Հրաւերներ էր ուղարկուած միմիայն նրանց, ովքեր վճարել էին ինչ որ պըտդի կոչուած տուրքերը. իր ասածով Եղիշէ վ.-ը առաջնորդում էր «Ժխական կանոնադրութեան» 12-րդ յօդուածով, բայց ըստ երեսյին միայն այն կէտերով, որոնք իրան ձեռնուու էին. օրինակ, (տես ծխական կանոնադրութեան 12-րդ յօդ. գլ. դ.) «Երանք, որոնք սովորոյ թով ընդունուած ծխական ժողովից սահմանուած եկեղեցական տուրքերը չեն վճարել, ալդ-պիսիները զրկւում են ձայնի իրաւունքից»: Նախ այդ կանոնադրութիւնը ժողովրդի սեփականութիւնը չէր և երկրորդ՝ «եկեղեցական տուրքեր» խօսքը շատ առաջական է. եկեղեցին ունի քաղմատեսակ տուրքեր, բայց հայր Եղիշէն տուրք ասելով ընդունում է միայն պտղին, որի վճարը իրաբանչիւր ընտանիքի համար միջին հաշուով 2 դռան է, և ով չէր տուել, զրկուեց ձայնի իրաւունքից:

Հրաւեր ուղարկելիամ է. Եղիշէն առաջնորդում է մի ինչ որ տեղորակով, որտեղ նշանակուած է լինում պաղի տուող ընտանիքների «մեծ»-ի անունը, որոնցից շատերը քաղաքից բացակայ էին, շատերը տան մէջ փակուած զառամեալ ծերունիներ և մի քանիսներն էլ միւս աշխարհ փոխադրուածներ: Այսպէս, օրինակ, հրաւեր է սահման ժողովի մասնակցելու համար, Օհան Տէր-Զարարեան անունով մի հիւանդ ծերունի, որ մի քանի տարուց աւելի է՝ փակուած էր տնում, իսկ առողջ զատուղութեան տէր, խելքը զլիին 24—25 տարեկան որդին անտես է առնւում: Հրաւերներ են սահման Աղայեան, Յովհաննիսիսան և այլ ծերունիներ,

որոնք սկի չեն էլ հետաքրքրւում այլ գործով, բայց նրանց հետաքրքիր զաւակներին արդելում է ժողովի մուտքը բայց, որ ամենից ընորոշն է, ծիծաղիկն, և միմնոյն ժամանակ այն ցաւալի իրականաւթիւնը պարզողը, թէ զրբից մարդիկ ինչպէս են կուրանում, հրաւէր է ուղարկւում Բաբաջան Ստեհանեան տնունով մի տասը տարսւայ հանգուցեալի, մինչդեռ նրա 23 տարեկան տղան իրաւունք չունի ժողովին մասնակցելու:

Եղիշէ վարդապետին ձեռնատու չեմ կատարել կանոնադրութեան այն կէտերը, որով արտօնութիւն է տրուվ բոլոր 21 տարեկաններին և Յ ամսից աւել Թաւրիկում ապրողներին մասնակցիլու ժողովին. (տես հիմնաւեան կանոնադրութեան յօդ, 10):

Համաձայն Եղիշէ վարդապետի կամքի՝ հրաւէրուեցան 3—4 անդամ ունեցող ընտանիքից միայն մէկ հոգի, և ժողովը զումարուեցաւ Ղալայի սրանում արդինքը եղաւ այն, որ 450—500 տուն ունեցող Լիլաւայի ծխականներից ներկայ էին ժողովին 46 հոգի: Ահա այդ օրինաւոր ընտրութիւնն էր, որ առաջնորդ Մուրադեանը «մի կեղծ ու անկանոն» իմնդրի պատճառով ստիպուած եղան լուծել ասում է:

Բ. Երկրորդ ընտրութիւնը, Հայր Եղիշէն, հակառակ իր կամքին, տեղի տալով ժողովրդի պահանջին՝ նշանակեց Լիլաւայում. բայց զիտմամբ ինքը չուղեց ներկայ լինել ժողովին, և նախազան նշանակեց մի զառամեալ քահանայի, վատահ լինելով որ վերջինս չի կարող կառա խարել ժողովը և այդպիսով ընտրութիւն չի կայանայ: Այդ նպատակին համսնելու համար, հրամայից քահանային չքանալ ժողովը մինչև 80 հոգուց աւելի ծխականներ չինեն և բոլորն էլ որոշ հասակից աւել. և անմիջապէս փակել ժողովը հէնց որ մի շոուկ լսուի:

Ժողովը բացուեց 120 ծխականներով և Եղիշէ վարդապետից աւելի կեանքի մէջ փորձառութիւն ունեցող քահանան շատ խելացի կերպով տարաւ գործը:

Ընտրութիւնը եղել էր այնքան կանոնաւոր, որ երբ արդիւնքը ներկայացրին առաջնորդին, վերջինս չկարողանալով զսպել իր հիացմունքն՝ ասց, որ Պրանից լաւ ընտրութիւն չէր կարող տեղի ունենալ:

Բայց «Կայյը գործիքը մէջտեղն էր...», Եղիշէ վ.՝ կամեցաւ նոր բան ստրել և յաջողուեց իրան: Վ.ը ժողուած մտքերը հանգստացնելու համար, փոխանակ կանչելու նորընտիր հոգաբարձութեան և համոզելու նրանց որ իրանց պաշտօններին տէր կանցնեն, նա վարւում է ընդհակառակը...

Գ. Նա յայտնում է որ ժողովում ընտրուած հոգաբարձուներից երեք հոգին հրամարուած են. լաւ, բայց ինչո՞ւ հրաժարուեցին—այդ մասին ոչ մի խօսք: Այդ երեքը՝ ից մէկն էր պ. Բաղդասար Մելիք-Սարգսեանը, որը ծանօթ է ինչուչ Թաւրիզի, այսպէս էլ ամրող Աստրպատականի հայ-հասարակութեանը, շնորհի թէ իր զիրքի և թէ անցեալ զործու հութեամբ որ ունեցել է նոյն այդ ասպարիզում: Այդ ժողովում նա ընտրուած է լինում 120 հոգուց միաձայն, ժողովականների բուռն ծափահարութեամբ. սակայն խաղաղութեան նախանձախնդիր վարդապետը առանց նրան կանչելու և յայտնելու իր ընտրուած լինելու մասին, համոզելու որ չմերժի և այն, յայտարարում է որ ապ. Բ. Մ. Մարգսեանը չի ընդունի հոգաբարձական պաշտօնը—առանց նրա երեսը տեսած լինելու: Այս յայտարարութեան վրայ հոգաբարձուներից ուրիշ երկու հոգի էլ հրաժարուած են իրանց պաշտօնից: և ապա միայն պ. Մելիք-Սարգսեանը իմանալով կատարնեած իրողութիւնը, վշտառում է, և իսկապէս հրաժարուած:

Դ. Եղիշէ վ. Վ. Հայափառ Հայրապետի թիւ 950 կոնդակը տակաւին չէր

ստացել որ ժողովրդին հրաւէր ուղղեց նոր-ընտրութիւն կատարելու, ժողովի օրը, երկրորդ ժողովում ընտրուած հոգաբարձուները երբ լսեցին Վեհափառի հրամանի մասին, չափաղանց զարմացան տեսնելով՝ որ Ե. Վ.-ի պահանջը բոլորովին հակառակ է նրան. (կոնդակը կամ ստացուած չէր և կամ է կամ եթէ ստացուած էլ էր երեսն չէր հանուած մինչեւ այդ օրը:)

Ե. Շատ բնական էր կիլաւայի ծխականների բողոքակիր արձանագրութիւնը և շատ տեղին նրանց գործ ածած լեզուն: «Քսան տարուայ ուսուցիչ» ալ. Գ. Զիլինկիրեանը, եթէ չենք սխալում, Թաւրիդ է եկել 1894—95 թուերին իրեւ տեսուչ Արամեան և Ս. Աննայեան երկսեռ դպրոցների. մը քանի տարի այդ պաշտօնը վարելուց յետոյ, զանազն պատճառներով զըրկուել է տեսչութիւնից և գառել հասարակ ուսուցիչ: Իրը ուսուցիչնա պաշտօն է ունեցել և կիլաւայի դպրոցներում, որտեղ նրանից անբաւական լինելով մի տարուայ ուսուցչութիւնից յետոյ արձակում են: Դարձեալ յաջողուում է նրան մանել Ղալայի դպրոցը, բայց 1901—1902 տարուայ վերջում առաջնորդ Եղիշէ վ.-ի ցանկութեամբ հեռացնում են նրան՝ պատճառարաներով որ նա չափաղանց կարծատես է: Ահա այդ քան տարուայ ուսուցիչ ալ. Զիլինկիրեան էր որ տեսուչ էր նշանակւում կիլաւայի դպրոցներին Հայը Մուլտպիկանի կողմից:

Համաձայն կանոնագրութեան՝ ժողովը տեղի է ունեցել կիլաւայի սրահում, որտեղ կազմուել է և արձանագրութիւնը 86 հոգու ստորագրութեամբ—աւելի շատ ծխականներից քան հոգաբարձական արձանագրութիւնն էր ստորագրուած:

Եւ այս պատգամաւորները, ինչպէս տեսնում է ընթերցողը, ընտրուել էին մի բազմանդամ և կանոնաւոր ժողովում, որը տեղի էր ունեցել հասարակութեան ներկայութեամբ, և ոչ զոնէ-զուռ պլատացրած թղթի վրա հաւաքած ստորագրութիւններով, ինչպիսին անում էին ոմանք...

Եւ ի՞նչ մեծ և մահացու մեղք են գործել աշակերտները, որ շատ իննարն ինքը պատգամաւոր ժողում էր և ցանկութիւն յայտնել, որ 5 տարի շարունակ իրանց զաստիարակող ուսուցչական խումբը, որ այնքան շատ համակրանք և սէր էր ձեռք բերել թէ՛ աշակերտների և թէ՛ հասարակութեան մէջ—չփոխուի, մնայ նոյնը \*):

Մ. Սահակեան

### III

Կիլաւայի դպրոցների մասին շատ գրուեց պարբերական թերթերում: Այս տարուայ «Մուլճ»-ի մէջ էլ լրիս է տեսել Եղիշէ ծ. վ. Մուլագեանի «Ո՞վ փակից Թաւրիզի կիլաւա-թաղի դպրոցները»: Որովհետեւ այդ յօդուածի մէջ մի քանի կէտեր ինձ և իմ տեսչութեան օրով գործող ուսուցչական խմբին են վերաբերում, ինդըրում եմ թոյլ տաք և ինձ մի քանի խօսք ասել \*):

\* ) Խնդիրը պարզուած համարելով, չենք տպում այս ընդարձակ պատասխանի մնացած մասը: Ցանկալի է որ անցեալը լաւ գաս լինէր Թաւրիզի հասարակութեան և նոր առաջնորդի համար. երկու կողմերն էլ պէտք է հասունութիւն և տակտ ցոյց տան ազգային գործերը սահմանագրական ոգւով վարելու:

\*) Նոյն պատճառով առաջ ենք բերում յօդուածագրի մի միայն եղբակացութիւնները:

1) Եթէ Ե. ծ. վ. Մուրագեան կարողանար կանոնաւոր ընթացք տառ հոգաբարձական ընտրութեանը, 2) Եթէ Կէթ իր իշխանական բարձրութիւնից մի քիչ խոնարհուէր և ընդունէր իմ առաջարկը՝ Համբարձման դէպքի առթիւ քննութիւն նշանակելու և, 3) վերջապէս եթէ անտեղի կերպով չափանակակից ուսուցչական խումբ կազմելու իրաւունքը, այն ժամանակ ոչ ես կը հեռանայի և ոչ էլ նորանոր բարձրութիւններ առաջ կը դայիին:

Իմ հեռանալուց ու վերջնականապէս հրաժարուելուց յետոյ, երբ Ե. ծ. վ. Մուրագեան չկարողացաւ մի տեսուչ ճարել, գոնէ իրան թոյլ չպիտի տար աշակերտներից շատ լաւ ճանաչուած ու չյարգուած մի ուսուցչի տեսչի պաշտօնակատար նշանակելու, թէկուզ ժամանակաւորապէս. նա՛ իր հոքարձութեան հետ միասին վերջապէս չպիտի թոյլ տար տեսուչ հրաւիրելու մի անճնաւորութեան, որը վերջերում հեռուից հեռու անհամակրելի դիրք է բռնել գէպի լիլաւալի զպրոցների ուսուցչական խումբն ու աշակերտները: Բնական էր, որ IV, V և VI դասարանի աշակերտները (18—20 տարեկան) պիտի սկսէին, արդարացի բողոքներ բարձրացնել. բնական էր, որ նրանցից սկսած շարժումները անցնէին նաև ստորին դասարանցիներին:

Իսկապէս, Ե. ծ. վ. Մուրագեան իր տակտով, իշխանական ու աղայական ձգտութերով, Թաւրեղի լիլաւա-թաղի զպրոցների մի տարուայ փակման ու անսքան ազմուկների պատճառը դառաւ:

Մի վերջին խօսք և ես իմ պատասխանը կ'աւարտեմ: Ե. ծ. վ. Մուրագեան իր յօդուածի վերջում սպանում է մի շարք գոկումենտներով, որոնց շարբում կան նաև քրէական բնաւորութիւն ունեցողներ (‘). շատ լաւ կ'անէ, որ բոլորը լոյս աշխարհ հանէ և հասարակութեան դատաստանին յանձնէ, այն ժամանակ միայն կարելի է այդ բոլորի արժեքը չափել:

Ինչ վերաբերում է նրա առաջարկին, թէ այսուհետև իրան մեղաղբողներին հրաւիրում է միջնորդ դատարանի, զա աւելի քան ծիծաղալի է ինձ համար: Ե. ծ. վ. Մուրագեան իր այդ մոտածմունքով հրտեղ էր, երբ Համբարձման դէպքի համար քննութիւն ու դատ խնդրեցի. այն ժամանակ մերժեց իր իշխանական բարձրութեամբ, երբ կարելի էր մի դրական քան անել. այժմ հրտեղից կարող է համախմբել գործի հետ մօտիկ կապ ունեցող մարդկանց: Ինչ կայ, հեշտ է դատ առաջարկել, որը եթէ ոչ անհնարին, գոնէ դժուար իրագործելի է:

### Տիգրան Ռաւշմաննան

24 ապրիլ, 1905 թ.

Բազու

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Հանգուցեալ քըրիստափոր Ս'իբայէլեանի յիշատակին ստացուած է Կ. Հ. Ռ. Մ.-ից 10 բուրլի՝ 1905 «Մուրճ» ուղարկելու խմբագրութեանս հայեցողութեամբ:

— Բալախանիից պ. Խ. Գարբիէլեան ուղարկել է 10 բուրլի, հաւաքած մի քանի պարտններից, որ 1905 պ. «Մուրճ» ուղարկենք Զայքենդ գիւղի հասարակութեան:

— Արտասահմանի բաժանորդներից շատերը դանգատում են որ ամսազրիս համարները կանոնաւոր չեն ստանում: Խըմբագրութիւնս կանոնաւորապէս ուղարկում է բոլորին, ամեն անգամ ցուցակով ստուգելով պոստ ուղարկած օրինակները: Աչ-ապահովագրած օրինակները կորսուելու դէպքում մենք պարտաւոր չենք կրկին ուղարկել: «Մուրճ»-ի բաժանորդագինը ապահովագրած արտասահմանում է 13 բուրլի:

— «Մուրճ» մաս-մաս վճարող բաժանորդներից միայն նրանք կը ստանան ամսազրիս յաջորդ համարը (№ 6), որոնք մինչև այդ համարի լոյս տեսնելը կը լրացնեն տարեկան ամրող բաժանորդագինը:

### Վ Բ Ի Պ Ա Կ Ն Ե Բ Ր

#### «Մուրճ»-ի № 4-ում.

129	տող	տոլուած է	պէտք է լինի
105	6 ներքեից	300 հազար ր.	300 միլիօն ր.
5	2 *	գունատ	գունատ
5	1 *	շէմքի	դէմքի
19	6 գերեից	խըսուած	խըմբուած
23	1 ն.	բուրլառ	բուրլառ
26	6 գ.	անեմ	ունիմ
29	14 ն.	շէնացնում	շէնացնեմ
30	12 գ.	կուտըն	կոտըն
31	9-րդ տողից յետոյ բաց է թողուած		
		թէկուզ դա լինի քառասուն տարուան:	
193	6 ն.	քանտիկներ	քանդակներ
209	2 գ.	խաւարի	խաւելի
211	15 ն.	արգէն-նըս	արգէն
212	3 գ.	զործադուների, ազա-	զործադուն-
		տութեան	ների ազատութեան
194	22 ն.	նորութիւն	նուրը
202	15 *	պատմական	պայմանական
107	14 *	կազմած	կազմուած

#### Այս համարում:

43	9 գ.	պատմենք	պատմեմ
44	5 գ.	էլ	էլ
*	25 *	լոիր	լոիր
*	32 *	մեղիսկն	մեղեսկն
48	17 *	տանին	տանեն

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

Կովկասի Առումնական Շքանի հոգաբարձական Խոր-  
իդի որոշմամբ, որ հաստատուած է Կովկասի հաղուս-  
ցիական պ. կուտավաչափեան սահմանակատարի  
կողմից

Կ. ԿՈԽՈՒԿԵԱՆԻ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

## ՄԱՅՐԵՆԻ ԽՈՎՔ

ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԻ

(ԵՐՐՈՐԴ և չորրորդ տարիների համար)

Համառու հայերէն-ռուսերէն լուսողքով

Գիշն է 70 Կ.

(246 երես)

Համարուած է պիտանի մկրթական դպրոցների համար:

Իմեւ Թիֆլիս՝ «Գուտահնարերզ» և «Կենտրոնական», իսկ Բա-  
գու՝ «Сотрудникъ» զրավաճառահնոցներին:

## LA REVUE

(Ancienne «Revue des Revues»)

A B O N N E M E N T

Etranger (Սույող postale) par an: 28 fr.

» » » par semestre 16 fr.

Directeur-Rédacteur en chef

JEAN FINOT

Administration et Rédaction:

12 Avenue de l'Opéra

Paris

2—5

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# “ՄՇԱԿ”

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԽ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(33-րդ տարի)

Ա. Թ. Ա. Զ. Ի. Ա. Յ.

**1905**

ԹՈՒԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿ» կը հրատարակուի նոյն պլրոգրամմով և նոյն  
ուղղութեամբ

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից:  
Բաժանորդագինը «ՄՇԱԿ»։ տարեկան զինը 10  
սուբլի է, տասնեմէկ ամսուանը նոյնպէս 10 ռ., տասն  
ամսուանը՝ 9 ռ., ինն և ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն  
ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝  
5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3  
ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը 1 սուբլի։

Ալտահանմանեան բաժանորդագրութիւնը. Ամերիկայի բաժանորդիները պէտք է վճարեն տարեկան 6 գոլար. Եւրոպայի բաժանորդիները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդիները՝ 10 սուբլի։

«ՄՇԱԿ» գրուել կարելի է Խմբագրատանը (Բագրնայտ և Բարոնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան տրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» զբարելու համար և տահասալակ նամակներ և ծրագրներ ուղարկելով՝ պէտք է զիմել հետեւալ հասցեով. ՏԱՓԼԻՍ, Պետական ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՏԻՖԼԻՍ, Rédaction du journal «ՄՇԱԿ».

Յայտարարութիւնները ընդունուում են բոլոր եւ զուներով։

Ապահիկ ըոժանորդագրութիւն չէ մնդունաւ։

ԼԵԽՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Մ Ի Ք Ա Ն Ի Օ Ր

ԱՐՑԱԽՈՒԹՅԱՆ ԵՒ ՍԻՒՆԻՔՈՒԹՅ

ԳՐԻՆ Է 20 Կողէկ:

ԽԵՂ. Ա. Առաքաստի

## ԴԱԿԻԱՃԱՆՈՒԹԻՒՆ

ՊՐԱԺԱՄԱԹԻԿՈՎԱՆ ԼԻՎԵՆՎԱ ԱԼՎԱՍՏԱՆԻ ԱՆԳԵԼԻԿԻ

5 ԱՐԱՐՈՒԹԾՈՎ

(Հեղինակի պատկերով և յառաջարանով)

ԲՆԱԿՊՐԻԿ ԹԱՐԳՄԱՆԻԿ

Ա. ՃԱՍՏՈՒՐՅԱՆ

ԳՐԻՆ Է 50 Կ.

Տ. ՄՈՐՈՅԻ

## ՀԱԶԻ ՇԱԲԱՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

## ՊԱՐՄԿԱՎՏԱՆՈՒԹՅ

Վ. Ա. ՊԱՏՐՈՎԱԿՈՎԱՆ ԿԵՄՆՔԻԿ

ԼՈՐԴ ԿՐԵՊԵՆԻ ՆԵՐԱՋՄԵՐԻ

ԹԱՐԳՄ. ԱՆԳ. ԲՆԱԿՊՐԻԿ

Մ. ԿԱՐԱՎԱՐԻ

ԳՐԻՆ Է 2 Բ.

1905

## ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ

Ա. ՓՐԻՆՅԱՆ ՀԻԱՆԱԼՈՒՅԻ ՀԱՅՈ

ՕՐԱԿՐՈՆ Է ՏՈՒՄԱՆՎԱԾԻ ԳԻՏԵԼԻՔ, ՏԱՄԱՅՆՎԱՐԳՐԱԿԱՆԻ Է  
ԱՅԽԱՐԱՅՐԳՐԱԿԱՆԻ, ԱՅՏԱԿԱՆ ՎԻԲԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ, ԽԱՅ

ԵԼՎԵԼԵԿՈՎ Է ԱԿԱՏԽԱՐՄԱԿԱՆԻ ՏԵՂԵԼՈՒԹԻՒՆԻՒՐ.

ԳԽՐԾՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ԳԽԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

(ՔԱՐՏԱԳԻՆԻ Է ԱԿԱՏԽԱՐԱԳՐՈՒ)

ԳՐԻՆ. 10 ԴՐՇ. (80 ԿԱՊ.)

ԿԸ ՃԱԼԽՈՒ ՅՈՎՈՎ ՊՈՂԻ Ա. Փ. Ազգ. ՀԻւանդանոցի  
ՎԵցերորդ տարին ըստ կը տեսնի ճիշ և բազմակողմանի  
պարունակութեամբ:

2—2

ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА НА  
НОВОЕ ИЗДАНИЕ ТОВАРИЩЕСТВА М. ВОЛЬФЪ;

# Толковый Словарь живого великорусского языка ВЛАДИМИРА ДАЛЯ

З-е, исправленное и значительно дополненное издание, подъ  
редакціей проф. С Г Б. университета  
— И. А. БОДУЭНА-ДЕ-КУРТЕНЭ.—

«Толковый словарь Даля» увѣличанъ Императорской Академіей Наукъ. Ломоносовской преміей; Императорскимъ Русскимъ Географическимъ Обществомъ удое тоенъ Константиновской медали; совѣтомъ Императорскаго, б. Деритскаго, и нѣ Йорьевскаго университета награжденъ полной преміей имени Реберта Геймбюргера: въ настоящемъ паданіи признанъ заслуживающимъ рекомендациіи со стороны Министерства Народнаго Просвѣщенія, посредствомъ особаго царскаго указа, вниманию педагогическихъ совѣтникъ среднихъ учебныхъ заведеній на предметъ приобрѣтенія его въ фундаментальныя библіотеки этихъ учебныхъ заведеній, и допущенъ, кроме того, въ ученическия, старшаго возраста, библіотеки среднихъ учебныхъ заведеній, а равно въ бесплатныя народныя читальни.

**ВЫШЕЛ ВЫПУСКЪ XIY—XV-й (4—5-й вып. II-го тома).**

(Куръ-мстить) СПБ., 1905. 49. Столбцы 577-й по 928-й.  
Полное изданіе «Толковаго словаря» будетъ состоять изъ сорока выпусковъ, составляющихъ четыре большіе тома въ 4 д. л. въ которыхъ будетъ заключаться до 250 печатныхъ листовъ или около 8000 столбцовъ текста убористыми, но четкими шрифтами на плотной, глазированной бумагѣ.

Подписная цѣна словаря— 20 рублей Допускается разсрочка: при подпѣскѣ 2 р. 50 к. и за каждый изъ первыхъ 35 выпусковъ по 50 коп.—Пересылка по дѣйств. стоим., причемъ для облегченія расчета выпуски, по мѣрѣ выхода, высылаются съ наложеннымъ платежомъ.

Подробное объявление высылается желающимъ бесплатно.  
**ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ:** у издателей—въ книжныхъ магазинахъ Т-ва М. О. ВОЛЬФЪ—С. Петербургъ, Гостиный Дворъ, 18, и Москва; 1) Кузнецкій Мостъ, д. Джамгаровыхъ, и 2) Моховая ул., д. Чижова и Курындіной (противъ университета), а также у всѣхъ др. столичныхъ и провинціальныхъ книгоиздавцевъ.

Ժամանակուն պրտասկանություն-խթագիր Յ. Սահելյանին  
Հումանիտար Ա. Բաննին

22. ԹՌԻՐԾ ՄԱՍԹԻԼԸ:—Շահնթախմինսկի եւ Աղայիկ դատի  
մէջ:—Աղայիկ բէզի ողբերը:—Հնդկաստանի մահմեդա-  
կանների մէջ կրօնական վիրանորոգչական մի շարժում:  
—Կովկասի իսլամների վիրաբերմունքը դէպի այդ շար-  
ժումը:—Մահմեդական մամուլի օրգանները այլ եւ այլ  
երկրներում: Տիգրանի . . . . . 175
23. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՃԻՑ. —I) Հայ արտաքապետու-  
թիւնը: Թողրուս Ժ. Թողրամանեանի: —II) Մեր  
ազգային երաժշտութիւնը: Տ. Զամէնի: —III) Հայոց  
թառորմ: Տ. . . . . 186
24. ՀԱՅ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ, Նամակ Եգիպտասից Ա. ը. Շ.ի 211
25. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —Կովկասիների համբազրերը:  
Տերրիտորիալ եւ կրօնական անցրականներ:—Բարձր,  
Ռւկադ կրօն համբերողութեան մասին:—Աղջախական  
եւ կրօնական շաղկապ:—Նոր ազգութիւնների կազմա-  
կիրապւմ:—Հայկական համբազրի:—Կովկասի փոխար-  
քայի մուտքը Թիֆլիս:—Հայ. լուս. հոգ. վարչական  
կարգով պատիճների վերացումը:—Թիւրքիայից Եպիս-  
կոպուանալու համար Էջմիածնի հետ վարդապետների  
հարցը:—Արհեմտիան 9 նահանգների մասին Բարձր  
ռւկադ: Լ. Ս. . . . . 217
26. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —Չէղօքութեան խախոռումը Ֆրան-  
սիայի կողմից:—Ֆրանսիայի ներքին գործերը. Տամբու-  
րինիի դաւադրութիւնը, Եկեղեցին պետութիւնից անջա-  
տելու օրինագծի բննութիւնը, Լիեժի գործադրութ:—  
Մինիստրական տևող կրիզիսը Անգլարիայում. անջատ-  
ման կուսակցութեան պահանջները:—Օսմաննեան պե-  
տութեան Թուլացման ազգեցութիւնը:—Մինիստրական  
փոփախաթեան հաւանականութիւնը Անգլիայում: Լ. Ս. 226
27. ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ, Դ. Ե.ի . . . . . 232
28. ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, . . . . . . . 240
29. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . . . . . 245
30. ՅԱԻԵԼՈՒԱԾ. Քէյմն Մորիէլ՝ «ՀԱՅԻ ԲԱԲԱՆ ԱՆԳ-  
ԼԻԱՅՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ.  
անգլ. Մ. Կարապետեան. . . . . . . 17—32

ՕՐՈՒՆԵԿՈՒՄ է ԲԵԺԵՆՈՐԴԵԳՐԱԽԹԻՆ

1905 թ.  
ՄՈՒՇ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

(Նոր շրջան և տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԵԳՐԱԽԹԻՆ

Առևաստան՝ տարեկան	10 ր.	Արշամանիման՝ 12 ր.	(32 ֆ.)
կես տարին	6 ք	3	7 ք (18 ֆ.)
1 ամսուան	1 ք	2	1 ք 20 կ. (31 2 ֆ.)

ԲԱԺԱՆՈՐԴԵԳՐԱԽԹԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ է  
ԹԻՖԼԻՍԻ – ԽԱՐԱԳՐԱՏՈՎԱՆԸ (ՃԱՎՃԱՎԱՃԵԿԻ ՓՈՂՈՑ, տ. № 12)  
ԿԱՅԱՐԱՐԵԱՆ ԱՅ ԹԵՂԻՔԻ պէտք է դիմել Տիֆլիս, ՅԵ բարեգործական հայրենիքի ներկայութեան առաջակի լինելու վրայ, Թարգմանութեան համ պէտք  
է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը:  
Վերասանենից Tbilis, Rédition de la revue «MOURTCHI».

ԽՄԲԱԳՐԱԽԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրեցից՝ գրել պարզ, մասնաւնե բարեր, բատուկ սենութեան ու օսաւ բառեր, և թերի միան մի եւեփ վայ, աւաճնուղու ու դարձնել կտակրութեան, ուղղագրութեան եւ ցոր պարեցութիւներ սուսակի լինելու վրայ, Թարգմանութեան համ պէտք  
է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը:

2. Զընդունուած մնած յօդուածները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուում են: Զեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածականը: Փոքր յօդուածներն ու ստանաւորները չեն վերադարձնուում:

3. Քրուածքների գարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարում են անվճարելի:

4. Խմբագրութիւնն իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխուել կամ կրնասեկու իրաւունքը:

5. «Մուրճի» համարը չստացուելու դէպում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյց տեսնելը:

6. Խմբագրութեանը զամազան հարցումներով դիմող անձննք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրում կամ պոստային ըլանկի:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոտեկ, Հասցէ փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէս զի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. բնդունուում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են: – 1 երես բոնոր յայտարարութեան համար 15 ր., 1/2 եր.-8 ր., 1/4 եր.-4 ր., տողատեղ (կորպ.) – 40 կ.:

Զեռագիրները, նամակները և ծրաբները պէտք է ուղղել խմբագրութեան, ԽԵԽՈՒ ՍԱՐԳՍԵԱՆԻ անունով: